
THE UNIVERSITY OF MICHIGAN
LIBRARIES
1817

DIE OFFENBARUNG JOHANNIS in e. alten ARMENISCHEN UEBERSETZUNG, nach zwei Hdss. zum erstenmal hrsg., m. d. griech. Texte vergl. u. m. e. Einltg. u. m. Anm. vers. v. FRIEDRICH MURAD. — Heft II — V: Anmerkungen, u. Anhang: Nachnersesische Recension d. Apokalypse.

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՀԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՋԱՌԱՋԻՆՆ ԱԾ Ի ԼՈՅՍ

ԸՍՏ ԵՐԿՈՒՑ ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԱՑ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻՆ
ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

ՀԱՆԴԵՐՁ ՆԵՐԱԾՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ

ՖՐԷՏԷՐԻՔ ՄՈՒՐԱՏ

ՏԵՏՐ Բ. — Ե.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.
ԵՒ ՅԱՒԵԼՈՒԱԾ՝
ՅԵՏՆԵՐՍԻՍԵԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1906

JERUSALEM, Buchdruckerei des Armenischen St. Jacobus-Klosters.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. ՄԱՂԱՔԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

դերձ «Նախասկարգ Բանիւք» Գրեգորիի, Հտ. Գ. Նախայիշեալ հրտրկ., տպ. ի Լիպսիա 1894 („*Novum Testamentum Graece*. Ad antiquissimos testes denuo recensuit, apparatum criticum omni studio perfectum apposuit, commentationem isagogicam praetexuit Constantinus *Tischendorf*. Editio octava critica maior. Vol. II. Lipsiae, Giesecke & Devrient, 1872“, եւ „*Novum Testamentum Graece*. Ad antiquissimos testes denuo recensuit, apparatum criticum apposuit Constantinus *Tischendorf*. Editio octava critica maior. Vol. III. *Prolegomena* scripsit Caspar Renatus *Gregory*, additis curis † Ezrae Abbot. Lipsiae, J. C. Hinrichs, 1894“)։

Դիտելի է նաեւ զի՝ առ ի նշանակել զպէսպիսութիւնս գրչագիր՝ օրինակաց Լէ (տ. վեր.), ըստ ծանօթութեանց Զօհրապեանի, ի դէպ եւ պատշաճ համարեցայ ի կիր արկանել զհետագայ նշանակսդ.

Լ^մի = ձեռագիր օրինակ մի Լէ.

Լ^ոմ = ոմանք յօրինակաց, կամ ի ձեռագրաց Լէ.

Լ^բզ = բազումք » » » »

ի Լ^ոմ, ի Լ^բզ = յոմանս յօրր. կամ ի ձձ. Լէ, ի բազումս եւն.

ըստ այսմ օրինակի եւս՝

ըստ Լ^ոմ, ըստ Լ^բզ = ըստ ոմանց յօրր. Լէ եւն.։

Բ.

ՆՇԱՆԱԿՔ Ս· ԳՐՈՑ
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Աբդ. = *Մարգարէութիւն Աբդիու.*
Ամ. = » *Ամովսայ.*
Ամբ. = » *Ամբակումայ.*
Անգ. = » *Անգեայ.*
Առ. = *Առակք Սողոմոնի.*
Բա. = *Թուղթ Բարուքայ.*
Գծ. = *Գործք Առաքելոց.*
Գղ. = *Պաւղոսի Թուղթ առ Գաղատացիս.*
Դն. = *Մարգարէութիւն Դանիելի*
Դտ. = *Դատաւորք.*
Եբ. = *Պաւղոսի Թուղթ առ Եբրայեցիս.*
Եզ. = *Մարգարէութիւն Եզեկիելի.*
1 *Եզր.*, 2 *Եզր.* = *Գիրք Եզրայ Ա, Բ.*
Ել. = *Ելք.*
Ես. = *Մարգարէութիւն Եսայեայ.*
Եսթ. = *Գիրք Եսթերայ.*
Եր. = *Մարգարէութիւն Երեմեայ.*
Երգ. = *Երգ Երգոց.*
Երկ. = *Երկրորդումն Օրինաց.*
Եփ. = *Պաւղոսի Թուղթ առ Եփեսացիս.*
Զք. = *Մարգարէութիւն Զաքարեայ.*
1 *Թգ.*, 2 *Թգ.*, 3 *Թգ.*, 4 *Թգ.* = *Թագաւորութեանց Ա, Բ, Գ, Դ.*
1 *Թս.*, 2 *Թս.* = *Պաւղոսի առ Թեսաղոնիկեցիս Թուղթ Ա, Բ.*

Թի. = Թիւք.
Ժող. = Բանք Ժողովողին.
Իմ. = Իմաստութիւն Սողոմոնի.
Ծն. = Ծնունդք.
Կղ. = Պաւղոսի թուղթ առ Կողոսացիս.
1 Կր., 2 Կր. = Պաւղոսի առ Կորնթացիս թուղթ Ա, Բ.
Հռ. = Պաւղոսի թուղթ առ Հռովմայեցիս.
Հռթ. = Հռութ.
Ղեւ. = Ղեւտական.
Ղկ. = Աւետարան ըստ Ղուկասու.
1 Մակ., 2 Մակ., 3 Մակ. = Գիրք Մակաբայեցւոց Ա, Բ, Գ.
Մթ. = Աւետարան ըստ Մատթէոսի.
Մկ. = Աւետարան ըստ Մարկոսի.
Մղ. = Մարգարէութիւն Մաղաքեայ.
1 Մն., 2 Մն. = Մնացորդաց Ա, Բ.
Մք. = Մարգարէութիւն Միքիայ.
Յդ. = Թուղթ Յուդայի կաթողիկէ.
Յես. = Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ.
Յթ. = Գիրք Յուդթայ.
Յկ. = Թուղթ Յակովբայ կաթողիկէ.
Յհ. = Աւետարան ըստ Յովհաննու.
1 Յհ., 2 Յհ., 3 Յհ. = Յովհաննու թուղթ Ա, Բ, Գ.
Յոբ. = Գիրք Յովբայ.
Յոն. = Մարգարէութիւն Յովնանու.
Յովլ. = » Յովելայ.
Յտ. = Յայտնութիւն Յովհաննու.
Նա. = Մարգարէութիւն Նաւումայ.
Նէ. = Գիրք Նէեմեայ.
Ող. = Ողբք Երեմեայ մարգարէի.
Ովս. = Մարգարէութիւն Ովսեայ.

1 Պտ., 2 Պտ. = Պետրոսի թուղթ Ա, Բ.
Սիր. = Գիրք Սիրաքայ.
Սղ. = Գիրք Սաղմոսաց Դաւթի.
Սփ. = Մարգարէութիւն Սոփոնեայ.
1 Տմ., 2 Տմ. = Պաւղոսի առ Տիմոթէոս թուղթ Ա, Բ.
Տոբ. = Գիրք Տովբիթայ.
Տտ. = Պաւղոսի թուղթ առ Տիտոս.
Փմ. = » » » Փիլիմոնի.
Փպ. = » » » Փիլիպեցիս.

Գ.

ԱՑԼԵՒԱՑԼ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՔ

ածկ.	ածական
Ածշ. Մատ.	Աստուածաշունչ Մատեան
ան. բ.	անուն բայի
աներ.	աներեւոյթ
անկ.	անկատար
անոր.	անորոշ
անց.	անցեալ
ապ.	ապառնի
առջ.	առաջին
բնգ.	բնագիր, –գրի եւն.
բցթ.	ի բաց թողու, –ն
բցռ.	բացառական
բցս.	բացասական
գոյկ.	գոյական
գրծ.	գործիական
գրչգ.	գրչագիր, –գրի եւն.
դեր.	դերանուն
դիմ.	դիմաւոր
դմրշ. յ.	դիմորոշ յօդ
Եբր.	Եբրայական, Եբրայեցերէն
եզ.	եզակի
երկր.	երկրորդ
երր.	երրորդ
եւն.	եւ այլն
զնց.	զանց առնէ, –են
զ. օր.	զոր օրինակ

ընդն.	ընդունելութիւն
ի բ., ի բբ.	ի բառն, ի բառս
ի տ.	ի տեղի, ի տեղւոջ
խնդ.	խնդիր
խնդ. բն.	խնդիր բնութեան
խոն.	խոնարհագոյն
ծան.	ծանօթութիւն
կոչ.	կոչական
կատ.	կատարեալ
կրւ.	կրաւորական
Հ. Կ.	Հին Կտակարան, –ի եւն.
հմմտ.	համեմատէ
հմր.	համար
հյց.	հայցական
հնգր.	հինգերորդ
հրմ.	հրամայական
ձ.	ձեռագիր, – գրի եւն.
ձձ.	ձեռագիրք, –գրաց եւն.
մկբ.	մակբայ
յաւ. (կամ +)	յաւելու, –ն
յգ.	յոգնակի
Յուն.	Յունական, Յունարէն
յրբ.	յարաբերական
Ն. Կ.	Նոր Կտակարան, –ի եւն.
ներգ.	ներգոյական
ներգծ.	ներգործական
ներկ.	ներկայ
ներք.	ի ներքոյ
նխ.	նախդիր, նախադրութիւն
նխդ.	նախադրէ, – են, նախադասէ, –են
չղկ.	չաղկապ

ուղ.	ուղղական
որոշ.	որոշեալ, որոշիչ
չորր.	չորրորդ
պար.	պարառական
պակ.	պակասէ, — են
սհմ.	սահմանական
սռկ.	սեռական
ստ.	ստորեւ, ի ստորեւ
ստրդ.	ստորադասական
վեր.	ի վերոյ, ի վեր անդր, վերագոյն
տ.	տես
տրկ.	տրական
փխկ.	փոխանակ
օր. յօր. եւն.	օրինակ, —ի, յօրինակի եւն.
օրր. յօրր. եւն.	օրինակք, — կաց, յօրինակս եւն.

Ածշ. Զօհր. = Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, *յաշխատաս. Հ. Յ. Զօհրապեան, տպ.* Վենետիկ 1805 (*տ. զամբողջ խորագիրն վեր. յէջ* 79–80)։

Ածշ. Կպ. = Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, *ըստ ճշգրիտ Թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ Եբրայական եւ Յունական Բնագրաց*։ Կոստանդնուպոլիս, *տպագրութիւն Գ. Պաղտատլեան*, 1895։

Բերդ. = Մեկնութիւն Յայտնութեան Ս. Յովհաննու Առաքելոյ, *համառօտեալ ի զանազան*

մեկնչաց ի Պետրոսէ *Արքեպիսկոպոսէ Նախջուանցւոյ* Աղամալեան Բերդումեանց. — *ի Կալկաթա, ի տպարանի Արարատեան Ընկերութեան*, 1846։

ԲՀԼ. = Բառգիրք Հայկազեան լեզուի, *բաժանեալ յերկուս հատորս . . . արարեալ ի* Մխիթարայ վարդապետէ *Սեբաստացւոյ* Աբբայ Հայր *կոչեցելոյ . . . տպ. ի Վէնէտիկ. Հտր. Ա.* 1749, *Հտր. Բ.* 1769։

Հմբ. = Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց. *աշխատասիրութիւն* Թադէոս վարդապետի Աստուածատուրեան . . . *ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց յԵրուսաղէմ*, 1895։

ՆԲՀԼ. = Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի. *երկասիրութիւն երից վարդապետաց . . .* Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան. — 2 *Հատորք, տպագր. ի Վէնէտիկ, ի տպարանի Ս. Ղազարու*, 1836. 1837։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Ա. 1—3.*) *Բազմակերպ են վերնագիրք Յայտնութեանն Յովհաննու ի յոգնաթիւ օրինակս Յունական բնագրին. — ոմանք ունին լոկ՝* Յայտնութիւն Յովհաննու (*որպէս դնէ եւ* Յ), *կամ՝* Յովհաննու Յայտնութիւն. *կէսքն՝* Յայտնութիւն Յովհաննու Աստուածաբանի, *կամ՝* Յովհ. Աստուածաբանի Յայտ. *կէսքն՝* Յայտ. սրբոյ Յովհ. Աստուածաբանի, *որոց համաձայնին նաեւ* Լոմ, *ըստ ծան. Զօհրապեանի. այլքն դնեն՝* Յայտ. Յովհ. Աստուածաբանի եւ Աւետարանչի. *եւ կէսքն՝* Յայտ. Յովհ. Առաքելոյ եւ Աւետարանչի. — *բաց յայսցանէ գտանին եւ հետագայքդ.* Յայտ. սրբոյ Յովհ. — Յայտ. սրբոյ Յովհ. Առաքելոյ եւ Աւետարանչի, *որում գրեթէ բովանդակապէս միաբանի* Լ՝ Յայտնութիւն Սրբոյն Յովհաննու Առաքելոյ եւ Աստուածաբան Աւետարանչի. — *եւ դարձեալ՝* Յայտ. սրբոյ փառաւորագունի Առաքելոյ եւ Աւետարանչի կուսանի սիրեցելոյ Յովհաննու Աստուածաբանի, *այլովքն հանդերձ* (*զայսմանէ տ. գծան.* Տիշընդորֆի *ի վերոյիշեալ տեղւոջ, վեր. էջ* 80—81).

---

*) *Տեղիք ուր* Թ, Լ *եւ* Յ *ամենայնիւ միմեանց համաձայն գտանին՝ չեն նշանակեալ յառաջիկայ ծանօթութիւնս.*

Առ հասարակ մարթ է, ըստ Ֆոն Սոդենի („Die Schriften des Neuen Testaments in ihrer aeltesten erreichbaren Textgestalt hergestellt auf Grund ihrer Textgeschichte von Dr. Theol. Hermann Freiherr *von Soden*. Band I, 1. Abteilung. Berlin 1902“, S. 296), *յերիս գլխաւոր կարգս դասաւորել զպէսպէս մակագրութիւնս Գրոցս Յայտնութեան, այսինքն.*

1. Յայտնութիւն (սրբոյն) Յովհաննու Աստուածաբանի.

2. Յայտնութիւն Աւետարանչին Կուսանի եւ Աստուածաբանի Յովհաննու.

3. Յայտնութիւն Յովհաննու Աստուածաբանի, զոր ետես ի Պատմոս կղզւոջ։

Յայտ է սակայն՝ թէ սոյն վերնագիրք չե՛ն սկզբնական, այլ եկամուտ եւ յետոյ յաւելեալ։ Բուն վերնագիրն Յայտնութեան Գրոց են իբրպէս համարքդ 1—3, զորս գրեթէ ըստ ամենայնի համաձայն Յուն. օրր. ունին եւ ԼՄ, *մինչ* Թ, *յորում պակասէ նախայիշեալ անհարազատ, օտարամուտ մակագրութիւնն, աստէն ի մին հատուածի ամբողջապէս իսկ այլակերպ է։*

Աւասիկ երկոքին թարգմանութիւնքդ Լ *եւ* Թ *դէմ առ դէմ եդեալ, առ ի համեմատութիւն ընդ միմեանս եւ ընդ* Յ.

ԼՄՅ	Թ
1 Յայտնութիւն Յէսուսի Քրիստոսի, է յնմա որոյ ետ [Յ զոր ետ նմա] Աստուած ցուցանել ծա-	1 Յայտնութիւն Յովհաննու Աւետարանչին՝

ռայից իւրոց՝ որ ինչ լինե-
լոց է վաղվաղակի, եւ նշա-
նակեաց առաքելով ի ձեռն
հրեշտակի իւրոյ առ ծառայ
իւր Յովհաննէս, ² որ վկայ-
եաց զվկայութեան բանին
[L, Մ Յ որ վկայեաց զբա-
նեն(-նն Յ)] Աստուծոյ եւ
զվկայութեան Յիսուսի Քրիս-
տոսի, զոր ետես. որ էր, (² զոր ետես։)
եւ որ լինելոցն էր յետ այսո-
րիկ [յետին ութ բառքդ
պակ. ի Յ]։ ³ Երանի որ (³ Երանի)
կարդայցէ [Մ L ընթերցու-
նու(ն) = Յ] կամ լուիցէ
[Յ եւ որք լսեն] զբանս (որք լսեն)
[Յ զբան] մարգարէութեանս,
եւ պահեսցէ [Յ պահեն] (եւ առնեն)
զոր ի սմա գրեալ է [Յ զ'ի (զ'ի սմա գրեալսս.)
սմա գրեալսս]. զի ժամա- (զի ժամանակն մաւտ է։)
նակս մերձեալ է [Յ մերձ]։

[Մ եւ L ունին զհմր. 3 զայս օրինակ. «Երանի որ ընթեռնու(ն L) զբան(ս L) մարգա-րէութեանս այսորիկ, եւ որ լսէ եւ պահէ զոր ինչ ի սմա գրեալ է» եւն.]։

Արդ՝ խնդրական է՝ թէ արդեւք Թ, այս է՝ Հայ Թարգմանի՞չն ինքն իսկ ըստ կամս եւ դիտմամբ համառօտեալ իցէ զիւր Յուն. նախագաղափար

պատճէնն, կամ թէ անդստին այդպէ՞ս էր Յուն. բնագիրն յայդմ ձ. օրինակին, յորմէ արար նա զՀայերէն թարգմանութիւնն, եւ կամ թէ ընդօրինակողի՞ ումեք համարելի է Հայկական թարգմանութեանս այլակերպութիւն։ Ապաքէն երեքին ենթադրութիւնքս ըստ ինքեանց հնարաւոր են. այլ սակայն հաւանականագոյն թուի ինձ եւ հաւաստի երկրորդ ենթադրութիւնս, այսինքն թէ՝ Թ ամենայն իրօք ճշդապէս եւ նոյնաբանութեամբ զհետ երթայ Յուն. բնագրին իւրոյ. թէպէտ եւ արդարեւ յայժմուս չիք բնաւ ուրեք սոյնպիսի բնագիր յամենայն ծանօթ Յուն. գրչագիրս։

Ապա ուրեմն յայսմ վայրի Թ միայնակ եւ եզական է ի համօրէն ամենայն բնագիր օրինակս եւ ի թարգմանութիւնս Յայտնութեանն Յովհաննու։

4. * Ի Յովհաննէ. այսպէս եւ Լ. իսկ ԼՄ Յովհաննէ = Ց։ ‖ * Եւթն եկեղեցեաց = Ց. իսկ ԼՄ — Եւ ՌՆ եկեղեցի։ ‖ * ԵՆ (առջ.). Լ դնէ յառաջ քան զանունդ յԱսիայ. չիք ի ՄՑ։ — Գիրք Յայտնութեան ուղղեալ են առ եւթն եկեղեցիս յառաջակողմեան Ասիայ, որք խոն. հմր. 11 մի ըստ միոջէ յանուանէ ծանուցանին։ Ընտրութիւն եւթն եւեթ եկեղեցեաց թուի թէ խորհրդով իցէ, վասն զի թիւս եւթն սրբազան համարեալ էր. ըստ սմին օրինակի նաեւ ստ. հմր. 13, 16, որպէս եւ 4. Ծ, 5. 1, 6, 8. 2, 10. 3 եւն.։ ‖ * ՅԷԷՆ, Եւ որ էՆ, Եւ որ գալոցՆ է. Լ նոյնպէս, միայն թէ սա նխդ. յԱստուծոյ, որ պակ. ի ԼՄՑ։ — Ասացուածս այս ո՛չ ճշդիւ թարգմանեալ է ի Յունէն ի Հայերէն, ո՛չ ի Թ եւ ո՛չ ի Լ. թուի թէ ի պատճառս անսով-

որական օտարոտի յօրինուածոյ բանից ի Յունին, որ՝ անկանոն խնդրառութեամբ նախադրութեան եւ գդիմ. բայդ. որ էրն փխկ. անգոյ ընդն. անկ. կամ ընդն. անոր. կոր. առեալ՝ ի կիր արկանէ զբովանդակ ասացուածս զայս (որ բաղկացեալ է յերից յօրջորջմանց) իբրեւ անհոլովական մի միայն յատուկ անուն, իբրեւ չրջաբանութիւն անուանն Եհովայ, կամ լաւ եւս՝ Եահվէի (= Աստուծոյ)։ Ըստ այսմ պարտ է ճշգրիտ համաձայն Յունին ընթեռնուլ զայս օրինակ՝ յէէն, եւ որ էրն, եւ որ գալոցն է, այսինքն՝ յԱյնմանէ որ էն եւ որ էրն եւ որ գալոցն է (նկատելով զմօտաւոր օրն դատաստանի, փխկ.՝ եւ որ եղիցի)։ Սոյն բացատրութիւն դարձեալ ի դործածի ներք. հմր. 8 եւ 4. 8, ըստ օրինակի Ել. 3. 14 «Եւ ասէ Աստուած ցՄովսէս. Ես եմ Աստուած Որ էն. Եւ ասէ. այսպէս ասասցես ցորդիսն Իսրայելի. Որ էն առաքեաց զիս առ ձեզ»։ հմմտ. եւ Եր. 1. 6 «Որ եսդ Տէր Տէր» (Հայն ըստ Թարգմ. Եւթանասնից), 14. 13, 32. 17. (զայսմանէ տ. յայլոց միջի զԲառարան Ս. Գրոց, Կ. Պ. 1881, ի բբ. «Աստուած» եւ «Եհովա», եւ ՆԲՀԼ. ի բ. է)։ — Հմմտ. զսովորական բանաձեւն ողջունի ի նախերգանս թղթոցն Պաւղոսի եւ Կաթողիկեայց. «Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ» Գղ. 1. 3. Նմանապէս Հռ. 1. 7, Եփ. 1. 3, այլովքն հանդերձ։ || * Հոգւոյն. 8 յգ., ԼՄ [illegible]։ — Եւթն Հոգիք, նոյնպէս ստ. 3. 1, 4. 5, 5. 6, այս են՝ եւթնամասնեայ, եւթնարփեան, կամ եւթնեակ Շնորհք Հոգւոյն Սրբոյ, զորս թուէ Ես. 11. 2 «Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան

եւ հանճարոյ, Հոգի խորհրդոյ եւ զօրութեան, Հոգի գիտութեան եւ աստուածպաշտութեան, եւ լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ»։ ‖ * ԵՆ (երկր.). Լ է = ԲՄ. չիք ի Յ. գիտելի է սակայն՝ թէ ոմանք ի Յուն. օրր. ունին զէական բայդ յեզ., եւ այլք ի յգ.։ ‖ * Նորա = Յ, ճշդագոյն քան զԼՄ իւրոյ։

5. * Որ վկայ է ճառատարիմ, միաբան է ոմանց ի Յուն. օրր., Լ հաւատարիմ վկայն = Յ որ զբացայայտիչդ սխալ համաձայնութեամբ յուղ. դնէ. զայն իմա եւ զհետագայ երկուց բացայայտչաց, զորս Լ փոխէ ի յարաբերական նախադասութիւնս, իսկ Թ անփոփոխ թողու յուղ. հանգոյն Յ։ ‖ * ՆախծինՆ = Յ, զոր ԼՄ թարգմանեն՝ որ է անդրանիկ։ Բառս Նախծին մի անգամ եւեթ գտանի ի Հայ. Ածշ. Մատենի, այս է՝ Ել. 13.2 «Սրբեա դու ինձ զամենայն անդրանիկ Նախծին»․ իսկ այլուր ի Հ. եւ ի Ն. Կ. ամենայն ուրեք Յուն. πρωτότοκος առ հասարակ թարգմանեալ է՝ անդրանիկ. զ. օր. Ծն. 4.4 եւն., Ել. 4.22 եւն., Ղեւ. 27.26, Թի. 1.20 եւն., Երկ. 12.6 եւն., Յես. 6.26, 17.1, Դատ. 8.20, 1 Թգ. 8.2 եւն., 2 Թգ. 3.2 եւն., 3 Թգ. 16.34, 4 Թգ. 3.27, 1 Մն. 1.13 եւն., 2 Մն. 21.3, Նէ. 10.36, Տոբ. 5.19, Սղ. 77.51 եւն., Իմ. 18.13, Սիր. 36.17, Մք. 6.7, Զք. 12.10, Եր. 31.9, Եզ. 44.30 (պակ. ի Հմբ.), Մթ. 1.25, Ղկ. 2.7, Հռ. 8.29, Կղ. 1.15, 18, Եբ. 1.6, 11.28, 12.23։ ‖ * Մեռելոց = Յ. իսկ ԼՄ ի մեռելը. ուր Լամ ի մեռելոց։ — Յ ունի սով. հանգոյն ասացուածոյն 1 Կր. 15.20 «առաջին պտուղ ննջեցելոց»․ իսկ Կղ. 1.18, ուր նխ. կայ յառաջոյ բառին, Հայն եւս ըստ այնմ ճշդապէս թարգմանէ՝ «անդրանիկ ի մեռելոց»։ Բերդ. էջ 5 ընթեռնու՝ «որ է

անդրանիկ մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց »։
|| * Իշխանն = Ց. — Լ *առանց դմրշ. յ.։* || * Թագաւորաց = Ց, *փխկ. որոյ* ԼՄ *Թագաւորութեանց։ Համմտ. Սղ.* 88 . 28 « *Ես* անդրանիկ *արարից զնա, եւ բարձր քան զամենայն* թագաւորս *երկրի* »։ || * Սիրողին եւ լուծողին զմեզ ի մեղաց = Ց, *միայն թէ սա զկնի* սիրողին *յաւ.՝* զմեզ, *եւ զկնի* ի մեղաց *յաւ.՝* մերոց (*որ սակայն պակ. յոմանս ի Ցուն. օրր.*)։ *Ցայտ է թէ ընդն. ներկ. հյց. խնդրով ըստ Ցուն. ոճոյ է. վասն որոյ դիպողագոյնս փոխեն* ԼՄ *զընդն. ներկ. ի դիմ. բայ՝ ոչ ․․․ + ․․․" ․․․* || * Արեամբն իւրով. *այսպէս եւ* Լ = Ց. *Համմտ. ստ.* 5 . 9։

6. * Արքայութեանն արժանիս. ԼՄ *Թագաւոր. երկոքին եւս թարգմանութիւնք անճիշդ. Ց ունի՝ ․․․, այսինքն՝ անդամս արքայութեան, յորում Աստուած է թագաւոր. համմտ. Ել.* 19 . 6, *Ես.* 61 . 6, *Դն.* 7 . 22, 27, 1 *Պտ.* 2 . 9։ || * Քահանայս. ԼՄ *նխդ. ․․․, որ չիք ի* Ց։ || * Հաւր. Լ *նխդ. ․․․* = Ց, *պակ.* Մ։ || * Իւրոյ. Լ *նոյնպէս. ճշդագոյն ըստ Ցունին պիտի՝* իւրում, *վասն զի* Աստուծոյ *եւ* Հաւր *որկ. են, եւ ոչ սռկ.։* || * Նմա = Ց. *այսպէս ունին եւ* Լ–Մ, *իսկ* Լ *․․․ Դերանունդ հայի ի նախընթաց ընդն.* սիրողին *եւ* լուծողին (*Քրիստոսի*)։ || * Փառք. Ց *նմանապէս եւ* ԼՄ *յաւ.՝* եւ զօրութիւն (Լ + *․․․, զնց.* Լ–Մ) յաւիտեանս յաւիտենից. ամէն (*պակ. ․․․ ի* Լ–Մ)։ *Այս փառաբանութիւն Քրիստոսի ըստ նմանութեան Եբ.* 13 . 21, 1 *Պտ.* 4 . 11, 2 *Պտ.* 3 . 18, 2 *Տմ.* 4 . 18, *Հռ.* 16 . 27։

7. * Գայ = Ց, *փխկ. որոյ* ԼՄ *․․․ է։* || * Ամ.

պատք. ըստ սովորական ճշգրիտ թարգմանութեան նոյն Յուն. ասացուածոյ μετὰ τῶν νεφελῶν յայլ տեղիս Հայ. Ս. Գրոց (ի Հ. Կ. մի անգամ եւեթ Դն. 7·13, եւ ի Ն. Կ. դարձեալ միայն Մկ. 14·62) ճշդագոյն ունին ԼՄ՝ ընդ ամպս. գրծ. համեմատ է այլազգ Յուն. դարձուածոց։ ‖ * Տեսցեն. Լ նոյնպէս. Ց եզ. — Համմտ. Ես. 40·5, Ղկ. 3·6։ ‖ * Ակն = Ց, ուր Լ թուի թէ սխալմամբ՝ ակն, յոր եւ յաւ.՝ եւ տեսցեն զնա ծակք երկրէ. այս յաւելուած պակ. ի Լ^մՄ որք դնեն լոկ՝ ակն։ ‖ * Որ. Լ որք = Ց. — Լ նխդ. եւ = Ց։ ‖ * Խոցեցին զնա. Լ + ամենեքեան յերկրէ. յաւելուածս այս չիք ոչ ի Լ^մՄ եւ ոչ ի Ց։ ‖ * Կոծեցին. հաւանական կարծեօք լոկ գրչի վրիպակ փխկ. կոծեսցին, որպէս ունին ԼՄ = Ց։ Համմտ. Զք. 12·10 եւ որ զկնի. «եւ հայեսցին առ իս յոր խոցեցինն, եւ կոծեսցին ի վերայ նորա» եւն.։ ‖ * Վասն նորա. յարմարագոյն ԼՄ է վերայ նորա = Ց։ ‖ * Ամենայն ազգք երկրի = Ց, այսպէս եւ Լ^մՄ. իսկ Լ բցթ.։

8. * Ես եմ ալփն եւ ովն = Ց. Յուն. ալփաբետաց առաջին եւ վերջին նշանագիրն. նմանապէս Մ եւ եմ ալֆա եւ օ. զոր Լ փոխէ՝ ես եմ այբ, եւ ես եմ քէ, ըստ ծան. Զօհրապեանի՝ «ի լուս. ես եմ ալֆայ եւ օվ. զոր ոմանք ունին ի բնաբանին, եւ սոքա ի լուս. դնեն այբ եւ քէ»։ — Ալփն եւ ովն աստ եւ 21·6 Աստուած է, իսկ 22·13 Քրիստոս։ ‖ * Էն, լաւ եւս որ էն, որպէս ունի Լ = Ց. սա յաւ.՝ եւ որ էրն, ուր ԼՄ վրիպանօք՝ եւ որ է. տե. վեր. համր. 4. բառքդ եւ որ էրն թերեւս լոկ անմտադրութեամբ ի թողանց արարեալ։ ‖ * Ամենակալն = Ց. առանց դմրշ. յ. Լ։ — Համմտ. Ամ. 3·13, 4·13 եւն.։

9· * կցորդ· ԼՄ *նուազ ճշգրտութեամբ թարգմանեն՝ հաղորդակից, որ ոչ գտանի այլուր յԱծչ. Մատ.* ։ *Յուն.* συνκοινωνός, *որ չիք ուրեք ի Հ. Կ.*, *ի Նորումս թարգմանի մերթ՝* կցորդ (1 *Կր.* 9 · 23, *Փպ.* 1 · 7), *եւ մերթ՝* բաժանորդ (*Հռ.* 11 · 17), *նմանապէս ածանցեալ բայն* συνκοινωνέω = կցորդ լինել (*Եփ.* 5 · 11, *Փպ.* 4 · 14)։ || * Չարչարանաց. *ճշգաղոյն ըստ* Ց *ունի* Լ՝ *Նեղութեան*, *ուր* ԼՄ *Վշտաց*։ *Յուն.* θλῖψις *առ հասարակ ի Հ. եւ ի Ն. Կ. թարգմանի՝* նեղութիւն (*զ. օր. Ծն.* 35 · 3, *Եւ.* 4 · 31, *Երկ.* 4 · 30, *Սղ.* 4 · 2, *Ես.* 8 · 22, *Մթ.* 13 · 21, *Յհ.* 16 · 21, *եւ այլ բազում տեղիս*), *մի անգամ նաեւ՝* վիշտք (2 *Կր.* 2 · 4)։ || * Արքայութեանն· Ց *որպէս եւ* ԼՄ *նխդ. Եւ. անշուշտ անմտադրութեամբ զնց. ի* Թ։ *Բաց յայսմանէ* ՑԼՄ *յաւ.՝ Եւ համբերութեան որ է* (ԼՄ + *Քրիստոս*) *Յիսուս*։ *Հմմտ.* 2 *Թս.* 3 · 5։ || * Ես էի· Ց *միայն՝* եղէ, ԼՄ *Եղէ Ես*։ || * Աստուծոյ = Ց, *պակ.* Լ, *այլ սակայն կայ ի* ԼՄ։ || * Վկայութեանն · Լ *նխդ. Վասն* = Ց, *որ պակ. ի* ԼՄ։ || * Յիսուսի · ԼՄ + *Քրիստոսի*, *որ չիք ի* Ց։

10· * Եւ (*առջ.*) · ԼՄ *Նոյնպէս*, Ց *չունի*։ || * Եղէ հոգւով = Ց, *նոյնաբանութեամբ թարգմանեալ.* — ԼՄ *այլով դարձուածով՝ Եղէ յէս հոգի*։ Մ *մեկնաբանէ*. « *Հոգւոյն սրբոյ եղէ ես ընդունակ եւ հոգիական միտս ստացայ* »· *եւ Բերդ. էջ* 9· « *այս է՝ հոգի Աստուծոյ եւ մարգարէական շնչեաց եւ ներգործեաց յիս* », *եւ փոքր մի զկնի աւէ*· « *ըստ Յունաց գրի· Եղէ ես հոգւով, այսինքն ի յափշտակման, ի վերացման եւ ի զմայլման* »։ — *Սոյն ասացուած՝* լինել հոգւով (*դարձեալ տե.* 4 · 2,

21 · 10), *որոյ հակառակն է՝* լինել ի միտս (Գծ. 12 · 11), *համանշանակ է բացատրութեանս՝* լինել ի զարմացման (Գծ. 10 · 10, 11 · Ծ, 22 · 17 · Հմմտ. 2 Կր. 12 · 1 *եւ որ զկնի*), *եւ նշանակէ՝ ըստ Յուն.* *նին՝ զմարգարէական յափշտակութիւն մտաց, զզար-* *մացումն, զԱստուածեղէն ազդեցութիւն. ըստ այսմ* *Պաւղոս* 1 Կր. 14 · 37 « *հոգեւոր* » *կոչէ զայնպիսի* *ոք՝ որում Աստուածեղէն ինչ յայտնութիւն լինի*։ || * Լուայ · Ց + զկնի իմ · *այսպէս եւ Լ*ոմ. *իսկ Լ* *ունի՝* [illegible], *եղեւալ յառաջ քան* [illegible]։ || * Ձայն = Ց, *անոր. հյց.*, *որպէս եւ Լ*ոմ. *իսկ Լ որոշ.* *հյց.*։ || * Մեծաբարբառ · *լաւ եւս Լ*ոմՄ *Ձծ* = Ց; *զոր Լ դնէ յորոշ. հյց.*։ || * Փողոյ · Ց իբրեւ զփո- ղոյ, *որում համաձայնին Լ*ոմՄ. *իսկ Լ ընթեռնու՝* [illegible]։

11 · * Ասելով · *ըստ Յուն. ոճոյ · այսպէս առ.* *հասարակ ի կիր առնու* Թ *զգրծ. աներ.*, *փխկ.* *Յուն. ընդն. ներկ. կամ անց. մինչ Լ դուն ուրեք* *ի գործ ածէ զայդ հեղլենաբանութիւն, այլ սովո-* *րաբար ի յրբ. նախադասութիւն փոխէ զՅուն.* *ընդն., որպէս ի սմին վայրի՝* [illegible] (*սակայն Լ*ոմՄ *դնեն՝* [illegible]), *յոր յաւ.՝* [illegible], *որ չիք ի Ց եւ ոչ* *ի Լ*ոմՄ. *Դարձեալ ԼՄ յաւ.՝* [illegible] (Մ [illegible]) [illegible] (Մ). [illegible]. *այս յաւելուած,* *զոր չունի Ց, պակ. նաեւ ի Լ*ոմ։ || * Տեսերդ · ԼՄ [illegible] (Լոմ) = Ց։ || * Գրեա · ԼՄ = Ց *յաւ.՝ է* [illegible]։ || * Եւթն եկեղեցեաց = Ց, *ուր ԼՄ* [illegible] (ՄԼոմ [illegible]) [illegible] (ՄԼոմ)։ || * Որ · *այսպէս եւ Լ. պակ. ի Լ*ոմ = Ց · *սա ունի* *միայն զնխ. հյց. խնդրով, ըստ սմին օրինակի եւ ի* *յաջորդ անուանս քաղաքաց*։ || * Զմիւռնեա · *այս-*

պէս գրէ Ն, իսկ Բ Զմիւռնիայ, եւ խոն. 2 · 8
Ն Զմւռնեա (= տառիւ ճշգրտագոյն ըստ Նախնի
ուղղագրութեան), Բ Զմիւռնեա. — Լ ունի աստէն՝
Զմիւռնիա։ || * Պերգամովն. Լ նոյնպէս. այս գրու-
թիւն, մանաւանդ՝ Պերգամոն, յունաձեւ հյց. է.
ըստ յօրինուածոյ բանից ի Հայումս պիտէր՝ Պեր-
գամոս, որպէս ստ. 2 · 12։ || * Թիւատիրիա, որ ստ.
2 · 18, 24 յՆ գրի՝ Թեատրեա. — Լ Թիւատիրա (Մ
Թիատիր), 2 · 18 Թիատիրայ, 2 · 24 Թիատիր. յիշա-
տակի եւ Գծ. 16 · 14 Թիւատիր. ըստ կանոնաց տա-
ռադարձութեան նախնեաց պարտ էր փոխագրել
զՅուն. անունդ՝ Թ(ի)ւատիրա։ || * Սարդես, լաւ
եւս Սարդիս, որպէս ունին Բ աստ, եւ ՆԲ ներք.
3 · 4. իսկ 3 · 1 ՆԲ այլակերպեն զանունդ. — Լ
գրէ՝ Սարդիկէ (Մ–դիկէ). ըստ Յունին ուղղագրելի
է՝ Սարդիս. որպէս գրեն եւ ԼՄ։ || * Փիլադել-
փիայ. լաւ եւս ճիշդ ուղղագրութեամբ ըստ Յու-
նին՝ Փիղադեղփիա. Լ Փիլադելփիա (Մ–դելփի, կամ
ըստ այլում օրինակի՝–դելփիա). իսկ ստ. 3 · 7 ՆԲ
սխալագիր։ || * Լաւոդիկիայ. Լ Լաոդիկիա. խոն.
3 · 14 ՆԲ Լաւոդիկէ. ըստ Յունին ճշգագոյն՝ Ղաւո-
դիկիա, համմտ. Կղ. 4 · 15։

12. * Ընդ իս = Յ. այսպէս եւ ԼՄ. իսկ Լ
ցէ։ || * Դարձայ (երկր.). ուղղագոյն ընթեր-
ցուածն է Բ դարձեալ = Յ, որ ունի ընդն. անոր-
կար. — Լ այլով դարձուածով թարգմանէ՝ է դառ-
նալ իմում (ԼՄ իմ)։ || * Ճրագարանցս. ԼՄ ճրա-
գարան. զՅուն. λυχνία թ ամենայն ուրեք, խոն.
համր. 13, 20, որպէս եւ ստ. 2 · 1 · 5, 11 · 4, թարգ-
մանէ՝ ճրագանոց, ի բաց առեալ խոն. զհմր. 20
ուր դնէ՝ ճրագարան. իսկ Լ ի կիր արկանէ կամ՝

ծրաֆարան, *որպէս աստ նոյնպէս եւ Հմր*. 13 *եւ* 20, *կամ՝ ողբոնով* 2.1, *այլ եւ մի անգամ՝ ծրաֆ* 11.4, *նոյնպէս անգամ մի՝ ողբոբով* 2.5 (*Թուի Թէ՝ լոկ գրչի վրիպակ*)։ — *Ի Հայ. Ածչ. Մատ. վերոյիշեալ Յուն. բառդ առ հասարակ Թարգմանեալ է՝* աշտանակ (*Ել*. 25.31.32 *եւն*., *Ղեւ*. 24.4, *Թի*. 3.31 *եւն*., 3 *Թգ*. 7.49, 4 *Թգ*. 4.10 *եւ այլուր ի Հ. Կ*., *դարձեալ Մթ*. 5.15, *Մկ*. 4.21, *Ղկ*. 8.16, 11.33, *Եբ*. 9.2)։ — Ճրագաենց, *ո՛չ նշանակեալ ի Հայկազեան բառգիրս*, *է նոր բառ*, *առաջինն ի քանի մի նորագիւտ բառից որք յատուկ սեպհական են Թի*, *մինչեւ ցարդ այլուստ անծանօթ*, *այլ ըստ կազմութեան կանոնաւորապէս ածանցեալ. ըստ նշանակութեան Յուն. բառին* = աշտանակ, ճրագակալ (*տ. նաեւ ԲՀԼ*., *եւ ՆԲՀԼ. ի բառս* «*աշտանակ*» = «*ճրագակալ. ճրագարան. բազմակալ*, *յորոյ վերայ հաստեալ եւ նստեալ կայ ճրագն կամ մոմեղէնն կամ ղամբար յիւղոյ*», *եւ* «*ճրագարան*» = «*ընդունարան կամ աման եւ տեղի ճրագի. աշտանակ. ճրագակալ. կանԹեղ. եւ նոյն իսկ ճրագն ի կանԹեղն*»)։ *Սոյնպիսի* –ենց *մասնկաւ ածանցականք յաճախեալ են առ ընտիր դասական մատենագիրս մեր. զ. օր*. կռուաենց (Եզնիկ, *Գիրք Ընդդիմ*., *տպ. յԻզմիր* 1762, *էջ* 80). մարգարէաենց (Փաւստ. Բուզանդ. *Պատմ*., *տպ. Վենետիկ* 1889, *Գ. ժդ. էջ* 38, *Գ. ժզ. էջ* 44. 45). վկայաենց (*անդ*, *Դ. ժ. էջ* 103 *չորիցս*, *էջ* 104 *երկիցս*, *էջ* 105 *երիցս. եւ յայլ տեղիս*), *այլովքն հանդերձ*։ *Լայնագոյնս եւ պարարտագոյնս վասն այսորիկ տ. առ* Նորայրի Ն. Բիւզանդացւոյ, «*Կորիւն վարդապետ եւ նորին Թարգմանութիւնք. Գիրք Մակաբայեցւոց*, *ՆւԹաղ Աղեք-*

սանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բիւզանդ. հանդերձ դիտողութեամբք, տեղեկութեամբք եւ լուսաբանութեամբք», Տփղիս 1900, էջ 251—260, որ մանրախուզիւ քննեալ պածանցս մանկամբքս —րան եւ —նոց՝ ի մէջ այլոց, էջ 256—257, ասէ. «Գիտելի է որ ի գիրս Երիցագոյն Թարգմանչաց րան մանկաւ ածանցք՝ կը նշանակեն, 1. անուանս մատենից, Աւետարան . . . 2. անուանս գործեաց, Նուագարան . . . 3. անուանս կահուց եւ անօթոց, Գանձարան . . . Ճրագարան . . . 4. անուն կազմածոյ՝ որով մարդ եւ անասուն կ'ընդունին զազդեցութիւն արտաքին առարկայից. Զգայարան . . . վերջապէս 5. Բժշկարան՝ դեղ կամ առիթ բժշկութեան . . . ։ Շինուածոց կամ տեղեաց համար րան մանկաւ ածանցք Կորեան, Ժողովարան, Հանդստարան, այլովքն հանդերձ . . . չեն բոլորովին անծանօթ Երիցագունից, այլ եւ ոչ յոյժ սովորական . . . ։ Այլ ուր ամէնուրեք սոյն [Առաջին] Դասս կ'ըսէ նոց մանկաւ. Արուեստանոց, Բժշկանոց (Ոսկ. Բ. Տիմ. Բ. Ցորդ. 189, Եփես. Է. 735), Ժողովրդանոց (կամ եւող բառիւ՝ ժողովետղ. տես եւ յԵրկրորդ Դասի՝ ժողովրդանոց, Լաբուբ. 16, 30), Կռուանոց (Եզնիկ, 58. Ոսկ. Մտթ. Ա. ժա. Ցորդ. 169, 170), Մարտանոց (Ոսկ. Կողոս. Ժ. 637), Վարդապետանոց (Ոսկ. Մտթ. Ա. Է. Ցորդ. 109. Բ. ԻԷ. Ցորդ. 748)»։ — Եւթն ոսկի ճրագանոցքն, ըստ հմր. 20, նշանակք են եւթն եկեղեցեաց։ Նախատիպ օրինակն է՝ եւթնաստեղն աշտանակն՝ եւթն ճրագօք, Ել. 37. 23, արդէն իսկ Զք. 4. 2 խորհրդանշանաբար ի կիր առեալ։ ‖ Ոսկիս = Յ, ուր Լ եղ.։

13. * ճրագանոցաց. ԼՄ ճրագարանացն. տ. գծան.

ի նախընթացն հմր. — Լ նխդ. եւ՚ի, որ չիք ի Յ եւ ոչ ի Մ։ ||*Ոսկեացն. պակ. ՅԼՄ։ ||*Պճղնաւորս, լաւ եւս՝ պճղնաւոր, որպէս ունին Լ^մՄ = Յ. իսկ Լ անճշգրիտ եւ աւելորդաբար նխդ. պարմանան։ Յուն. ποδήρη, ի Ն. Կ. միայն յայսմ վայրի, գտանի բաւական յաճախ ի Հ. Կ., Ել. 25.7, 28.4.31, 29.5, 35.9, Իմ. 18.24, Սիր. 27.8, 45.8, Զք. 3.4, Եզ. 9.2, ամենայն ուրեք թարգմանեալ՝ պճղնաւոր։ Հմմտ. Եւ. 6.1 (Աճշ. Կպ.). նաեւ Եզ. 1.26 եւ Դն. 7.13։ — ՆԲՀԼ. ճշդիւ ըստ նշանակութեան Յուն. բառին բացատրէ զբառդ պճղնաւոր (գրի եւ պճեղնաւոր) այսպէս. «Մակդիր զգեստու՝ որ հասանիցէ մինչեւ ցպճղունս եւ ցթաթս ոտից, կամ ցգարշապարս. ըստ այլոց՝ եւ ծոպաւոր, կամ զարդարեալ վերջաւորօք»։ ||*Առ կրծաւքն ածեալ կամար. ԼՄ փոփոխաբերեալ առ ստեամբն քում. երկոքինդ եւս իրապէս հանգոյն Յ, այլ սակայն թ- թէ ըստ իմաստին եւ թէ ըստ ոճոյ ճշգրտագոյն եւ վայելչագոյն թուի ինձ քան զԼՄ։ — 1) Յուն. μασθός (գրի եւ μαστός, μαζός), մանաւանդ ի յդ., նշանակէ տիրապէս՝ պտկունս ստեանց, նաեւ առն, այլ առաւելապէս կնոջ, ամին իրի եւ ստինք մօր (գ. օր. Ծն. 49.25, Յոբ. 3.12, 24.9, Սղ. 21.10, Երգ. 1.2, 3, 12. եւ յայլ բազում տեղիս), լայնաբար՝ լանջք, կուրծք, գ. օր. աստ. ուստի՝ ըստ յատուկ իմաստին ասացեալ՝ պատշաճագոյն է առ կրծաւքն (անսովորական հոլովումն, փխկ.՝ կրծովքն, կամ՝ կրծիւքն) քան զբացատրութիւնդ առ ստեամբն. առ այս նշանակէ ՆԲՀԼ. ի բ. ստին(ք). «Լայնաբար եւ նմանութեամբ ասի. Գօտեւորեալ առ ստեամբք. այսինքն առ լանջօք»։ — 2) Ածեալ կամար (Հմմտ.

Դն. 10 · Ց «Ամբարձի զաչս իմ, եւ ահա այր մի զգեցեալ փառս [ըստ Եբր. բեհեզ, տ. Աձչ. կպ.], եւ ընդ մէջ իւր ածեալ կամար յոսկւոյն Ոփազայ»), քաջայարմար աստացուած քան զԼ գօտեւորեալ գօտի. — բառդ գօտեւորել բնաւ ուրեք ոչ գտանի ի Հայ. Հ. Կ., իսկ ի Ն. Կ. միայն Լ երկիցս անգամ ի կիր առնու զայդ, աստէն եւ Յոհ. 15 · 6, փխկ. որոյ սովորական ընտիր ասութիւնն է՝ գօտի ածել ընդ մէջ։ — Յուն. περιζωννύναι, Ներգծ. որպէս եւ յաճախագոյնս իբրեւ միջակ բայ, միայն կամ շարակցեալ ընդ ζώνη (գօտի), պէսպէս օրինակաւ թարգմանեալ է ի Հայ. Աձչ. Մատ., այսինքն մերթ՝ վառել (զինու) Դտ. 18 · 11 եւն., եւ մերթ՝ սփածանել Եզ. 7 · 18 (զանց արարեալ ի Հմբ. ի բ. «Սփածանիլ»), մերթ՝ զգենուլ 1 Թգ. 2 · 4 եւ յայլ տեղիս, կամ՝ զգենուլ ի մէջս 3 Թգ. 20 · 32, եւ կամ՝ զգեցուցանել Սղ. 17 · 33 եւ այլուր, եւ մերթ՝ արկանել (զիւրեւ) 1 Թգ. 2 · 18, Յբ. 4 · 14, երբեմն եւս՝ ածել 1 Թգ. 17 · 39, կամ՝ ածել ընդ մէջ 1 Թգ. 25 · 13, Սղ. 44 · 4, 92 · 1, եւ կամ լոկ՝ (սուսեր) ընդ մէջ 2 Թգ. 20 · 8. դարձեալ մերթ՝ ունել ընդ մէջ 2 Թգ. 21 · 16, Եզ. 9 · 11 («եւ ունէր զկամարն ընդ մէջ իւր»), եւ մերթ՝ պնդել զմէջ Եր. 1 · 17, Եփ. 6 · 14, այլ եւ երբեմն՝ զօտի ածել Ղկ. 17 · 8, Գծ. 12 · 8, կամ՝ զօտի ածել ընդ մէջ 4 Թգ. 1 · 8, Յոբ. 12 · 18, Սղ. 108 · 19, Ղկ. 12 · 37, միանգամ եւս՝ զօտիածու 4 Թգ. 3 · 21, ուր Յուն. բնդ. ունի ընդն. անց., ըստ սմին օրինակի Ել. 12 · 11 «Գօտիք ձեր ընդ մէջս»։ — Իսկ կամար, համանշան զօտւոյ, բաւական յաճախեալ է ի Հ. Կ. (այլ ոչ ուրեք ի Ն. Կ.), զ. օր. Ել. 28 · 4 · 39 · 40, Ղեւ. 8 · 7 («եւ

ած ընդ մէջ Նորա զկամարն »), Ց · 13, Ես. 3 · 24, Եր. Ձ · 32, Դն. 10 · Ծ (տ. վեր.), Եզ. 9 · 2 · 3 · 11 ։ « Նախադր. Եկից » ի գլ. ճժէ. = 28 · 39—40 (Աճշ. Ջօհր.) մեկնէ զկամարն այսու յեղանակաւ. « Զապարաւշն՝ վերին գօտի ասեն՝ զանթովքն ի վերայ պճղնաւոր պատմուճանին, եւ կամար՝ բուն գօտին ի վերայ միջոյն » ։ || * Ոսկի. ԼՄ ոսկեղէն ։

14. * Իսկ. ըստ Ց դիպողագոյն քան զԼ Եւ ։ || * Հեր գլխոյ Նորա. այլակերպ ի Ցունէն, որում ճշդիւ համաձայնին ԼՄ՝ գլուխ Նորա եւ հերք (ԼամՄ հեր) ։ || * Սպիտակ = Ց, գնց. ԼՄ ։ || * Սուրբ. Լ սպիտակ = Ց. սա եւ հանդոյն սմին ԼՄ + (ԼՄ Եւ) որպէս շլին. Համմտ. Դն. 7 · 9 « Հինաւուրցն նստէր. հանդերձ Նորա սպիտակ իբրեւ զձիւն, եւ հեր գլխոյ Նորա իբրեւ զասր սուրբ » ։ || * Իբրեւ զբոց. այսպէս եւ ԼամՄ, իսկ Լ՝ որպէս բոց ։ Համմտ Դն. 10 · 6 « եւ աչք Նորա իբրեւ ճառագայթք հրոյ » . տ. նաեւ առ. 2 · 18 եւ 19 · 12 ։

15. * Նմանք = Ց. — ԼամՄ եզ., Լ նմանեալ ։ || * Ողիղիբանոյ. անշուշտ յանհմուտ գրչաց խանգարեալ փոխադրութիւն Ցուն. բառիս χαλκολιβάνῳ, միասնգամ Ներք. 2 · 18 նոյնպէս աղաւաղ այլաձեւ գրութեամբ՝ արկողիբանի յԵ, ուր ընդօրինակիչն ԲԻ, անտեղեակ Ցուն. լեզուի, գուցէ տգիտութեամբ կարծելով թէ Հայերէն ինչ իցէ դժուարիմաց Ցուն. բարդ անունդ այդ, գրէ անջատեալ՝ արկողի բանի ։ Χαλκολίβανον(-ος), ուղիղ փոխադրութեամբ՝ քաղկողիբանոն(–նոս), որ միայն ի գիրս Ցայտնութեան երկիցս գտանի, եւ ոչ բնաւ այլ ուրեմն, յոյժ մթին բառ մի է. Նշանակութիւնն երկբայական եւ անյայտ. Թուի՝ թէ

տեսակ ինչ մետաղի է, ըստ կարծեաց քննչաց ոմանց՝ բաղադրութիւն ինչ յոսկւոյ եւ յարծաթոյ, ըստ այլոց՝ «ոսկեպղինձ»։ Զա՛յսչափ դոյզնագիւտ եւ զայլուստ բնաւին անծանօթ զբառիս զայսորիկ զբուն իմաստն անգիտանալով, կամ մանաւանդ հայերէն համազօր նոյնանշան բառ մի չգտանելով, Հայ Թարգմանիչն՝ ըստ ամենայն հաւանականութեան՝ լաւագոյն համարի նոյնութեամբ փոխագրել զայն նախատասցեալ Յուն. բառ։ — Իսկ Լ Թարգմանէ՝ պղնձոյ ծխելոյ, կամ ըստ ԼՄ՝ պղնձի ծխելոյ, որպէս գրէ Լ եւս խոռն. 2. 18։ Բերդ. յէջ 17 պարզաբանէ այսպէս. «Ըստ այլ թարգմանութեան [? — դիտելի է զի Վուլգատա կոչեցեալ Լատին թարգմանութիւնն ունի՝ aurichalcum, կամ orichalcum] գրի՝ նման ոսկի պղնձոյ. որ է արոյրն, այսինքն՝ դեղնապղինձն, որ զայն նշանակէ եւ ի մեզ՝ պղինձն ծխեալ»։ Սոյնպէս եւ ԲՀԼ. ի բ. Ծխեալ մեկնէ. «Իսկ մինչ ասի՝ պղինձ ծխեալ, նշանակի՝ արոյրն, որ է ոսկեգոյն պղինձն, ուստի եւ կոչի [ո]սկեպղինձ, որ յորժամ ըստ արուեստի գործի, եւ կոկի, ոսկւոյ նման փայլի. վասն որոյ եւ երբեմն կոչի՝ պղինձ փայլուն. որպէս դնի Յ. Թագ. 7. 45։ Ռամկ. ասի սա՝ դեղին պղինձ։ Յայտ. 1. 15։ եւ 2. 18։» Իսկ ՆԲՀԼ. ի բ. Պղինձ ծխեալ մեկնաբանէ զայս օրինակ. «Ազգ հրահալելեաց կամ պղնձոյ՝ հաւասար ոսկւոյ՝ կամ ազնուագոյն եւս համարեալ յոմանց»։ Հանդերձ այսու ամենայնիւ՝ սոյն մեկնութիւնք քաղկոդիբանոսի բոլորեքին լոկ կարծողական են եւ անստոյգ։ — Այսր հատուածի նախատիպ օրինակն է Եզ. 1. 7, 27 եւ Դն. 10. 6 («բազուկք եւ բարձք նորա իբրեւ զտեսիլ փայլուն պղնձոյ»)։ — Զկնի քաղ-

կողիբաճու Յ եւ ընդ նմին ԼՄ յաւ.՝ էֆրեմ (զնց. ԼՄ) է մէջ հնոցէ հրաշէկ (կամ հրայրեաց, տե. 2 Պտ. 3 · 12)· եւ յայն նորա էֆրեմ ըյայն ջարց բոցմաց։ Դիտելի է սակայն՝ թէ բառքդ էֆրեմ է մէջ հնոցէ հրաշէկ պակ. համեմատ թ՝ նաեւ ի Յուն. օր. միում (զորմէ տե. ի Գերմ.—Յուն. մասին զհամեմատութիւն Յուն. օրր.)։ Համմտ. Եզ. 1 · 24, 43 · 2։

16· * Ուճէր· ԼՄ + յանչոյ յետքին խորամ = Յ։ || * Երկսայրի· նոյնպէս եւ Լամ, իսկ Լ ունի՝ երկբերանեան, որ չիք այլ ուրեք յԱծչ. Մատ.։ Յուն. բառն թարգմանեալ է ի մեզ առ հասարակ՝ երկսայրի (Դտ. 3 · 16, Սղ. 149 · 6, Առ. 5 · 4, Սիր. 21 · 3, Եբ. 4 · 12)· նոյն ինքն Լ սա. 2 · 12 ի կիր առնու զսոյն բառ։ — Յ որպէս եւ Լամ + սրեալ։ Համմտ. Ես. 11 · 4, 49 · 2։ || * Եկաճէր· դատաւորութիւնն ճշգիւ համեմատ Յ· իսկ Լ դնէ յառաջ քան զսուր, սակայն Լամ = Յթ։ || * Փայլէիճ· Լ [illegible] (—էր ԼամՄ)· երկոքին թարգմանութիւնք տարբերին ի Յունէն, որ ունի՝ (որ) ծագէ ի զօրութեան իւրում· ըստ նմանութեան Դտ. 5 · 31 « . . . իբրեւ զելս արեգական ի զօրութեան նորա »։ Անկներեւ ազդեցութիւն թէ ի վերայ Լ։

17· * Տեսի· ԼՄ + [illegible] = Յ։ || * Մեռեալ· Լ նախդ. զնխ. ա։ — Համմտ. Ես. 6 · 4, Դն. 8 · 17—18, 10 · 7—10։ || * Զաջ մինչեւ ցիմ· ըստ դասաւորութեան բառից ճշգիւ = Յ· իսկ Լ շրջելով զկարգն գրէ՝ է [illegible]։ || * Ասելով = Յ, զոր ԼՄ փոխեն ի դիմ. բայ՝ [illegible] (ԼամՄ բցթ. [illegible])· համմտ. Դն. 10 · 12, Ես. 44 · 2։ || * Ես եմ (երկր.)· այսպէս եւ ԼՄ, չիք ի Յ։։ || * Առյապա· Լ [illegible], ճշգրիտ = Յ· այլազգ ունին զամ-

բողջ հաստուածդ ԼամՄ՝ ես եմ օկէղքն՝ ես ես եմ ճախ-
ճան. ի ճահ եւ ի դէպ թարգմանէ թ ըստ նմանու-
թեան նախատիպ օրինակին Եա. 44. 6 «Ես առա-
ջին՝ եւ ես առ յապայ». տ. այլ եւ Եա. 41. 4 «Ես
Տէր առաջին, եւ ես նոյն եմ առ յապա». Նմանա-
պէս 48. 12 «Ես եմ առաջին, եւ ես եմ յաւի-
տեան»: Հմմտ. ստ. 2. 8 եւ 22. 13:

18. *Եւ որ ուՆիմ. ԼՄ լոկ՝ ես անէմ = Յ.
ստ նխզ.՝ եւ որ կեամ, եւ եղէ մեռեալ, եւ աւա-
սիկ կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից. Նմանա-
պէս, միայն թէ սակաւ ինչ զանազանութեամբ ըն-
թերցուածոց, ունին ԼՄ՝ ես [պակ. Մ] ես եմ կենդան՝
ես ես [+ եմ ԼամՄ] նոյն [պակ. ԼամՄ] որ մեռայ[ն
ԼամՄ], ես [+ ահաւասիկ ԼամՄ] եմ կենդանի [ԼամՄ
կենդանի եմ]. այժմ ես միշտ ես [այս չորեքին բառք
պակ. ի ԼամՄ] յաւիտեանս յաւիտենից. ամէն [ԼամՄ
բցթ. ամէն]: — Ի բաց թողլով զառաջիկայ հա-
տուածդ՝ թ տարբերի յամենայն Յուն. օրր., այլ
սակայն հաւանական կարծեօք պակասէր այդ նա եւ
անդստին ի Յուն. նախագաղափար պատճենին, յոր-
մէ թարգմանեալ լինէր թ: — Առ զկնիսդ հմմտ.
Յոբ. 38. 17:

19. *Արդ = Յ, պակ. ԼՄ: ||*Տեսերդ =
Յ, ներկ. ԼՄ: ||*Եւ (առՁ) = Յ, պակ. ԼՄ:
||*Որ էՆ. Լ + ես որ յապա, զոր չունին ոչ Յ եւ ոչ
Լամ: ||*Որ լինելոցՆ է = Յ. այլազգ փոխէ Լ՝
որ հանդերձեալ է լինել: ||*Յետ այսորիկ = Յ.
Նմանապէս ԼամՄ՝ յետ այնորէկ, փխկ. որոյ Լ վրիպա-
նօք լոկ՝ այս: Հմմտ. Դն. 2. 29 «. . . թէ զի՞նչ
լինելոց է յետ այսորիկ»:

20. *Խորհուրդ. ԼՄ շխորհուրդ. Յուն. բնգ.

երկդիմի է․ ոմանք ի մեկնչաց իմանան զխորհուրդ իբրեւ բացարձակ ուղ․, յայլոց եւս առաւել իրաւամբք առեալ լինի բառդ այդ իբրեւ հյց․, բայց ոչ իբրեւ խնդ․ սեռի Նախընթաց գրեա բառին, այլ բացարձակ հյց․, որպէս Նախակարգեալ բացայայտիչ։ Բանս իմանալի է այսպէս․ «իսկ վասն խորհրդոյ եւթն աստեղացն եւն․, — եւթն աստեղք՝ հրեշտակք են եւթն եկեղեցեաց» եւն․։ ‖ * Աստեղացն, Լ-ջ։ ‖ * Ի վերայ աջոյս իմոյ․ ճշդիւ = Ց․ ոչ ճշգրիտ Թարգմանէ Լ՝ յաջս իմ, կամ՝ որպէս ունին ԼոՄ՝ յաջոյ իմ։ Վեր․ հմր․ 16 յաջու էր, իսկ աստ՝ ի վերայ աջոյ։ ‖ * Ճրագանցս․ Լ ճրագարանս․ տ․ վեր․ զծան․ ի հմր․ 12։ ‖ * Աստեղք, Լ-ն = Ց։ ‖ * ԵՆ․ Լ = Ց դնէ զէական բայդ զկնի եկեղեցեացն։ Ըստ դասաւորութեան բառից՝ Թ․ համաձայնի Ցուն․ օր․ միում։ ‖ * Ճրագարանքն․ Լ նոյնպէս (տ․ վեր․ զծան․ ի հմր․ 12) + Ն-րն = Ց․ — Թ․ գտանի միաբան ոմանց ի Ցուն․ օրր․ (առ այս տ․ զհամեմատութիւն այլեւայլ Ցուն․ օրր․ ի Գերմ․ - Ցուն․ մասին)։ ‖ * Եւթանք․ Լ Ն-րն։

Բ․ 1․ * Հրեշտակին = Ց․ իսկ ԼՄ՝ առ հրեշտակ․ ըստ ամին օրինակի Ներք․ հմր․ 8, 12, 18, եւ Յ․ 1․ 7․ 14, ուր Թ = Ց ունի վերջահոլով տրկ․, փխկ․ որոյ ԼՄ ամենայն ուրեք դնեն առ Նախդրիւ տրկ․։ ‖ * Որ յԵփեսոս = Ց․ զոր ԼՄ փոխադրեն՝ Եփեսացւոց։ ‖ * Եկեղեցւոջն․ լաւագոյն թուի ուղղել ըստ Բ՝ եկեղեցւոյն, որպէս գրեն եւ ԼՄ = Ց։ Սակայն հարեւանցի իմն յիշելի է՝ թէ ըստ քննչաց ոմանց

նոյն ինքն ընթերցուածն Յուն. բնագրին (այս է՝ «որ յՅեփեսոս եկեղեցւոյն») յայսմ վայրի որպէս եւ ստ. Հմր. 8, 12, 18, եւ **3**. 1, 7, 14 *«սկզբնական ինչ վրիպանք» է, սմին իրի եւ Թիւրիմացութեան առիթ եղեալ։* ‖ * Զայս ինչ. Լ այսպէս. *երկոքին եւս յարմարին Յունին, Հմմտ. Գծ.* **15**. 23 *եւ* **21**. 11։ *Նաեւ ստ. Հմր.* 8, 12, 18, *եւ* **3**. 1, 7, 14 *Թ ունի՝* զայս ինչ, *իսկ* ԼՄ՝ այսպէս։ ‖ * Որ ունի. Լ *աւե-լորդաբար նխդ.՝* կարօղն, *զոր չունին եւ* ԼմՄ = ԹՅ։ ‖ * Զեւքն աստեղսն = Յ. *հակադարձ կարգաւ* Լ՝ շտապեղս եօթն. *իսկ* Լմ = ԹՅ։ ‖ * Որ գնայր. *պիտի լինել ըստ* Յ, *որ ունի զընդն. ներկ.* («*գնացողն*»), որ գնայ. — ԼՄ՝ եւ շրջի։ ‖ * Ծրագանոցացն. Լ աշտանակէ (ԼմՄ-նոց). *տ. զծան. ի Հմր.* 12։ ‖ * Ոսկեայց = Յ. *ոչ ճշդիւ* ԼՄ՝ ոսկւոյ։

2. * Զգործն. *եզզագոյն* ԼՄ *յգ.* = Յ։ ‖ * Զաշխատութիւնս. ԼՄ չխոտորեալ, Լմ *եզ.*, *որպէս ունի* Յ. — *Յուն.* κόπος *Թարգմանի մերթ՝* վաստակ (*Ծն.* **31**. 42, *Սղ.* **24**. 18, **72**. 5, *Իմ.* **3**. 11 *եւն.*, *ՅՀ.* **4**. 38, 1 *Կր.* **3**. 8, **15**. 58, 2 *Կր.* **10**. 15, **11**. 23, 27, 1 *Թս.* **1**. 3, *եւ յայլ տեղիս*), *մերթ՝* աշխատութիւն (*Երկ.* **1**. 12, *Դտ.* **10**. 16, *Յոբ.* **4**. 2, 2 *Կր.* **6**. 5 *եւ այլուր*), *եւ մերթ՝* ցաւք (*Սղ.* **89**. 10, **106**. 12)։ ‖ * Զհամբերութիւնս. ԼՄ *եզ.* = Յ։ *Հմմտ.* 1 *Թս.* **1**. 3։ ‖ * Կարես տանել չարաց = Յ. *իսկ* Լ *բցթ. զբառդ* կարես *եւ ընթեռնու՝* բառնալ չարս, *սակայն* ԼմՄ *ունին՝* կարես բառնալ չարան։ *Դի-պողագոյնս բացատրէ Թ զիմաստ Յուն. բնագրին. Թէպէտեւ Յուն. բառդ* βαστάζειν, *«հանդուրժել», «համբերել», «տանել» նշանակութեամբ, առէպ* բառնալ (*զ. օր.* 4 *Թգ.* **18**. 14, *ՄԹ.* **20**. 12, *Գծ.*

15 · 10, Հռ. 15 · 1, Գղ. 6 · 2) *թարգմանեալ գտանի, է ուրեք եւ՝* կրել (*Գղ.* 5 · 10)։ || * Որք = Ց, *այսպէս եւ Ոսկան, ուր* Լ *եղ.*։ || * Գտեր զնոսա սուտս, *բառ առ բառ* = Ց. *սոցին համաձայնին եւ* ԼՄ. *իսկ* Լ *այլափոխէ՝ Հերքայեցէս՝ նս ստեն. այն ընթերցուած ակն յայտնի ոչ այլ ինչ է, բայց եթէ մեկնողական թարգմանութիւն, հայեցեալ ի հմր.* 9 *եւ* 3 · 9, *վերաբերութեամբ առ* 2 *Կր.* 11 · 13 *եւ* 1 *Յհ.* 4 · 1 *հհ.*։ — *Զայս համար* ԼՄ *ունին ամբողջ այսպէս. «Տեսի զգործս քո, եւ զվաստակ, եւ զհամբերութիւն, եւ զի ոչ կարես բառնալ զչարսն, եւ փորձեցեր զի ասէին զանձինս առաքեալս գոլ, եւ ոչ էին. եւ գտեր զնոսա սուտս, եւ բարձեր զնոսա»*։

3. * Համբերութիւն ունիս, *նոյնաբանութեամբ* = Ց. *այլազգ* Լ՝ *համբերեցեր*։ || * Բարձեր = Ց, *հմմտ. զծան. ի նախընթաց հմր.* — *վրիպէ* Լ՝ *էլտացոյց. պակ.* ԼՄ։ || * Նախատեցար, *թուի լոկ գրչի վրիպակ լինել, փխկ.՝ աշխատեցար, որպէս գրեն* ԼՄ *ի բաց թողեալ զնախադաս բացասականդ* ոչ, *կամ լաւ եւս՝* վաստակեցար (*«յոգնեցար». Աճշ. Կպ. ի ծան. դնէ՝ Բաստացար*) (*հմմտ. Մթ.* 11 · 28, *Յհ.* 4 · 6, *այլովքն հանդերձ*). *Յուն. բառս* κοπιᾶν *նշանակէ նախ՝* աշխատել (*Երկ.* 25 · 18, 1 *Թգ.* 14 · 31, *Ես.* 47 · 13, *Կղ.* 1 · 29, 2 *Տմ.* 2 · 6, *եւ յաճախ այլուր ի Ս. Գիրս*), *կամ՝* աշխատ լինել (*Ղկ.* 5 · 5), *իսկ մերթ՝* ջանալ (*Ես.* 30 · 5, *Եր.* 51 · 58, *Մթ.* 6 · 28), *եւ մերթ՝* վաստակ լինել (*Ես.* 45 · 14, 47 · 15), *եւ դարձեալ՝* տաժանել (*Ես.* 31 · 3), *կամ՝* դադարել (*Ովս.* 8 · 10), *այլ եւ՝* ձանձրանալ (*Եր.* 17 · 16)։ — *Բերդ. էջ* 30 *ի բնաբանին՝ դոկասեցար. աստի երեւի*

Թէ Բերդ. ունէր առ ձեռն եւ զայլ ինչ ձ.։

4. * Ունիմ ի վերայ քո. նոյնաբանութեամբ = Ց, այսինքն՝ «ունիմ տրտնջել զքէն»։ Հելլենական ասացածս ἔχειν τι κατά τινος նշանակէ՝ իրաւունս կամ պատճառս ունել տրտնջելոյ, կամ գանգատելոյ, կամ ամբաստան լինելոյ զումեքէ. այլուր ի Թարգմանչաց մերոց փոխադրեալ՝ ճշգիւ համեմատ Ցուն. բնգ.՝ ունել ինչ զումեքէ (Մկ. 11. 25), կամ՝ ունել ինչ խեք զումեքէ (Մթ. 5. 23). նման ինչ դարձուածք բանից Գծ. 19. 38, 24. 19, 25. 19, 1 Կր. 6. 1, 7, Կղ. 3. 13։ — Իսկ Լ՝ ակն յայտնի ոչ հասու զօրութեան մտացն Ցուն. բնգ.՝ սխալէ Թարգմանելով՝ ռաէմ առ ժեղ. ըստ այսմ դարձեալ խոն. հմր. 20 (ուր Թ ունիմ վասն քո). նոյն Թիւրիմացութիւն ի Լ նաեւ ի հմր. 14՝ ռանէմ առ ժեղ, ուր ի Թ յաւելուած ինչ կայ յօտար ձեռանէ՝ ունիմ (+ ասել) վասն քո։ Իսկ Մ զուգընթաց է ընդ Լ։ — Զկնի վերոյնշանակեալ բառիցդ Ց եւ համգոյն նմին ԼՄ յաւ.՝ չէ շէէրն ծօ շառաղէն Նոզէր։ Զհաւատուածս զայս ունի Թ ըստ մասին եւեթ, բայց շարակցեալ ընդ հետագայսդ, զայս օրինակ։

5. * Յիշեա զսէրն քո զառաջին՝ ուստի անկար, ուր ԼՄ = Ց ունին՝ յէշէա այժմ [Մ բջԹ. այժմ] առաջէ անէլարն։ ‖ * Զղջացիր. ԼՄ առաշառնէա։ — Թ ոչ երբեք ի կիր առնու զբառդ ապաշաւել, կամ ապաշխարել, որպէս ունի Լ աստէն խոն. եւ յայլ տեղիս, հմր. 16, 21, 22, եւ 3. 3, 19, 9. 20, 21, 16. 9, 11, այլ ամենայն ուրեք Թարգմանէ զղջալ, կամ զղջանալ զՑուն. μετανοεῖν, որ ի մերում Թարգմանութեան Ս. Գրոց պէսպէս օրինակաւ՝ է զի փոխադրի՝ զղջանալ (զ. օր. 1 Թգ. 15. 29, Իմ. 5. 3.

Յով. 2 . 13, *Յոն.* 3 . 10, 4 . 2, *Զք.* 8 . 14, *Եր.* 4 . 28, 8 . 6, 18 . 8, 10, *Մթ.* 12 . 41, *Գծ.* 26 . 20), *եւ է զի՝* ապաշաւել (*Ամ.* 7 . 3 . 6, *Յով.* 2 . 14, *Յոն.* 3 . 9, *Ես.* 46 . 8, *Եր.* 31 . 19, *Գծ.* 2 . 38, 3 . 19, 8 . 22), *եւ է ուրեք՝* զղջումն լինել (*Առ.* 20 . 25), *իսկ* ապաշխարել *ի Հ. Կ. բնաւ ոչ, բայց միայն մի անգամ* (*Սիր.* 17 . 20), *այլ յաճախակի յատկապէս ի Ն. Կ.* (*Մթ.* 3 . 2, 4 . 17, 11 . 20, 21, *Մկ.* 1 . 15, 6 . 12, *Ղկ.* 10 . 13, 11 . 32, 13 . 3, 5, 15 . 7, 10, 16 . 30, 17 . 3, 4, *Գծ.* 17 . 30, 2 *Կր.* 12 . 21)։ || * Գործսն. ԼՄ + *ես, չիք ի* Յ։ || * Գամ. ԼՄ + *ես փութափութեմ*։ || * Քեզ = Յ, *պակ.* ԼՄ. *այս խնդ. բն. ըստ Յուն. ոճոյ է, ի քերականաց սովորաբար «բարոյական տրկ.»* (dativus ethicus) *կոչեցեալ։ Ծիշդ չէ՛ ծան. յԱծչ. Կպ. թէ՝ «Յայնն, զամ առ քեզ»։ Հմմտ. Ներք. հմր.* 16, *եւ Մթ.* 21 . 5 *«ահա թագաւոր քո* գայ քեզ»։ || * Զճրագանոցսն. Յ *եզ., իսկ* ԼՄ *գրեն՝ ղողորանօք, զոր լոկ գրչի վրիպակ համարիմ, փխկ.՝ ղողփանօք, որպէս ունի Լմի ընդ Ոսկանայ, եւ այլ ձ. մի՝ զորմէ տ. առ* Նորայրի Բիւզանդացւոյ, *«Կորիւն վրդ. եւ Նորին Թարգմանութիւնք» եւն., յէջս* 421—422։ *Այլ եւ տ. վեր. զծան. ի հմր.* 12։ || * Զղջացցես (*խոն.* 3 . 3 – ցիս). ԼՄ՝ *ապաշխարեցես. տ. վեր.*։

6. * Այլ = Յ, *փխկ. որոյ* ԼՄ՝ *այլ*։ || * Ունէիս = Յ. *իսկ* ԼՄ *անճիշդ՝ ուրս՛. Բերդ. էջ* 35 *«ըստ այլ թարգմանութեան,* զայս ունէիս»։ || * Նիկողիացւոցն, *սխալ գրութիւն, նոյնպէս խոն. հմր.* 15, *ուղղելի՝* Նիկողայեցւոցն, *կամ՝* Նիկողայեցեացն = Յ. *ո՛չ ճշդիւ գրեն* ԼՄ՝ *Նէկողայեցւոց*։ *Վերաբերութիւն այսց կողմնակցաց կամ արբանեկաց*

Նիկողայոսի առ սարկաւագն Նիկողայոս՝ յիշատա-
կեալն Գծ. 6 · 5՝ ընդ խնդրով է եւ երկբայական։
|| * Եւ = Յ, բցթ. ԼՄ։ || * Ատեմ. Լ ատեամ։

7. * Ունիցի, վայելուչ քան զԼՄ՝ ունի։
|| * Լսելոյ. այսպէս եւ ԼՄ, չիք ի Յ։ || * Սուրբ.
Լ նոյնպէս, պակ. ԼոՄ = Յ։ || * Եկեղե-
ցեացն = Յ. չէ՛ ի ճաշ. ԼՄ՝ առ եկեղեցիս։ || * Յաղ-
թողին = Յ. ըստ կարգի սովորութեան ԼՄ փոխեն
զընդ. ի դիմ. բայ՝ որ յաղթէ։ || * Տաց. ԼՄ +
նմա = Յ, երրայականութիւն, որպէս յաճախ ի Յ։
|| * Ի դրախտին = Յ, ուր ԼՄ՝ է մէջ դրախտին։
Համա. Ծն. 2 · 9, 3 · 3, եւ Եզ. 31 · 8։ || * Իմոյ.
պակ. ՅԼՄ. — Թ համաձայնի ոմանց ի Յուն. օրր.
(առանձին իմն խումբ ձձ., զորմէ տ. ի Համեմա-
տութեան Յուն. օրր.)։

8. * Հրեշտակին = Յ, ուր ԼՄ՝ առ հրեշտակ.
տ. վեր. համ. 1։ || * Որ ի Զմւռնիա եկեղեցւոյն =
Յ. այլափոխեն ԼՄ՝ Զմիւռնացւոց եկեղեցւոյն. տ. վեր.
համ. 1, եւ 1 · 11։ || * Զայս ինչ. ԼՄ՝ այսպէս. համա.
վեր. համ. 1։ || * Առաջինն եւ առ յապայն = Յ.
ո՛չ ճշդութեամբ թարգմանեն ԼՄ՝ առաջինն (ԼժՄ
առաջինն) եւ անվախճանն (ԼժՄ անկատարածն). տ.
զծան. ի 1 · 17։

9. * Գիտեմ = Յ, զոր ԼՄ մերպանօք թարգ-
մանեն՝ գիտեմ. նոյն սխալն եւ ներք. համ. 13, 19,
3 · 1, 8։ || * Զքո զգործս. ԼՄ համառօտեն՝
զգործս քո. Յ ունի միայն՝ զքո։ Այլ սակայն Թ հա-
մանման գտանի ոմանց ի Յուն. ձձ.։ || * Եւ զհամ-
բերութիւն. պակ. ՅԼՄ։ || * Զնեղութիւն. ԼՄ նախ-
եա, զոր չունի Յ։ || * Այլ հզաւր ես համբերել
բամբասանաց. տեղիս այս ակներեւ խանգարեալ է.

ըստ Յ ընթեռնլի է՝ այլ մեծատառն ես [իբրեւ ընդ մէջ անկեալ խօսք], եւ զնայնոյութիւնն։ Այլազգ, եւ շրջաբանութեամբ թարգմանեն ԼՄ՝ այլ աղէտաւորեալ քո՝ մեծաւորեալ եղիցի. եւ ողորմելութեանն։ Բերդ. էջ 37 «Ըստ այլ թարգմանութեան, այլ փարթամ ես»։ Եւ ապա ի բնաբանին՝ եւ հոյհոյէ։ — Համանման ընդգիմակադրութիւն որպէս 2 Կր. 6 · 10, 8 · 9, Եկ. Զ · Ց։ || * Որք առեն (իմա՝ այնոցիկ որք ասեն) = Յ, որ ճշդիւ ունի՝ ասողաց (ասացողաց). ԼՄ անճշգրիտ՝ որ ասէին։ Բերդ. «յայնցանէ՝ որք ասեն»։ || * Յուդայեանց զօլ. ամենեքին իսկ Յուն. ձեռք։ Թէպէտ եւ Յ ունի՝ ըստ կանոնի՝ զանեւ. հանդերձ ան. բ. ի հյց., այսինքն՝ Յուդայեանս զօլ, որպէս թ եւս վեր. հմր. 2 եւ ստ. 3 · 9, սակայն կան արդարեւ Յոյն օրր. ոմանք որք զան. բ.՝ հանգունակցութեամբ նախընթաց ասողաց (= որք ասեն)՝ գնեն ի սռկ., որոց զուգընթաց է յայսմ եւ թ (տ. Համեմատութիւն Յուն. օրր.)։ Զնմանօրինակ յօրինուածս բանից Յուն. բնգ. այլուր փոխադրեն Թարգմանիչք մեր՝ ըստ սովորական բուն կանոնաց Հայերէն լեզուի՝ դիմ. բայիւ եւ շղկ., զ. օր. Գծ. 5 · 36 («ասել զանձնէ թէ իցէ ոմն»), 8 · 9 («ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն»), հմմտ. նաեւ Գծ. 25 · 4, 21, Հռ. 2 · 19, 6 · 11, 1 Կր. 7 · 11, Եփ. 4 · 22, Փպ. 3 · 13, Եբ. 10 · 34։ Իսկ Յուդայեանն, փխկ. Հրեայ, ոչ ուրեք ի գործ ածի ի Հայ. Աճշ. Մատ., բաց ի Գրոց Մակաբայեցւոց (տ. Հմբ.), այլ առ հասարակ Հրեայ գնի ի մեզ, ուր ըստ Յուն. բնգ. է Յուդայեանն։ Ըստ այսմ Լ թարգմանէ՝ Հրեայս եւլ։ — Զանուանցդ Հրեայ = Յուդայեան = Եբրայեցի = Իսրայէլ, Իսրայելացի ընդարձակագոյնս տ., յայլոց միջի, ի ԲՀԼ.

Հտր. Բ. Բռ. Ցտկ. Ան., ՆԲՀԼ., եւ ի Բառ. Ս. Գր.։ ‖ * ՉեՆ = Ց. դարձեալ անճիշդ ԼՄ՝ վէՆ, յոր Թիւրիմացութեամբ յաւ.՝ ենւ. Նմանապէս Լոմ վէՆ ենւ։ ‖ * ժաղով, այսինքն՝ ժողովուրդ (հմմտ. Թի. 16. 3, 20. 4, դպրոց աղանդաւորաց, արբանեակք։ ‖ * ԵՆ, հանգոյն Յուն. ձ. միում. իսկ ի Լ պակ. = Ց։

10. * Մի երկնչիր մինչեւ ի եՆ. ճշգրիտ եւ քաջայարմար բացատրութիւն Յունին, որ բան առ բան ունի՝ մի՛ երկնչիր զորս (կամ՝ յորոց) կրելոցն (կամ՝ չարչարելոցն) իցես. իսկ ԼՄ Թիւրիմացութեամբ կամակորեն զմիտս բանից Յուն. բնգ. Թարգմանելով՝ մի՛ երկնչիր՝ վասն որոց կամիս չարչարել։ Նմին դարձուածով բանից, որպէս աստէն ի Թ, Թարգմանեալ գտանի πάσχειν եւս Մթ. 27. 19 («բազում անցք անցին ընդ իս»), Գղ. 3. 4 («այնչափ անցք անցին ընդ ձեզ»). Նմանապէս Եսթ. 9. 26 («եւ որ ինչ միանգամ անց ընդ նոսա»), 2 Մակ. 7. 18 («ընդ մեզ այս անցք որ անցանեն»), Եզ. 16. 5 («գուցէ անցանիցէ ինչ ընդ քեզ»), հմմտ. նաեւ Ղկ. 13. 2 («զի զայնպիսի անցս կրեցին»). իսկ յայլ տեղիս վերոյիշեալ Յուն. բառդ Թարգմանի ի մեզ մերթ՝ չարչարել (զ. օր. Մթ. 16. 21, 17. 12, Մկ. 9. 11, եւ յաճախ այլուր), մերթ՝ չարչարանս կրել (Իմ. 18. 1), կամ՝ չարաչար տանջել (Իմ. 18. 19), եւ մերթ՝ վշտանալ (Մկ. 5. 26, 1 Կր. 12. 26), եւ դարձեալ՝ ցաւէ (Ամ. 6. 6, Զք. 11. 5), կամ՝ հիւանդանալ (Մթ. 17. 15), այլ եւ՝ զճգնութիւն կրել (2 Թս. 1. 5), ուրեք եւ՝ (չար) լինել ունեք (Գծ. 28. 5), այլովքն հանդերձ։ ‖ * Անաւասիկ. Լ ահա։ ‖ * Արկանելոց է = Ց, ուր Լ հանդերձի (ԼոմՄ հանդերձեալ է) . . . արկանել։ ‖ * Զոք

ի ձեռս. ճշգրտագոյն ըստ իմաստին Յուն. բնգ. պիտի՝ զօձանս ի ձեռս (Հմմտ. Յհ. 16·17)· ԼՄ սոսկ՝ է յԵՆՉ։ || * Բանսարկուն· Յ + ի բանտ, զոր ունին եւս ԼՄ եդեալ զկնի բառիդ է յԵՆՉ. անշուշտ յօրինակագծաց թիւ անմտադրութեամբ ի բաց թողեալ։ || * Փորձեսջիք· ԼՄ փորձեսջիք։ || * Կալջիք· ԼՄ ունիք· դիպողագոյն՝ ունիջիք, որպէս ունի Ոսկան։ ԼՄ = Յ նխդ.՝ եւ, եւ յաւ.՝ ներդաշնեան. թուի ինձ թէ անհոգութեամբ գրչաց զանց եղեալ ի թ։ — Հմմտ. Դն. 1·12, 14։ || * Կենդանութեան· ճահաւորագոյն ըստ Յ ունին ԼՄ՝ կենաց, որպէս առ հասարակ ի Ն. Կ. թարգմանի Յուն. ζωή, ի բաց առեալ Հռ. 11·15 եւ 2 Կր. 2·16, ուր կենդանութիւն դնի։ Թ է զի ի կիր առնու զբառդ կեանք (2·7, 17·8, 22·14), եւ է ուրեք՝ զի զկենդանութիւն (7·17, 20·12, 15, 21·6, 22·17), իսկ Լ ընդ հանուր՝ կենաց։ Հմմտ. Յկ. 1·12 «զպսակն կենաց»։

11. * Որ ունիցի· ԼՄ ունի· Յ ընդդ. ներկ. (ունողն)։ || * Լսելոյ· այսպէս եւ ԼՄ, չիք ի Յ։ || * Հոգին· Լ + սուրբ, զոր չունին ո՛չ Յ եւ ո՛չ ԼաՄ։ || * Եկեղեցեացն = Յ· իսկ ԼՄ առ եկեղեցեաց. տռ. վեր. գծան. ի հմր. 7։ || * Յաղթէն· Լ առանց գմրչ. յ.։ || * Վնասեսցի· Լ անիրաւի. երկոքին ի դէպ զան Յունին. ἀδικεῖν զոր Թ ամենայն ուրեք (որպէս աստ նոյնպէս եւ 6·6, 7·2, 3, 9·4, 10, 19, 11·5, 22·11) միակերպ վնասել, իսկ Լ պէսպէս օրինակաւ թարգմանէ, ըստ լեզուի Ս. Գրոց նշանակէ՝ 1. վնասել (Ղեւ. 6·2, 4, Յթ. 11·4)· 2. վնասակար եմ (Գծ. 25·10, 11), իբրեւ ընդդ.՝ վնասակար (Ես. 51·23)· 3. անիրաւել (3 Թգ. 8·47, 2 Մն. 6·37, 26·16, Յոբ. 8·3 «անիրաւ [դա-

տեւ]», 10 · 3, Եր· 3 · 21, Բա· 2 · 12, Եզ· 17 · 20, 39 · 26, Դն· 9 · 5), փխկ· ընդն.՝ անիրաւ (Սղ· 70 · 4)· 4· մեղանչել (Ծն· 21 · 23, 42 · 22, Ելս· 2 · 20, 2 Թգ· 24 · 17, 2 Եզր· 10 · 13, Տոբ· 6 · 15, Սղ· 61 · 10, 104 · 14, Եա· 65 · 25, Եր· 37 · 17, 1 Մակ· 7 · 14, 3 Մակ· 6 · 5, Ղկ· 10 · 19, 2 Կր· 7 · 2, Գղ· 4 · 12)· 5· զրկել (Ծն· 26 · 20, Ել· 2 · 13, Ղեւ· 19 · 13, Երկ· 28 · 29, 1 Թգ· 12 · 4, Սղ· 10 · 3, 102 · 6, 145 · 7, Առ· 1 · 32, 24 · 29, Սիր· 4 · 9, Ամբ· 1 · 2, Եա· 1 · 17, 3 · 15, 23 · 12, 25 · 3, 5, Եր· 9 · 5, 21 · 12, 22 · 3, 2 Մակ· 3 · 12, Մթ· 20 · 13, Գծ· 7 · 24, 26, 1 Կր· 6 · 7, 8, 2 Կր· 7 · 12), իբրեւ ընդն.՝ զրկիչ (Եա· 10 · 20)· 6· յանցանել (2 Թգ· 19 · 19, Սղ· 105 · 6, Փմ· 18)· 7· նենգել, իմիք (Սղ· 88 · 34)· 8· ընդդէմ դառնալ (Եսթ· 1 · 16)· 9· չարիս գործել (Եսթ· 4 · 1)· 10· ստել, իմիք (Սղ· 43 · 18)· 10· դատել (Սղ· 34 · 1)· 11· պնդել, որպէս յամառել (Եա· 21 · 3)· 12· բուռն է ումեք յումեքէ (Ծն · 16 · 5), եւ՝ բուռն առնել ումեք (Ել· 5 · 16)· 13· նեղիչ, փխկ· ընդն· (Սղ· 118 · 121)· 14· պատիժ, փխկ· աներ· կրւ· (Իմ· 14 · 29)· 15· ապիրատն, փխկ· ընդն· (Կղ· 3 · 25)· 16· (ըստ իւրում) ապիրատութեանն, փխկ· անոր· կտր· (Կղ· 3 · 25)·

12· * Հրեշտակին = Յ· իսկ ԼՄ ու հրեշտակն· ստ· վեր· գծան· ի հմր· 1· || * Պերգամոս· ուղիղ գրութիւն քան զԼՄ Պերգամոյ· ստ· վեր· 1 · 11· || * Եկեղեցւոյն = Յ· սխալեն ԼՄ՝ Եկեղեցին· Ոսկան ունի՝ Եկեղեցւոյն· ստ· գծան· ի հմր· 1· || * Զայս ինչ· ԼՄ այսպէս· ստ· հմր· 1· || * Սուր· ըստ եւս ԼՄ զսուրն = Յ· Համմտ· վեր· 1 · 16·

13· * Գիտեմ = Յ· — վրիպեն ԼՄ գտեմ (ստ·

հմր. 9), յոր յարեալ յաւ.՝ չխօսծս փ., որ չիք ի Յ։ || * Ուր բնակես = Յ. այլազգ ԼՄ՝ Եւ ՉԵ (Լմ ուք) բնակեալ ես։ || * Աթոռ. ճշդագոյն Լ աթոռն = Յ։ || * Է. Լ դնէ զկնի բառիդ աթոռն. պակ. Յ։ || * Զհաւատսն. ԼՄ բցթ. զդմրշ. յ. եւ յաւ. էմ = Յ։ || * Ցորում ընդդիմացարն վկայն իմ հաւատարիմ. այս հատուած ոչ միայն ի յառաջիկայ թարգմանութեանս աստ, այլ եւ յամենայն Յուն. օրր. Ցայտնութեան անդստին յառաջին ժամանակաց բոլորովին աղաւաղեալ է։ Յուն. բնդ. ի վաղնջուց հետէ թէ խառնակ հանգամանօք է աւանդեալ, եւ թէ՝ ի պատճառս անկանոն շարադասութեան բանից՝ չփոթիմն եղանակաւ իմացեալ ի նախնեաց։ Նոյն ինքն ուղղագրութիւն անուանս Անթիպաս, կամ ճշգրիտ փոխագրութեամբ՝ Անտիպաս (համառօտութիւն անուանն Անտիպատրոս) զանազան է։ Ոմանք ի Յուն. ձձ. գրեն 'Αντίπας (կամ 'Αντιπᾶς), Անտիպաս, եւ այլք՝ 'Αντείπας, Անտ(ե)իպաս։ Արդ՝ ըստ կարծեաց ձեռնհաս քննչաց Ս. Գրոց՝ թուի թէ ի սկզբան անդ գրեալ էր ἐν ταῖς ἡμέραις 'Αντίπα, ὁ μάρτυς μου ὁ πιστός այսինքն՝ «յաւուրս Անտիպայ, վկայն իմ հաւատարիմ», ուր բացայայտիչն հակառակ քերականական կանոնաց եդեալ է յուղ. փխկ. ի սռկ. (նոյնօրինակ անկանոնութիւն վեր. 1. 5)։ Այս, ազդեցութեամբ այդր զարտուղութեան, Անտիպաս եւս եղաւ յուղ., որով յօրինուած բանիցդ առաւել եւս դժուարալոյծ եղեւ։ Ի սմին խառնակութենէ յառաջագային բազմապիսի փոփոխութիւնք եւ ձախող փորձք սրբագրութեան դժուարալուր բնագրին, ըստ այնմ եւ սխալ թարգմանութիւնք. մանաւանդ զի վաղ ուրեմն յատուկ անունդ 'Αντείπας ի նախ-

նեաց, ամանց վրիպանօք իմացեալ եղեւ իբրեւ՝ քաջ ἀντεῖπας, անտ(է)իպաս (զայնդունակ Յունական եւ Ասորական Թարգմանութիւնք), որ նշանակէ՝ ընդդիմացօղ, հակառակեցար, ընդդիմաբանեցեր, այլ եւ՝ ետուր պատասխանի; Գծ. 4. 14. (ἀντιλέγειν ի Ն. Կ. Թարգմանի ի մեզ՝ հակառակել Ղկ. 20. 27, Գծ. 28. 19, ընդդէմ դառնալ Գծ. 13. 45, հակառակ լինել Յհ. 19. 12, կրն. հակառակութիւն կրել Գծ. 28. 22, ընդդն. հակառակող Հռ. 10. 21, Տտ. 2. 9, կամ՝ հակառակորդ Տտ. 1. 9, եւ կամ՝ հակառակութիւն Ղկ. 2. 34)։ Ըստ սմին օրինակի եւ թ՝ ո՛չ բարւոք իմացեալ զմիտս Յուն. բնգ., եւ թերեւս անմտադրութեամբ՝ եթէ ոչ դիտմամբ՝ ի բաց թողեալ զբառդ յաւուրս, ընդ խառն վրիպանօք Թարգմանէ՝ յորում ընդդիմացարն վկայն իմ հաւատարիմ. ըստ այսմ Յուն. գրչագիր պատճէնն յորմէ փոխադրեցաւ. թ՝ ունէր զայսպիսի ինչ բնգ. ἐν αἷς Ἀντείπας (կարծեցեալ ἀντεῖπας) ὁ μάρτυς μου ὁ πιστός. Սմին իրի, իբրեւ առ ի բացայայտութիւն դժուարիմաց դարձուածոյ բանիցդ այդոցիկ, յետոյ ուրեմն յօտար ձեռանէ, այս ինքն յընթերցողէ ումեքէ, յաւելեալ է յն Անտիպաս, եւ այն՝ թուի թէ համեմատ Յուն. իմիք ձ. օրինակի, կամ՝ որպէս մարթ է հաւաստեաւ ենթադրել՝ ուղղակի ըստ Թարգմանութեան Ն. Լամբրոնացւոյն. մինչ Բ ըստ ամենայն հաւանականութեան անփոփոխ եւ անվթար պահեալ ունի զնախկին ձեւ ընթերցուածոյ ի թ։ — Ոչ ինչ աւելի դիւրահաս եւ մեկին է այլափոխ լայնագոյն բնագիրն, զոր ընծայեն մեզ ԼՄ՝ յաւուր յորում Անտիպաս վկայն իմ հաւատարիմ նախ-ջն վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւատացելոց։ — Իսկ

արդ՝ ըստ վերոյգրելոցդ նախատացեալ հատուածդ թարգմանելի է այսպէս. յաւուրս Անտիպայ, վկային իմոյ հաւատարմի (կամ՝ հանգոյն 1. 5, որ վկայ է իմ հաւատարիմ)։ Այլ սակայն յիշելի է՝ զի են ոմանք՝ որք նախամեծար համարին ուղղել զՑուն. բնգ. եւ ընթեռնուլ զայս ձեւ օրինակի. յաւուրս յորս Անտիպաս վկայն իմ հաւատարիմն իմ սպանաւ (առանց դեր. որ) եւն.։ || * Հաւատարիմ (ընթեռնլի՝ հաւատարմի). Յ + իմոյ, որ սակայն պակյոմանս ի Ցուն. ձձ.։ ||* ի ձեզ. այսպէս եւ ԼՄ. թիւրիմացութիւն, փխկ. ըստ Յ՝ առ ձեզ, կամ՝ ի միջի ձերում։ || * Ուր. ԼՄ նխդ. ուր կայ։ || * Բնակէ. ԼՄ է բնակեալ։

14. * Ասել. տարամուտ յաւելուած յԵ, որ չիք ի ԲՅ եւ ո՛չ ի Լ, բայց կայ ի Լ^մՄ, յորոց հաւանական կարծեօք առեալ է բառդ այդ եւ մուծեալ ի յԵ։ || * Կասն քո. ԼՄ — փեղ. առ այս առ. վեր. գծան. ի հմր. 4։ || * Մի. պակ. ԼՄ։ || * Զի ունիս անդ՝ որք ունին. բան առ բան = Յ. այլազգ ԼՄ՝ չէ կայ — փեղ։ || * Զուսումն = Յ. ի պատճառս այլակերպ յօրինուածոյ բանից ունին ԼՄ զուղ.՝ վարդապետութիւնն. — διδαχή, ի Հ. Կ. մի անգամ, Սղ. 59. 1 (Ածչ. Զօհր. վրիպակաւ «առ ուսմէ», փխկ. «առ ուսմանէ», ըստ ոմանց յօրր.), իսկ ի Ն. Կ. յաճախ ի կիր արկեալ, ի Հայումս թարգմանի մերթ՝ ուսումն (Մկ. 11. 18, եւ այլուր), մերթ՝ վարդապետութիւն (Մթ. 7. 28, եւն.), եւ մերթ՝ աղանդ (Մթ. 16. 12)։ || * Բաղաամու. Լ նոյնպէս. Լ^մՄ Բաղաամայ։ || * Ուսուցանէ. անճշգրիտ, փխկ. ուսոյց, որպէս գրեն ԼՄ = Յ։ || * ԶԲաղակն (Լ առանց դմրչ. յ.). Ցունական ոճով

9. * Երգեին. Յ ներկ. — Նուազ ճանի ԼՄ ᾄδουσιν։ ||* Երգս նորս. այսպէս եւ ԼՄ. իսկ Յ եզ. — հմմտ. Ես. 42.10, նոյնպէս Սղ. 32.3, 39.4, 95.1, 143.9։ ||* Ասելով = Յ. — ԼՄ λέγοντες։ ||* Զգիրսդ. Լամ նոյնպէս, ուր Լ՝ βιβλίον։ ||* Զկնիք. սոյնօրինակ եւ ԼՄ. անճիշդ, փխկ. ըստ Յ՝ զկնիքս։ ||* Սպանար. ԼՄ ἐσφάγης. տ. վեր. գծան. ի հմր. 6։ ||* Զմեզ. այսպէս եւ ԼՄ, պակ. Յ. — ԹԼՄ համաձայն են բաղմաց ի Յուն. օրր.։ ||* ՅԱստուծոյ. մարթ է լինել կամ թիւրիմացութիւն ի Թարգմանչէն, եւ կամ մանաւանդ վրիպակ դրչի. — ճշգրիտ ունին ԼՄ՝ τῷ θεῷ, տրկ. = Յ։ — Հմմտ. Գծ. 20.28, 1 Պտ. 1.18—19, 2 Պտ. 2.1, 1 Կր. 6.20, 7.23։ ||* Յամենայն ցեղից = Յ, փխկ. որոյ ԼՄ անճշգրիտ դնեն՝ յամենայն ազգաց. — զօրութեամբ իմանալի է՝ մարդիկ (իբրեւ խնդ. սեռի նախընթաց զնեցերի) յամենայն ցեղից եւն.։ ||* Ի ժողովրդոց = Յ. ուր ԼՄ ո՛չ ճշգիւ՝

է *ծովալից· սակայն* Լ^մ *ընթեռնուն* = Թ։ || * Ցանգագաց = Ց· *իսկ* ԼՄ *անդէպս*՝ [illegible], *վրիպանօք առեալ իբրեւ յատկացուցիչ ծովալից, եւ բցթ· զնախընթաց շղկ·։* — *Հմմտ· Դն·* 3·4, 5·19։

10· * Ջնոսա = Ց· — ԼՄ [illegible]։ || * Աստուծոյ մերում = Ց, *զոր* ԼՄ *վրիպանօք դնեն ի սուկ·։* || * Արքայութիւն = Ց· *այլազգ իմն իմանան* ԼՄ՝ [illegible]· *տե· վեր· գծան· ի* 1·6։ || * Եւ թագաւորեսցեն = Ց· *այլափոխեն* ԼՄ՝ [illegible]։

11· * Իբրեւ ձայն = Ց· *ուր* ԼՄ *ըստ*՝ [illegible]։ || * Շուրջ· ԼՄ *նխդ·* [illegible]· *այս յաւելուած պակ· նաեւ ի* Ց։ || * Մերունեացն եւ կենդանեացն· *սխալաբար թարգմանեալ, թուի թէ առ անփութութեան Թարգմանին· ուղղելի է ըստ* Ց՝ զկենդանեօքն եւ զծերունեօքն· *նմանապէս* ԼՄ՝ [illegible]· *տե· գծան· ի հմր·* Ծ։ || * Թիւ, ԼՄ–ն։ || * Բիւրք բիւրոց· ԼՄ [illegible] (Մ [illegible]) [illegible]· *հմմտ· սա·* 9·16· *ըստ նմանութեան Դն·* 7·10 «*Հազարք հազարաց պաշտէին զնա, եւ բեւրք բիւրուց կային առաջի նորա*»։

12· * Ասելով = Ց *ընդն· ներկ·* — ԼՄ [illegible], *լաւ եւս է ըստ* Լ^մ [illegible], *կամ ըստ Ոսկանայ*՝ [illegible]։ || * Արժանի = Ց· *զայնգունակ եւ* Լ^մ, *ուր* Լ՝ [illegible]։ || * Սպանեալ· ԼՄ [illegible]· *տե· գծան· ի հմր·* 6։ || * Զգաւրութիւն եւ = Ց, *պակ·* ԼՄ։ || * Զմեծվայելչութիւն· *ճշգագոյն թարգմանեն* ԼՄ [illegible] *զ*Ց πλοῦτος, *առ հասարակ փոխադրեալ ի Հայ լեզու*՝ մեծութիւն (*Մթ·* 13·22, *Հռ·* 2·4, 9·23, 11·12, 33, 2 *Կր·* 8·2, *եւ յայլ բազում տեղիս Ն· Կ·, հմմտ· մանաւանդ Փպ·* 4·19)։ || * Զօյժ, *փխկ· որոյ* ԼՄ *դնեն*՝ [illegible], *որպէս*

արդարեւ յաճախագոյնս թարգմանի Յուն. ἰσχύς (զ. որ. Մկ. 12 · 30, 33, Ղկ. 10 · 27, Եփ. 1 · 19, 6 · 10, այլովքն հանդերձ). — Թ. քաջընտրաբար՝ առ ի յորոշելոյ ի նախընթաց համանշանից (զզաւրութիւն)՝ ի կիր առնու զույժ. բառս այս, որ չիք ուրեք ի Ն. Կ., հնդիցս գտանի ի Հնումն, այս է՝ 1. եղեալ, որպէս ի սմին վայրի, ի տ. Յուն. բառիս ἰσχύς (Երկ. 8 · 18 «զի Նա տայ քեզ ույժ առնել զօրութիւն» = δίδωσιν τὴν ἰσχὺν τοῦ ποιῆσαι δύναμιν. եւ Յոբ. 40 · 11 «ահաւասիկ ույժ իւր զմիջով իւրով, եւ զօրութիւն զպորտիւ որովայնի իւրոյ». = ἰδοῦ δὴ ἰσχὺς αὐτοῦ ἐπ' ὀσφύϊ, ἡ δὲ δύναμις ἐπ' ὀμφαλοῦ γαστρός. իսկ Ես. 57 · 10 դնի վրիպ. բայց, «զի զայն առ ուժի գործէիր» = ἐνισχύουσα ὅτι ἔπραξας ταῦτα). — 2. հաւասար κράτος (Առ. 27 · 24, եւ Յթ. 5 · 3 «եւ ի՞ւ է ույժ նոցա եւ կամ զօրութիւն», ուր ույժ = κράτος, եւ զօրութիւն = ἰσχύς): — Հմմտ. վեր. 4 · 9, 11, եւ Ես. 53 · 7.

13. * Զամենայն արարածս = Յ. Թիւրիմացութեամբ իբրեւ զուղ. առնուն ԼՄ՝ ամենայն արարածք: || * Որ. ԼՄ + են, զոր չունի եւ Յ. || * Ի (առջ.), պակ. ԼՄ. || * Ի վերայ երկրի = Յ. վրիպանօք Լ լոկ՝ երկրէ, ուր Մ՝ յերկրէ. || * Եւ ի ներքոյ երկրի = Յ (համեմատ. բազմաթիւ Յուն. օրր.). պակ. ԼՄ (համաձայն Սինէական Յուն. ձ.). || * Ի ծով. ընթեռնլի ըստ ԼՄ՝ է ծովու, որք սակայն բցթ. զնախընթաց դեր. — Յ ունի՝ ի վերայ ծովու. || * Ի նոցա ամենեցուն. աղաւաղեալ է Թ. ստտ յերկուսին օրր. Ն եւ Բ. Թուի ինձ ուղղելի՝ ի նոցանէ յամենեցունց. — Յ ունի՝ զամենայն որ ի նոսա, որում միաբան են ԼՄ, բայց միայն,

բցթ. զամենայն։ — Հմմտ. Փլ. 2 · 10։ || * Լուայ · Յ նխդ. եւ, որ ըստ շարագրութեան արգելք աւելորդ թուի։ Թ եւ Լ առանց շղկ. համեմատ գտանին բազմաց ի Յուն. օրր., յորս եւ Աղեքսանդրեանն։ || * Որ Նստէր · անճշգրիտ, փխկ.՝ որ Նստէ, որպէս ունին ԼՄ, այսինքն՝ այնմ որ Նստի = Յ ընդն. Ներկ. («Նստողին»)։ Հմմտ. Ես. 6 · 1։ || * Ի վերայ աթոռոյն · ըստ սովորական ոճոյ ունին ԼՄ՝ յաթոռ. երկոքին տառացուածքդ = Յ · բայց սակայն առաջինդ անօսրադոյն իմն պատահէ յԱծշ. Մատ. ղ. օր. 3 Թգ. 22 · 19, Մթ. 23 · 22։ || * Գառինն = Յ · այլափոխեալ գյօրինուած բանից ԼՄ դնեն յուղ.՝ գառն։ Հմմտ. խռն. 7 · 10։ || * Աւրհնութիւն եւ պատիւ եւ փառք = Յ · սա + եւ զօրութիւն · — ԼՄ ամենեւին իսկ այլադունակս՝ օրհնեալ, բարձրացեալ եւ փառաւորեալ։

14. * Անկան = Յ · — ԼՄ անկ. + առաջի Նորա։ || * Երկիր պագին = Յ · — ԼՄ անկ.։ — Հմմտ. սա. 19 · 4։

Զ. 1. * Եւ (երկր.) · չիք ի ԼՄ = Յ։ || * Յորժամ = Յ · վրիպեն ԼՄ՝ չէ։ || * Գառնն = Յ, պակ. ԼՄ, սակայն գոյ ի Լմ՝ գառն։ || * Մի · լաւ եւս է՝ շմն, որպէս ունին ԼՄ (ըստ Լմ՝ շմնն) = Յ։ || * Ի յեւթանց կնքոցն = Յ · — ԼՄ բցթ. յեւթանց, զոր Լմ ունի թուագրով գրեալ, այսպէս՝ Է, եւ գյաջորդ բառդ եդեալ ի սոկ.։ || * Ձմի · ԼՄ է մոյ. երկոքին եւս ըստ բաղդատութեան ի ճահ գան Յ։ || * Ասէր · ճըշ-

դադոյն ունին ԼՄ՝ չէ ասէր (հմմտ. Մկ. 14·58) = Յ ընդ. ներկ.։ ||* Իբրեւ զձայն որոտման· ըստ շարակարգութեան բառից ճշգիւ = Յ, միայն թէ սա դնէ զձայն յուղ· (թ զուգընթաց է ոմանց ի Յուն. ձձ. — տ. զՀամեմատ. Յուն. օրր·)· իսկ ԼՄ յետադասեն զբառս չէ ասէր։ ||* Եկ = Յ, ոչ եթէ առ տեսանողն ուղղեալ է, այլ հայի ի բովանդակութիւն հետադայ տեսլեան. — ԼՄ ի թիւրն մեկնեն՝ Եկ տես (ըստ Լմ ըրկ՝ տես)· նոյն վրիպակ ի ԼՄ դարձեալ խոն. հմր. 3, 5 եւ 7։

2· * Հեծեալ, ԼՄ–ն· ըստ Յ ճշգիւ՝ Նստեալն· նոյնպէս խոն. հմր. 3, 5, եւ 8։ ||* Ել յաղթող (յաղթական) = Յ· — թիւրիմացութեամբ այլակերպեն ԼՄ՝ ելն յաղթել։ ||* Զի· Յ նխդ. եւ։ — Համմտ. առ այս եւ առ զկնիւդ Զք. 1·8–11 եւ 6·1–8։

3· * Զերկրորդ = Յ· — ԼՄ Երկրորդ։ ||* Ասէր· Յ + Եկ, փխկ. որոյ ԼՄ՝ տես։ Յաւելուածդ զանց եղեալ ի թ հաւանական կարծեօք միայն անփութութեամբ գաղափարողաց։

4· * Կապոյտ· վրիպանք՝ անկարծելի եւ անակնունելի շփոթմամբ բառից ընդ միմեանս, փխկ. Հրեղէն, որպէս ունին ԼՄ = Յ πυρρός, որ նշանակէ՝ հրագոյն, շիկակարմիր, աշխէտ, եւ ի մերում Ածշ. Մատ. թարգմանի մերթ՝ կարմիր (Թի. 19·2, 4 Թգ. 3·22, Երգ. 5·10), եւ մերթ դիպողագոյն իմն՝ աշխէտ [= «կարմիր դեղնագոյն, հրագոյն, բոցագոյն՝ որպէս ծիրան, նարինջ» ՆԲՀԼ. ի բ.] (Զք. 1·8, 6·2)։ Միւսանգամ պատահէ Յուն. բառդ սա· 12·3, ուր Լ դնէ՝ հրեղէն, իսկ Թ բցթ.։ ||* Ի վերայ· ԼՄ + նորա = Յ։ ||* Խա-

ղաղութիւն · *Թուի ինձ՝ անզգուշաբար ի գրչաց խանգարեալ․ ուղղելի ըստ* ԼՄ՝ *առնուլ չխողխողութեան* = Յ։ ‖ * Եւ (*երր*․) = Յ․ *զնց*․ ԼՄ։ — Յ + *չէ*, *զոր ունին եւ* ԼՄ։ ‖ * Սպանցեն = Յ․ *ո՛չ ի դէպ* ԼՄ՝ *չէնցեն*․ *տ․ վեր․ ղծան․ ի* 5 · 6։ ‖ * Սուր · ԼՄ + *Վ*, *զոր չունին* Լ*ամ* = ՅԹ։

5· * Չերրորդ = Յ · — ԼՄ *երրորդ*։ ‖ * Չի գայր․ *ոչ ուղիղ թարգմանեալ․ ըստ* Յ *ընթեռնլի է՝* գի ասէր · Ե՛կ (*բուն բառիւք՝* ասելով · Ե՛կ, *հմմտ․ խոն․ հմր․ 7*) · *իսկ* ԼՄ *ունին՝ չէ ասէր՝ Բե եամ*։ ‖ * Որ ճեծեալ էր ի Ձմա · *ճշգրտագոյն ունին աստ* ԼՄ՝ *որ նստեալն էր ի վերայ նորա* (*լաւ եւս է ըստ* Յ՝ *է նմա*)։ ‖ * Լուծ, *փոխանունաբար առեալ, այսինքն՝* լուծ կշռոց (*հմմտ․ Յոբ․* 6 · 2), *կամ ըստ* ԼՄ՝ կշիռ (*տ․ գ․ օր․ Ղեւ․* 19 · 35, 36, *Ես․* 40 · 12), *ընթեռնլի՝* կշիռս, *որպէս ունի եւ Ոսկան*։ — Յ *եդեալ ունի զբառդ* լուծ, *կամ* կշիռս *յառաջ քան զբառս* ի ձեռին իւրում · ԼՄ *նոյնպէս*։ — *Հմմտ․ Եզ․* 4 · 16 *եւ* 5 · 1։

6· * Ձձայն · ԼՄ *ձայն* · Յ *նխզ․*՝ իբրեւ, *որ պակ․ նոյնպէս յոմանս ի Յուն․ օրր․*։ ‖ * Ի մէջ = Յ · *մեկնագոյնս իմն* ԼՄ՝ *է մէջ*։ ‖ * Ասելով = Յ, *զնց*․ ԼՄ։ ‖ * Կապիճ = Յ · — ԼՄ + *Վ*։ ‖ * Դահեկանի (*երկուքին եւս*) = Յ․ *սակայն լաւ եւս էր՝ ըստ Մթ․* 20 · 13՝ *թարգմանել՝* դահեկանի միոջ (*զօրութեամբ իմանալի է՝ վաճառի*) *զՅուն․* δηναρίου (*ի Յուն․ Հ․ Կ․ ո՛չ ուրեք ի կիր արկեալ*), *զոր* ԼՄ *փոխադրեն՝ դենարէ Վ․ Այս Հռովմէական դրամ արծաթի միայն մի անգամ եւս յԱծչ․ Մատ․ փոխագրի* դենար, *Յհ․* 12 · 5 · *իսկ այլուր թարգմանի առ հասարակ՝* դահեկան (*զ․ օր․ Մթ․* 18 · 28, 20 · 2, 9, 10, *այլովքն հանդերձ*)։ ‖ * Եւ զինուոյ

եւ ծիբոյ․ ըստ կարգի բառից՝ հանգոյն ոմանց ի Յուն․ օրր․, ուր Յ համեմատ այլոց ձձ․ շրջէ զկարգն, ըստ այսմ եւ ԼՄ, բայց սակայն հյց․ խնգ․՝ ն— ՅէԲ ն— ջէնէ։

7․ *Լուայ․ ԼՄ + յոյն = Յ․ հանգոյն Թ չունին զյաւելուածդ նաեւ բազումք ի Յուն․ օրր․ ||*Ասելով = Յ, զոր ԼՄ փոխեն՝ չէ ասէր։ ||*Ե՛կ = Յ․ — ԼՄ՝ ԲԷ էամ․ տ․ վեր․ հմր․ 1, 3, 5։

8․ *Զարտակ․ ԼՄ շա—, անճահ իմն փոխադրութիւն բառիս Յ χλωρός: — Այս Յուն․ բառ նշանակէ՝ 1․ սեպհական մտօք՝ զգոյն առաջին ուղեշի կամ բողբոջի բուսոց, ըստ այսմ՝ եթէ՛ կանաչագոյն, նարեալ ի կանաչ, գունատ կանաչ, եւ եթէ՛ դեղնագոյն, նարեալ ի դեղին, դեղնորակ, այսինքն՝ կանաչագոյն կամ կանաչորակ դեղին․ — 2․ լայնաբար՝ տժգոյն, գունատ, դեղնեալ (որպէս զգոյն մեռելոյ կամ դիոյ․ յա՛յս միտս առեալ է բառդ ի ամին վայրի)․ — 3․ փոխաբերութեամբ՝ կանաչ, դալար, հակադրեալ ցամաքելոյ, չօսացելոյ․ այսու մտօք երկիցս ի կիր արկանի ի գիրս Յտ․, Ներք․ 8․7 ուր Թ եւ Լ միօրինակ ունին՝ դալար, եւ դարձեալ 9․4 ուր Լ դնէ՝ բոյս, իսկ Լ զնց․։ ՅԱծչ․ Մատ․ գտանի ուրեք ուրեք, ի մեզ թարգմանեալ՝ 1․ դալար (Ծն․ 1․30 խոտ, 30․37 շեր, Եզ․ 17․24 փայտ, 20․47 փայտ, Մկ․ 6․39 խոտ)․ 2․ դալարի (4 Թգ․ 19․26 բանջարոյ, տանեաց, Յոբ․ 39․8, Աղ․ 36․2 խոտոյ)․ 3․ դեղ դալար (Թւ․ 22․4, Երկ․ 29․23, Ես․ 15․6, 27․10)․ 4․ կանաչ (Եւ․ 10․15 ծառոց եւ բանջարոյ, Ես․ 19․7 «որ շուրջ զգետովն»)․ 5․ բանջար (Ծն․ 2․5 վայրի, Առ․ 27․25 դաշտի)։ Համմտ․ պածանցեալ

դոյկ· χλωρότης, զոր Թարգմանիչն Սղ. 67 · 14 յեղու ի Հայ բան սոսկապէս՝ գոյն («... ի գոյն ոսկւոյ»)։

Արդ՝ վասն դժուարութեանն գտանելոյ զՀայերէն ինչ բառ՝ յարմար եւ համազօր Յունականին՝ թուի թէ յանձնարս մտեալ եւ ի վարանս արկեալ Ղ (Ներս. Լամբր.) անճարանայ, եւ առ հարկի բռնադատութեան պատշաճագոյն վարկանի փոխադրել զՅուն. բառդ ի գլխովին, թէպէտ եւ ոչ անվրէպ եւ ըստ նախնի կանոնաց տառադարձութեան, — շլոռոս, զոր Նորայր, Կորիւն եւն. էջ 421 յիրաւի «տգեղ» նշանակէ, եւ զորմէ նա ինքն անդէն էջ 420 ծան. 9 տայ զհետագայ տեղեկութիւն. «Յունարէն chloros բառն, որ կը նշանակէ Դեղին, Դժգոյն, ըստ օրինի Ե դարու հայերէն տառադարձութեան՝ Քլորոս կը փոխուի, եւ ոչ Շլոռոս։ Ի ԺԱ կամ յ՛ԺԲ դարու սկսած է շ տառադարձութիւնն փոխանակ ք. Արշիեպիսկոպոս = Արքեպիսկոպոս. Արշիմանդրիտ (եւ Շամանդրիտ. Վրդ. Արեւելցի, Պտմ. 83) = Արքիմանդրիտ. Մոլոշ = Մոլոք։ Նոյն դարերուն մէջ սովորական եղած է նա եւ խ. Խրօնիկոն = Քրոնիկոն. Մոնոմախոս = Մոնոմաքոս. Գախումէոս = Գաքումէոս. (անմարթ է որ հայերէն Թարգմանութիւն Գրոքորոսի Պատմութեանն Յովհ. Աւետ., յորում կը գտնուին Գրոխորոն եւ Խոռուսոս գրութիւնքն, ըլլայ մինչ ի Զ դար, ինչպէս սխալմամբ կը համարի անանուն ոմն «ազգային արդի ամենէն աւելի նշանաւոր բանասիրաց մին»։ տես Հ. Գար. Զ. Մտնդր. 670—671։) Կայ ուրեք ուրեք եւ ճ. Արճիեպիսկոպոս = Արքեպիսկոպոս. Քսինոդոճինի = Քսինոդոքինի (յն. xeno-

docheion, *Հիւրանոց, Աւտարանոց*)։ »

Զվերագոյնդ նշանակեալ դժուարիմաց շլաււ մեկնէ ընթերցող ոք, կամ գրիչ ոք յաւելուածովս՝ ող և պոււշլխ. անշուշտ ի սկզբան անդ գրեալ ի լուսանցս, իսկ յետոյ ուրեմն ի բնաբանն անգամ մուծեալ. ըստ այսմ է ի Լ եգեալ ի մէջ փակագծաց՝ կից զկնի շլաււի. ըստ ծան. Զօհրապեանի՝ «Ոմանք [յօրր.] զանց առնեն դնել ի բնաբանի, այլ ի լուսանցս եւեթ նշանակեն զբացատրութիւն շլաււին, այլազգի բարբառովն՝ պոււշլխ, կամ՝ պօշլխ »։ Յայտ է թէ՝ պոււշլխ է տաճկերէն قلچ, *ըստ արտաբերութեան ռամկաց. ըստ ՆԲՀԼ. « ... բառ ռմկ. Գոյն կանաչ ֆըստըխի. եւ դեղին կամ բացագոյն կանաչ » եւն.։*

Փոխան խուժադուժ շլաււէ այլ իմն գրչգ. Լի զոր յիշատակէ Նորայր ի վերասացեալ տեղւոջ, էջ 421—422, դնէ՝ ուշխետ. բայց սակայն այս փոխանակութիւն բառից անդէպ եւ անճշգրիտ է. վասն զի ուշխետ չէ՛ նոյնանշան եւ համազօր շլաււէ, այլ համեմատի Յուն. բառին πυρρός = կարմիր, *կամ* աշխետ (*տ. վեր. զծան. ի հմր. 4. իսկ Զք. 6. 6 շփոթմամբ դնի* աշխետ = ποικίλος, *որ ըստ մեզ բացատրի մանաւանդ բառիւքս* պիսակ, *կամ* պեսպես, *եւ կամ* խայտաբղետ.

Իսկ քաջահմուտ, հաւատարիմ Թարգմանիչն թի զա՛յլ իմն հնարս մարթաց գտանել բացատրելոյ զքլորոս, *այս ինքն է՝ ընտրողաբար ի կիր արկանել զօտարածայն բառդ* զարտակ, *որ փոխ առեալ է ի Պարսիկ լեզուէ։* Զարտ–ակ, *ածանցեալ ի պահլաւերէն բառէն* զարտ (*Նոր–պարսկերէն* زرد, *Նուազականն* زردک = դեղնորակ, դեղձան *եւն.*), *որ նշա-*

նակէ՝ ղեղին, եւս եւ տժգոյն։ Մինչեւ ցայժմ մի միայն բառ ի Հայ լեզու ծանօթ էր բարդեալ բառիւս զարտ—, այս է՝ զարտագոյն, ըստ ՆԲՀԼ. որ ի վկայութիւն կոչէ միայն զ«Բժշկրն», «... այսինքն՝ դեղնագոյն. Դեղին ծաղիկ, որ վարի ի ներկս. կամ Քրքում»։ Իսկ զարտակ, որչափ գիտեմ, ո՛չ ուրեք գտանի ի համօրէն յայտնի մատենագրութիւնս մեր։ Ինձ այսպէս թուի՝ թէ Թարգմանն քաջ դատմամբ եւ վայելչաբար ընտրէ զբառդ զարտակ, առ ի ճշգրիտ եւս բացատրելոյ զմասնաւոր իմն երփն իմաստի, զոր ունի ի սմին վայրի վերոյգրեալդ Յուն. χλωρός, եւ զխուն ինչ խտիր նշանակութեան դորին եւ Հայ. բառիս ղեղին։ Իսկ արդ՝ առանց ինչ երկմտութեան մարթ է կարծել՝ թէ զարտակ չէ՛ր անլուր եւ անիմանալի ժամանակակցաց Թարգմանչին, այլ մանաւանդ սովորական բառ, թէ՛ իցէ ռամկական եւ կամ գաւառական, ի վաղնջուց ժամանակէ հետէ, թերեւս անդստին յառաջին դարուց թուականութեան մերոյ ի Պարսկական լեզուէ անցեալ ի Հայ բարբառ (որպէս ապա եւ յԱսորի լեզու), եւ ընտանի լեալ եւ ընդելական ժողովրդեան. թէպէտ եւ, որպէս երեւի, ոչ հանդիպեցաւ հասարակաց ընդունելութեան եւ հաւանութեան ի գրագիտաց, եւ մնաց անսովոր ի լեզու Հայերէն դպրութեան։ — Ուստի, եւ միանգամայն իսկ ասացեալ, զարտակ յիրաւի կարգելի է ի թիւ Հայերէն ընտիր բառից նորոգ ի վեր երեւելոց զառաջինն յառաջիկայ Թարգմանութեանս Յտ.։

|| * Որ հեծեալն էր ի Եմա. ճշդիւ ըստ Յ ունին ԼՄ՝ որ նոտքէն է վերոյ նոր. տ. վեր. հմր. Չ։

|| * Անուն էր (Յ չունի էր) նորա մահ = Յ. ոչ ուղիղ թարգմանեն ԼՄ՝ օնէը շմոհ ։ || * Հետեւեին նմա. ընտրելագոյն բացատրութեամբ ԼՄ՝ էքոլութէն պէսօ նօթօ։ Հետեւել օտար է ի լեզուէ Հայ. Անշ. Մատ. (միայն մի անգամ ի Նախադրութեան Իմ. գլ. Ժ., իբրեւ դիմաց., տ. ՆԲՀԼ. ի բ. Հետեւի եւն.). ἀκολουθεῖν թարգմանի ի Ս. Գիրս մերթ՝ շրջել ընդ (գ. օր. Ղկ. 9. 49), կամ շրջել զկնի (գ. օր. Ես. 45. 14), մերթ՝ երթալ զհետ (Ովս. 2. 5, Եզ. 29. 16, Մթ. 4. 25, Մկ. 3. 7, եւ այլուր), կամ երթալ զկնի (Թւ. 22. 20, Մթ. 21. 9, եւն), եւ մերթ՝ գնալ զհետ (1 Թգ. 25. 42), կամ գնալ զկնի (Հռթ. 1. 14, Մթ. 9. 19, եւն.), դարձեալ՝ գալ զկնի (3 Թգ. 19. 20, Մթ. 8. 19 եւ այլուր), այլովքն հանդերձ։ || * Նմա (երկր.). Լ նոյնպէս. իսկ Յ յգ.։ ԹԼ համաձայնին ոմանց ի Յուն. օրր.։ Հմմտ. Առ. 5. 5։ || * Ի վերայ = Յ, զնց. ԼՄ։ || * Չորեքմասնեան. ոչ ճշգրիտ թարգմանեալ. դիպողագոյն ԼՄ՝ տէէրտէ մօրէն = Յ, որ ճշդիւ ունի՝ չորրորդի, կամ չորիր մասին. զնորակերտ բառս չորեքմասնեան համարիմ ուղղել՝ չորեքմասնեայ (= քառամասնեայ՝ որ է յետնագոյն ժամանակի յօդուածոյ բառ)։ || * Երկրի = Յ, փխկ. որոյ ԼՄ դնեն՝ ողխորհէ։ || * Սպանանել = Յ. ոչ ճշգրիտ ԼՄ՝ ատփանէլ։ || * Ի գազանաց, ամենայն ճշդութեամբ = Յ. այլապէս, թէպէտ եւ համիմաստ ԼՄ՝ թոլոնօք։ || * Երկրիս. ԼՄ րցթ. զդմրշ. յ.։ — Այս հաստուած ըստ օրինակի Եր. 15. 2—3, 24. 10, 29. 17—18, 42. 17, 44. 13, Եզ. 5. 12, 17, 14. 21, 33. 27։

9. * Զանձինս, թերեւս պատշաճագոյն (ըստ

նմանօրինակ առման Գծ. 2.27. *իսկ* 2.31 «*ոգի*»)
քան զԼՄ՝ *շնոքի. սոյնպէս եւ առ.* 20.4: || * Սպա-
նելոցն = Յ. *այլակերպ եւ այլափոխ մօք* Լ՝ *մի-
նոյն մարդկան կենեալ,* ԼմՄ *փխկ. կենեալ դնեն՝ չե-
նեալ:* || * Անուանն. *այլազգ* ԼՄ՝ *քանքն* = Յ:
|| * Վկայութեանն (*իմա՝ Յիսուսի*). Լ *առանց գմրշ.
յ.* — ԼՄ *Թիւրիմացութեամբ՝* + *նոքա:*

10. * Եւ աղաղակեցին *մինչեւ* ցասելով, *բան
առ բան* = Յ. *իսկ* ԼՄ *բցթ. զբառաւ.* Եւ աղա-
ղակեցին *եւ Թարգմանեն ասսկապէս՝ որք ասէին յոյ-
նէն ժծառ* (*ըստ* ԼմՄ՝ *է յոյն ժծ*). *ա. վեր.* 5.2
զծան. յաւագուածդ ձայնիւ մեծաւ: || * Սուրբդ
... ճշմարիտդ. ԼՄ *առանց գմրշ. յ.:* || * Վրէժ-
խնդրութիւնս առնես (*առնել համեմատ Յուն.
ասութեան* ποιεῖν τὴν ἐκδίκησιν, *Ղկ.* 18.7,8),
փխկ. որոց ճշգրտագոյնս ըստ Յ *ունին* ԼՄ՝ *խնդրես-
չէրեժ.* — ἐκδικεῖν *պէսպէս օրինակաւ Թարգմանի
ի Ս. Գիրս.* 1. խնդրել վրէժ, *կամ* զվրէժ, *կամ*
վրէժս (*Ծն.* 4.24, *Ել.* 21.21, *Ղեւ.* 26.25, *Երկ.*
18.19, *եւ յաճախագոյնս ի Հ. Կ., գարձեալ Հռ.*
12.19, 2. *Կր.* 10.6). 2. *լոկ* խնդրել [զվրէժ-
խնդրութիւն] (*Դտ.* 16.28, *Նա.* 1.9). 3. առնուլ
(զ)վրէժ (*Թւ.* 31.2, 1 *Թգ.* 18.25, 4 *Թգ.* 9.7,
Արգ. 1.21, *եւ այլուր*). 4. պահանջել (զ)վրէժս
(*Եզ.* 24.8, 25.12). 5. հատուցանել վրէժս (*Երկ.*
32.41). 6. դատ առնել (*Ղկ.* 18.3,5), *եւն.:* —
Համմտ. Սղ. 78.5,10 «... *առ ի խնդրել զվրէժ
արեան ծառայից քոց*» *եւն. Նոյնպէս Ովս.* 4.1:
|| * Երկրէ, *փոխադրութեամբ եղեալ ըստ հոլովոյ
յառկացելոյն.* — ԼՄ *երկրէ:*

11. * Իւրաքանչիւր = Յ, *պակ.* ԼՄ: || * Պատ-

մուճան = Յ στολή, ըստ որում յոլովագոյնս թարգմանի յԱծչ. Մատ. (զ. օր. Ծն. 27 · 15 եւն., Ել. 28 · 2, 3, 4 եւն., Ղեւ. 6 · 11 եւն., Թւ. 20 · 26, Դտ. 14 · 12 եւն., 2 Թգ. 6 · 14, 4 Թգ. 5 · 5 եւն., 1 Մն. 15 · 27 [նորագիւտ թարգմ. պակ.], 2 Մն. 5 · 12 [նորագիւտ թարգմ.՝ հանդերձ] եւն., Եսթ. 6 · 8 եւն., Յոբ. 2 · 12 եւն., Սիր. 6 · 29 եւն., Յոն. 3 · 6, Ես. 9 · 5 եւն., Եր. 52 · 33, Բա. 4 · 20, Եզ. 10 · 2 եւն., 1 Մակ. 6 · 15 եւն., 2 Մակ. 3 · 15, Մկ. 16 · 5, Ղկ. 15 · 22, 20 · 46)· ուրեք ուրեք եւս = հանդերձ (զ. օր. Երկ. 22 · 5, 1 Եզր. 4 · 17, Բա. 5 · 1, Մկ. 12 · 38)· Համմտ. նաեւ Խոն. 7 · 9, 13, 14։ Նուազ ի ճահ ԼՄ՝ [illegible]։ || * Սպիտակ, ԼՄ—։ || * Հանգիցեն· Յ + այլ եւս (կամ մեւս եւս), որ պակ. նաեւ ի ԼՄ։ || * Ժամանակ փոքր, նոյնաքանութեամբ = Յ· լաւագոյնս ԼՄ՝ [illegible] (Համմտ. Յհ. 13 · 33 «փոքր ինչ ժամանակ»)։ || * Զի իցեն ծառայակիցք· աղաւաղ ընթերցուած· ուղղելի ըստ Յ՝ մինչեւ կատարեսցեն (իմա՛ զընթացս կենաց, Համմտ. Գծ. 20 · 24 եւ 2 Տմ. 4 · 7) եւ ծառայակիցք, կամ ըստ այլում ընթերցուածոյ ոմանց ի Յուն. օրր., զոր ունին նաեւ ԼՄ՝ [illegible] (նա- պակ. ԼՄ) [illegible]· Յ եւ ԼՄ միապէս + նոցա։ || * Սպանցին = Յ· մարթ էր թարգմանել եւ՝ սպանանելոց են (Համմտ. Մթ. 11 · 14, 16 · 27 եւն., Ղկ. 9 · 31 եւն., Յհ. 7 · 39, այլովքն հանդերձ· ի մատնաւորի Հռ. 8 · 18, Գղ. 3 · 23, 1 Տմ. 1 · 16)· այլով դարձուածով եւ ոչ ճշդիւ զատակաւ ԼՄ՝ հանդերձեալ են կատարել (միւս. ասպանանել, որպէս պարտ էր թարգմանել, Համմտ. Մթ. 10 · 28, 16 · 21, Մկ. 9 · 30, Ղկ. 9 · 22, Գծ. 3 · 15, Հռ. 7 · 11, 2 Կր. 3 · 6 եւն.)։

|| * Որպէս = Յ․ միայն թէ առ յաւ․ նս, որ թեր-
եւս լոկ առ անփոյթութեան զանց եղեալ է ի
գրչաց․ Համմտ․ որպէս եւ 1 Կր․ 9․5, 1 Թս․ 5․6․
— այլազգոյնս իմն ԼՄ՝ [illegible]․

12․ * Շարժումն եղեւ մեծ․ փոփոխմամբ կար-
գի բառից Յ՝ շարժումն մեծ եղեւ (այսպէս եւ Ու-
կան), ԼՄ՝ եղեւ շարժումն մեծ․ — Յ նխդ․ եւ, զոր
հանգոյն ԹԼՄ չունին եւս Յուն․ օր․ մի․ || * Խաւ-
արեցաւ․ ճշգիւ՝ եղեւ քուխ, կամ՝ եղեւ սեաւ,
որպէս ունին ԼՄ = Յ․ Համմտ․ Յովլ․ 2․10, 31, Եզ․
32․7—8․ || * Ձքուրձ = Յ․ այսպէս թարգմանի
σάκκος ի բազում տեղիս Հ․ Կ․ (զ․ օր․ Ծն․ 37․34,
42․25, 35, Ղեւ․ 11․32, 2 Թգ․ 3․31 եւն․), իսկ
ի Ն․ Կ․ երկիցս փոխադրի՝ խորգ (Մթ․ 11․21, Ղկ․
10․13)․ — ԼՄ ոչ ճշգրիտ՝ չլաղեր, որ է մանաւ-
անդ = ἐπίβλημα (Մթ․ 9․16, Մկ․ 2․21, Ղկ․
5․36)․ Համմտ․ առ․ 11․3 ուր Թ եւ ԼՄ միապէս
ունին՝ քուրձ․ — Առ այս համմտ․ Ես․ 50․3 «Զգե-
ցուցից զերկինս խաւարաւ, եւ իբրեւ զքուրձ արա-
րից զհանդերձ նոցա»․ || * Սեաւ․ մրիպակ՝ թուի
թէ՝ Թարգմանչին, փխկ․՝ մազեղէն, որպէս Յ τρί-
χινος այլուր յԱծ․ Մատ․ թարգմանեալ գտանի
(Եղ․ 26․7, Զք․ 13․4)․ իսկ ԼՄ՝ այծեայ (ըստ Լա՝
այծեաց), որ առաւել անկ է յետնագոյն ժամանակի․
|| * Բովանդակ = Յ, ուր ԼՄ ոչ ճշգիւ դնեն՝ բո-
լորովին․ || * Արիւն․ Յ նխդ․ իբրեւ, զոր ունին
նաեւ Լրղ․

13․ * Անկան = Յ, զոր ԼՄ փոխեն՝ նօնաջե-
ցան, հաւանական կարծեօք ի նմանութիւն Մկ․
13․25 «եւ աստեղք յերկնից թօթափեսցին»․ իսկ
զուգաբան տեղին Մթ․ 24․29 «եւ աստեղք անկցին»

յերկնից »։ || * Ի վերայ երկրի· *լուսագոյն* ԼՄ՝ է յերկիր = Ց· || * Որպէս թզենի ընկենու՝ զվաղահասուկն (Ց *յգ·*, *տ· խոն·*) իւր՝ յուժգին հողմոյ շարժեալ, *բառ առ բառ, նա եւ ըստ դասաւորութեան բառից* = Ց· *իսկ* ԼՄ *ոչ բարւոք իմացեալ զմիտս Ցուն· բնգ· այլայլեն զիմաստն, եւ վրիպանօք Թարգմանեն՝ ուրեք փերեա Բլենաց չէ ամենէն լուծէյէ է հողմոյ (զոր Ածչ· Կպ· ըստ Ցուն· բնգ· ուղղէ զայս օրինակ՝* որպէս թզենի ընկենու զպտուղս իւր խակս, յուժգին հողմոյ շարժեալ), *Թերեւս յուշի կալեալ զնախատիպ օրինակն Ես·* 34·4 *«... եւ ամենայն աստեղք Թօթափեսցին իբրեւ տերեւ յորթոյ եւ որպէս անկանի տերեւ ի Թզենւոյ»։ — Դիտելի է սակայն զի* ὄλυνθος *բուն միօք նշանակէ* զխակ թուզն, *որ անադան աճէ ընդ ձմերայնոյն ժամանակս, բայց եւ այնպէս ոչ հասանէ, այլ ի գարնան անկանի Թօթափի։ Ցուն· բառդ այդ՝ արտաքոյ գրոց Ցտ·՝ մի անգամ եւեթ գտանի յԱծչ· Մատ·, այս է՝ Երգ·* 2·13 *ուր ի մեզ Թարգմանի* բողբոջ (*«Թզենի արձակեաց զբողբոջ իւր»*), *«ուր», ըստ* ՆԲՀԼ· *ի բ·, «ասէ Նիւս· [Գրիգոր Նիւսացի] Որ նախ քան զքաղցր եւ զկատարեալ պտուղն ի Թզենւոյն պտղոյ տեսակաւ յառաջագոյն ընձիւղի, բողբոջ ասի» եւն·։ — Իսկ բառիւս* վաղահասուկ *Առաջին Թարգմանիչք մեր փոխադրեն մերթ զՑուն·* 1) πρόδρομος, *Ես·* 28·4 *«Եւ եղիցի ծաղիկն յուսոյ Թօթափեալ ... իբրեւ* զվաղահասուկն թզոյ »· *եւ մերթ* 2) *զ*πρόϊμος (*կամ* πρώϊμος, *տ· վեր· զծան· ի* 2·28), *Ովս·* 9·10 *«Եւ իբրեւ* զդիտակ (*Երբ· զպտուղ*) ի թզենւոց վաղահասուկ *տեսի զհարս նոցա»· որ եւ Թարգմանի*

կանխահաս, *Եր.* 24 . 2 «*իբրեւ զկանխահաս թզոյ*»։ *Հմմտ.* Մովսէս Խոր., *Պատմ. Գ. խ.* «*եւ ի բերդ ինչ դիմեալ՝ ի վերայ պատուարին եօթն եւ տասն այր նետիւք հարեալ՝ միրաւոր ի վայր հոսեաց* [*Վարազդատ*] *միմեանց զկնի*, իբր ի սաստիկ հմն մրրկէ փաղահասուկ թզենեաց»․ *այլ եւ ըստ ՆԲՀԼ. ի բ.*՝ «*Թզենիք* զվաղահասուկն *թողրոջեալ գիտակս յառաջ ընծայեն*․ Ոսկ. [*Ոսկեբերան*] Եփ. (*ուր յն.* ὄλυνθος, grossus, ficus immatura)»։

14. * Երկինք. Լ [illegible], *ըստ* Լ–ի *բազմաբար* = Թ։ ||* Քակեցան = Յ, *պակ.* ԼՄ։ ||* Իբրեւ զմագաղաթ գալարեցաւ. *աղաւաղութիւն ինչ կայ ի տեղւոջս. ուղղելի է ըստ* Յ՝ իբրեւ զմագաղաթ գալարեալ, *այսինքն՝ իբրեւ զմագաղաթեայ գիրս որ գալարին*. — *Թիւրիմացութեամբ համարեալ թէ Յուն. ընդն. կրւ. ստորոգելի իցէ* երկնից՝ ԼՄ *ոչ ուղիղ թարգմանեն՝* [illegible]։ — *Նախանկար օրինակն է Եսա.* 34 . 4 «*Եւ հալեսցին ամենայն զօրութիւնք երկնից, եւ գալարեսցին երկինք իբրեւ զմագաղաթ*»։ — Յ *եւ հանգոյն նմին* ԼՄ *յաւ.*՝ [illegible] (Յ *եզ.*) [illegible] (Յ *եզ.*) [illegible] (Յ *յգ.*) [illegible]։

15. * Երկրիս. ԼՄ [illegible]։ ||* Մեծամեծք (*ըստ Մկ.* 6 . 21՝ «*Նախարարք*»). ԼՄ [illegible]։ *Հմմտ. Եսա.* 24 . 21, *Եր.* 14 . 3։ ||* Եւ (*երր.*) = Յ, *պակ.* ԼՄ։ ||* Մեծատունք. ԼՄ [illegible]. *ըստ խմաստին երկոքին եւս ի դէպ գան* Յ πλούσιος, *որ նշանակէ եթէ՝ մեծատուն* (*Ծն.* 13 . 2, 1 *Թգ.* 2 . 10, 2 *Թգ.* 12 . 1 *եւ յաճախագոյնս ի Հ. Կ., դարձեալ ի Ն. Կ.՝ Մթ.* 19 . 23, 24, 27 . 57, *Մկ.* 10 . 25, *Ղկ.* 6 . 24 *եւ յայլ տեղիս*), *եւ եթէ՝* մեծամեծ (*Հոթ.*

3 · 10, Ես. 53 · 9, Եր. 24 · 1)· ուրեք ուրեք Թարգմանի եւս՝ մեծ (Ժող. 10 · 20, Իմ. 8 · 5, Եր. 9 · 23; Եփ. 2 · 4), այլովքն հանդերձ։ || * Հզաւրք · ԼՄ զօրաւորք · տ. վեր. գծան. ի 5 · 2։ || * Ծառայք · Ց + եւ ազատ(ք)· նմանապէս ԼՄ եւ + ամենայն՝ ազատք · Թ միաբանի ընդ ոմանս ի Ցուն. օրր. (յորս եւ Սինէական ձ.)։ || * Լերանց = Ց, պակ. ԼՄ։ Համմտ. Ես. 2 · 10, 19 («Թաղուսցեն յայրս եւ ի ծերպս վիմաց եւ ի սորս երկրի, յերեսաց ահի Տեառն եւ ի փառաց զօրութեան նորա») եւ 21։

16 · * Ասեն = Ց · իսկ ԼՄ անկ.։ || * Վիմաց եւ լերանց · Ց հակադարձ կարգաւ · իսկ ԼՄ բցթ. զբառս վիմաց եւ, եւ ունին լոկ՝ լերանց։ || * Թէ · այսպէս եւ ԼՄ · չիք ի Ց։ || * Մեր · ԼՄ + եւ բլրոց՝ Թէ, ակնյայտնի օրինակ առեալ զբանս Ովս. 10 · 8 «եւ ասասցեն լերանց՝ Թէ անկերուք ի վերայ մեր, եւ բլրոց՝ Թէ ծածկեցէք զմեզ»· Ց եւս չունի զայս յաւելուած։ — Համմտ. նաեւ Ղկ. 23 · 30։ || * Թաքուսցէ · հաւանական կարծեօք՝ վրիպակ գրչի (այլ տակայն տ. զՀամեմատութիւն Ցուն. օրր.), ուղղելի՝ թաքուցէք = Ց, փխկ. որոյ ԼՄ դնեն՝ ծածկեցէք։ || * Ցերեւասցն՝ որ նստին (Ց ընդն.) ի վերայ աթոռոյ (ըստ Ց լաւագոյն ընթերցուածն է Բ՝ աթոռոյն), եւ յերեսաց բարկութեան (Ց լոկ՝ ի բարկութենէն) գառինն = Ց · այս հատուած ամբողջապէս պակ. ի ԼՄ · իսկ Ոսկան ունի զայն ըստ այսմ օրինակի՝ յերեսաց նստողին ի վերայ աթոռոյն, եւ ի բարկութենէ գառինն։ — Համմտ. վեր. 4 · 2, 9, 5 · 1, 13։

17 · * Նոցա (այս է՝ Աստուծոյ եւ Գառինն) = Ց, համեմատ բազմաց ի Ցուն. օրր. (յորս Սինէական գրչգ.) · իսկ ԼՄ ընթեռնուն՝ նորա, ըստ այլոց

Յուն. ձձ. (յորս է Աղեքսանդրեանն), տ. պՀամե-մատութիւն Յուն. օրբ.։ Առ այս հմմտ. Ես. 63 · 4, Յով. 1 · 15, 2 · 1, 31 («մինչչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծն եւ երեւելին»), Սփ. 2 · 2 («մինչչեւ եկեալ իցէ օր բարկութեան սրտմտութեան Տեառն»)։ || * Ո՞. ԼՄ ով։ || * Կարիցէ. վայելչագոյն քան զԼՄ կարէ։ || * Կեալ. ճշդագոյն ԼՄ՝ կալ = Յ (հմմտ. Մթ. 12 · 25, 26, Ղկ. 11 · 18, 21 · 36 եւն.). — ԼՄ + առաջի նորա։ — Հմմտ. Նա. 1 · 6 («եւ ո՞ կացցէ ընդդէմ բարկութեան սրտմտութեան նորա»), եւ Մղ. 3 · 2։

Է. 1. * Յետ այսորիկ = Յ, այսպէս եւ Մ, իսկ Լ յետ այնորիկ. — Յ եւ Լ հաւասարապէս նխդ.եա, որ սակայն պակ. նաեւ յոմանս ի Յուն. օրբ.։ || * Չորստակս. ԼՄ հրեշտակս. տ. վեր. 3 · 1։ || * Ի վերայ չորս անկեան. այս վրէպ քերականական աներկբայ ոչ եթէ Թարգմանչին, այլ անփութութեան գաղափարողաց վերագրելի է. ուղղելի ըստ Յ՝ ի վերայ չորից անկեանց (հմմտ. Մթ. 24 · 31, Մկ. 13 · 27). — ոչ ճշգրիտ ԼՄ՝ ի չորս անկեանս։ || * Որք ունէին. ԼՄ եւ ունէին. երկոքին եւս = Յ ընդդ. Ներկ.։ || * Հողմնս. վրիպակ ուղղագրութեան, ուղղելի ըստ ԼՄ՝ հողմս։ Հմմտ. Եր. 49 · 36, Զք. 6 · 5, Դն. 7 · 2։ || * Երկրիս. ԼՄ առանց դմրշ. յ։ || * Ի վերայ ծովու = Յ. — ԼՄ ի ծովու։ || * Ի վերայ ծառոց = Յ. — ԼՄ ի ծառս։

2. * Տեսանէի. ԼՄ կտր. = Յ։ || * Որ ելանէր. ԼՄ չի նւ. երկոքին եւս = Յ ընդդ. Ներկ.։

|| * Ցարեւելս ի կողմանէ. ճախողակի բացատրութիւն, կամ մանաւանդ աղաւաղութիւն գրչգ., փխկ.՝ յարեւելից կողմանէ, ըստ Յ (Հմմտ. Թւ. 3 · 38, 34 · 3, 11 եւ այլուր յաճախ), որ եւ առի՛ յելիցն արեւու (Եւ. 9 · 12, 11 · 11), կամ՝ յարեւելից կուսէ (Եզ. 48 · 3, 4), եւ կամ՝ յարեւելից, որպէս ունին ԼՄ (այսպէս Ծն. 11 · 2, Ցես. 12 · 3, եւ յոլովակի ի Ս. Գիրս)։ || * Ունելով. ԼՄ [illegible]. ուր Յ ընդ. Ներկ.։ || * Զկնիքն. ԼՄ առանց գմրշ. յ.։ || * Զորից կենդանեացն, այլակերպ յամենայն Ցուն. օրր. — Յ ունի՝ չորից հրեշտակացն, ըստ սմին օրինակի եւ ԼՄ՝ [illegible]։ || * Որոց տուաւ նոցա, բառ առ բառ = Յ. այլով դարձուածով ԼՄ՝ [illegible]։ || * Վնասել = Յ. անճշգրիտ ԼՄ՝ [illegible] տ. վեր. գծան. ի 2 · 11։ || * Ի վերայ երկրի եւն., աղատ թարգմանութիւն, փխկ. տրկ. խնդ., իսկ ԼՄ հյց. խնդ. = Յ։

3. * Ասելով = Յ ընդ. Ներկ. — ԼՄ [illegible]։ || * Վնասիցեք. ԼՄ [illegible]։ || * Եւ (առջ. եւ երկր.) = Յ, պակ. ԼՄ (Լամ ունին վերկր.)։ || * Կնքեսցուք = Յ, զոր ԼՄ դնեն յեղ. եւ աւելորդաբար նխդ.՝ [illegible]։ || * Մերոյ = Յ, զոր ԼՄ ունին դարձեալ յեղ.՝ [illegible]։ || * Ի վերայ ճակատուց նոցա = Յ. չնց. ԼՄ, այլ սակայն Մ ի կարգի բանից մեկնութեան ի մէջ բերէ «[illegible]»։ Նմանապէս Ոսկան ունի՝ է [illegible]։

4. * Հարիւր. Լ գրէ՝ [illegible], իսկ Լամ = Թ։ || * Հազարք = Յ, զոր ԼՄ դնեն յեղ.։ || * Որ կնքեցան. ԼՄ [illegible] = Յ։ || * Ցամենայն ցեղիցն = Յ. այլակերպ ԼՄ լոկ՝ [illegible]։ || * Իսրայելի,

ԼՄ — վ, որք եւ հանգոյն Ց նխդ.՝ ուղղացն ։

5 — 8. * ի ցեղէՆ (տասնեքին). ԼՄ յաւէլՆ. — φυλή ըստ հասարակագոյն կիրարկութեան յԱծչ. Մատ., զորդւոցն Իսրայելի ասացեալ, պատշաճագոյնս թարգմանէ Թ՝ ցեղ (հմմտ. Թի. 1 · 23 — 47, 2 · Յ — 34, 7 · 12, 18, 10 · 16 — 28, 13 · Յ — 16, 34 · 13 — 29, Ցես. 15 — 21, եւ յայլ բազում տեղիս. ըստ համեմատի անօրագոյն իմն գտանի ազգ, Ել. 2 · 1, Թի. 1 · 21, 49, 2 · 27, 3 · 6, ՅԹ. 6 · 11, Տոբ. 1 · 1, 4, Եզ. 37 · 19, ՄԹ. 19 · 28, Հռ. 11 · 1, այլապէս Փպ. 3 · Յ, այլովքն հանդերձ)։ — Իսկ չար կարգի եւ թիւ երկոտասան ցեղիցն որդւոցն Իսրայելի ի Թ չմիաբանի ընդ ՑԼՄ. եւ դարձեալ Ե եւ Բ սակաւիկ ինչ տարբերին ի միմեանց ։ ԼՄ դասաւորէն համեմատ Ց այսպէս . յաւէլՆ Յուդայ — Ռուբինի (Մ Ռուբենի) — Գադայ — Ասերայ — Նեփթաղիմայ — Մանասէի — Շմաւոնի — Ղեւեայ — Իսաքարայ — Զաբուղոնի — Յովսեփու [ըստ ծան. Զօհրապեանի՝ «յօրինակին պակասէր. Յաւէլն Յովսեփու երկոտասան հաշուը լնելու»] — Բենիամինի ։ Սակայն առքին երեքեան այլակերպ են ի միմեանց այնու զի ԼՄ զկնի իւրաքանչիւր երկոտասան հաշուը (Ց յդ.) Թուոյ յաւելուն՝ լնելու (ըստ Լոմ՝ լնելոյ), մինչ Ց ունի զընդ. անց. զայդ՝ եդեալ ի յդ.՝ միայն յետ առաջին եւ վերջին Թուոց ։ Իսկ Ե եւ Բ բցԹ. զայդ բառ ամենայն ուրեք, եւ չարադասեն զանուանս երկոտասան ցեղիցն այլազգ կարգաւ, եւ զոմանս այլագունակ եւ խաթարեալ ուղղագրութեամբ, ըստ այսմ օրինակի. ի ցեղէՆ Ե Ցուդայ (Բ–դա) — ՌուբէՆի (ՇմօՆի) — ՇմաւովՆի (ՌուբէՆի) — Ղեւեա (Ղեւի) — Իսաքարա (Սաքարա) — ԶաբուղովՆի

(Զաբողնի) — Բենիամենի (*նոյնպէս*) — Նեփթաղեմի (-թաղի) — Գադա (*նոյնպէս*) — Ասերա (*նոյնպէս*) ։ *Այս ուրեմն թէ նշանակէ միայն տասն ցեղս, եւ անյիշատակ թողու զանուանս Մանասէի եւ Յովսեփայ ։ Յայտ իսկ է սակայն՝ թէ համար ցեղիցն նոյն ինքն ի* Յ *թերի է* (*հմմտ. Ծն.* 49, *Թի.* 1, 7 · 10—83, 13 · 5—16, 34 · 16—28, *Երկ.* 33, 1 *Մն.* 4—7) ։ *Իսկ խառնակութիւն բնագրին ի* Թ *եւ այլափոխութիւնք գրչութեան առանց ամենայն երկմտութեան ընծայելի են անփութութեան ընդօրինակողաց* ։

9· * Յետ · ԼՄ *նխտ. եւ* ։ || * Բազմութիւնք յոյժ · Յ *եզ.* — ԼՄ *ժողովուրդ բազում* ։ || * Զոր թուել զնոսա (Յ *եզ.*) ոչ ոք կարէ (Յ *անկ.*) = Յ · *այլազգ դարձուածով* ԼՄ՝ *որոց ոչ գոյր թիւ* ։ || * Յամենայն ազգաց *մինչեւ* ի լեզուաց, *ճշգիւ* = Յ · *իսկ* ԼՄ *այլափոխեն՝ յամենայն հեթանոսաց եւ յամենայն ազգաց եւ յամենայն լեզուաց եւ յամենայն ժողովրդոց* ։ || * Որ · ԼՄ *որք* ։ || * Զինքեամբք · ԼՄ *շուրջառեալք* ։ || * Պատմուճան սպիտակ · Յ *յգ.* — ԼՄ *հանդերձս սպիտակս* · *տ. վեր. զծան. ի* 6 · 11 ։ || * Արմաւենիք · ԼՄ *արմաւենիս* = Յ ։ || * Նոցա · ԼՄ *ձեռանց* ։

10· * Եւ (*առջ.*) = Յ, *պակ.* ԼՄ ։ || * Աղաղակէին · *այսպէս եւ* ԼՄ · — Յ *ներկ.* ։ || * Ձայնիւ մեծաւ · ԼՄ *է ձայն մծ. տ. վեր. զծան. ի* 5 · 2 ։ || * Ասելով = Յ *ընդն. ներկ.*, *զոր* ԼՄ *ըստ սովորութեան փոխեն՝ եւ ասէին* ։ || * Փրկութիւն · *սոյնօրինակ եւ* ԼՄ · *ըստ* Յ՝ փրկութիւնն ։ || * Մերոյ · *սոյնպէս եւ* ԼՄ · *ըստ* Յ *պիտի տրկ.* ։ *Այս են միտք բանիցս · փրկութիւնն որ եղեւ մեզ՝ յԱստուծոյ է եւ ի Գառանէն ·* Մ *էջ* 110 *մեկնաբանէ՝ «փրկու-*

թիւն ասեն մերս՝ շնորհացն Աստուծոյ է, եւ ոչ մերում զօրութեանս»։ Հմմտ. Սղ. 3·9 «Տեառն է փրկութիւն», եւ Եր. 3·23 «ի ձեռն Տեառն Աստուծոյ մերոյ է փրկութիւն Իսրայելի»։ Հմմտ. Նաեւ 5·13, 12·10, 19·1։

11. *Ծերունեաւքն. ԼՄ յերիցանցն. տ. վեր. գծան. ի 5·5։ ||*Անկան = Ց. — ԼՄ անկ.։ ||*Նոցա եւ առաջի գառինն. չիք ի Ց եւ ոչ ի ԼՄ։ Տեղիս այս փոքր ինչ խանգարեալ է. փոխան նոցա թերեւս ընթեռնլի է՝ նոքա (տ. զհամեմատութիւն Ցուն. օրր.)։ ||*Ի վերայ երեսաց իւրեանց = Ց, ուր ԼՄ ունին լոկ՝ յերեսս, եղեալ զկնի նախընթաց բային անկանէին։ ||*Երկիրպագին = Ց. — ԼՄ անկ.։ — Հմմտ. 5·11, 11·16։

12. *Եւ ասեն. ասա ընդ հակառակն ԼՄ ունին՝ ասելով = Ց ընդ. ներկ.։ ||*Փառքդ. ԼՄ առանց դմրշ. յ. — Ց եւ ԼՄ միօրինակ + եւ իմաստութիւն (միաբան ընդ Թ պակ. եւս ի Ցուն. Աղեքս. օր.)։ ||*Գովութիւնդ. ԼՄ գոհութիւն. տ. վեր. գծան. ի 4·9։ ||*Պատիւդ ... զաւրութիւնդ. ԼՄ առանց դմրշ. յ.։ ||*Ույժդ = Ց (տ. վեր. գծան. ի 5·12). ԼՄ կարի այլակերպ՝ ուժն։ ||*Աստուծոյ մերոյ. այսպէս եւ ԼՄ. ըստ Ց հարկ է դնել ի տրկ.։ ԼՄ նխդ. Տեառն։ — Հմմտ. 4·9, 5·12։

13. *Մի ոմն. ԼՄ մի, տ. վեր. գծան. ի 5·5։ ||*Ի ծերոցն. ԼՄ յերիցանց. տ. վեր. գծան. ի 5·5։ ||*Պատասխանեաց ասելով, ամենայնիւ ըստ Ցուն. ոճոյ = Ց, փխկ. որոյ ԼՄ համառօտելով դնեն լոկ՝ ասէ։ Ըստ ոսկեղինիկ հայկաբանութեան պարտ էր թարգմանել՝ պատասխանի ետ եւ ասէ (հմմտ. ἀποκρίνεσθαι, պատասխանի տալ, իբրեւ դիմ. բայ, ընդ

λέγειν, ասել, ընդն.՝ Մթ. 25.9, 37, 45, Մկ. 15.9, Ղկ. 3.16, Յհ. 1.26, եւ յայլ բազում տեղիս Ածչ. Մատ. — գուն ուրեք գտանի եւ պատասխանի առնել, Գծ. 25.4 եւն.)։ ՆԲՀԼ. ի բ. «պատասխանի տալ» կամ «տալ պատասխանի» = ἀποκρίνεσθαι, ասէ՝ «Տե՛ս ստէպ ի հին եւ ի նոր կտ. եւ յամենայն գիրս ըստ նախնեաց. ուր յետինք առաւել գնեն՝ Պատասխանել, որ է որպէս ոճ ռամկական». իսկ ի բ. «պատասխանեմ» յայլոց միջի ի վկայութիւն կոչէ զԴաւիթ Անյ., Գործ., եւ զՄովս. Խորենացի, Պատմ. Գ. 50։ Նորայր, Կորիւն եւն., էջ 432, յառաջ բերէ զբայդ պատասխանել ի «Ցանկոց երից գրոց Մատթէի Մեկնութեանն յՈսկեբերանէ», զորմէ ասէ՝ թէ «ոչ միայն Մատթէի Մեկնութեան թարգմանչին անծանօթ» բառ է, «այլ եւ միւս Առաջին Աշակերտաց առ հասարակ»։ ՅԱծչ. Մատ. մի անգամ եւեթ գտանի պատասխանել, այս է՝ Յոբ. 13.19 «Զի ո՞վ է ոսոխն իմ որ պատասխանեսցէ ինձ» (ըստ Ածչ. Զօհր., իսկ Ածչ. Կպ. այլազգ ինչ ընթերցուած ընծայէ)։ Այլ սակայն Նորայր, ի վերոյիշեալ տեղւոջ էջ 213, անվաւերական եւ անհարազատ համարի զայդ ընթերցուած, միաբան կարծեաց Հ. Ղեւոնդի Վ. Յովնանեան, «Հետազօտութիւնք Նախնեաց ռամկօրէնին վրայ» (Հանդէս Ամսօրեայ, 1888, 7 ա), յորոց Նորայր, անդ էջ 212—213, ի մէջ բերէ զհետագայ հատուած. «Ծանօթ է բանասիրաց որ Ս. Մեսրոպայ երիցագոյն աշակերտաց յաջորդող կրտսերագոյն աշակերտք ... իրենց գրուածոց մէջ բաւական յաճախութեամբ այնպիսի արմատական եւ ածանցեալ բառեր կը գործածեն, որ թէ եւ օտար բառեր չեն,

. . . այլ բուն հայկական են, սակայն երբեք ի կիր արկած չեն ո՛չ իրենց ուսուցիչքն եւ առաջնորդք, եւ ո՛չ երիցագոյն աշակերտակիցք . . . ։ Այնու աւելի զարմանալի կ'երեւայ եւ աչքի կը զարնէ այս զանազանութիւնն՝ որ նոյն բառերէն գէթ ոմանք շատ յաճախ կրնային գործածուիլ։ Օրինակ ըլլայ արմատական բառից՝ արփի, . . . եւ ածանցեալ բառերու՝ աղօթել, ողջունել, ուրախանալ, ուրախացուցանել, պատասխանել . . . ։» Ապա ի սոյն յարեալ՝ ասէ Նորայր. «Ի շարունակութեան նոյն ուսումնասիրութեան կը գրէ [Յովնանեան] եւ յերես 17 ա. «Գիտենք թէ յիշեալ բառերէն ոմանք մի կամ երկու անգամ կը հանդիպին նա եւ առաջին թարգմանչաց գրութեանց մէջ. բայց խուսամբք կասկածելի կը համարինք վաւերականութիւնը, (բուն անոնց գրչէն ելած ըլլալը։) Անոր համար չվարանեցանք չեղածի տեղ դնել ի գործնականին, իբր առոյգ դուշակելով օրինակողաց անհաւատարմութիւնն եւ անճշդութիւնը»։ Եւ ի մէջ կը բերէ զՊատասխանեմ (Յովբ. ԺԳ. 19), որ ի 23 օրինակաց նոյն գրոց՝ միայն 5 օրինակաց մէջ կը գտնուի, որով անվաւերութեան բառիդ տարակոյս չմնար»։

— Յ շարադասէ այսպէս՝ Եւ պատասխանի ետ մի ոմն ի ծերոցն եւ ասէ + ցիս. իսկ ԼՄ՝ ետ ասէ ցեւ մի յերիցանց + անոցի։ || * Այսք. ԼՄ այսու։ || * Որք զգեցեալ են. ԼՄ որ զգեցեալը (-ցեալ Լմ) են. Յ ընդ.։ || * Պատմուճան սպիտակ. Յ յգ. որոշհյց., նմանապէս ԼՄ՝ զհանդերձս սպիտակս. առ. վերագծան. ի 6. 11։ || * Եւ (երկր.). ԼՄ + նամ։ || * Եկին = Յ. ոչ ճշգրիտ ԼՄ՝ եան։

14. * Նմա = Յ արկ. — ԼՄ ցնա։ || * Իմ

= Ց, գնց. ԼՄ։ || * Ասաց = Ց. — ԼՄ ներկ.։
|| * Ինձ = Ց տրկ. — ԼՄ ցէ.։ || * Այս. ԼՄ ստես
+ նն = Ց. ինձ թուի՝ թէ էական բայդ զանց ե-
ղեալ է ի Թ յօրինակողաց. ուստի ընթեռնլի է ըստ
Ց այսպէս՝ այս են որք եւն.։ || * Որք զան = Ց
ընդդ. յդ. — ԼՄ որ գան։ || * Ի նեղութեանց մե-
ծաց. ԼՄ է վշտաց մեծաց. Ց ունի ճշգիւ՝ ի նեղու-
թենէն մեծէ, տ. վեր. գծան. ի 1.9։ Համմտ. Մկ.
13.19, Մթ. 24.21։ || * Զպատմուճանս = Ց. —
ԼՄ զպէնեկսն. տ. վեր. գծան. ի 6.11։ Համմտ. առ-
այս նա եւ Ել. 19.10, 14, 1 Կր. 6.11։ || * Զնոսա
= Ց, պակ. ԼՄ։

15. * Վասն այսորիկ = Ց, անճիշդ ԼՄ՝ վասն
այնորիկ։ || * Աստուծոյ. ԼՄ նխդ. աթոռոյն = Ց։
|| * Սպասաւորեն. դիպողագոյն ունին ԼՄ՝ պաշտեն.
— սպասաւորել միայն մի անգամ գտանի յԱծշ.
Մատ., Սիր. 39.4. — λατρεύειν առ հասարակ
Թարգմանի պաշտել (գ. օր. Ել. 3.12, Թւ. 16.9,
Երկ. 4.19, 28, 6.13, 10.12 եւ յաճախագոյնս ի
Հ. Կ., է ուրեք եւ ծառայել, Ղեւ. 18.21. նոյնպէս
եւ ի Ն. Կ. ամենայն ուրեք, համմտ. մանաւանդ
Եբ. 8.5, 13.10 եւն.)։ || * Նմա. ԼՄ նմ.։
|| * Ի տուէ եւ ի գիշերի = Ց. — ԼՄ ցոյ- ե- ցե-
րէ. տ. վեր. գծան. ի 4.8։ || * Բնակեսցէ ի նոսա
= Ց. ոչ ճշգրիտ ԼՄ՝ բնակեալ է ի նոսա. — σκηνοῦν
նշանակէ 1) բնիկ առմամբ տիրապէս՝ հարկանել
զվրան, կամ զխորան, եւ կամ զտաղաւար իւր,
ἐπί τινα ի վերայ ուրուք, այսինքն՝ պատսպարել
զոք, հովանի լինել, կամ պաշտպանել ումեք. յայս
միտս իմանալի է ի սմին վայրի զբնակելն. ըստ
այսմ՝ ճշգիւ ըստ իմաստին Ցուն. բնգ.՝ Թարգմա-

նելի էր զայս օրինակ՝ պատսպարեսցէ զնոսա, *կամ* հովանի լիցի, *եւ կամ* պաշտպանեսցէ նոցա. *Համմտ. Ղեւ.* 26 · 11 «*Եւ հաստատեցից զուխտ (ըստ Եբր. զխորան) իմ ի ձեզ*». — 2) *ընդհանրապէս՝* բնակել (*Ծն.* 13 · 12, *Դտ.* 5 · 17, 8 · 11 «*վրանաբնակիչ*», 3 *Թգ.* 8 · 12 «*հովանի լինել*», *տ. Աճշ. Կպ.*, *Ցհ.* 1 · 14), *տ. նաեւ ստ.* 12 · 12, 13 · 6, 21 · 3։

16. * Եւ (*առջ.*)․ *չիք ի* ԼՄ *եւ ոչ ի* Ց։ || * Քաղցիցեն. Ց + այլ եւս («*ոչ եւս քաղցիցեն*»), *որ պակ. նաեւ ի* ԼՄ, *համաձայն ոմանց ի Յուն. օրր.* (*յորս եւ Սինէականն, տ. զՀամեմատ. Յուն. օրր.*)։ || * Ծարաւեսցին = Ց. — ԼՄ *ծարաւիցեն*, *իսկ* Լ*ամ ունին* = Թ. *դարձեալ* Ց + այլ եւս («*ոչ եւս ծարաւեսցին*»), *որ հանգոյն* Թ *եւ* ԼՄ *պակ. նաեւ ի բազումս ի Յուն. ձձ.*։ || * Եւ ո՛չ հարցէ զնոսա (Ց *ճշգիւ՝* եւ ոչ անկցի ի վերայ նոցա) արեգակն եւ ո՛չ (Ց + ամենայն) տաւբ = Ց. *այլ-ազգ դարձուածով յեղափոխեն* ԼՄ՝ եւ ո՛չ որ մե-ղիցէ նոցա՝ ո՛չ արեգակն եւ ո՛չ տօթ։ *Համմտ. զնա-խատիպ օրինակն Ես.* 49 · 10 «*Ոչ քաղցիցեն եւ ոչ ծարաւեսցեն, եւ ոչ խորշակահար լիցին յարեւ-ու*», *եւ Սղ.* 120 · 6 «*Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, եւ մի՛ լուսին ի գիշերի*»։

17. * Չի = Ց, *փխկ. որոյ* ԼՄ *գնեն՝ ὅτι*։ || * Որ ի մէջ աթոռոյն է = Ց, *միայն թէ սա չունի զէական բայդ.* ԼՄ *ո՛չ ուղիղ թարգմանեն՝ է մէջ աթոռոյն ἐστι* (Մ *չունի ἐστι*)։ || * Նոցա (*առջ.*). ԼՄ *հյց.* = Ց։ *Համմտ. Սղ.* 22 · 2։ || * Ի ջուր կենդանութեան աղբերաց. *խառնակ է յօրինուած-քանից. ուղղելի է ըստ* Ց՝ ի կենաց աղբերս ջրոց. *նմանօրինակ գրեն* ԼՄ՝ *է կենաց աղբեր Ջրոյ*, *աւե-*

լորդաբար + կենդանւոյ։ Համմտ. Սղ. 22 · 2—3, Ես. 49 · 10։ || * Եւ ջնջեսցէ = Ց · ոչ ճշգիւ ԼՄ՝ ջնջէ ինքն, յոր յարեալ յաւ.՝ Աստուած, համեմատ Ց։ || * Ցերեսաց · սոյնպէս եւ Լ · Թուի՝ թէ նմանողութիւն բանից Ես. 25 · 8 «եւ դարձեալ եհատ Աստուած զամենայն արտօսր յամենայն երեսաց»․ ճշգիւ ըստ Ց՝ յոյլոց, որպէս ունին եւ ԼոմՄ · տ· ատ· 21 · 4։

Ը. 1· * Իբրեւ · ԼՄ որպէս։ || * Ժամակես մի · ԼՄ կէս ժամու · — ժամակես, բառ ցայսօր չեւ եւս ծանուցեալ, նմանահան ճշգրտութեամբ յօրինեալ ըստ Ց ἡμίωρον. Յուն. բառս այս այլուր յՍծչ. Մատ. ո՛չ բնաւ պատահէ. իսկ ժամակես (համմտ. զհանգունատիպ կազմութիւնս գրակես, իշակես) դատակարգելի է ընդ նորագիւտ բառս ի Թ · տ· վեր. 1 · 12, 15, 3 · 18, 6 · 8։

2· * Ձեւքն հրեշտակսն = Ց · ոչ ճշգիւ ԼՄ՝ հրեշտակս եօթն։ Համմտ. վեր. 1 · 4, 4 · 5, 5 · 6, եւս եւ Ղկ. 1 · 19, Տոբ. 12 · 15։ || * Աքոռոյն · այլակերպ ԼՄ՝ Աստուծոյ = Ց։ || * Տուաւ · այսպէս եւ ԼՄ, համաձայն ոմանց ի Յուն. օրր. — իսկ Ց յգ.։ || * Փող · Ց յգ. — ԼՄ ոչ ճշգութեամբ՝ փող։

3· * Եկն · Ց + եւ, զոր ունին եւս Լոմ. իսկ ԼՄ = Թ։ || * Ի վերայ սեղանոյն = Ց, զոր ԼՄ վրիպանօք փոխեն՝ առ սեղանն։ || * Ունելով = Ց ընդդ. ներկ. — ԼՄ եւ ունէր։ || * Լիբանոսն տոն, սոյնպէս եւ խոն. հմր. 5, ուրոյն ուրոյն իբրեւ եր-

կու բառք գրեալ, զորս Բ օգնութեամբ միջակիտիւ իսկ զատուցանէ ի միմեանց։ Յանտեղեակ գրչաց խաթարեալ եւ յայլանդակ ձեւ փոխակերպեալ բառս լիբանովն տոն, անշուշտ ի սկզբան անդ՝ ղիբանովտոն, կամ լիբանովտոն, փոխադրութիւն է λιβανωτόνի զոր ունի Յ, անփոփոխ պահեալ զձեւ հյց. հոլովի։ Բառս λιβανωτός նշանակէ՝ 1) բնիկ առմամբ՝ խունկ, այս է խիժ, կամ ռետին, եւ կամ հոյզ, ծորեալ եւ կաթեալ ի λίβανος, ղիբանոս կամ լիբանոս ծառոյ, զոր ի նախնումն իբրեւ զխունկ ի կիր արկանէին ի ժամ պատարագաց կամ զոհից մատուցանելոյ։ Սոյն լիբանոս՝ է ծառն կնդրկի, ծառ խնկաբեր, խնկենի (հմմտ. Ովս. 14. 6), եւ փոխանունաբար՝ նոյն ինքն կնդրուկ («ազգ խնկոյ ազնիւ, որ է խիժ կամ արտօսր ծառոյ, առաւել յերջանիկն Արաբիա, եւ ի լերինս Լիբանանու» եւն., ՆԲՀԼ. ի բ., «զոր ի գործ ածէին ի հնումն յԱստուածային պաշտամունսն, եւ ի մատուցմունս զոհից», եւն., ԲՀԼ. ի բ.), որ ի մեզ նոյն ընդ լիբանոն, «խիժ լիբանոս ծառոյ. այն է կնդրուկ», ՆԲՀԼ. ի բ. Լիբանոն (հմմտ. Նէ. 13. 5, 9)։ Ի Հայ. Անշ. Մատ. Յուն. լիբանոս թարգմանի կնդրուկ (Ղեւ. 2. 1, 2, 15, 16, Ես. 43. 23, Մթ. 2. 11, Յտ. 18. 13, եւ յայլ տեղիս). սովին բառիւ բացատրի երկիցս անգամ նոյն ինքն լիբանովտոս (1 Մն. 9. 29 եւ 3 Մակ. 5. 2). — 2) յատուկ եւ սեպհական մտօք առեալ լինի մանաւորապէս ի սմին վայրի եւ Ներք. հմր. 5 իբրեւ բուրուառ, խնկաման, եւ կամ՝ որպէս թարգմանեն ԼՄ՝ խնկանոց (բառս այս չիք ուրեք յայլ գիրս Հայ. Անշ. Մատ.). ուստի լիբանովտոն աստէն նոյնանշան է ընդ πυρεῖον =

կրակարան (Եւ. 27·3), բուրուառ (Եւ. 38·3. — Համմտ. նաեւ 3 Թգ. 7·50, 2 Մն. 4·22), յորում դնէին հուր եւ ի նա արկանէին խունկս (Ղեւ. 10·1, 16·12, 13, Թւ. 16·46)։ Սովին այսու մանաւոր առմամբ լիբանոտոս անսովոր է առ նախնի Յոյն մատենագիրս, որք փխկ. այդորիկ ի կիր առնուն զբառն λιβανωτίς, ղիբանոտիս, կամ մանաւանդ λιβανωτρίς, ղիբանոտրիս։ — Արդ՝ վասն սորին իսկ պատճառի թերեւս, եւ ո՛չ եթէ տգիտաբար, եւ կամ առ ի չգոյէ հանդիտազօր համանշան Հայերէն բառի, բարւոք թուեցաւ արդեւք Թարգմանչին փոխագրել զօտար բառդ լիբանոտոն (գտանի ուրեք այսպէս գրեալ եւ յուղ.) ինքնին գլխովին, եւ մուծանել զդա ի Հայ լեզու, զորէն այլոց բազմաթիւ փոխ առեալ այլազգի բառից (տ. նաեւ վեր. ծան. ի 1·15 եւ 2·18)։ || * Խունկ բազում. ԼՄ նոյնօրինակ. Յ յգ.։ || * Զի տացէ մինչեւ ցամենեցուն. նոյնաբանութեամբ թարգմանեալ = Յ. այսինքն՝ զի տացէ (հրեշտակն զխունկս) զոյգ ընդ աղօթս, կամ կցեալ՝ յաւելեալ յաղօթս եւն. — իսկ ԼՄ թիւրիմացութեամբ այլայլեն զմիտս Յուն. բնգ.՝ նէ մատուցէ զաղօթս ամենայն սրբոց։ || * Որ (առջ.), յանպէտս եդեալ եւ խանգարիչ իմաստին. չիք ի Յ եւ ոչ ի ԼՄ։ || * Ոսկի. ԼՄ ոսկեղէն։ || * Սեղանոյն = Յ, առանց դմրշ. յ. ԼՄ։ || * Որ (երկր.) . . . (էր) = Յ. անճշգրիտ ԼՄ բցթ.։

4. * Աղաւթից ≐ Յ, տրկ., այսինքն՝ կից աղօթից, զոյգ ընդ աղօթս. Թ կարի յոյժ նոյնաբանութեամբ ըստ Յ թարգմանէ, սմին իրի մթացուցանէ ըստ իմիք զուղիղ իմացութիւն բանիցն. զոր ոչ բարւոք ի միտ առեալ ԼՄ կամակորեն՝

տըզին ։ || * Ի ձեռնաձէ հրշտակին (տ. վեր. գծան. ի 3·1) = Ց, ուր ԼՄ դնեն՝ է յերաց հրեշտակացն ։ || * Առաջի · ԼՄ + Առաջոյ = Ց· անշուշտ սխալանօք գրչաց զանց եղեալ ի Թ ։

5· * Եւ ա՛ռ. մինչեւ ի զՆա , բառ առ բառ = Ց· իսկ ԼՄ համառօտելով Թարգմանեն միայն՝ եւ եկեց հրեշտակն ընկնանոցն ։ || * Էարկ · ԼՄ արկ + ձեռ. այս յաւելուած պակ. եւս ի Ց ։ Հմմտ. Եզ. 10·2 ։ || * Եղեն = Ց· անճիշդ ԼՄ եղ. ։ || * Ձայնք մինչեւ ցփայլատակմունք = Ց· միայն Թէ աս դասաւորէ՝ որոտմունք եւ ձ. եւ փ. — Թ համաձայն դատանի ոմանց ի Յուն. օրր. — իսկ ԼՄ ընթեռնուն՝ որոտումն եւ ձայնք եւ փայլատակումն ։ || * Շարժումն · ԼՄ առանձին + մեծ ։ Հմմտ. վեր. 4·5, եւ ներք. 11·19 ։

6· * Ունելով = Ց ընդդ. ներկ., զոր ԼՄ ըստ սովորական ոճոյ փոխեն՝ որ ունէին ։ || * Ձեռքն փողսն = Ց· ոչ ճշգրիտ ԼՄ՝ եւ զին փողս ։ || * Պատրաստեցան · Ց ունի ճշգիւ՝ պատրաստեցին զինքեանս, որում համեմատ են եւ ԼՄ ։ || * Զի հարցեն = Ց· այլազգ իմն ԼՄ՝ առ է հարկանել ։

7· * Առաջինն = Ց· յաւելուածով ԼՄ՝ առաջին + հրեշտակն ։ || * Արիւնախառն · դիպողագոյն եւ վայելուչ իմն բացատրէ Թ զՑ որ ունի ճշգիւ՝ խառնեալ արեամբ, զոր Թիւրիմացութեամբ ԼՄ այլափոխեն՝ եւ արեան խառնեալ ։ || * Անկաւ · այսպէս եւ ԼՄ · ճշգագոյն ըստ Ց (կրաւ. բայից արկանել, կամ ընկենուլ, հմմտ. Մթ. 3·10, Մկ. 9·42, 47, Ղկ. 3·9, Գծ. 22·23, այլովքն հանդերձ)՝ ընկեցաւ (հմմտ. Դն. 3·21, 6·24), որպէս ունի Թ ստ. 12·13 (հմմտ. 12·9) եւ 20·15 (ուր Լ արկաւ) ։

|| * Ցերկիր · Ց + եւ երրորդ մասն երկրի այրեցաւ · ըստ սմին օրինակի եւ ԼՄ, միայն թէ ներդծ· յօրինուածով՝ եւ զերրորդ մասն երկրէ այրեաց ։ Այս հաստուած պակ. նաեւ յոմանս ի Ցուն. ձձ. ։ || * Երրորդ մինչեւ ի կատարած համարոյ, բան առ բան = Ց · իսկ ԼՄ վերստին հանդոյն նախընթացին փոփոխեն՝ եւ զերրորդ մասն ծառոց այրեաց, եւ զամենայն դալար խոտոյ (անճիշդ, փխկ.՝ դալար խոտ, կամ՝ խոտ դալար) այրեաց ։ Առ այս հմր. տ. Ել. 9 · 24, Ես. 28 · 2 ։

8· * Եճար զփողն = Ց · ուր ԼՄ ոչ ի ճահ դնեն՝ փողոց, այսպէս եւ ներքն· հմր. 10 եւ 12. — փողել = փող հարկանել անսովոր է ի Հայ. Աձչ. Մատ., հմմտ. փողել միայն Նախադր. Թուոց գլ. ժզ., եւ 1 Մակ. 5 · 42, 16 · 6 («նմանութեամբ, 'իբրեւ ի ձայն փողոյ հորդան տալ կամ յառաջ խաղալ անցանել», ՆԲՀԼ. ի բ.)։ || * Զլեառն · Լ + մ ։ || * Լուցեալ հրով = Ց (հմմտ. Ղկ. 12 · 35, Ցհ. 5 · 35 եւն.) · ԼՄ բցթ. հրով, եւ դնեն լոկ՝ հրդեհեալ (հմմտ. 2 Պտ. 3 · 12) · — հմմտ. առ այս Եր. 12 · 18 «լեառն ... հրոյն վառեալ», եւ Եր. 51 · 25 «լեառն այրեցեալ»։ || * Անկաւ · սոյնպէս եւ ԼՄ · առդձան. ի նախընթաց հմր. ։ || * Ծովուն = Ց · առանց դմրչ. յ. ԼՄ ։ — Հմմտ. Ել. 7 · 17, 19, 20 ։

9· * Մեռաւ = Ց, փխկ. որոյ ԼՄ անճիշդ դնեն՝ ապականեցաւ ։ || * Կենդանեաց · ճշդիւ ըստ Ց՝ արարածոց, զոր ԼՄ ոչ ճշգրիտ թարգմանեն՝ լողակաց (Մ լողակաց, ըստ Լոմ՝ գնացականաց) · տ. Ել. 7 · 21 ։ || * Որ ի ծովու = Ց, զնց. ԼՄ ։ || * Ունէր շունչ · ճշդիւ ըստ Ց՝ որք ունէին շունչս · յաւելուածովք առաջնոյ եւ զկնի ԼՄ՝ եւ որ անէր շունչ կենդանի · հմմտ. եւ Բերդ. էջ 136 · «Եւ ծանի՛ր,

զի ըստ այլ թարգմանութեան [= ԼՄ°] գրի այսպէս. Եւ առաքեցաւ երրորդ մասն լուսնոյ, որ ոսկեր ջլաձեւ կիսեցանէ »։ || * Եւ երրորդ մասն նաւաց = Յ, պակ. ԼՄ. իսկ Ոսկան ունի զբառսդ այսպէս՝ Եւ երրորդ մասն նաւաց, տ. եւ Բերդ. էջ 136։ || * Ապականեցաւ = ԼՄ = Յ (միայն թէ առ յգ.), ուր Ոսկան՝ ընկղմեցաւ։

10. * Հրշտակն. ԼՄ հրեշտակն. տ. վեր. 3.1։ || * Եհար փող = Յ. — ԼՄ փողոյ. տ. վեր. զծան. ի հմր. 8։ || * Աստղ. ԼՄ + մի։ || * Լուցեալ՝ մեծ. փոխելի է ըստ Յ՝ մեծ՝ լուցեալ. ԼՄ մեծ՝ բոցբոցեալ (տ. զծան. ի հմր. 8). հմմտ. Յոբ. 41.10 «ղամբարք բորբոքեալք»։ || * Ջղամպար, ըստ Ե. իսկ Լ ջահմբար, Մ = Բ ջղամբար. — տ. վեր. զծան. ի 4.5։ — Հմմտ. Ես. 14.12, Դն. 8.10։ || Ի վերայ երրորդ մասանց (վրիպակ, ուղղելի՝ մասին) = Յ. այլակերպ ԼՄ՝ ջրերորդ մասն։ || * Ի վերայ աղբերց ջրոցն, ճշդիւ = Յ. համառօտ ԼՄ՝ աղբերաց։

11. * Անուն աստեղն կոչեցաւ (ըստ Յ կոչի) = Յ. այլազգ դարձուածով ԼՄ՝ եւ անուն աստեղն։ || * Աւշինդր = Յ ὁ ἄψινθος, որ ո՛չ գտանի այլուր յԱծչ. Մատ. — հմմտ. միայն Եր. 9.15 «վտանգ», եւ 23.15 «ցաւս», ուր Երր. բնգ. յերկոսին տեղիսդ ունի՝ աւշինդր (տ. Ածչ. Կպ.). ԼՄ՝ դառնութեան։ || * Դարձաւ մինչեւ ի յաւշինդր. տեղիս այս բոլորովին խանգարեալ է՝ թուի ինձ թէ՝ ի գաղափարողաց, տ. զծան. Ներք. Բնգ. — յարայն զոր ունի Ե՝ համարիմ աղաւաղութիւն ջրոյն, կամ ջրոցն. — ըստ Յ ընթեռնլի է զայս օրինակ՝ եղեւ երրորդ մասն ջուրց յաւշինդր. ուստի Թ ուղղելի է այսպէս՝ դարձաւ երրորդ մասն ջրոցն յաւշինդր.

ողջոյն հաստատածս այս պակ. ի ԼՄ, որպէս եւ ի Բ։ ‖ * Ի մարդկանէ = Յ, չնչ. ԼՄ։ ‖ * Սաստկեցան. ճշգագոյն ԼՄ՝ ժեռան = Յ. տ. վեր. հմր. 9։ ‖ * Ի ջրոյն, քանզի դառնացեալ էին (ճշգիւ ըստ Յ՝ դառնացան) = Յ. համառօտելով այլափոխեն ԼՄ՝ է դառնութենէ ջրոցն։ Համմտ. Եր. 9. 15։

12. * Եհար փող. ԼՄ փողփոց. տ. վեր. գծան. ի հմր. 8։ ‖ * Վիրաւորեցաւ. Յ ճշգիւ՝ հարաւ, այսինքն՝ մթացաւ, խաւարեցաւ. նման «հարկանելոյ Տեառն զգետն» Եղ. 7. 25. — ԼՄ փխտորէր։ ‖ * Արեգականն. ԼՄ առանց դմրչ. յ.։ ‖ * Եւ խաւարեցաւ. ԼՄ նա խաւարէր. Յ ճշգիւ՝ զի խաւարեսցի. — Թ համաձայն գտանի ոմանց ի Յուն. օրր.։ ‖ * Եւ վեցերորդ աւուրն, նոյնպէս եւ գիշերն. խաթարեալ եւ աղականեալ է բնագիրն աստէն. աղաւաղ եւ թերի են նոյնպէս ԼՄ՝ նա երրորդ մասն ցերեկոյ նոյնպէս. նմանագոյն իմն Յունին ընթեռնու Ոսկան՝ նա սոսոք ոչ լուսաւորէր մասն երրորդ, նա ցերեկոյ նոյնպէս. ըստ Յ ուղղելի է զայս օրինակ՝ եւ տիւն մի՛ երեւեսցի (լուսաւորեսցէ) զերրորդ մասն իւր, եւ գիշերն նոյնպէս։ Համմտ. Ամ. 8. 9 «Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր Տէր, մտցէ արեգակն ի միջօրէի, եւ խաւարեսցի յերկրի լոյս ի տուէ»։

13. * Արծուոյ միոյ թռուցելոյ. նոյնաբանութեամբ = Յ. լսել ակ. խնդրով ճշգրտիւ ըստ Յուն. ոճոյ, օտար ամենեւին ի հայկաբանութենէ. — ԼՄ՝ ձայն հրեշտակի թռուցելոյ, ըստ որում արդարեւ ընթեռնուն ոմանք ի Յուն. օրր.։ ‖ * Ընդ միջոց երկրի. վրիպակ, ուղղելի՝ ընդ միջոց երկնից, լաւ

նչցին ։ || * Չի (երկր․) = Յ, պակ․ ԼՄ ։ || * Տանջեսցեն, հաւանական կարծեօք՝ վրիպակ գրչի, ուղղելի՝ տանջեսցին = Յ․ ի ներքծ․ յօրինուած փոխեն ԼՄ՝ տանջեսցեն + զնոսա․ ճահաւորագոյն թարգմանի ի սմին վայրի βασανίζειν տանջել (հմմտ․ Իմ․ 11․9, 12․23, 16․1, 4, 2 Մակ․ 7․13, 17, Մթ․ 8․6, Մկ․ 5․7, 2 Պտ․ 2․8 եւն․) քան տանջեսցեն (այսպէս 1 Թգ․ 5․3, է ուրեք եւ՝ հարկանել, 2 Մակ․ 1․28)։ || * Տանջումն (փխկ․ որոյ ստ․ 14․11, եւ 18․7, 10, 15 եդեալ է տանջանք)․ ԼՄ տանջանք․ տ․ ի նախընթաց բառն ։ || * Ջհարուածս = Յ (ճշդիւ՝ զտանջումն), ուր ԼՄ ոչ ճշգրիտ գնեն՝ զխայթոցս ։ || * Կարճաց․ ԼՄ եղ․ = Յ ։ || * Յորժամ = Յ․ անճիշդ ԼՄ՝ որ ։

6․ * Ոչ․ ԼՄ ձ՛ ։ || * Ջնա = Յ, զնց․ ԼՄ ։ || * Ցանկասցեն, թերեւս սուկ վրիպակ գրչի փխկ․՝ ցանկասցին (այսպէս ունի եւ Ոսկան) = Յ․ — ԼՄ ցանկան ։ — Հմմտ․ Յոբ․ 3․21, Եր․ 8․3 ։ || * Մահ ի նոցանէ․ ըստ դասաւորութեան բառից ճշդիւ = Յ․ հակառակ շրջեն ԼՄ՝ է նոցանէ մահ ։

7․ * Էին․ չիք ի Յ եւ ոչ ի ԼՄ ։ || * Նմանութիւնք (հմմտ․ Եզ․ 10․22 «նմանութիւն երեսաց») = Յ․ — ԼՄ եղ․ ։ || * Մարախոցն = Յ․ — ԼՄ դարձեալ եղ․, տ․ վեր․ ծան․ ի հմր․ 3 ։ || * Նման = Յ․ այլազգ ԼՄ՝ նմանութիւն ։ || * Ձիոց պատրաստելոց = Յ․ ոչ ճշգրիտ ԼՄ եղ․ ։ Հմմտ․ Յովէ․ 2․4 ։ || * Ի վեր, ընթեռնլի (ըստ Բ)՝ ի վերայ, որպէս գրեն եւ ԼՄ ։ || * Գլխոցն․ ԼՄ առանց դմրշ․ յ․ ։ || * Նմանէին ոսկեղէն պատկերաց․ ամենեւին այլազգունակ․ — Յ եւ հանգոյն սմին ԼՄ ունին՝ իբրեւ պսակք (այսպէս եւ Ոսկան, ԼՄ եղ․)՝

նման (*կամ ըստ* ԼՄ՝ *նմանեալ*) *ոսկւոյ*։ ||* Դէմք... զդէմս. ԼՄ *երեսք ... զերեսս*, *որպէս ի Ս. Գիրս առ հասարակ թարգմանի* πρόσωπον. *այլ սակայն քաղայարմար է եւ* դէմք։ ||* Մարդկան = Յ. *ոչ ճշգրիտ* ԼՄ՝ *մարդոյ*։

8. * Ունէին հերս = Յ. *այլափոխեն* ԼՄ՝ *հերս նոցա*։ ||* Կանանց = Յ. *անճիշդ* ԼՄ՝ *կնոջ*։ ||* Զառեւծուց = Յ. *լաւ եւս է՝ զառիւծուց*, *որպէս գրեն* Լմ, *զոր* ԼՄ *վերստին դնեն յեղ.* — Յ + էին։ — *Համմ. Յովէլ* 1. 6։

9. * Զուք... զզուամս. *բառ մինչեւ ցարդ անծանօթ*, *որոյ ծագումն ինձ անյայտ է*, *եւ բուն նշանակութիւնն՝ անստոյգ. դնի առաջին ի տ. Յուն. բառին* θώρακας = *զրահս*, *որպէս ունին* ԼՄ. — θώραξ *թարգմանի* 1) *առ հասարակ* զրահ (1 *Թգ.* 17. 5, 38, 3 *Թգ.* 22. 34, 2 *Մն.* 26. 14, *Իմ.* 5. 19, *Ես.* 59. 17, *Եր.* 46. 4, *Եփ.* 6. 14, 1 *Թս.* 5. 8), 2) *զուն ուրեք՝* պատեան (*Յոբ.* 41. 4, 1 *Մակ.* 6. 2), *կամ* 3) զէն (*Յոբ.* 41. 17, 1 *Մակ.* 3. 3, 6. 43)։ *Նոյն ինքն գրչութիւնն վերոյգրեալ բառիդ երկբայական թուի ինձ*, *վասն զի* Ն *եւ* Բ *այլակերպ են ի միմեանց*, *եւ իւրաքանչիւրն իսկ ոչ միօրինակ.* Ն *գրէ* զուք — զզուամս, *եւ խոն. հմր.* 17 *դարձեալ* զզուամս. *իսկ* Բ *սոսա՝* զունք — զզունս, *եւ այլա հմր.* 17 զուամս։ *Ըստ այսմ երեքկերպեան է ուղ.* 1) զուամ, -ք, 2) զուն, -ք, *եւ* 3) զուք։ *Ապաքէն այս պէսպէս ընթերցուածք յայտ յանդիման ցուցանեն՝ թէ սկզբնական ձեւն այդր բառի վաղ ուրեմն աղաւաղեալ է եւ խաթարեալ ի գրչաց։ Սակայն եւ այնպէս մարթ է ի կարծ համարել՝ թէ նախնական ձեւն բառիդ իցէ* զուամ, *եւ այդ՝ բառ ռամկական կամ*

դաւառական, ի կիր արկեալ իբրեւ զրահ. Թերեւս ազգակից ընդ կումբ, կամ կմբեայ, « որպէս կմբեթեայ, պորտաւոր, այսինքն ուռուցիկ ի ձեւ պորտոյ կամ փորոյ » (ՆԲՀԼ. ի բ. կմբեայ). Համեմ. ոսկիկմբեայ, կամ ոսկիկմբէ, « ունօղ ի միջավայրի զկումբ ոսկի. այն է պորտն կամ միջին ուռուցիկն վահանի գմբեթաւորեալ » (ՆԲՀԼ. ի բբ.). Համեմատեա այս նաեւ Նորայր, Կորիւն եւն. էջ 450. « ոսկիզմբէ կամ ոսկիկմբէ վահան է վահան՝ որոյ պորտն ոսկի է. Արմատ ոսկիզմբէ բառին է կմբեայ. գղ. la bosse d'un bouclier » եւն. — Հանդերձ այսու՝ ամենայնիւ վերապացեալ բառդ զումն մեայ յերկուանալի, խնդրական եւ ստուգաբանօրէն քննելի. — Իսկ ԼՄ ունին՝ Նա ածէին զրահս՝ էէրեա զզրահս երկոնիկ = Ց, միայն թէ առ փոխի երկոնիկ դնէ երկարիս, որում միաբան են Լմ եւ Թ. || * Կառաց = Ց. վրիպեն ԼՄ՝ կառաւոր. || * Ընթացողաց = Ց. այլազգ դարձուածով ԼՄ՝ որ արշաւեն. — Համեմ. Յով. 2. 5, Եր. 47. 3.

10. * Ունէին. ԼՄ ածէին = Ց. — Լմ = Թ համաձայն գտանին Յուն. ձ. իմիք. — ԼՄ միաբան ընդ Ց + ոէէր, որ՝ հաւանական կարծեմք՝ անփութութեամբ ընդօրինակողաց զանց արարեալ է ի Թ. || * Նմանութիւն, Թերեւս ուղղելի՝ ի Նմանութիւն. Ց ճշգիւ՝ Նմանք. ԼՄ ըստ Նմանութեան. || * Կարճաց = Ց. ոչ ճշգրիտ ԼՄ՝ կարճի. Ոսկան = ԹՑ. || * Զխայթոցն. Ց անոր. հյց. յգ. — իսկ ԼՄ խայթոց, վրիպանօք շարակցեալ ընդ յաջորդս. || * Նեյագին Նոցա՝ իշխանութիւն նոցա. բան առ բան = Ց. ուր ԼՄ սխալ տրոհութեամբ կամակորեն զիմաստ բանիցդ այսպէս՝ յոէէն նոցա [վրիպակաւ յա-

բանկցեալ ի նախընթաց խօսիցն]. Եւ անձինն իշխանու-
թեան: || * Վճատել = Ց· անճիշդ ԼՄ՝ շուշուել·
տ. վեր. հմր. 4 եւ գծան. ի 2 · 11: || * Մարդկան ·
ԼՄ մարդկէ: Հմմտ. վեր. հմր. 5:

11· * Ես (առ.), այսպէս եւ ԼՄ, համեմատ ոմանց ի Յուն. օրր. եւ ի թարգմանութեանց · Ց բցթ. գչղկ.: || * Ուենին · ԼՄ ունէն = Ց · Ոսկան եւս ընթեռնու հանգոյն Թ, որոց միաբանին բազումք ի Յուն. օրր.: || * Ինքեանց · ճշգրտագոյն ըստ Ց ունին ԼՄ՝ է վերոյ խօսեանց: || * Թագաւոր · ԼՄ դնեն յառաջ քան զբառս է վերոյ խօսեանց. իսկ դասաւորութիւնն ի Թ = Ց: || * Ձիրշտակս · անշուշտ վրիպակ գրչաց, ուղղելի ըստ ԼՄ = Ց զհրեշտակն. վասն ուղղագրութեան բառիդ տ. վեր. գծան. ի 3 · 1: || * Անդնդոց = Ց, զոր ոչ ի դէպ փոխաբերեն ԼՄ՝ դժոխոց. այսու բառիւ (որ եւ = սանդարամետք) բացատրի Յուն. ᾅδης (գ. օր. Մթ. 11 · 23, 16 · 18, Ղկ. 10 · 15, 16 · 23, Գծ. 2 · 27, 31, 1 Կր. 15 · 55. սոյնպէս եւ ի գիրս Յտ. 1 · 18, 6 · 8, 20 · 13, 14, ուր Թ եւ Լ միօրինակ ունին՝ դժոխք). իսկ ἄβυσσος ի Ս. Գիրս առեալ իբրեւ վիհ, գուբ, անչափ խորք, ալք երկրիս, եւ եւս բնակարան մեռելոց, եւ մանաւանդ որպէս տեղի, յորմէ ելանեն դեւք, չար ոգիք, կամ այսք պիղծք, եւ ուր սոքա մերժեալ կան, թարգմանի ի մեզ առ հասարակ՝ անդունդք = «Խորք. վիհ. իբր անյատակ խորութիւն. ալք. խորին վայրք. դժոխք. որպէս Խորք ծովու կամ ջուրց. ծով.... որպէս Խորք երկրի, կամ որ եւ է իրաց.... որպէս Դժոխք», ՆԲՀԼ. ի բ. (Ծն. 1 · 2, 7 · 11, 8 · 2, Երկ. 8 · 7, 33 · 13; Յոբ. 28 · 14, 36 · 16, 38 · 16, 41 · 22, 23, Սղ. 70 · 20,

105·9, 106·26, *Առ.* 3·20, 8·24, *Իմ.* 10·19, *Սիր.* 1·3, 16·18, 24·5(8), 42·18, *Յոն.* 2·6, *Ամբ.* 3·10, *Ես.* 44·27, 51·10, 63·13, *Եզ.* 26·19, 31·4, 15, *Դն.* 3·55), *եւ ուրեք ուրեք՝* խորք (*Սղ.* 32·7, 35·7, 41·8, 70·21, 76·17, 77·15, 103·6, 134·6, 148·7, *Ամ.* 7·4, *Ղկ.* 8·31, *Հռ.* 10·7)։ *Զնոյն վրիպակ կամ անճշդութիւն գործեն* ԼՄ *նաեւ ներք.* 17·8, *եւ* 20·1, 3, *ուր* Թ *ճշգրիտ է. Համմտ. եւս վեր. Համր.* 1 *եւ* 2, *եւ ստ.* 11·7։ || * Եւ անուն էր նորա. *այսպէս ունին եւ* ԼՄ, *բայց առանց* էր. *իսկ* Յ *ճշդիւ՝* որում անուն նմա (*կրկնումն դեր. ըստ Եբր. ոճոյ*)։ || * Նաբադոն. *վրիպագրեալ եւ խաթարեալ ի գրչաց. սկզբնատառ* Ն *ակներեւ կրկնումն է վերջնատառին նախընթաց բառին. ի բնէ անշուշտ* Աբադդովն, *ուղիղ փոխագրութիւն* Յ 'Αβαδδώνի, *որոյ նշանակութիւնն է՝* 1) կորուստ, կործանումն (*Յոբ.* 41·13), 2) տեղի կորստեան (*Յոբ.* 26·6, *Առ.* 15·11, *Սղ.* 87·12). *իսկ* 3) *անձնաւորեալ իբր յատուկ անուն, որպէս առեալ լինի ի սմին վայրի, նշանակէ* զԿորուստ, *այսինքն՝ զհրեշտակ-թագաւորն սանդարամետական աշխարհի, զպաշտօնեայն մահու, եւ զպատճառ կորստեան, կործանման եւ ապականութեան յերկրիս* (*Յոբ.* 28·22, *Առ.* 27·20), *սա ինքն է թագաւորն գնդին կամ բանակին մարախոյ։ — Նոյնպէս ապականեալ զձեւ վերոյիշեալ անուանդ գրեն* ԼՄ՝ *Աղբաքոն, ուր* Լ*ոմ* *Աղէոբոն, ուղղելի ըստ վերոյգրեցելումդ։* || * Եւ յունարէն՝ Կորուսիչ. *ըստ* Յ *ճշդիւ՝* Եւ ի Յոյն բարբառ անուն ունի Ապողղիովն. 'Απολλύων *նշանակէ* Կորուսիչ, *Համմտ.* 1 *Կր.* 10·10 *զ*ὀλοθρευτής = սատակիչ։ — *Մեկնողօրէն՝ այլ ոչ*

ճշգրիտ ԼՄ՝ որ նոյն է հայ բարբառ՝ կորուստ։

12. * Անա․ ԼՄ ահաւասիկ․ պակ․ ի Ց։ || * Վայն մին = Ց․ առանց գմրշ․ յ․ ԼՄ։ || * Գնաց = Ց․ — ԼՄ եանց։ || * Անաւասիկ = Ց․ չունին ԼՄ։ || * Երկրորդն վայ յետ այսոցիկ․ Ց զան այլ եւս երկու վայք յետ այսորիկ․ իսկ ԼՄ համառօտելով՝ ես վայ երկու (ըստ Լոմ՝ երկու) եկեալ են։ Թ ըստ մասին համեմատ է Ցուն. գրչգ. միում։ Հմմտ. վեր. 8 · 13 եւ խոն. 11 · 14։

13. * Հրշտակն․ ԼՄ հրեշտակն․ տ․ վեր․ գծան. ի 3 · 1։ || * Եհար փող = Ց․ — ԼՄ հարկանէր զփողն․ տ․ վեր․ 8 · 7, 8, եւ որ ի կարգին։ || * Լուայ ի միոջէ ի (ի բաց թողումն այսր նխ. Թուի թէ վրիպակ է գրչաց) չորից մինչեւ ցԱստուծոյ․ իւիք իւիք չմիաբանի ընդ Ց որ ունի ճշգիւ այսպէս՝ լուայ ձայն մի ի չորից եղջերաց սեղանոյն ոսկւոյ որ առաջի Աստուծոյ, եւ ո՛չ ընդ ԼՄ որք եւ ինքեանք իսկ այլակերպ իմն բնագիր յանդիման առնեն՝ լուայ ձայն է չորից կենդանեացն որ են (ըստ ԼոմՄ են) առաջի սեղանոյն Աստուծոյ։ Սակայն են ոմանք ի Ցուն. օրր. որպէս եւ ի Թարգմանութեանց՝ որք նմանագոյն են Թի (զայսմանէ տ. ի Համեմատութեան Ցուն. օրր.)։ — Հմմտ. առ այս հմր. Ել. 30 · 2, 10, Ղեւ. 4 · 7, 18, 16 · 12, 1 Թգ. 9 · 23, Եզ. 41 · 22։

14. * Ասելով վեցերորդ հրշտակին (տ. 3 · 1), բառ առ բառ = Ց․ առաւել հայկաբան ԼՄ՝ զի ասէր ցհրեշտակն վեցերորդ։ || * Որ ունի = Ց․ — ԼՄ որ ունէր։ || * Զփողդ․ ԼՄ զփողն։ || * Հրշտակս (տ. 3 · 1)։ ԼՄ վայելչագոյն՝ հրեշտակսն։ || * Կապեալս․ դիպողագոյն ԼՄ՝ զկապեալս = Ց։ || * Գե-

տոյն · Յ + մեծի · այսպէս ունի եւ Ոսկան : ‖ * Եփրատու · Լ Եփրատայ · տ. ստ. 16 · 12, այլ եւ Ծն. 15 · 18, Երկ. 1 · 7, Յես. 1 · 4 :

15. * Զօրք · սոյնպէս եւ Լոմ, ուր Լ՝ զօրս : ‖ * Հրշտակք · լաւ եւս է Լ՝ հրեշտակքն = Յ : ‖ * Պատրաստեալ, ԼՄ —ք = Յ : ‖ * Յամիսս … ի տարիս · Յ եւ հանգոյն նմին ԼՄ եզ. : Տ. Ներք. 20 · 7, եւ վեր. 8 · 7—10, 12 :

16. * Թիւ = Յ · — ԼՄ համարք : ‖ * Զաւրականացն · ԼՄ զօրաց · երկոքին եւս = Յ · համմտ. առ Թ՝ Ղկ. 23 · 11, Գծ. 23 · 10, 27, եւ առ ԼՄ՝ ՄԹ. 22 · 7 · տ. Նաեւ ստ. 19 · 14, 19 : ‖ * Հեծելոց · ըստ դասաւորութեան = Յ, իսկ ԼՄ դնեն յառաջ քան զբառդ զօրաց, յոր յաւ. Նոցա : ‖ * Բիւրք · ԼՄ բիւրք · Յ նխդ. երկու, համեմատ բաղդմաց ի Յուն. օրր. — ԹԼՄ միաբան դատանին այլոց Յուն. ձձ. : ‖ * Բիւրուց · ԼՄ + ի— հազարք հազարաց · զայս յաւելուած չունի եւ Յ : ‖ * Զթիւն · ԼՄ առանց դմրշյ·, որք եւ + Նոցա = Յ : Համմտ. վեր. 5 · 11, 7 · 4 :

17. * Այնպէս = Յ, պակ. ԼՄ : ‖ * Ձճիսն = Յ · — ԼՄ անոր. հյց. առանց յօդի : ‖ * Որ հեծեալն էին = Յ (սա ունի ճշդիւ՝ զնստեալսն) · դարձեալ անոր · ԼՄ՝ հեծելոց : ‖ * Ի վերայ նոցա · ԼՄ է Նոցա : ‖ * Ունելով = Յ, զոր ԼՄ փոխեն՝ որք ունէին : ‖ * Զգունս · ԼՄ զրահս · առ այս տ. վեր. գծան. ի հմր. 9 : ‖ * Յանրակ · յայտնապէս աղաւաղեալ, թուի ինձ ուղղելի՝ յակնթակ, կամ՝ յակնթակապ, յակնթեայ · ուր ԼՄ ունին՝ յակինթս, առեալ իբրեւ ածկ., ըստ սմին օրինակի ի կիր արկանի եւ Սիր. 6 · 31 [պակ. ի Հմբ.], 40 · 4 · — Յ ὑακινθίνους, տիրապէս = յակնթագոյնս, յակնթայինս ·

սոյն այս բառ ὑακίνθινος, յակնթագոյն, այս է՝ ըստ բուն նշանակութեան՝ մթագոյն՝ կամ սեւաթոյր կարմիր, սեւակարմիր, այլուր յԱծշ. Մատ. Թարգմանի ի մեզ մերթ՝ կապուտակ (զ. օր. Ել. 26. 14, 28. 28, 31, 39. 21, 22, Թի. 4. 6, 8, 9, 10, 11, 12, 14, 15. 38), մերթ՝ կապուտակեայ (Ել. 26. 4, 36. 11, 39. 31, 34, Թի. 4. 25), եւ մերթ՝ կապուտակեալ (Ել. 25. 5, 35. 7, 23). դարձեալ երկիցս փոխադրի՝ երկնագոյն (Եւ. 3. 23 [պակ. ի Հմբ. ի բ.], Եզ. 16. 10), եւ մի անգամ բացատրի կրկին բառիւք՝ նիր եւ կարմիր (Եզ. 23. 6 [ի Հմբ. էՋ 771, ս. 1 մրիպական գրի ներս եւն.. իսկ նիր առանձինն չէ՝ նշանակեալ], Հմմտ. նաեւ Եզ. 27. 24 [որ նոյնպէս պակ. ի Հմբ.]). || * Աստուածատեսիլս. սխալ թարգմանութիւն, փխկ. ըստ Յ՝ ծծմբայինս, կամ՝ ծծմբագոյնս։ Յայտ իսկ է՝ թէ Թարգմանիչն կամ թիւրիմացութեամբ եւ կամ ընդ խպրս մրիպանօք աչաց՝ փխկ. θειώδεις ընթեռնու θεοειδεῖς, շփոթեալ ընդ իրեարս զերկուսին արդարեւ նմանաձեւ եւ նմանաձայն բառս. — θειώδης, բարդեալ ի բառից θεῖον = ծծումբ, եւ εἶδος = տեսիլ, նշանակէ՝ ծծմբայինն, ծծմբակերպ, ծծմբանման, ծծմբագոյն. իսկ θεοειδής, յօդեալ ի բառից θεός = Աստուած, եւ εἶδος = տեսիլ, նշանակէ՝ Աստուածեղէն, Աստուածանման, Աստուածակերպ, Աստուածատեսիլ։ — Թուի թէ ո՛չ հասուք զօրութեան մտացն Յուն. բնգ., եւ ի բաց թողեալ զնախընթաց եւ՝ մրիպեն ԼՄ՝ հրդեհեալք ծծմբով։ || * Գլուխ. թերեւս մրիպակ գրչի, փխկ. ելուխ, որպէս ունին ԼՄ = Յ։ || * Առեւծուց. կանոնաւորագոյն գրեն ԼՄ առիւծուց։ || * Ի բերանոց = Յ, զոր ԼՄ դնեն յեզ.։

|| * Ելանէր · այսպէս եւ ԼՄ, համաձայն սակաւուց ի Յուն. օրր. — իսկ Յ ներկ. ։ || * Հուր · ըստ դրից կարգի = Յ, իսկ ԼՄ դնեն զբառդ յառաջ քան զելանէր ։ — Համմտ. Յոբ. 41 · 10, Յով. Զ · 3 ։

18. * Եւ (առջ.) · ԼՄ նոյնպէս · չիք ի Յ ։ || * Յերից = Յ, պակ. ԼՄ, որք ունին միայն՝ է հաբատամունցս ։ || * Յայսոցիկ · լաւ եւս ունին ԼՄ՝ յայսցանէ ։ || * Սպանման = Յ · ոչ ճշգրիտ ԼՄ՝ Դ-ատաս ։ || * Եւ (երկր.) · չիք ի Յ եւ ոչ ի ԼՄ ։ || * Ի ձձմբոյն · ԼՄ = Յ յաւ.՝ որ եղանէր (Յ ընդն. ներկ.) է բնբռանոյ (Յ յգ.) նոցա ։

19. * Քանզի (առջ.) · ԼՄ չէ ։ || * Զիոցն = Յ, պակ. ԼՄ ։ || * Ի բերան = Յ, զոր ԼՄ դնեն ի յգ. ։ || * Իւրեանց · ԼՄ նոցա = Յ ։ || * Էր · ԼՄ է = Յ · — Թ միաբան գտանի Յուն. օր. միում ։ ԼՄ դնեն զէական բայդ յառաջ քան զդեր. նոցա, իսկ Թ կարգէ համնգոյն Յ ։ || * Քանզի (երկր.) = Յ, փխկ. որոյ ԼՄ դնեն՝ եւ ։ || * Նմանին · ԼՄ նմանութեան · Յ ճշդիւ՝ նմանք ։ || * Ածից = Յ · իսկ ԼՄ եզ. ։ || * Զի ունէին · ԼՄ եւ ունէին · երկոքին եւս = Յ ընդն. ներկ. ։ || * Գլուխք · այսպէս եւ ԼՄ · պարտ է ընթեռնուլ ըստ Յ՝ գլուխս, որպէս ուղղեալ է եւ յԱծչ. Կպ. — զայս քերականական անկանոնութիւն համարելի է մանաւանդ գրչաց քան Թարգմանչին · իսկ համաձայնութիւնն որ երեւի ի ԹԼՄ՝ հաւանական կարծեօք՝ յայտ առնէ զփոխադարձ իմն ազդեցութիւն սոցին ի վերայ միմեանց ։ || * Եւ Նորաւք = Յ, ուր ԼՄ ոչ ճշգրիտ՝ որով (+ Մ) ։ || * Տանջէին · աւելադրութիւն · չիք ի ՅԼՄ ։ || * Վնասէին = Յ (տ. վեր. զծան. ի Զ · 11), զոր ԼՄ ոչ ճշդիւ թարգմանեն՝ ստակէին + զանէրս ։

20. * Մնացորդք մարդկան. առաւել ճշգրիտ ունին ԼՄ՝ այլ է մարդկանէ (ըստ ձան. Զօհրապեանի՝ «Ցորինակին պակասէր. Եւ այլք է մարդկանէ որ»), համմտ. Ղկ. 18 . 11 ὥσπερ οἱ λοιποὶ τῶν ἀνθρώπων = «իբրեւ այլք է մարդկանէ». — λοιπός իբրեւ ածկ. = այլ (Գծ. 2 . 37, 1 Կր. 9 . 5, Գղ. 2 . 13, Փպ. 4 . 3, եւ յայլ բազում տեղիս Ածչ. Մատ.). եւ οἱ λοιποί իբրեւ գոյկ. թարգմանի մերթ՝ այլք(ն) (Մթ. 22 . 6, Մկ. 16 . 13, Յհ. 7 . 12, Գծ. 5 . 13, եւ այլուր), եւ մերթ՝ կեսքն (Մթ. 27 . 49, Յհ. 7 . 41, 9 . 9, այլովքն հանդերձ). իսկ «մնացորդք մարդկան» = οἱ κατάλοιποι τῶν ἀνθρώπων (Գծ. 15 . 17. համմտ. եւս Ամ. 9 . 12). || * Ոչ (առջ.). ԼՄ նխդ. ոչ = Յ (ոքք), թերեւս անփութութեամբ գրչաց ի բաց թողեալ ի Թ. || * Սպանան = Յ, փխկ. որոյ ԼՄ՝ մեռան. տ. վեր. գծան. ի համր. 18. || * Վիրաւքս այսոցիկ (ըստ Յ ընթեռնլի է՝ այսոքիւք). պատշաճագոյն թուի ԼՄ՝ է հարուածոցս յայսցանէ. || * Եւ ո՛չ (առջ.) = Յ, ուր ԼՄ սոսկ՝ ո՛չ. || * Զղջացան. ԼՄ ապաշխարեցին (տ. վեր. գծան. ի 2 . 5) + եւ ոչ դարձան. այս յաւելուած, որ անպէտ կրկնութիւն է իմաստի, պակ. նաեւ ի Յ. || * Ի գործոց եւն. իմա՝ ի ձեռագործ կռոց, ի դրօշելոց, եւ յարձանաց (համմտ. Երկ. 4 . 28, Մք. 5 . 12, Գծ. 7 . 41). || * Զի մի երկիր պագանիցեն = Յ. այլակերպ դարձուածով բանից ԼՄ՝ յերկրպագութենէ. || * Ոսկեղէն պատկերաց. Յ կռոց ոսկեղինաց. ԼՄ այլազգ՝ կռոց յոսկեղինաց. || * Արծաթեաց եւ պղնձեաց = Յ. դարձեալ տարբերին ԼՄ՝ յարծաթեղինաց՝ եւ է պղնձոյ. || * Քարանց. թիւրիմացութիւն, թուի՝ թէ թարգմանչին, չփոթմամբ բառիս λίθινος, քարեղէն, ընդ

ԼՄ նշխ. (հմմտ. Մկ. 12 · 22, 23, Ղկ. 20 · 31, 33)։ || * Ի ձայնս իւրեանց · ըստ չարակարգութեան բառ-ուից ընդ. Յ միաբանին ԼՄ՝ չհաւրեանց ձայնս (Ն ԼռՄ)։

4· * Որչափ եւ · ԼՄ յորժամ = Յ · — Թ համաձայն գտանի տմանց ի Յուն. ձձ., յորս եւ Սի-նէական օր.։ || * Եւթանեքին · ԼՄ նշխ. · տս. զծան. ի նախընթաց հմր.։ || * Զխաւսս եւթն որոտմանցն · ԼՄ զոր խօսեցան եւթն որոտմունքն = Յ։ || * Զայդ = Յ, պակ. ԼՄ։ Հմմտ. Դն. 8 · 26, 12 · 4, 9. այլ եւ տս. վեր. 1 · 11, 19, եւ ստ. 22 · 10։

5· * Կայր · Թերեւս ընթեռնլի՝ զի կայր, համ-գոյն Յ ընդն. անց.՝ կացեալ · զայս որպէս եւ զհե-տագայ բանս, ուր Թ եւ Յ համաձայն են միմեանց, այլափոխեն ԼՄ զայս օրինակ՝ որ էր զոր էր է ի վե-րայ ծովու եւ ցամաքի է (ԼռՄ է վերայ) ցամաքէ։ || * Ամբարձ · ԼՄ համբարձ։ || * Ի վեր · ՅԼՄ չու-նին։ Հմմտ. Դն. 12 · 7։

6· * Երդուաւ · ԼՄ նխդ. ե = Յ։ || * Յաւ-իտենից · Յ նխդ. յաւիտեանս, որ պակ. եւս ի ԼՄ։ Հմմտ. Երկ. 32 · 40։ || * Արար · ԼՄ հաս-տատեաց (տս. վեր. զծան. ի 4 · 11). հմմտ. Ծն. 14 · 22, Ել. 20 · 11։ || * Ի նմա (երկր.) · Յ + եւ զծով եւ որ ի նմա. յաւելուածս այս պակ-նաեւ ի ԼՄ, հանգոյն Սինէական եւ Աղեքսանդր. օրր. եւ այլոց բազմաց ի Յուն. ձձ.։ — Հմմտ. Սղ. 145 · 6, եւ խոր. 14 · 7։ || * Զի ժամանակ ոչ եւս իցէ, բառ առ բառ = Յ · անճշգրիտ եւ ոչ ի դէպ փոխադրեն ԼՄ՝ չէ ո՛չ եւս նոյ այլ ժամանակ։

7· * Յաւր մինչեւ ցնրշտակին (տս. վեր. զծան. ի 3 · 1). ածղաւադեալ է բնգ. — «Տեառն» հաւա-նական կարծեօք յաւելուած է յօտար ձեռանէ,

որով իմաստ բանից խանգարի եւ կամակորի. — *ուղղապէս համեմատ* Ց *ունին* ԼՄ՝ *յաւելու յոյժ խոնարհութեան հրեշտակին.* || * Հարկանելոց է = Ց. *նուազ ճշգրտութեամբ* ԼՄ՝ *հարցն. տուքս միաբան ընդ* Ց *յաւ.՝ չէոչէ, որ թերեւս անփութութեամբ գրչաց ի բաց թողեալ է ի Թ.* || * Կատարեսցի. Ց (*որ ըստ բառին ունի՝* կատարեցաւ, *անոր. կատ. փխկ. ապ., ըստ Եբր. ոճոյ*) *նխդ. ես. այս չզկ. պակ. նոյնպէս ի* ԼՄ, *համաձայն գոլով ոմանց ի Յուն. օրր.* || * Զոր *մինչեւ* ցմարգարէից = Ց, *միայն թէ սա ունի* որպէս *փխկ.* զոր (Թ *համեմատ է ոմանց ի Յուն. օրր.*). *իսկ* ԼՄ *փոփոխելով գլխ. րինուած բանից թիւրեն զիմաստ Յուն. բնգ. եւ ունին այսպէս՝ որ աւետարանեցաւ ի ծառայից իւրոց մարգարէից. նոյնպէս սխալ է ընթերցուածն Ոսկանայ՝ որպէս աւետարանեաց ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից.* — *Հմմտ. Ամ.* **3**. 7. *Նաեւ Հռ.* **16**. 25, *Կղ.* **1**. 26, *Եփ.* **3**. 1—12, 1 *Պտ.* **1**. 10—12.

8. * Ձայն *մինչեւ* ցասելով. *միաբան ընդ ոմանս ի Յուն. ձձ.՝ ըստ իմիք տարբերի ի բնգ. զոր ունի* Ց *զայս ձեւ օրինակի՝* ձայնն զոր լուայ յերկնից (*տ. հմր.* 4, *որպէս վեր.* 4. 1) [*լուայ զի*] դարձեալ խաւսէր (*բնգ. ընդն. ներկ.*) ընդ իս եւ ասէր (*բնգ. ընդն. ներկ.*), *որում առաւել զուգընթաց են* ԼՄ՝ *ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսեցաւ ընդ իս՝ եւ ասէ. Հմմտ. Եզ.* **1**. 28. || * Զգիրսն. ԼՄ *չեղելոյն, անճահ եւ անյարդար ածանց, զոր* ԼՄ *երիցս անգամ* (*տ. հմր.* 2 *եւ* 10) *ի կիր առնուն. յայտ է թէ՝ բառ յետնագոյն ժամանակի, եւ անհարազատ ընտիր հայկաբանութեան.* || * Զբացեալսն = Ց. *իսկ* ԼՄ՝ *բացեալ, սակայն տեղափո-*

խաւարեալ. տ. խոնն.: || * Ի ձեռաճէ հրեշտակին, համաձայն ոմանց ի Յուն. օրր., ուր Ց՝ ըստ այլոց ձձ. ունի՝ ի ձեռին հրեշտակին. — ԼՄ շրջադասութեամբ բացատրեն այսպէս՝ զոր ունէր հրեշտակն բացեալ (տ. վեր.) է յետին էջարան: || * Որ կայն. ԼՄ եւ կայ. Ց ընդդ. անց.: || * Ի վերայ երկրի = Ց. ոչ ճշգրիտ ԼՄ՝ ցամաքէ:

9. * Գնացի = Ց. այլակերպ ԼՄ՝ եւ երթեալ: || * Հրշտակն. տ. վեր. զծան. ի 3.1: || * Ասելով = Ց. ասա + նմա. իսկ ԼՄ այլով դարձուածով՝ խնդրեցի է նմանէ: || * Տալ ինձ զգիրսն, բան առ բան = Ց, զնց. ԼՄ: || * Առ. ԼՄ + զդա, որ պակ. նաեւ ի Ց: || * Կե՛ր. Ց + զայդ. ուր ԼՄ՝ զզայն; փխկ. որոյ լաւ եւս էր, որպէս յայտ իսկ է, ըստ կանոնաց Հայ. լեզուի դնել՝ զայն: — Այս հաստուած ըստ օրինակի Եզ. 2.8 «բաց զբերան քո եւ կեր զոր ջամբեցից քեզ», նոյնպէս եւ 3.1: || * Դառնացուսցէ = Ց, զոր ԼՄ այլափոխեն՝ դառնասցի: Հմմտ. Յոբ. 27.2: || * Զքո զորովայնդ. նաեւ ըստ չարակարգութեան բառից ճշգրիտ = Ց. դարձեալ այլակերպեն ԼՄ՝ յորովայն քո: || * Լիցի = Ց, ուր ԼՄ՝ ե. Ոսկան՝ եղիցի:

10. * Զգիրն. ԼՄ զգրկոյկն (տ. վեր. համր. 8) + բացեալ. այս յաւելուած չիք եւ ի Ց: || * Ի ձեռաճէ հրշտակին (տ. վեր. 3.1) = Ց. իսկ ԼՄ լոկ՝ է հրեշտակէն: || * Կերայ = Ց, ուր ԼՄ անճշգրիտ դնեն՝ կլայ, ըստ Լոմ կլէ: Հմմտ. Նորայր, Կորիւն եւն. էջ 420, ծան. 10: || * Զայն (առջ.). ԼՄ զնա: || * Իբրեւ զմեղր. ԼՄ որպէս մ.: || * Քաղցր = Ց, պակ. ԼՄ: — Օրինակն է՝ Եզ. 3.3 «... կերայ զայն, եւ եղեւ ի բերանի իմում իբրեւ զքաղցրու-

թիւն մեղաց»։ || * Զայն (երկր·) = Ց, այսպ· ԼՄ։
|| * Լցաւ . . . դառնութեամբ· միաբան ընդ Սինքան-
կան Ցուն· օր· — իսկ ԼՄ հանգոյն Ց՝ համեմատ
այլոց բազմաց ի Ցուն· օրր· ունին՝ դառնացաւ։
|| * Քերան իմ· Ց որովայն իմ, որպէս ունին ...
Լամ․ իսկ ԼՄ գրեն՝ յորովայն իմ։
11· * Ասէ· ԼՄ նոյնպէս· իսկ Ց՝ ասեն· —
ԹԼՄ = բազմաց ի Ցուն· օրր· — «ասէ» դ. հայի
յԱստուած կամ ի Քրիստոս։ || * Պարտ է = Ց,
ուր ԼՄ ոչ, ճշգրիտ ունին՝ հասանէ։ || * Քեզ՝ Ց
դնէ կից զկնի բառից պարտ է, ըստ այսմ եւ ԼՄ։
|| * Ի վերայ ժողովրդոց մինչեւ ցբազմաց· բան առ
բան ճշգրիտ = Ց· իսկ ԼՄ ո՛չ ուղիղ թարգմանեն
այսպէս՝ է ժողովրդոց, (ԼամՄ + եւ, է ազգաց)։
եւ է ազգաց եւ է թագաւորաց + երկրէ։ — Համեմ. վերր.
7·9, եւ Դն· 5·19։

ԺԱ. 1· * Ի նմանութիւն· ԼՄ նման = Ց· —
Համեմ· առ այս եւ որ զկնի՝ Եզ· 40·3÷42·20։
|| * Եւ կայր հրեշտակն (տ· 3·1)· այսպէս եւ ԼՄ·
միաբան գտանին բազմաց ի Ցուն· օրր· իսկ Ց
չունի զբառս։ || * Ասելով = Ց· — ԼՄ եւ, ա-
սէր + ցիս։ || * Զբանն Աստուծոյ, զտաճարն· ան-
իմաստ՝ այնու զի յաւելուածդ զբանն անտեղի է
եւ օտարոտի· — ճշգրիտ ունին ԼՄ՝ զտաճարն Աս-
տուծոյ = Ց· Համեմ. Եզ· 41·13։ || * Զերկրպա-
գուս, ԼՄ–ն։ || * Նորին· չմիաբանի ընդ Ց՝
որում համաձայնին ԼՄ՝ է նմա։
2· * Զգաւիթ զարտաքին տաճարին (այսինքն՝

զարտաքին գաւիթ տաճարին, հակադրեալ միւս գաւթաց) = Յ. յայլազգ իմն միտս ըմբռնեն ԼՄ՝ զհաւէլն (այսինքն՝ զբոլանդական գաւիթն) որ (Ոսկան + Ե) արտաքոյ տաճարին. եւ արդարեւ ըստ այսմ՝ Յուն. բնգ. կրկնակի իմացեալ լինի ի մեկնչաց. — Յետոյ Յ եւ ընդ նմին ԼՄ յաւ.՝ Իօղ ըստ (Յ + արտաքոյ). ||* Մի՛. ԼՄ Նխգ. Ե = Յ. ||* Չայն = Յ, պակ. ԼՄ. ||* Տուաւ = Յ. այլով դարձուածով ԼՄ՝ տուեալ է ըստ. ||* Ազգաց. իմա՝ հեթանոսաց, որպէս ուղիղ մեկնեն ԼՄ. — Համմտ. 21. 2, 10, 22. 19, եւ Մթ. 27. 53. ||* Եւ. ԼՄ նոյնպէս. Յ չունի. — Համմտ. առ. 13. 5, եւ Ղկ. 21. 24. — ամիսք 42՝ ըստ մարգարէական համարոյ = ամք 3 1/2, չափ ժամանակի նշանակեալ Դն. 7. 25 եւ 12. 7 «ի ժամանակ, եւ ի ժամանակս, եւ ի կէս ժամանակի», այս է՝ յետին «կէս եւթներորդի» Դն. 9. 27 ի վախճան ժամանակաց.

3. * Հազար եւն., որպէս առ. 12. 6. տ. գծան. ի նախընթաց հմր.

4. * Երկոքեան. ԼՄ Երկու. ||* Ճրագարանքն. ԼՄ Ճրագ. տ. վեր. գծան. ի 1. 12. ||* Տեառն = Յ, ուր ԼՄ՝ Աստուծոյ. ||* Երկրիս = Յ. ո՛չ ճշգրիտ ԼՄ (ԼոՄէ) յերկրէ. Համմտ. Զք. 4. 3, 11 «երկու ձիթենիքն», 14 «որ կան առաջի Տեառն ամենայն երկրի».

5. * Եւ որ (առջ. եւ երկր.). ԼՄ Ե ուրէ. անճիշդ, փխկ. ըստ Յ՝ եթէ որ (համմտ. Մթ. 16. 24, Մկ. 9. 34, Ղկ. 9. 23 εἴ τις θέλει = եթէ ոք կամի). այլ առկայն տ. զհամեմատութիւն Յուն. օրր. ||* Ոսգա կամի վնասել. բառ առ բառ = Յ. իսկ ԼՄ շրջեն զկարգ բառից՝ եւ այլադունակ թարգ-

մանեն՝ կամեցին (ըստ ԼՄ կամեցեն) քննել նոցա։ || * Եղանէ . . . ուտէ = Ց · իսկ ԼՄ ապ.։ || * Կամի սոցա վճասել · ճշգրտիւ շարադասեալ = Ց · ուր ԼՄ դարձեալ փոփոխմամբ կարգի բառից եւ այլակերպ՝ կամեցին մեռանել (տ. վեր. դծան. ի 2 · 11) նոցա։ || * Այնպէս · ճշգրտագոյն ԼՄ՝ այսպէս = Ց։ || * Պարտ է նոցա վճասիլ · չմիաբանի ընդ Ց որ ունի՝ պարտ է նմա սպանանել · ուր ԼՄ ոչ ճշգրիտ դնեն լոկ՝ սպանցեն (տ. վեր. 6 · 8, 8 · 9, 9 · 19)։ Համմտ. 4 Թգ. 1 · 10—12, Եր. 5 · 14, Ղկ. 9 · 54։

6 · * Զափել · վրիպակ՝ կամ առ անփութութեան Թարգմանչին, եւ կամ մանաւանդ գրչաց · ուղղելի է ըստ ԼՄ՝ ջոկել = Ց · սոքա դնեն զբառդ միապէս յառաջ քան զերկին։ || * Իջցէ անձրեւ = Ց, զոր ԼՄ փոխեն՝ տեղասցէ։ Համմտ. 3 Թգ. 17 · 1, Ղկ · 4 · 25։ || * Ցաւուրս · ճշգրտագոյն ԼՄ՝ զաւուրս = Ց։ || * Իշխանութիւն ունին = Ց · հակադարձեն ԼՄ՝ ունին իշխանութիւն։ Տ. սա. 16 · 3։ || * Ամենայն հարուածովք · ԼՄ յամենայն հարուածս։ — Համմտ. «հարկանել հարուածովք», 1 Թգ. 4 · 8, 2 Մն. 21 · 14, 2 Մակ. 3 · 39, Ես. 19 · 22, 30 · 31, եւ «հարկանել ի հարուածս», 1 Մակ. 5 · 3, 34, 8 · 4, 2 Մակ. 3 · 26։ — Առ այս համմտ. նաեւ Ել. 7 · 19—21։

7 · * Զվկայութիւն = Ց · յոչինչ պէտս ընդարձակագոյնս Թարգմանեն ԼՄ՝ զամենայն բանս վկայութեանն։ || * Գազանն · ԼՄ հնոց · յանդունդ, զոր չունի եւ Ց։ || * Տացէ պատերազմ ընդ նոսա · ըստ դասաւորութեան բառից ճշգրիւ ըստ Ց ունին ԼՄ՝ տացէ ընդ նոսա պատերազմ · իսկ Թ յայսմ միաբան դասանի ոմանց ի Յուն. օրր.։ — Համմտ. Ներք. 13 · 1,

7, 17·8, եւ եւս Դն. 7·3, 7, 21։

8. * Դիակունք. ԼՄ դէ = Յ. — Թ Հանգոյն Սինէական Յուն. օր. եւ այլոց բազմաց գրչգ. — նմանապէս Ոսկան՝ դէ։ || * Ի հրապարակս. Յ եղ. — ԼՄ է ձէ հրապարակաց։ || * Քաղաքին. ԼՄ + նոցա, որ չիք ի Յ. Հմմտ. ստ. 14·18, 16·19, 17·15, 18, 18·2, 10, 16, 18, 19, 21։ || * Անկցին. ԼՄ անկեալ կայցէ, երեւալ յառաջ քան զբառս է ձէ հրապարակաց։ Յ չունի. այլ սակայն գոյ նման ինչ ընթերցուած յօրինս ի Յուն. ձձ. եւ ի Լատինական թարգմանութեան։ || * Կոչի = Յ. — ԼՄ նախ.՝ անուանեալ։ || * Ոգեւորականութեամբ. այսինքն՝ ըստ բարբառոյ «Հոգւոյն մարգարէութեան» (տ. ստ. 19·10). — բառս այս՝ նորագիւտ (տ. վեր. գծան. ի 1·12, 3·18, 6·8, 8·1), առաջին անգամ աստէն ի վեր երեւեալ, առեալ լինի ի սմին վայրի մակբայօրէն՝ ըստ նմանութեան Յունականին՝ πνευματικῶς, որ ո՛չ ուրեք գտանի ի Յուն. Հ. Կ. (ի թարգմանութեան Եւթանասնից), իսկ ի Նորումն ի կիր արկանի միայն երկիցս, աստ եւ միւսանգամ 1 Կր. 2·14, ուր ի Հայումն թարգմանի՝ հոգեպէս, այս է՝ լուսաւորութեամբ մտաց եւ սրտից՝ Հոգւովն Սրբով. — ի բառէն πνευματικός, որ նշանակէ՝ 1) հոգեւոր, ածանցեալ ի մարդկեղէն հոգւոյն, 1 Կր. 15·44, 46 «մարմին հոգեւոր», որ ունի յինքեան զսկիզբն բարձրագոյն կենաց, ըստ հակադրութեան «շնչաւոր մարմնոյն», որ լի է բնաւորական կենական զօրութեամբ. — 2) ածանցեալ յԱստուածեղէն Հոգւոյն սուր՝ ա) զանձանց որք լցեալ են Հոգւովն Աստուծոյ, հոգեւոր, 1 Կր. 2·15 (հակառակադիրն՝ շնչաւոր), 3·1 (հա-

կարգեալն՝ մարմնաւոր), սոյնպէս և 14 · 37, Գղ. 6 · 1, 1 Պտ. 2 · 5 («տաճար հոգեւոր», այսինքն՝ Քրիստոնեայքն)· բ) զիրաց, որք ըխեն յԱստուածեղէն Հոգւոյն և ի նոյն հաստատեալ են, հոգեւոր, Հռ. 1 · 11 (շնորհք), 7 · 14 (օրէնք), 1 Կր. 10 · 3, 4 (կերակուր, ըմպելի, վէմ), Եփ. 1 · 3 (օրհնութիւն), Եփ. 5 · 19, Կղ. 3 · 16 (երգք), Կղ. 1 · 9 (հանճար), 1 Պտ. 2 · 5 (պատարագք)· — իսկ չէզոք յգ. իբրև գոյկ. առեալ՝ τὰ πνευματικὰ = հոգեւորքն՝ են արտաքոյ կարգի, նորանշան պարգեւք (շնորհք) Հոգւոյն (1 Կր. 12 · 1, 14 · 1), կամ Աստուածեղէն զօրութիւնքն սերմանեալքն քարոզութեամբն Աւետարանին (Հռ. 15 · 27, 1 Կր. 2 · 13, 9 · 11). — 3) որ ինչ սեպհական է գերբնական աշխարհի ոգւոց, այսք (չարութեան) Եփ. 6 · 12։ — Իսկ վերոյ գրեալդ մկբ. πνευματικῶς = 1) հոգեպէս (տ. վեր.), և 2) առանձինն ստանօր՝ ո՛չ ըստ սովորական բառական բուն նշանակութեան, այլ այլակերպ իմաստիւ, որ քաջայայտ և իմանալի է միայն մտացն՝ որք ընդունակ և հասու են Հոգւոյն Աստուծոյ (տ. նախ. վեր.)։ — Հաւանական կարծեօք յա՛յս սակս դիպողագոյն համարի Թ. ի կիրառնել ո՛չ թէ զբառդ հոգեպէս (= «հոգւով. ըստ հոգւոյ. հոգեւորապէս» ՆԲՀԼ. ի բ.), այլ զնորաձև, և թերևս անձամբ հնարեալ՝ ոգեւորա-կանոնութեամբ։ — Ըստ իմաստին՝ նուազ ճահաւոր և դիւրահաս թուի ինձ՝ որով բացատրեն ԼՄ՝ ըստ հոգւոյն։ || * Եւ Բաբիլոնն. յայտնապէս մեկնողական յաւելուած, յոտար ձեռանէ մուծեալ ի բնգ., որ չիք ի ԼՄ և ոչ ի Ց։ — Համմտ. Ես. 1 · 9, 10; Եզ. 16 · 46, 49, Եր. 23 · 14, Երկ. 32 · 32։ — Մ

էջ 147 պարզաբանէ այսպէս. «Այլ Սողոմ կոչէ զԵրուսաղէմ, կարծեմ թէ վասն յաճախելոյ ի նմա հեշտախտութեանն յաւուրսն յայնոսիկ»։ ||*Ուր. ԼՄ + Ն = Յ. այս շղկ. պակ. նաեւ ի բազումս ի Յուն. օրր.։

9. *Տեսանեն = Յ. — ԼՄ ապ., յոր Թիւր. իմացութեամբ (տ. զհետագայդ) յաւ.՝ ենտ (ըստ Լրգ՝ ենտ)։ ||*Ի ժողովրդոց (այսինքն՝ մարդիկ ի ժողովրդոց եւն.) եւ ի ցեղից (Յ + եւ ի լեզուաց) եւ յազգաց զդիակունս (համգոյն բազմաց ի Յուն. օրր., ուր Յ զհետ երթեալ այլոց ձձ. ունի՝ զդի) նոցա՝ աւուրս երիս եւ կէս = Յ. փոփոխմամբ յօրինուածոյ բանից եւ յաւելուածովք ըստ իմիք այլայլեն զմիտս Յուն. բնգ. ԼՄ՝ + ամենայն" ցեղք եւ ժողովուրդք՝ եւ + ամենայն" լեզուք եւ հեթանոսք, + զի" դիէք նոցա + անկեալ կայցեն" վերջի աւուրս (պակ. եւ կէս), ուր Ոսկան՝ . . . զի դիէք նոցա անկեալ կայցեն վերջի աւուրս եւ կէս։ Տ. վեր. հմր. 2 եւ 3, որպէս եւ առ. 10 · 11։ ||*Զդիակունս նոցա ոչ թողցեն (համաձայն բազմաց ի Յուն. ձձ., ուր Յ ներկ.՝ համեմատ այլոց օրր.) դնել ի գերեզմանս (համգոյն ոմանց ի Յուն. գրչգ., ուր Յ եզ.՝ ըստ այլոց ձձ.) = Յ. իսկ ԼՄ ո՛չ ուղիղ իմացեալ զմիտս Յուն. բնգ. յեղափոխեն՝ ո՛չ տացեն [Ոսկան՝ տայցեն] թողուլ է գերեզմանս շիրիմս նոցա։

10. *Որք = Յ. — ԼՄ որ։ ||*Ի վերայ երկրիս = Յ. — ԼՄ յերկրէ։ ||*Խնդասցեն. նմանապէս ոմանք ի Յուն. օրր. ապ. իսկ Յ համգոյն այլոց ձձ.՝ ներկ. — ԼՄ ուրախ լինին. — χαίρειν նշանակէ թէ՛ խնդալ (զ. օր. Մթ. 2 · 10, Ղկ. 10 20, 15 · 32, Յհ. 20 · 20, Հռ. 12 · 12, Փլ. 1 · 18, 2 · 18,

1 Թս. 3 · 9), եւ Թէ՝ ուրախ լինել (գ. օր. Մթ. 18 · 13, Ղկ. 1 · 28, 6 · 23, 13 · 17, Յհ. 3 · 29, 11 · 15, 14 · 28, Հռ. 16 · 19, 2 Կր. 2 · 3, Փլ. 1 · 18, 2 · 28, 4 · 4). դարձեալ Թարգմանի՝ ցնծալ (Մթ. 5 · 12), ողջ լինել (Մթ. 26 · 49, 28 · 29, Մկ. 15 · 18, Յհ. 19 · 3), կամ՝ ողջոյն տալ (2 Յհ. 10), եւ (աներ.) ողջոյն (Գծ. 15 · 23, 23 · 26, Յկ. 1 · 1)։ || * Ի վերայ նոցա. Յ + եւ ուրախ լինին (εὐφραίνεσθαι = ուրախ լինել, Ղկ. 12 · 19, 15 · 23, 24, 29, 32, 16 · 19, Գծ. 2 · 26, 7 · 41, Հռ. 15 · 10, եւն.), ուր ԼՄ՝ խնդան, եղեալ յառաջ քան զէ մերս նոցա։ || * Եւ ընծայս տայցեն (Յ ներկ., ա. գհամեմատ. Յուն. օրր.) տանել միմեանց = Յ. այլազգ դարձուածով ԼՄ՝ մնջէս ընծայս + եւ պատարագս" [ամեկլորդ կըրկնումն իմաստից] (ԼբՂՄ + տան) տանել միմեանց։ — Հմմտ. Եսթ. 9 · 19, 22, Նէ. 8 · 10, 12։ || * Զի. ԼՄ նիւզ. վասն։ || * Երկու. ԼՄ երկոքեան (Մ - քեանն)։ || * Մարգարէք, ԼՄ --։ || * Տանջեսցին. Թուի՝ Թէ լոկ վրիպակ գրչի, փխկ. տանջեսցեն, ի ա- որոյ ԼՄ դնեն՝ չարչարեսցեն (ա. վեր. գծան. ի 9 · 5). Յ անոր. կար.։ || * Որ (իմա՝ զորս, նմանօրինակ զեղչումն՝ Ղկ. 11 · 52) բնակեալ են ի վերայ երկրի = Յ. այլաբար փոխադրեն ԼՄ՝ զբնակիչս երկրի։

11. * Կիսոց. համանօրէն վրիպակ գրչի, ընԹեռնլի ըստ ԼՄ՝ կիսոյ = Յ։ || * Կենդանութեան = Յ, զոր ԼՄ փոխեն՝ կենդանի։ || * Աստուծոյ. համարիմ Թէ իցէ վրիպանք անփութութեան գրչաց, ընԹեռնլի ըստ ԼՄ՝ յԱստուծոյ = Յ։ || * Եմուտ = Յ, զոր ԼՄ անճշգրիտ դնեն յանգ.։ — Հմմտ. Եզ. 37 · 5, 10։ || * Կացին = Յ. դարձեալ անճիշդ ԼՄ՝ եւ + յարիցեն" կացցեն։ || * Ահ. ԼՄ + եւ

Երէ՜ց. այս յաւելուած պակ. եւ ի Յ. || * Տեառ՞ դաց նոցա. նոյնարանութեամբ թարգմանեալ = Յ (ըստ օրինակի Սղ. 21. 7, 30. 12 և՛ւս վայելուչ. էր՝ այնոցիկ որ տեսին զնոսա). ուր ԼՄ բոլորովին այլակերպ՝ + ամենեցուն"՝ որ ողջոյն (սակայն Լմ գրեն՝ գեղջին) ընտա. — Նոյնարանական յաւելուածն որ ի Բ՝ «եւ ահ կալաւ որք տեսին զնոսա» անկ. երեւ եկամուտ է, նախ զառաջինն իբրեւ բացատրութիւն ինչ յընթերցողէ ումեքէ գրեալ ի լուսանցս, եւ յետոյ ուրեմն ի ձեռն ընդօրինակչի ուրուք տգիտաբար մուծեալ ի բնաբանն.

12. * Լուայ. այսպէս եւ ԼՄ, ուր Յ՝ լուան. — ԹԼՄ միաբան գտանին ոմանց յընտրելագոյն Յուն. օրր. || * Զայն = Յ. — ԼՄ նխդ. ձ–. || * Ի յերկնից = Յ, պակ. ԼՄ. || * Նոցա (առջ.) = Յ. — ԼՄ ցնոսա. || * Եկ՛ք = Յ. աւելորդաբանութեամբ ԼՄ նխդ.՝ մերձեցէ՛ք. || * Այսր = Յ, միխկ. որոյ ԼՄ ոչ ճշդութեամբ դնեն՝ աստ. || * Ելին. ԼՄ վերստին աւելադրութեամբ նխդ.՝ մերձեցան (պակ. ի Լմ). || * Ամպաւք. ԼՄ նոյնպէս. Յ եզ. || * Նոցա (երկր.) = Յ. ո՛չ ճշգրիտ ըստ կանոնաց Լ՝ խորհանց, սակայն ըստ Լմ՝ նոցա.

13. * Ցայնմ աւուր, համաձայն ոմանց ի Յուն. օրր. իսկ Յ զհետ երթեալ այլոց ձձ. ունի՝ յայնմ ժամու. զսոյնգունակ եւ ԼՄ՝ ի ժամուն յայնմիկ. || * Եղեւ շարժումն մեծ. ըստ դասաւորութեան բառից ճշգիւ = Յ. իսկ ԼՄ շրջեն զկարգն նոցին այսպէս՝ շարժումն մեծ եղեւ. Համմտ. վեր. 6. 12. || * Անկաւ = Յ, ուր ԼՄ ո՛չ ի ճահ՝ ընկղմեցաւ, եդեալ հանգոյն Յ զկնի տասներորդ. || * Մեռան. այսպէս եւ ԼՄ. ըստ Յ ճշգիւ՝ սպանան. || * Ի

շարժմանէ, ԼՄ–ն. Յ ի շարժման։ Տ. *տո.* 16 · 18։ || * Արք. *սոյնպէս եւ* ԼՄ. *իսկ* Յ *բան առ բան ունի*՝ անուանք մարդկան, *այսինքն*՝ անձինք, *Համմտ. վեր.* 3 · 4, *եւ Թի.* 1 · 20, 28 «*ըստ Թուոյ* անուանց *իւրեանց*»։ || * Մնացորդք մարդկան (Յ *միայն*՝ այլքն, *կամ*՝ մնացեալքն, *տե. վեր. գծան. ի* 9 · 20) զարհուրեալք եղեն (*Համմտ.* ἔμφοβος γίνεσθαι = զար-հուրել, Գծ. 10 · 4, *կամ*՝ զահի հարկանել, Ղկ. 24 · 5, 37, Գծ. 24 · 25) = Յ. *Թիւրիմացութեամբ կամա-կորեն եւ ո՛չ ուղիղ թարգմանեն* ԼՄ՝ *յետ այնորիկ ահ մեծ եղեւ յամենեսեան*։ || * Ետուն փառս = Յ. *այլափոխեն* ԼՄ՝ *տային փառս*։ || * Երկնից = Յ. *այլազգ* ԼՄ՝ *երկնաւորին*։ — *Համմտ.* Դն. 2 · 18, 44։

14. * Անա. ԼՄ *անցանէ*. *չիք ի* Յ։ || * Գնաց = Յ. *ոչ ճշգրիտ* ԼՄ՝ *անց*։ || * Եւ. *այսպէս եւ* ԼՄ. *չնջ.* Յ։ || * Անաւասիկ = Յ, *պակ.* ԼՄ։ || * Գայ = Յ. — ԼՄ *գալոց է*։ || * Արագ արագ. *առաւել ճշդութեամբ* ԼՄ՝ *վաղվաղակի*, *համեմատ* Յ ταχὺ = վաղվաղակի (*Մթ.* 28 · 7, 8, *եւ այլուր*), *կամ* վաղագոյն (*Մթ.* 5 · 25)։ — Տ. *վեր.* 9 · 12։

15. * Եւ եւթներորդ *մինչեւ* ցփող = Յ. *փոխեալ զյօրինուած բանից թարգմանեն* ԼՄ՝ *եւ + յորժամ" եւթներորդ հրեշտակն հարկանէր զփողն*։ Տ. *վեր.* 10 · 7։ || * Եւ (*երկր.*) = Յ, *չնջ.* ԼՄ։ || * Ձայնք = Յ. — ԼՄ *եզ.*։ || * Մեծ. Յ *յգ.* *իսկ* ԼՄ *եզթ.*։ || * Ասելով = Յ. — ԼՄ *եւ ասէ*։ || * Թագաւորութիւն. Յ + աշխարհի, *մինչ. որոյ* ԼՄ + *ամենայն տիեզերաց*. — Թ՝ *առանց յաւելուածոյդ*՝ *զուգընթաց է ոմանց ի Յուն. օրր.*։ || * Քրիստոսի. Յ *նխդ.* եւ, *որ անշուշտ վրիպանօք գրչաց անտես առարեալ է ի* Թ. — *ընդ* Յ *միաբան գտանին եւ*

ԼամՄ, իսկ Լ Նխզ. եւ + Յէսուէ"։ || * Նորա = Յ. ոչ ճշգրտիւ ԼՄ՝ խօսքս։ Համմտ. նաեւ ստ. 12 · 10, նոյնպէս եւ Գծ. 4 · 26, ըստ օրինակի Սղ. 2 · 2, 6։ || * Թագաւորեսցէ. ԼՄ + է վերայ ամենայնի։ || * Յաւիտեան եւ. չիք ի Յ եւ ոչ ի ԼՄ։ — Նախատիպ օրինակն է Դն. 2 · 44 եւ 7 · 27։

16. * Զորք. Լ ծերք։ || * Ծերքն. ԼՄ երէցունքն. տե՛ս. վեր. գծան. 5 · 5, նաեւ 4 · 4։ || * Որ առաջի մինչեւ ցբառն իւրեանց. Թերի եւ աղաւաղեալ, կարծեմ թէ՝ վրիպանօք անփութութեան ընդօրինակողաց. ըստ Յ ուղղելի է եւ ընթեռնլի այս օրինակ՝ որ առաջի Աստուծոյ էին, [եւ] որ նստէին (Յ ճշգրիւ՝ նստեալքն) ի վերայ աթոռոց իւրեանց, անկան ի վերայ երեսաց իւրեանց. — այլակերպ չարադրութեամբ թարգմանեն ԼՄ այսպէս՝ որ (Մ որք) նստէին յաթոռս իւրեանց առաջի Աստուծոյ, անկանէին է վերայ երեսաց իւրեանց։ || * Երկիր պագին = Յ, զոր ԼՄ դնեն յանկ.։ || * Աստուծոյ. ԼՄ Նխզ.՝ Տեառն։

17. * Ասելով = Յ ընդհ. ներկ. — ըստ սովորութեան փոխեն ԼՄ՝ եւ ասէին։ || * Էդ եւ որ էն. ԼՄ որ էն եւ էր. երկոքին եւս թարգմանութիւնք վրիպակ են. ուղղելի է ըստ Յ՝ որ էն եւ որ էրն. համմտ. վեր. 1 · 4, 8, 4 · 8։ || * Զի = Յ, ուր ԼՄ ունին՝ եւ։ Յ Նխզ. եւ, որ պակ. նաեւ ի բազումս ի Յուն. ձձ. (յորս եւ Աղեքսանդրեանն, տե՛ս. զՀամեմատութիւն Յուն. օրր.)։ || * Առեր զքո զաւրութիւն մեծ. Յ չարադասէ այսպէս՝ առեր զզաւրութիւն քո զմեծ, որում համանման են ԼՄ՝ առեր զզօրութիւն քո մեծ։

18. * Ազգք. դիպողագոյն թուի արդեւք ԼՄ՝

հեղինակ. Համմտ. Սղ. 2 · 1 «Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք», 98 · 1 «Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք»: || * Դատաստանի. Ց ճշդիւ՝ դատելոյ (համմտ. Գծ. 25 · 9 κριθῆναι = դատել, կրւ., նմանապէս κρίνεσθαι = դատել, Գծ. 23 · 6, 24 · 21, 25 · 10, 26 · 6, Հռ. 3 · 4, եւ այլուր), զոր ԼՄ փոխեն ի դիմ. բ.՝ չէ դատեսցէն: || * Տալ (այսինքն՝ տալոյ) = Ց. այլակերպ ԼՄ՝ տալ: || * Զվարձս = Ց, իսկ ԼՄ՝ վարձս: || * Իւրոց. ուր ԼՄ՝ քոց = Ց: || * Սրբոց. ԼՄ նխդ. ես = Ց: || * Եւ (հնգր.) = Ց, զնց. ԼՄ: Համմտ. վեր. 10 · 7, եւ ներք. 13 · 16. նոյնպէս եւ Սղ. 113 (115) · 13: || * Ապականել = Ց, ուր ԼՄ՝ ապականեն. սոքա եւ Ց միապէս նխդ. ես, որ պակ. նաեւ ի Յուն. Աղեքսանդրեան օր.: Տ. սա. 19 · 2: || * Զապականողս. ընտրելագոյն կարծի առ հասարակ մեւս ձեւն ընդն., ըստ որում ունին ԼՄ՝ զապականիչս:

19. * Տապանն ուխտից. լաւ եւս է՝ տապանակն ուխտին, ըստ Ց ἡ κιβωτὸς τῆς διαθήκης, որ յԱծշ. Մատ. Թարգմանի մերթ՝ տապանակ ուխտին (Երկ. 10 · 8, 31 · 9, 25, 26, Յես. 3 · 3—17, 4 · 7—18, եւ այլուր), եւ մերթ՝ տապանակ կտակարանացն (Ել. 31 · 7, 39 · 35, Թի. 14 · 44, եւն.), եւ մի անգամ՝ արկղ կտակարանաց (Եբ. 9 · 4). իսկ տապան՝ ըստ սովորական կիրարկութեան մանաւանդ ի Ս. Գիրս՝ նշանակէ զՆոյեան տապանն (Ծն. 6 · 14, 15, 16, 18, 19, եւ այլք ի Հ. Կ., նոյնպէս եւ ի Ն. Կ.՝ Մթ. 24 · 38, Ղկ. 17 · 27, Եբ. 11 · 7, 1 Պտ. 3 · 20): — Լ ունի լոկ՝ տապանակն, առանց ուխտին: || * Իւրոց, լաւ եւս ըստ Ց (տ. վեր.)՝ իւրոյ. այսպէս հանգոյն Աղեքսանդրեան օր. եւ այլոց բաղ-

մուց ի Յուն. ձձ. — իսկ ԼՄ ունին՝ Աստուծոյ, համեմատ Սինէական օր. եւ այլոց։ ‖ * Ի տաճարի իւրում = Յ. ոչ ճշգիւ ըստ կանոնի ԼՄ՝ է փոփոխն էր։ ‖ * Որոտումն եւ ձայն. ԼՄ՝ յայնժ եւ որոտմունք = Յ (այլ սակայն տ. զՀամեմատ. Յուն. օրր.)։ ‖ * Մեծ = Յ. ուր ԼՄ դնեն՝ մեծամեծ։ — Համեմ. վեր. 8 . 5 եւ ստ. 16 . 18, 21։

ԺԲ. 1. * Տեսան. յարմարագոյն թուի ԼՄ՝ երեւեցաւ. Համեմ. ὤφθη = երեւեցաւ (Գծ. 16 . 9 «տեսիլ երեւեցաւ», 7 . 2, 30, 13 . 30, Մթ. 17 . 3, Մկ. 9 . 3, Ղկ. 1 . 11, 22 . 43, եւ յայլ բազում տեղիս Ս. Գրոց)։ ‖ * Կին. Լ + մի։ ‖ * Արկուցեալ. բառ 'ղոյզնագիւտ յոյժ ի դպրութիւնս Նախնեաց. ձեւս այս թուի թէ ըստ նմանութեան հանգիտագոյն ընդ. ագուցեալ կազմեալ իցէ ի յետնագոյն մատենագրաց։ ՆԲՀԼ. ի բ. մի միայն վկայութիւն յառաջ բերէ. «(Նեստոր զիւրեաւ) անպատուածութիւն արկուցեալ՝ ժանտ եւ անպատուած աղանդ կամեցաւ տիեզերաց ծնանել. Կիւրղ. է նոյն »։ — Փխկ. սորին՝ թ. այլուր (ուր Յ եւս ունի զընդն.) է կիր արկանել մերթ՝ արկեալ զիւրեաւ (18 : 16), կամ՝ արկեալ զինքեամբ(ք) (4 . 4. 7 . 9, 19 . 13), եւ մերթ՝ զգեցեալ (7 . 13, 10 . 1, 11 . 3, 17 . 4). տ. Նաեւ. 3 . 5 (զծան.), 18, 19 . 8. այլ եւ Համեմ. περιβεβλημένος, —η եւն. = արկեալ զիւրեւ (1 Թգ. 2 . 18, 28 . 14, Մկ. 14 . 51), կամ՝ զգեցեալ (Մկ. 16 . 5)։ Ուստի եւ երկբայական եւ անստոյգ մարթի

լինել միակ ընթերցուածոյդ արկուցեալ. Թերեւս նախնականն իցէ՝ ազուցեալ (Եփ. 6 · 15 = ὑποδησάμενος), կամ՝ զգեցեալ, որ յետոյ յօտար ձեռանէ կամ թէ վրիպակաւ կամ թէ ըստ կամի փոխեալ է յարկուցեալ։ — Առ այս հմմտ. եւս զվկայութիւնն Մ. Խորենացւոյ, ի Ներբ. Հռիփս., զոր ի մէջ բերէ Նորայր, Կորիւն եւն. էջ 419. «Ահա գայ հարսն սուրբ ի Լիբանանէ, զարդարեալ ի լոյս վայելլուչ, արկեալ զարեւն զարեգակն եւ զլուսին ընդ ոտիւք»։ — Ըստ այսմ ունին ԼՄ՝ արկեալ զարեւն։ — Հմմտ. Սղ. 103 · 2 «Արկար զլոյս որպէս զօթոց, ձգեցեր զերկինս որպէս խորան»։ || * Զլուսինն. Ց լուսինն, նմանակերպ ԼՄ՝ լուսին. Թ միաբանի ընդ Սինէական օր. (տ. զհամեմատութիւն Ցուն. օրր.)։ || * Իւրոց. ԼՄ նորա = Ց։ || * Գլխոյն = Ց. — ԼՄ առանց դմրչ. յ., + նորա = Ց։ || * Ցաստեղաց երկոտասանից = Ց. այսպէս ունին եւ Լամ, ուր ԼՄ ոչ ի ճահ դնեն՝ տասներկուց յերկնատանեց։

2. * Ցղացեալ = Ց ἐν γαστρὶ ἔχουσα (հ. օր. Մթ. 1 · 18), որ եւ թարգմանի՝ յղի (Ել. 21 · 22, 4 Թգ. 8 · 12, 15 · 16, Ովս. 14 · 1, Ամ. 1 · 3, 13, Մթ. 24 · 19, Մկ. 13 · 17, Ղկ. 21 · 23, 1 Թս. 5 · 3). ըստ այսմ օրինակի ունին ԼՄ՝ էր յղի։ || * Աղաղակեր = Ց (ներկ.). — ԼՄ ճչէր. Ց եւ ԼՄ միապէս նխդ.՝ եւ, որ սակայն հանդոյն Թ պակ. եւ յԱղեքսանդրեան օր. եւ յայլ Ցուն. ձձ.։ || * Երկնելով = Ց (ընդհ. ներկ.), ուր ԼՄ դնեն՝ յերկնել։ || * Տանջելով ծնանել. նոյնարանութեամբ = Ց. հրճաբանութեամբ լայնագոյնս մեկնեն ԼՄ՝ բազում վշտօք էր ի ծնանել։ — Այս համար ըստ օրինակի Մք.

4 · 9—10 «. . . զի սաստկացան երկունք քո իբրեւ զծննդականի։ Երկնեա եւ զօրացիր, եւ մերձեաց, դուստր Սիոնի, իբրեւ զծննդական», Ես. 26 · 17 «Որպէս որ երկնիցէն մերձ ի ծնանել, եւ առ ցաւս իւր ճչիցէ, այնպէս եղեաք» եւն., եւ 66 · 7—9 «Մինչչեւ իցէ յղւոյն ծնեալ, եւ մինչչեւ հասեալ իցեն ցաւք երկանց, ապրեցաւ եւ ծնաւ արու»։

3. * Տեսաւ. ԼՄ Ետետեցաւ. տ. զծան. ի հմր. 1։ || * Վիշապ. ԼՄ + Գ։ || * Մեծ. Ց Նխդ.՝ աշխետ (πυρρός, զորմէ տ. վեր. զծան. ի 6 · 4 եւ 6), փխկ. որոյ ԼՄ + հրեղէն։ — Համմտ. Եզ. 29 · 3, Դն. 7 · 7։ || * Որ ունէր = Ց (ընդն. ներկ.), զոր ԼՄ փոխեն՝ որոյ էին։ || * Գլուխս . . . եղջեւրս = Ց, ուր ԼՄ՝ Գլուխք . . . Եղջեւրք։ || * ԵւթՆ (երկր.) չիք ի ԼՄ եւ ոչ ի Ց։ || * Գլխոց = Ց, այնպէս եւ ԼաՄ, ուր Լ եզ.։ || * Պսակ (= «Բոլորշի զարդ գլխոյ ի պէսպէս յօրինուածոց՝ որպէս թագ արքունի. որ եւ Ցեզեր. որպէս բրաբիոն յաղթողաց ի մրցանս, կամ մարտիրոսաց, եւն.», ՆԲՀԼ. ի բ.), փխկ. որոյ ԼՄ դնեն զհամանշանդ Խոյր (խոյր = «Փակեղն պատուաւոր. գլխարկ կամ թագ եւ պսակ քահանայապետական, թագաւորական. ծածկոյթ գլխոյ քահանայից, եւ իշխանաց, որպիսի՛ եւ է ձեւով կամ զարդու. որպէս պահարան կամ սաղաւարտ գլխոյ, եւ որպէս փաթոյթ նորա, կտաւի կամ բեհեզեայ», ՆԲՀԼ. ի բ.)․ այնպէս եւ առ. 13 · 1, իսկ 19 · 12 ունին Թ եւ ԼՄ միօրինակ՝ պսակ։ — Ց ունի διαδήματα (διάδημα առ հասարակ ի Ս. Գիրս, զ. օր. 1 Եզր. 4 · 30, Եսթ. 2 · 17, 8 · 15, Իմ. 5 · 17, 18 · 24, Սիր. 11 · 5, Ես. 62 · 3, 1 Մակ. 1 · 9, 6 · 15, 8 · 14, 11 · 13, 12 · 39, 13 · 32, Թարգ-

մանի՝ քազ [= «*Պաակ կամ խոյր արքայական ի ձեւ գլխոյ նաան*», *ՆԲՀԼ· ի բ*·])։

4· * Տուտն· *այսպէս գրեն եւ* ԼՄ· *լաւ եւս է ընթեռնուլ*՝ տտուն (*տ·* Նորայր, *Կորիւն եւն· էջ* 420)։ || * Քարշեր· *սոյնօրինակ եւ* ԼՄ· *ուր* Ց *ներկ*·։ || * Ցերկնից· *մի եւ միայնակ է սոյն այս ընթերցուած, փխկ· որոյ* ԼՄ *դնեն*՝ *յերկէր* = Ց։ *Հմմտ· Դն·* 8·10։ || * Եկայց = Ց· — ԼՄ *անկ*·։ || * Որ ծնանելոցն էր = Ց, *դիպողագոյն քան* ԼՄ՝ *որ հանդերձեալ էր ծնանել*· — *ըստ օրինակի Ղկ·* 7·2, *Յհ·* 4·47, *Գծ·* 21·27 *եւն· ի ճահ էր թարգմանել եւ*՝ որ մերձ էր ի ծնանել· *տ· նաեւ վեր· ղծան· ի* 6·11։ || * Զի յորժամ *մինչեւ* ցկերիցէ, *բան առ բան* = Ց· *իսկ* ԼՄ *փոփոխմամբ եւ յաւելուածովք ունին*՝ *չէ յորժամ ծնցէ* + *կինն*" *ճշմարտէ էր*՝ *կեցցէ* + *ձա ճշմարտն*"։

5· * Ծնաւ· ԼՄ + *կինն*, *որ պակ· նաեւ ի* Ց։ || * Որդի արու = Ց, *որպէս ունին եւ* ԼամՄ, *ուր* Լ *լոկ*՝ *արու*· — որդի արու = «արու մանուկ» *Եր·* 20·15։ || * Որ հովուելոց է = Ց, *ընտրելագոյն քան* ԼՄ՝ *որ հանդերձեալ է հովուել*· — *հմմտ· ղծան· ի նախընթաց համ*·։ || * Ազգս· *յարմարագոյն թուի* ԼՄ՝ *հեթանոսս*· *տ· վեր· ղծան· ի* 2·27, *եւ հմմտ· սա·* 19·15։

6· * Որ· *կարծեմ թէ լոկ վրիպակ է գրչի, ուղղելի ըստ* ԼՄ = Ց՝ *ուր*։ || * Ունի անդ տեղի = Ց· *այլազգ դարձուածով* ԼՄ՝ *էր տեղի նմա*։ || * Զի անդ կերակրեսցեն զնա, *ճշգիւ* = Ց· *կրաւորական դարձուածով բանից* ԼՄ՝ *չի կերակրեսցի անդ*։ || * Վաքսուն· ԼՄ *նխդ· եւ*։ || * Եւ հինգ· *չունին ոչ* ԼՄ *եւ ոչ* Ց (*սակայն տ· զՀամեմա-*

տութիւն Յուն. օրի.) — աւուրք 1260 = ամք 3 1/2, որպէս վեր. 11·3· այլ եւ Հմմտ. Դն. 12·11։

7· * Ի· գնց. ԼՄ։ || * Հրշտակք (առչ.)· ԼՄ հրեշտակ· ա. վեր. գծան. ի 3·1։ || * Նորա = Յ, ուր ԼՄ՝ էր։ — Հմմտ. Դն. 10·13, 21, 12·1, Յդ. 9։ || * Պատերազմեալ, իբրեւ աներ. (հմմտ. Գծ. 19·1, այլապէս Գծ. 10·25) = Յ· — այլազգ փոխաբերեն ԼՄ՝ կռուէին (հմմտ. 2 Տմ. 2·24, Յկ. 4·2)։ || * Պատերազմեցաւ = Յ, զոր ԼՄ գնեն յանկ.։ || * Եւ հրշտակք (տ. 3·1) Նորա = Յ· ոչ ճշգրիտ փոխեն ԼՄ՝ չըրօ էրումն։

8· * Ոչ (առչ.)· ԼՄ նխդ. էր = Յ։ || * Կալան ժոյժ. զոր ԼՄ այլագունակ բացատրեն՝ կարացին կալ ընդդէմ· Յ οὐκ ἴσχυσαν, ճշգիւ՝ ոչ կարացին, ըստ բուն իմաստին՝ յաղթեցան, կամ՝ ի պարտութիւն մատնեցան։ Յուն. ἰσχύειν բազմապատիկ օրինակաւ թարգմանի ի Ս. Գիրս. — 1) յաճախ՝ կարել (1 Եզր. 9·11, Իմ. 13·1, 9, Եր. 5·22, Մթ. 26·40, Մկ. 5·4, 9·18, 14·37, Ղկ. 6·48, 13·24, այլովքն հանդերձ), ի ա. ընդն.՝ կարող (Մթ. 9·12), կամ՝ ողջ (Մկ. 2·17)· — 2) ուրեք ուրեք՝ կարող լինել (գ. օր. Գղ. 5·6, Փլ. 4·13)· — 3) ստէպ՝ զօրանալ (Եւ. 1·9, 12, 20, Յես. 1·6, 7, 9, 2 Մն. 15·7, Յոբ. 36·9, Դն. 7·21, Գծ. 19·20, եւ այլ եւս), որ եւ՝ 4) զօրաւոր լինել (Յկ. 5·16)· — դարձեալ է ուրեք զի փոխադրի՝ 5) հզօր լինել (1 Մն. 16·11, ուր մերս Նորագիւտ Թարգմ., հրտ. Խալաթեանց, ունի՝ պաւրանալ), եւ է զի՝ 6) ձեռնհաս լինել (Ծն. 31·29), է երբեմն՝ 7) յաղթահարել (Գծ. 19·16), եւ է ուրեք՝ 8) ազդել (Մթ. 5·13)· այլ եւ 9) հաստատուն լինել (Եբ.

9 · 17) · նոյնպէս անօսրագոյն իմն՝ 10) հնար է, եւն. (Մթ. 8 · 28, Ղկ. 8 · 43) ։ — Իսկ ժոյժ ունել (= «տակալ · ժուժել · ժուժկալել · համբերել · հանդուրժել · հանդարտել · տանել · զղջէմ ունել », ՆԲՀԼ. ի բ.) գնի ի մերում թարգմանութեան Ս. Գրոց փխկ. Յուն. 1) ὑποστῆναι (1 Մակ. 7 · 25), 2) ἀνέχεσθαι (2 Մակ. 9 · 12, որ եւ = համբերել, 2 Թս. 1 · 4, այլովքն հանդերձ), 3) ὑποφέρειν (Առ. 18 · 14, այլուր = համբերել, 1 Կր. 10 · 13, 2 Տմ. 3 · 11, կամ՝ տանել, 1 Պտ. 2 · 19), 4) ἐγκρατεύεσθαι (1 Կր. 7 · 9, որ եւ թարգմանի՝ ժուժկալ լինել, 1 Կր. 9 · 25), եւ 5) στέγειν (1 Թս. 3 · 1, 5, յայլ տեղիս = համբերել, 1 Կր. 9 · 12, կամ՝ տանել, 1 Կր. 13 · 7) ։ || * Եւ ո՛չ տեղի նոցա գտաւ · ըստ կարգի բառից ճշգիւ համեմատ ոմանց ի Յուն. ձձ. — Յ հանգոյն այլոց օրր. չարադասէ այսպէս՝ Եւ ոչ տեղի գտաւ նոցա · այլակերպ ի սոցանէ ԼՄ՝ Եւ տեղի ո՛չ գտաւ նոցա. — Յ յաւ.՝ այլ եւս ։

9 · * Անկաւ. ԼՄ նոյնպէս. տ. վեր. գծան. ի 8 · 7 ։ || * Աւձն եւն. — առ այս հմմտ. ստ. 20 · 2, եւ եւս Ծն. 3 · 1, 2 Կր. 11 · 3 ։ || * Որ է. անճիշդ թարգմանեալ, ուղղելի ըստ Յ՝ կոչեցեալն (հմմտ. Ղկ. 6 · 15, 22 · 3, եւն.), կամ՝ որ կոչեցեալ է (հանգոյն Ղկ. 1 · 36, եւն), կամ՝ որ կոչի (ըստ Ղկ. 8 · 2, 19 · 29, եւն.), եւ կամ՝ անուանեալն (հմմտ. Գծ. 1 · 12), զոր ԼՄ աւելադրութեամբ փոխադրեն՝ որ անուանեալ կոչի. տ. նաեւ վեր. 1 · 9 ։ || * Մատնիչ. պիտակաբար առեալ (սովին միօք՝ հմմտ. «Հրեշտակ էր. իսկ անկեալ՝ մատնիչ կոչեցաւ. Խօսք ․» տ. ՆԲՀԼ. ի բ. մատնիչ) փխկ.՝ բանսարկու, ըստ որում վեր. 2 · 10 եւ ստ. 20 · 10

(Իսկ խռն. հմր. 12, եւ 20 · 2 դարձեալ՝ մատնիչ), որպէս եւ ուրեք ուրեք յԱծչ. Մատ. (1 Մն. 21 · 1 [մեւս Թարգմ., հրտ. Խալաթեանց, ունի՝ սատան], Եսթ. 7 · 4, Իմ. 2 · 24, Եզ. 9 աւելադրութեամբ սատանայի, եւ փոխաբերութեամբ իբրեւ ածկ. 2 Տմ. 3 · 3, Տտ. 2 · 3) Թարգմանի Ց διάβολος, որ եւ յաճախագոյնս փոխադրի՝ սատանայ (Յոբ. 1 · 6—12, 2 · 1—7, Սղ. 108 · 6, Զք. 3 · 1, 2, ՄԹ. 4 · 1, 5, 8, 11, 13 · 39, 25 · 41, Ղկ. 4 · 2, 3, 6, 13, 8 · 12, Յհ. 8 · 44, 13 · 2, փոխաբերաբար 6 · 71, եւ յայլ բազում տեղիս), դուն ուրեք՝ չարախօս (Յկ. 4 · 7, եւ իբրեւ ածկ. 1 Տմ. 3 · 11), եւ անօսրագոյն իմն՝ քսու (Եսթ. 8 · 1)։ Իսկ բառիւս մատնիչ (= «որ մատնէ կամ մատնեաց. մատնօղ կամ տուօղ զոք ի ձեռս ոսոխաց. չարախօս. բանսարկու. առաւել սեպհականեալ մակդիր է յուդայի իսկարիովտացւոյ», ՆԲՀԼ. ի բ.) տիրապէս բացատրի Յուն. προδότης (Ղկ. 6 · 16, Գծ. 7 · 52, 2 Տմ. 3 · 4), կամ παραδιδούς (Մկ. 14 · 44, Ղկ. 22 · 21)։ — ԼՄ չնց.։ || * Եւ բեեղզեբուղ. ԼՄ միայն՝ բեեղզեբուղ. — զայս անուն իշխանին դիւաց կամ սատանայի չունին Ց եւ ոչ այլ ծանօթ Յուն. օրր.։ Վասն որոյ համարիմ՝ թէ սոյն օտարոտի յաւելուած՝ իբրեւ բացատրութիւն իմն՝ մուծեալ է ի Թ ի յետնագոյն ձեռանէ, թելադրեալ ազդեցութեամբ ընթերցուածոյ որ ի ԼՄ։ || * Որ մոլորեցուցանէ. ճշգագոյն ըստ Ց (ընդն. ներկ.) քան ԼՄ՝ որ մոլորեցոյց։ Հմմտ. ստ. 20 · 3, 8, 10։ || * Զտիեզերս ամենայն. ճշգրիտ = Ց. շրջեալ զկարգ բառից եւ յաւելուածով ԼՄ՝ զամենայն տիեզերս + երկիր։ || * Եւ (պակ. Ց) անկաւ յերկիր = Ց, պակ. ի ԼՄ։ — Հմմտ.

Ղկ. 10 · 18։ || * Հրշտակք · ԼՄ հրեշտակք · տ. վեր. գծան. ի 3 · 1։ || * Ընկեցան · ԼՄ անկան · տ. վեր. գծան. ի 8 · 7։

10. * Զայն · ԼՄ + ձձ = Ց։ Հմմտ. ստ. 11 · 15, 19 · 1։ || * Ցերկնից · այսպէս եւ ԼՄ, համեմատ Ցուն. օր. միում (տ. զհամեմատութիւն Ցուն. օրր.)․ իսկ Ց ունի՝ յերկինս, որպէս ընթեռնուն բազումք ի Ցուն. ձձ.։ || * Ասելով = Ց ընդն. ներկ., զոր ԼՄ փոխեն՝ որ ասէր։ || * Փրկութիւն եւ զաւրութիւն = Ց · ընդ հակառակն ԼՄ՝ զօրութիւն եւ փրկութիւն։ Հմմտ. վեր. 7 · 10։ || * Թագաւորութիւն · ԼՄ արքայութիւն։ || * Իշխանութիւնք · այսպէս ըստ Ե · ուղիղ ընթերցուածն է Բ՝ իշխանութիւն, միաբան ընդ ԼՄ եւ ընդ Ց։ || * Նորա · ԼՄ նոյն.՝ օծելոյ = Ց Քրիստոսի · Թուի թէ անմտադրութեամբ ընդօրինակողաց զանց արարեալ ի Թ · հմմտ. վեր. 11 · 15։ || * Զարկաւ · անսովոր՝ բայց ո՛չ անդէպ կիրարկութիւն բառիս զարկանել (ըստ ՆԲՀԼ. = «ուժգին արկանելով կամ ձգելով՝ հարկանել. բախել»), որ ի Հայ. Աճշ. Մատ. մի անգամ եւեթ գտանի՝ Ցհ. 18 · 6 «զարկան զգետնի» = ἔπεσαν χαμαί (այլուր πίπτειν առ հասարակ թարգմանի՝ անկանել, զ. օր. Մթ. 2 · 11, 4 · 9, 7 · 27, եւ յայլ բազում տեղիս Ս. Գրոց)․ ըստ իմաստին = ընկեցաւ, կամ որպէս ունին ԼՄ՝ անկաւ (տ. զնախընթաց հմր., եւ գծան. ի 8 · 7) = Ց ἐβλήθη։ || * Մատնիչ · ոչ տիրապէս ի կիր արկեալ փխկ.՝ չարախօսն, որպէս թարգմանեն ԼՄ զՑ ὁ κατήγωρ (= κατήγορος), որ փոխադրի ի մեզ մերթ՝ չարախօս, Գծ. 23 · 30, 35, 24 · 8, մերթ՝ դատախազ, Գծ. 25 · 16, եւ դարձեալ՝ ամբաստան, Գծ. 25 · 18,

կամ՝ ոսոխ, Առ. 18 · 17։ — Հմմտ. գծան. ի բ. մատնիչ ի նախընթաց հմր.։ || * Որ մատնէր. ոչ քաջ ըստ պատշաճի եղեալ փխկ.՝ որ չարախօսէր, որպէս ունին ԼՄ = Յ ὁ κατηγορῶν. — բառս այս κατηγορεῖν ի Ս. Գիրս Թարգմանի պէսպէս օրինակաւ՝ 1. չարախօսել (Մթ. 12 · 10, 27 · 12, Մկ. 15 · 3, Ղկ. 11 · 54, 23 · 10, 14, Գծ. 24 · 13, 28 · 19). 2. չարախօս լինել (1 Մակ. 7 · 25, Ղկ. 23 · 2, Յհ. 5 · 45). 3. ամբաստան լինել (1 Մակ. 7 · 6, 2 Մակ. 10 · 13, 21, Գծ. 24 · 2, 19, 25 · 5, 11), կամ 4. ամբաստանել (Գծ. 24 · 8), իբրեւ աներ. = ամբաստանութիւն (Յհ. 8 · 6), եւ այլ եւս։ — Իսկ բառիւս մատնել (= «մատամբ նշանակել զոք ի վնաս. մատն եւ գուշակ լինել. չարախօսել. եւ՝ ի ձեռս տալ ոսոխաց», ՆՒՀԼ. ի բ.) բացատրեն Թարգմանիչք մեր առ հասարակ զՅուն. παραδιδόναι (Մթ. 10 · 4; 26 · 15, 16, եւ բազում ուրեք յԱծշ. Մատ.)։ || * Զնոսա. ԼՄ զնոցանէ։ || * Մերոյ = Յ, պակ. ի ԼՄ։ || * Ի տուէ եւ ի գիշերի = Յ. ոչ ճշգրիտ ԼՄ՝ զօր եւ զգիշեր. տ. վեր. գծան. ի 4 · 8։

11. * Վասն արեան. քաջիմաց Թարգմանէ թ ճշդիւ գտակաւ = Յ. իսկ ԼՄ ոչ բարւոք հասուք զօրութեան մտացն Յունին՝ կամակորեն զիմաստն փոխադրելով՝ արեամբ։ — Հմմտ. վեր. 7 · 14։ || * Վասն վկայութեանց նոցա. Յ ունի՝ վասն + բանին" վկայութեան նոցա, այսինքն՝ վասն արդեամբք յայտ առնելոյ զվկայութիւնն իւրեանց բանիւ (հմմտ. վեր. 6 · 9). որպէս ի թ պակ. բանին նոյնպէս եւ ի միում յընտրելագոյն Յուն. ձձ. (տ. զՀամեմատ. Յուն. օրր.). — դարձեալ Թիւրիմացութեամբ վրիպեն ԼՄ՝ բանին վկայութեան նոցա։

|| * Սիրեցին զանձինս (*այսպէս յգ.՝ համեմատ ոմանց ի Յուն. ձձ., ուր Ց եզ.՝ ըստ այլոց օրր.*) (Ց + իւրեանց) մինչեւ ի մահ = Ց. *համմտ. վեր.* 2. 10; — *իսկ* ԼՄ *բոլորովին այլակերպ ընթերցուած ու-նին՝ հանեցան ընդ միջոյն մինչեւ է մահ։*

12. * Ուրախ եղերո՛ւք = Ց. *ուր* ԼՄ՝ *ատրախ մեջին, Թուի՝ թէ հետեւողութեամբ Սղ.* 95. 11 *«Ու-րախ եղիցին երկինք» եւն. համմտ. ստ.* 18. 20։ || * Որ բնակեալդ էք ի դմա = Ց. *այլազգ. եւ յաւելուածով* ԼՄ՝ + *ամենայն" որ բնակեալ են ի նմա։ Ուս կան՝ ամենեքեան որք բնակեալ էք ի նմա։ Տ. վեր. գծանշ ի* 7. 15։ || * Էջ = Ց (*համմտ. Մթ.* 8. 1, *Ղկ.* 2. 51, 8. 23, *Յհ.* 3. 13, *եւ մանաւանդ Գծ.* 10. 21, *այլովքն հանդերձ*), *փխկ. որոյ վրիպանօք* ԼՄ՝ *անկաւ։* || * Մատնիչն. *ճշգրտագոյն ըստ* Ց *ունին* ԼՄ՝ *բանսարկուն. տ. վեր. գծան. ի համր.* 9։ || * Ունելով = Ց *ընդն. ներկ., զոր* ԼՄ *ըստ սովորութեան փոխեն ի՝ որ ունէ։* || * Մեծ = Ց, *զոր* ԼՄ *անդէպ փոխանակեն ընդ բազում։* || * Գիտելով (Ց *ընդն. անց.՝* գիտացեալ, *համմտ. Մկ.* 12. 15, *Ղկ.* 6. 8, *Յհ.* 6. 61, *եւն.*) զի սակաւ ժամանակ ունի. *բան առ բան* = Ց. *ուր* ԼՄ *ամենեւին այլադունակ ունին. եա կացցէ (ըստ Լոմ՝ կայցէ) առ սակաւ մի ժամանակս (ըստ Լոմ՝ ժամանակ)։*

13. * Յորժամ. ԼՄ *նախդ. եւ* = Ց. *այս շղկ. թերեւս լոկ աչաց վրիպանօք տեղափոխ եղեալ է. տ. փոքր մի զկնի։* || * Զի ընկեցաւ. ԼՄ *Ըէ ան-կաւ. երկոքին եւս* = Ց ὅτι ἐβλήθη. *տ. վեր. համր.* 9 *եւ* 10։ || * Ու. *չիք ի* ԼՄ *եւ ոչ ի* Ց. *Թուի՝ թէ վրիպակաւ տեղափոխեալ, տ. վեր.։* || * Զհետ եղեւ. *այսպէս եւ* ԼՄ. *այսինքն՝* հալածէր. *համմտ.*

Մթ. 23.34, Գծ. 26.11, այլովքն հանդերձ։ || * Զարուն = Յ. ուր ԼՄ ունին՝ + զմանուկն" ա-ջաս. տ. վեր. հմր. Ց, նոյնպէս եւ Մթ. 19.4, Մկ. 10.6, Ղկ. 2.23, Հռ. 1.27, Գղ. 3.28։

14. * Տուաւ. տոյնօրինակ եւ ԼՄ. իսկ Յ յգ., որում համաձայնի Ոսկան՝ տուան։ || * Երկու բեւք. ԼՄ նոյնպէս. համեմատ Սինէական օր. եւ այլոց Յուն. ձձ.. իսկ Յ զհետ երթեալ այլոց գրչգ. ունի որոշ. յօդիւ՝ Երկու (կամ Երկորին) բեւքն։ || * Արծուոյ. ԼՄ միաբան. այսպէս ունի եւ Սինէ-ական օր., իսկ Յ հանդոյն այլոց Յուն. ձձ. դար-ձեալ յաւելադրաւ՝ արծուոյն։ — Հմմտ. Ել. 19.4, Երկ. 32.11, Ես. 40.31։ || * Ի տեղին = Յ. տաանց յաւելադրութեան ԼՄ՝ է տեղի։ || * Կե-րակրի = Յ. զոր ԼՄ դնեն յանկ.՝ կերակրել։ || * Ժամանակ եւն. ըստ օրինակի Դն. 7.25 «...մինչեւ ի ժամանակ, եւ ի ժամանակս, եւ ի կէս ժամանակաց», եւ 12.7 «...թէ ի ժամանակ, եւ ի ժամանակս, եւ ի կէս ժամանակի». այսինքն է ըստ Մ էջ 180՝ «զժամանակ երից ամաց եւ կի-սոյն». Հմմտ. վեր. հմր. 6։ || * Յերեսաց աւձին. այսինքն՝ յապահով յերեսաց աւձին։

15. * Էարկ = Յ. ոչ ճշդրիտ ԼՄ՝ եհեղ։ || * Զկնի. ԼՄ զհետ. Յ ὀπίσω իբրեւ նխ. յաճախա-գոյնս = զկնի (տ. օր. Մթ. 4.19, 10.38, 16.24, Մկ. 1.7, Ղկ. 9.23, եւն.), եւ մերթ՝ զհետ (տ. օր. Մկ. 1.20, 2 Պտ. 2.10, եւն.)։ || * Հուր. այս ակնածին յաւելուած է ի Թ, զոր չունին ոչ ԼՄՅ եւ ոչ մին ի ծանօթ Յուն. օրր.։ || * Իբրեւ զգետ = Յ, զնց. ԼՄ։ — Հմմտ. Ովս. 5.10 «Ի վերայ նոցա հեղից իբրեւ զջուր զասպատակ (ըստ Եբր.՝

զցասումն, տ. Ածչ. Կպ.) իմ»։ ||* Զի զնա գետատար արասցէ. թարգմանութիւն բան առ բան = Ց. զոր շրջասացութեամբ ոչ ճշգիւ բացատրեն ԼՄ՝ մի ընկղմեսցէ զնա։ — Ծարատարագէտ Թարգմանիչն մեր ճշգրտագործ նմանողութեամբ եւ դիպողագոյնս յեղու ի Հայ բան զՑուն. ասացուածդ ποταμοφόρητον (բարդեալ ի բառից ποταμός = գետ, եւ φορέω = կրեմ, բառնամ, տանեմ, բերեմ. ըստ այսմ՝ տարեալ ի գետոյ, գետատար) ποιήσῃ (արասցէ). — ποταμοφόρητος, գետատար, է բառ դոյզնագիւտ յոյժ, որ՝ ի բաց առեալ զայն զայս տեղի Ցտ.՝ ո՛չ բնաւ ուրեք պատահէ ի Ցուն. Ածչ. Մատ., եւ ո՛չ առ Ցոյն մատենագիրս, բայց միայն առ Հեսիւքիոսի Աղեքսանդրացւոյ ումեմն քերականի եւ բառագրի ի Դ. դարուն յետ Քր.։ — Նոյնպէս անօսրագոյն իմն երեւի գետատար ի Հայերէն մատենագրութեան. ՆԲՀԼ. նշանակէ միայն՝ «գետատար լինել. տարեալ լինել ի գետոյ եւ ի վայր», առ որ զմի եւեթ վկայութիւն ի մէջ բերէ. «Աղուէսն ի գետն անկաւ, եւ եղեւ գետատար. Ոսկէփոր.». իսկ գետատար առնել ցարդ անծանօթ՝ նորագիւտ ասացուած է. — տ. վեր. 1.12, 1.15, 3.18, 6.8, 8.1, 3, 9.9, 11.8։ — Համմտ. նաեւ Սղ. 73.14, Եզ. 29.3, 32.2։

16. * Եբաց. ԼՄ + Երկիր = Ց։ Համմտ. Թւ. 16.30—32։ ||* Զգետն = Ց. ոչ ճշգիւ ԼՄ՝ զջուրն։ ||* Արկ = Ց, փխկ. որոյ ԼՄ դարձեալ (տ. զնախընթաց հմր.) անճշգրիտ դնեն՝ եհեղ։ ||* Ի վերայ կնոջն. չիք ի ԼՄ եւ ոչ ի Ց եւ կամ յայլ Ցուն. օրր. — ի տ. այդց բառից Ց եւ ԼՄ միապէս ունին՝ է Երկրանոյ իւրմէ։

17․ *Եւ (առՁ․)․ Յ նխդ․՝ եւ բարկացաւ (= ὠργίσθη, ըստ Մթ․ 22․7, Ղկ․ 15․28, հմմտ․ նաեւ Մթ․ 5․22, 18․34, Ղկ․ 14․21, Եփ․ 4․26) վիշապն ի վերայ կնոջն․ նմանապէս ունին ԼՄ՝ եցասեաւ (ցասնուլ առաւել = 1․ ἀγανακτεῖν, Ղկ․ 13․14, որ այլուր թարգմանի բարկանալ, Մթ․ 20․24, 21․15, 26․8, Մկ․ 10․41․ — 2․ χολᾶν, Յհ․ 7․23) վիշապն ընդ կնոջն։ — Զպակասութիւն այդր հատուածի ի Թ համարիմ ո՛չ եթէ վրիպանս ինչ անփութութեան ընդօրինակողաց, կամ զանցառութիւն ի բուն իսկ Թարգմանչէն, այլ մանաւանդ առանձին իմն այլակերպութիւն ի Յուն․ նախագաղափար պատճենին՝ զոր ունէր Թարգմանիչն յառաջեաւ իւրով։ ||*Առնել պատերազմ, նոյնաբանութեամբ = Յ, փխկ․ որոյ ԼՄ դնեն՝ պատերազմել։ ||*Ընդ մնացորդս զաւակի նորա = Յ․ այլազգ դարձուածով, սակայն նուազ իմն ճշգրտութեամբ ԼՄ՝ ընդ այլ զաւակս նորա․ տ․ վեր․ զծան․ ի 9․20․ — այլ եւ հմմտ․ Ծն․ 3․15։ ||*Որք պահէին․ զոյգ սմին եւ ԼՄ․ ճշդիւ ըստ Յ ընդն․ ներկ․՝ որք պահեն։ — Հմմտ․ 1 Յհ․ 2․3, 3․22, 24։ ||*Որք ունին = Յ ընդն․ ներկ․, ուր ԼՄ լոկ՝ ունէին։ — Հմմտ․ 6․9, 14․12, 19․10։

18․ *Կացի = Յ, հանդոյն բազմաց ի Յուն․ օրր․, իսկ ԼՄ համաձայն այլոց Յուն․ ձձ․ (տ․ զՀամեմատութիւն Յուն․ օրր․) ունին՝ կաց, սակայն ԼՄ միաբանի ընդ Թ՝ թերեւս ըստ սմին պատշաճեցուցեալ։ ||*Ես․ Յ չունի։ ||*Աւազի․ ԼՄ աւազոյ։ ||*Եղէր․ չիք ի Յ եւ ոչ ի ԼՄ։

ԺԳ. 1. * Եւ տեսի *մինչեւ* ցելանէր. *ճշգիւ՝ նաեւ ըստ կարգի բառից* = Յ. *միայն թէ սա ունի փխկ.* զի ելանէր *ընդն. ներկ.* (= « *ելեալ* »). — ԼՄ *այլազգ դասաւորութեամբ՝ եւ տեսի զի ելանէր է ծովէն էլողն*։ Տ. *վեր.* 11·7, *եւ Հմմտ. Դն.* 7·3, 7, 19—20, 21։ || * Ունելով = Յ *ընդն. ներկ., փխկ. որոյ* ԼՄ *դնեն՝ եւ ունէր*։ || * Եղջեւրս տասն եւ գլուխս եւթն. *բառ առ բառ ճշգրիտ* = Յ. *ուր* ԼՄ *փոփոխմամբ կարգի բառից ունին՝ գլուխս եւթն՝ եւ եղջիւրս տասն*։ *Հմմտ.* 12·3, 17·3, 7, 9—11։ || * Պսակք տասն. *ուր* ԼՄ՝ *տասն խոյր* (*Բերդ. էՀ* 205. « . . . *զի ի վերայ եղջերաց սորա գոյին տասն խոյրք, այսինքն պսակք* ») = Յ δέκα διαδήματα, *զոր-մէ տ. վեր. զծան. ի* 12·3։ || * Գլխոյ. ԼՄ *նոյնպէս*. Յ *յգ.*։ || * Անուն. *զսոյն օրինակ եւ* ԼՄ, *համեմատ բազմաց յընտրելագոյն Ցուն. օրր.* — *իսկ* Յ *ըստ այլոց Ցուն. ձձ. դնէ՝ անուանս*։ *Հմմտ. Դն.* 7·8, 11·36։

2. * Էր = Յ, *զոր սա դնէ յառաջ քան* զնմանն. ԼՄ *բցթ.*։ — *Հմմտ. Դն.* 7·6։ || * Ջարջոյ. ԼՄ *գրեն՝ արջոյ*։ *Հմմտ. Դն.* 7·5։ || * Իբրեւ բերան = Յ. *իսկ* ԼՄ *բցթ.* զբերան *եւ ունին լոկ՝ որպէս*։ || * Առեւծու. *լաւ եւս էր ըստ օրինի՝* առիւծու, *մին հանգունակ ընթերցուած ի* Բ՝ առիւծոյ. — ԼՄ *առիւծու*. *իսկ* Յ *յգ.* — ԹԼՄ *միաբան գտանին բազմաց ի Ցուն. օրր., իսկ* Յ *այլոց զհետ երթայ*։ — *Հմմտ. Դն.* 7·4։

3. * Մի, *անոր. հյց. է* = Յ. *իսկ մի ի* ԼՄ *թիւրիմացութեամբ առեալ է իբրեւ ուղղ.*։ || * Իւրոց. *լաւ եւս է ըստ* ԼՄ = Յ՝ *նորա*։ || * Իբրեւ

սպանեալ ի մահ, *ճշգիւ* = Ց · *զօրութեամբ իմանալի է՝* տեսի *իբրեւ սպանեալ եւն. — այլազգունակ* ԼՄ՝ *Սպանանեալ + եւ՞ է մահ. յաղագս* ὡς ἐσφαγμένην = իբրեւ սպանեալ, *տ. վեր. գծան. ի* 5 · 6 : || * Հարուած մահու, *այսինքն՝ մահացու հարուած, կամ որպէս թարգմանեն* ԼՄ՝ *Վէր մահուան :* || * Ողջացաւ = Ց, *զոր* ԼՄ *դնեն յանկ.* : || * Զարմացաւ . . . զկնի գազանին. *նոյնաբանութեամբ թարգմանեալ ըստ բանից որ ի* Ց՝ ἐθαύμασεν . . . ὀπίσω τοῦ θηρίου, *այսինքն՝ զարմացեալ հայէր զկնի գազանին (ի դէպ է թերեւս համեմատել* 2 *Մակ.* 9 · 27 *«զխմոց բարուց զկնի հայեցեալ»), կամ՝ ընդ գազանն. կամ՝ երթայր զկնի գազանին՝ զարմացեալ ընդ նա. — ըստ այսմ մարթ է իմանալ այսպէս՝ զարմացաւ ամենայն երկիր ընդ գազանն, եւ երթայր զկնի նորա, կամ՝ ամենայն երկիր զարմացմամբ երթայր զկնի գազանին : — Ոչ ճշգիւ դատակաւ բացատրեն զՑուն. առանձինն ասացած* ԼՄ՝ *զարմացաւ . . . ընդ գազանն, յոր յաւ.՝ զի եւ նմա վիշապն զիշխանութիւն ետ. զայս յաւելուած չունի եւ* Ց : — *Հմմտ. սա.* 17 · 8 :

4. * Չի = Ց, *ուր* ԼՄ *դնեն՝ որ :* || * Զիշխանութիւն, ԼՄ–ն = Ց : || * Իւր . *պակ. ի* ԼՄ *որպէս եւ ի* Ց : || * Գազանին (*առջ.*) . Ց + եւ երկիր պազին գազանին. *այս յաւելուած պակ. նաեւ ի* ԼՄ, *հանդոյն ոմանց ի Ցուն. օրր.* : || * Ասելով = Ց *ընդհն. ներկ., փխկ. որոյ* ԼՄ *ըստ օրինի՝ եւ ասէին :* || * Ո՞ (*առջ. եւ երկր.*) . ԼՄ *ո՞չ :* || * Է . ԼՄ *էջե* . Ց *չունի :* || * Գազանին (*երկր.*) . ԼՄ *երկրպագէին . Ոսկան* = Թ : || * Կամ . *այսպէս եւ* ԼՄ . *ուր* Ց *ունի՝* եւ : || * Մարտնչել . *առաւել*

ճշգրիտ ԼՄ՝ պատերազմել = Յ։ || * Ընդ նմա = Յ։ հանգունապէս Լոմ՝ ընդ դմա, փխկ. որոյ ԼՄ ոչ վայելչապէս գրեն՝ ընդ դա (համմտ. Բ մարտնչել ընդ նա)․ իսկ Ոսկան = Ե։ — Համմտ. ստ. 18 · 18, եւ Ել. 15 · 11։

5: * Որ խաւսէր = Յ ընդդ. ներկ., ուր ԼՄ դնեն՝ խօսել։ || * Մեծամեծս = Յ, զոր ԼՄ ոչ ճշգրիտ դնեն յորոշ. հյց.՝ մեծամեծս։ || * Հայհոյութիւն. Յ յգ. — դարձեալ որոշ. հյց. ԼՄ՝ հայհոյութիւն. — Թ համընթաց է բազմաց ի Յուն. օրր.։ Համմտ. Դն. 7 · 8, 11, 20, 25։ || * Լինել. այսպէս ըստ Ե, ուր Բ գրէ՝ լսել. անշուշտ ի գրչաց շփոթմամբ խանգարեալ է տեղիս այս. ըստ Յ ուղղելի է զայս օրինակ՝ եւ տուաւ նմա իշխանութիւն գործել (համմտ. Մթ. 20 · 12), կամ՝ առնել (իմա՝ զայդ). զայնգունակ ունին եւ ԼՄ. ես փոխա նմա իշխանութիւն, այլ սակայն բյթ. զբառդ գործել կամ առնել։ || * Ամիսս = Յ (անոր. հյց.). այլազգ ԼՄ՝ ամիս։ || * Երկուս. հակառակ կանոնաց ԼՄ՝ երկու։ — Համմտ. վեր. 11 · 2։

6. * Ի հայհոյութիւն, միաբան ընդ ոմանս ի Յուն. օրր., ուր Յ համեմատ այլոց ձձ. դնէ՝ ի հայհոյութիւնս. իսկ ԼՄ ոչ ճշգրիտ բացատրութեամբ՝ հայհոյութեամբ։ || * Հայհոյել = Յ, զոր առանց հարկի պատշաճողութեան ի դիմ. բայ փոխեն ԼՄ՝ ես հայհոյեաց։ Համմտ. ստ. 16 · 9։ || * Զբնակութիւն. յարմարագոյն թուի քան ԼՄ՝ զխորանն. համմտ. Ներք. 21 · 3. — իմանալի է՝ երկնային տաճարն, կամ վերինն Երուսաղէմ։ — Յուն. բառս σκηνή բազմանշանակ է, եւ պէսպէս օրինակաւ թարգմանի ի Ս. Գիրս. — ըստ բնիկ նշանակու-

թեան՝ է վայր ծածկեալ ոստովք, տերեւովք, մորթով, կամ այլով օրինակաւ. Ա) յոլովագոյնս = խորան. եւ այս՝ կրկին առմամբք. 1) խորան, իբրեւ հիւղ, խուղ, վրան (ՆԲՀԼ. սահմանէ զբառդ զայդ այսպէս. «Վրան. տաղաւար. կազմած ի կտաւոյ կամ ի մորթոյ՝ կառուցեալ ի բացի՝ որպէս խուղ կամ տուն շարժական. որոյ մեծն եւ լաւն լինի զմբեթաւոր»), զ. օր. Ծն. 13 . 3, 18 . 1—10, 25 . 16, 26 . 25 եւ այլուր ի Հ. Կ., նոյնպէս եւ ի Նորումս՝ Եբ. 11 . 9. — 2) խորանն (վկայութեան) շարժական, զոր շինեաց Մովսէս, ըստ հրամանին Աստուծոյ. եւ դարձեալ՝ տաճարն, որ կառուցաւ ըստ օրինակի նորին, որպէս եւ սրբութիւնն սրբութեանց, եւն. ա) ստէպ տիրապէս առեալ, զ. օր. Ել. 26 եւ որ զկնի, Ղեւ. 1 այլովքն հանդերձ. այլ եւ ի Ն. Կ.՝ Գծ. 7 . 44, Եբ. 9 . 2, 3, 6, 8, 21, 13 . 10. բ) պիտակաբար առեալ փխկ. երկնից, որ է ճշմարիտ բնակութիւն Աստուծոյ. ըստ այսմ է Եբ. 8 . 2, 9 . 11. յայս միտս իմանալի է նաեւ սոյն տեղի Յտ. որպէս եւ ստ. 21 . 3 (ուր Թ ճշդիւ դասակաւ ընտրողաբար ունի՝ բնակութիւն, իսկ Լ անխտիր դնէ՝ խորան. այլազգ իմն է 15 . 5). — Բ) վրան. 1) ըստ նշանակութեան որ վեր. Ա. 1, բազում ուրեք յԱծշ. Մատ., զ. օր. Ծն. 4 . 20, Թի. 11 . 10, 16, 26, 27, Երկ. 1 . 27, 11 . 6, Յես. 7 . 21—24, Դտ. 6 . 5, այլովքն հանդերձ. 2) համանշան ընդ խորան, ըստ նշանակութեան Ա. 2, վրան ժամու («կոչի ի մեզ Խորանն վկայութեան իբրու նախադիծ օրինակ տաճարի, ուր ըստ յն. լոկ Տաղաւար կամ խորան ասի», ՆԲՀԼ. ի բ.), երիցս անգամ՝ 2 Մակ. 2 . 4, 5 եւ Եբ. 8 . 5. 3) մի անգամ նշա-

նակէ վրան զշարժական տաճարն Մողոքայ, Գծ. 7·43. — Գ) ուրեք ուրեք = տաղաւար (ըստ ՆԲՀԼ.՝ «Բնակարան ի վայրի՝ կրկնեալ յաստոց, ... յեղեգանց եւ յայլոց թեթեւ նիւթոց. հիւղ. խուղ. յարկ. օթարան. խորան. վրան. հովանի»), զ. որ. Ղեւ. 23·42, 43, Նէ. 8·14—17, Եա. 1·8, 38·12, Մթ. 17·4, Մկ. 9·4, Ղկ. 9·33, եւն., զոր թ՛ մի անգամ, Ներք. 15·5, ի կիր առնու փիլկ. խորանին (վկայութեան), տ. վեր. Ա. 2. — Դ) ի տեղիս տեղիս = յարկ, զ. որ. Յոբ. 5·24, 8·14, 18·15, Սղ. 41·5, 59·8, Գծ. 15·16, այլովքն հանդերձ. — Ե) զուն ուրեք = տուն, Թւ. 16·30, Յթ. 3·3, կամ՝ Զ) բնակութիւն, Դտ. 7·8, հմմտ. վեր. Ա. 2. Բ. — Է) նոյնպէս անօսր = հովանի, Յոն. 4·5. — Ը) զտանի ուրեք եւ = տաճար (Աստուծոյ), Յթ. 5·22, — եւ այլ եւս։

|| * Եւ որք [= զորս] ի յերկինս բնակեալ են. ճշգիւ համաձայն բազմաց ի Յուն. օրր. որպէս եւ ոմանց ի թարգմանութեանց. իսկ Ց՝ հանգոյն այլոց Յուն. ձձ.՝ բցթ. գշղկ. են, եւ ունի բան առ բան զայս օրինակ՝ զ'ի յերկինս բնակեալս (= զորս ի յերկինս բնակեալ են), առեալ իբրեւ բացայայտիչ նախընթաց բառին զբնակութիւն. — բոլորովին այլակերպ իմն ընթերցուած ընծայեն ԼՄ՝ Եւ զերկնայնն խորանն. իսկ Ոսկան՝ համանման թ՝ ունի այսպէս՝ Եւ զայնոսիկ որք յերկինս բնակին։ Հմմտ. վեր. 12·12։

7. * Եւ տուաւ ինձ մինչեւ ցյաղթել Նոցա = Ց, համեմատ Սինէական ձ. եւ այլոց բազմաց ի Յուն. օրր. — բովանդակն պակ. ի ԼՄ, հանգոյն ոմանց ի Յուն. ձձ., յորս եւ Աղեքսանդրեանն (տ. զՀամեմատ. Յուն. օրր.). այս, որպէս եւ վեր.

11 · 7, *ըստ օրինակի Դն.* 7 · 21 «*Տեսանէի, եւ եղ-ջիւրն այն տայր պատերազմ ընդ սուրբս, եւ զօ-րանայր ի վերայ նոցա*»։ || * Ցեղից եւ = Յ (*եղ.*), *չնջ.* ԼՄ։ || * Ժողովրդոց եւ ազգաց եւ լեզուաց. Յ *եղ. եւ շրջէ զկարգ յետին բառիցդ. իսկ* ԼՄ *դասաւորեն այսպէս՝ ազգաց եւ լեզուաց եւ ժողովրդոց*։ *Հմմտ. եւ* 5 · 9, 7 · 9, 10 · 11, 11 · 7, 9, 14 · 6. *ըստ օրինակի Դն.* 7 · 23։

8. * Եւ երկիր պագցեն = Յ, *ուր* Լ *ունի՝ զի երկրպագեսցեն, ըստ* ԼաՄ՝ *զի երկիրպագեսցեն*։ — *ՅԱծչ. Մատ., արտաքոյ Յտ. ըստ* Լ, *սովորական ձեւն է՝* երկիր պագանել. *իսկ* երկրպագել *գտանի միայն երիցս անգամ, այս է՝* 1 *Եզր.* 2 · 17 «երկր-պագէ», *Նէ.* 8 · 6 «երկրպագեցին», *եւ* 9 · 6 «եր-կրպագեն», *զորս յառաջ բերէ եւ* Նորայր, *Կորիւն եւն., էջ* 408, *հանդերձ երկու վկայութեամբք յԱգաթանգեղայ, Պատմ., տպ. Վենետիկ* 1862, *էջ* 297 «երկրպագեալ», *եւ* 579 *դարձեալ* «երկրպա-գեալ». *ի նոյն եւ զայս եւս յարեալ գրէ անդէն. «Երկրորդ Դասն [յԵրիցագոյն Աշակերտացն Սա-հակայ եւ Մաշտոցի] ունի եւ* Երկրպագիմ, *կրաւ-որական, շատ յաճախ*» (*Եւս. Եկեղ. Ե. իը.* 409, *եւն.*). (*«Զիք ի նոր Հայկազեննին եւ ոչ մի ի կոչ-մանցդ», անդ էջ* 409, *ծան.* 1.). *եւ խոնարհա-գոյն եւս իջեալ ասէ (էջ* 409—410). «*Առաջին Դասուն [յԵրիցագունից յԱշակերտացն Սահակայ եւ Մաշտոցի] միւս մատենագիրք, թէպէտ ունին* Երկրպագու (*Յովհ. Դ.* 23 *երկիցս*, 24, [*յիշելի է աստէն նաեւ Յտ.* 11 · 1 *եւ* 19 · 20, *ըստ* Թ՝ *որում միաբանի եւ* Լ], Երկրպագութիւն [*չիք ուրեք յԱծչ. Մատ. բաց ի Յտ.* 9 · 20 *ըստ* Լ, *ուր* Թ *այլակերպ*

է], այլ ոչ ուրեք Երկրպագեմ, Երկրպագիմ. առքա կ'ըսեն ի ներգործականն Երկիր պագանեմ [այսպէս եւ թ· ամենայն ուրեք. հմմտ. հմր. 4, 12, 13, դարձեալ վեր. 3·9, 4·10, 5·14, 7·11, 11·16, եւ ստ. 14·7, 9. 11, 15·4, 16·2, 19·4, 10, 20·4, 22·8, 9], Մատուցանեմ երկրպագութիւն (Եզնիկ ... Ոսկ. ...), եւ ի կրաւորականն՝ Երկրպագութիւն առնում (Եզնիկ ... Ոսկ. ... եւն.)։ — Ցներորդ-Դասու կայ ուրեք .... երկրպագէին .... բայց ուղիղ ընթերցուածն Թուի երկիր պագանէին, ըստ այլոց տեղեաց .... իսկ փոխանակ Երկրպագիմ՝ կ'ըսուի Երկրպագութիւն ընդունիմ ։ || * Ամենեքեան = Ց, որոց համաձայնին եւ Լմ, իսկ ԼՄ ունին՝ ամենայն ։ || * Ի վերայ երկրի = Ց, փխկ. որոյ ԼՄ ոչ ճշդիւ գտակաւ դնեն՝ ընդ երեսս երկրէ. — հմմտ. վեր. 3·10, 5·3, 13, 6·10, 8·13, 10·2, 11·10, եւ ստ. հմր. 14, եւ 14·6, 16·18, 17·8. — ἐπὶ τῆς γῆς թարգմանի մերթ՝ ի վերայ երկրի (գ. օր. Մկ. 2·10, 8·6, Ղկ. 21·23, Գծ. 10·11, Հռ. 9·28, Եփ. 6·3, Յկ. 5·5), եւ մերթ՝ յերկրի (գ. օր. Մթ. 16·19, 18·18, 19, 23·9, 35, Ղկ. 18·8, 21·25, Յհ. 17·4, Եփ. 1·10, Կղ. 1·16, 20, 3·2, Եբ. 11·13, Յկ. 5·17). այլ իմն է ընդ երեսս երկրէ, որ հաւասարի Յուն. ասացուածին ἐπὶ πρόσωπον τῆς γῆς, հմմտ. Ղկ. 21·35 «որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրէ» = τοὺς καθημένους ἐπὶ πρόσωπον πάσης τῆς γῆς, եւ նմանապէս Գծ. 17·26 «բնակել է ի վերայ ամենայն երեսաց երկրէ» = κατοικεῖν ἐπὶ παντὸς προσώπου τῆς γῆς. || * Որոց. այսպէս եւ ԼՄ, համեմատ Սինէական ձ. եւ որոց ընդ-նմա. իսկ Ց՝ հանդոյն Աղեքսանդրեան օր. եւ համ-

ընթացից նորա՝ ունի՝ որոյ. հմմտ. Ներք. 17 · 8։ || * Ոչ եւս · ԼՄ լոկ՝ ոչ = Յ · || * Գրեալ էր · Յ գրեալ է · ԼՄ են գրեալ։ || * Անուն նորա = Յ, համաձայն Աղեքսանդրեան օր. եւ այլոց Յուն. ձձ., իսկ ԼՄ՝ անուանք նոցա, միաբան ընդ Սինէական օր. եւ ընդ ընկերակիցս ի Յուն. ձձ.։ || * Ի գիրս = Յ, փխկ. որոյ ԼՄ գնեն՝ ի դպրութեան, կամ լաւ եւս ըստ Լմ՝ ի դպրութեան. — հմմտ. Դն. 12 · 1 «ամենայն որ գտցի գրեալ ի դպրութեան»։ || * Կենդանութեան · ԼՄ կենաց · երկոքին եւս ի դէպ գան առ Յ · — հմմտ. վեր. գծան. ի 3 · 5, եւ ստ. 17 · 8, 20 · 12, 15, 21, 27։ || * Սպանելոյ. ԼՄ զենլոյ · առ այս տ. վեր. գծան. ի 5 · 6։

9. * Որ ունի ականջ · այսպէս ըստ Ե · այլ սակայն նախնական բուն եւ վայելչագոյն ընթերցուածն թուի Բ՝ որ ունիցի ականջս · այլակերպ է Յ՝ եթէ որ ունիցի ականջս (հմմտ. Մկ. 4 · 23) · դարձեալ այլազգունակ ԼՄ՝ ոյք ունին ականջս։ || * Լսելոյ · այսպէս եւ ԼՄ · իսկ Յ չունի։ || * Լուիցէ = Յ · — ԼՄ լուիցեն։ — Տ. վեր. 2 · 7, 11, 17, 29, 3 · 6, 13, 22, եւ հմմտ. Մթ. 11 · 15, 13 · 9, 43, Մկ. 4 · 9, Ղկ. 8 · 8, 14 · 35, Մկ. 4 · 23, 7 · 16։

10. * Որ ի գերութիւն երթայ · Թերի է աստէն բնագիրն. — Յ զհետ ի գերութիւն յաւ. դարձեալ ի գերութիւն. — ի պատճառս կրկնութեան մի եւ նոյն բառի ի գերութիւն կից զկնի միմեանց, երկրորդն զանց արարեալ է։ Սակայն այդ պակասութիւն ո՛չ եթէ յանցանք ինչ է անփութութեան Թարգմանչին, կամ սխալանք ընդօրինակողաց, այլ հին վրիպակ է, զոր ունէր անշուշտ նոյն ինքն Յուն.

բնագիր — օրինակն՝ յորմէ թխեաց Թ, որպէս եւ հասարակաց նախագաղափար պատճեանն ոմանց ի հնագոյն եւ յընտիր ընտիր Ցուն. օրր., Սինէական ին ասեմ եւ այլոց (տ. զՀամեմատ. Ցուն. օրր.), որք միապէս ի բաց թողուն զվերոյ գրեալդ ի գերութիւն. *միայն Աղեքսանդրեան Ձ. եւ հետեւողք իւր պահեալ ունին զուղիղ ընթերցուածն, ըստ որում եւ* Ց *լնու զթերին. — Ուստի զվերատեայ հատուած բանի ուղղելի է օրինակ զայս՝* որ (*ըստ* Ց *ճշգիւ՝* եթէ որ) ի գերութիւն (*զօրութեամբ իմանալի է՝* վարէ), ի գերութիւն երթայ (*կամ՝ վարեսցի*). — *Իսկ* ԼՄ *տ. փոքր մի զկնի.* ||*Որ (*երկր.*). Ց եթէ որ. ||*Սրով *մինչեւ ի* սպանանել, *բան առ բան* = Ց. — *Զբովանդակ զայս հատուած բանի՝* որ ի գերութիւն *մինչեւ ի* սպանանել *ամենայն իրօք այլակերպս ունին* ԼՄ՝ *թուի թէ առ անհասութեան այլափոխեալ զիմաստ նորին այսպէս՝* [illegible] (Մ [illegible]) [illegible] (*Ոսկան՝* [illegible]) [illegible], [illegible] + [illegible] (*ըստ* Լ[illegible]՝ [illegible]). — *Ի սոյն եւ զայս եւս յարեալ գրէ Բերդ. ի կարգի մեկնաբանութեան, էջ* 214. «*Գիտելի է. զի՝ ըստ այլ թարգմանութեան* [?] *գրի*, որ ի գերութիւն վարէ՝ ի գերութիւն վարեսցի», *եւն.* — *Հմմտ. Ծն.* 9. 6, *Մթ.* 26. 52, *եւ Եր.* 15. 2 «*Որք ի մահ՝ ի մահ, եւ որք ի սուր՝ ի սուր, եւ որք ի սով՝ ի սով, եւ որք ի գերութիւն՝ ի գերութիւն*». ||*Համատք. ԼՄ [illegible]. *Հմմտ. խռն.* 14. 12.

11. *Որ եկանէր. ԼՄ [illegible]. *երկոքին եւս* = Ց *ընդն. ներկ.* — *Հմմտ. Դն.* 8. 3. ||*Եր-

կուս . ԼՄ *ոչ ուղիղ՝ երկու* ։ || * Գառինն . . . զվիճակն . *այսպէս եւ* ԼՄ . *իսկ* Ց *անոր. տրկ. եւ հյց.* ։

12. * Ջիջխանութիւն . ԼՄ + *շփոթմնայն . զայս յաւելուած ունի եւ* Ց, *այլ եդեալ զկնի* զազանին ։ Տ. *վեր. համ.* 4 *եւ* 7։ || * Առնէր (*առջ.*), *այսինքն՝ կատարէր գործով. ուր* ԼՄ *դնեն՝ կոչէր. երկոքին եւս հաւասարեն առ* Ց (*որ ունի սակայն զներկ.* — ԹԼՄ *զուգընթաց են ոմանց ի Ցուն. օրր.*)։ || * Առնէր (*երկր.*), ԼՄ *նոյնպէս, համեմատ ոմանց ի Ցուն. ձձ., իսկ* Ց *ներկ.* — ποιεῖν ἵνα = առնել զի (« Առնել, *զոյգ ընդ այլ բայից՝ տայ նոցա զզօրութիւն անցողականի* », *ՆԲՀԼ. ի բ.*), *համմտ. վեր.* 3.9, *եւ Յհ.* 11.37, *Կղ.* 4.16։ || * Իբրեւ . *վրիպակ, փխկ. Ե՞, որպէս ունին* ԼՄ = Ց։ || * Որ (*համմտ. վեր. համ.* 6) ի սմա բնակեալ են (Ց *ընդն. ներկ.*) = Ց, *փխկ. որոյ* ԼՄ *շրջաբանութեամբ եւ յաւելուածով դնեն՝ շփոթմնայն" բնակիչք նորա* ։ || * Երկիր պագցեն = Ց, *ուր* ԼՄ *երկիր պագանիցեն* ։ || * Որոյ բժշկեցաւ = Ց . *այլով դարձուածով բանի* ԼՄ՝ *մինչ ողջացէ* . — Թ (*որ վեր. համ.* 3 *ունի՝* ողջացաւ) *առաւել պատշաճի քան* զԼՄ . *վասն զի կրկ.* θεραπεύεσθαι *առ հասարակ թարգմանի* բժշկել, *զ. օր. Մթ.* 17.17(18) ἐθεραπεύθη = բժշկեցաւ, *Ղկ.* 5.15, 6.18, 8.2, 43, 13.14, *Յհ.* 5.10, *Գծ.* 4.14, 5.16, *եւն.* — *իսկ ողջանալ առաւելապէս ի դէպ գայ բառից՝* 1) ἰᾶσθαι, *զ. օր. Մթ.* 8.13 (*այլուր* = բժշկել, *Մթ.* 8.8, 15.28, *Մկ.* 5.29, *Ղկ.* 5.17, *այլովքն հանդերձ*). 2) ἀποκαθίστασθαι, *զ. օր. Մկ.* 3.5, 8.25, (*որ եւ թարգմանի՝* ողջ լինել, *Մթ.* 12.13, *կամ՝* հաստատել,

Ղկ. 6. 10). 3) ὑγιὴς γίνεσθαι, գ. օր. Յհ. 5. 9, 14, (գտանի ուրեք եւ = բժշկել, Յհ. 5. 4). || * Հարուածք, ուղղելի ըստ վեր. հմր. 3՝ հարուած, փխկ. որոյ ԼՄ ճահաւորագոյն իմն դնեն՝ վէր. || * Իւրոյ. ԼՄ նորա. — Բերդ. էջ 217. «Եւ գիտելի է, զի յայլ թարգմանութիւնս գրի. երկիր պագցեն գազանին՝ որոյ ողջացաւ վէր մահու նորա».

13. * Արասցէ, համաձայն ոմանց ի Յուն. օրր., ուր Յ հանգոյն այլոց ձձ. դնէ՝ առնէ, իսկ Լ (ըստ ծան. Զօհրապեանի՝ «Յօրինակին. առնէ) Մ՝ առնէր. || * Մեծամեծս = Յ. այլակերպ ԼՄ՝ բազումս. Համմտ. Մթ. 24. 24, Մկ. 13. 22. || * Զի. Յ + եւ. իսկ ԼՄ ունին լոկ՝ եւ. || * Հուր արասցէ իջանել. նոյնաբանութեամբ թարգմանեալ = Յ, տ. գծան. ի հմր. 12. այլազգ դարձուածով բացատրեն ԼՄ՝ հուր հրոյ էջանել. || * Յերկնից. ԼՄ + յերկնէ = Յ. — Թ միաբան գտանի ընդ Յուն. օր. միում եւ ընդ հին Լատին թարգմանութեան որ ի Մեկնութեանն Պրիմասիոսի (իբր 550 յ. Քր.).

14. * Մոլորեցուցանէ = Յ, զոր ԼՄ դնեն յանկ. || * Զբնակեալս = Յ. այլազգ դարձուածով ԼՄ՝ զոր բնակեալ են. || * Ի վերայ երկրի = Յ, ուր ԼՄ՝ յերկրէ, լաւ եւս ունի Ոսկան՝ յերկրէ. — տ. վեր. գծան. ի հմր. 8. || * Վասն նշանին. Յ վասն նշանացն. իսկ ԼՄ ո՛չ ուղիղ թարգմանեն՝ նշանօքն. Համմտ. վեր. 12. 11 զնմանօրինակ թիւրիմացութիւն՝ «արեամբ» փխկ.՝ «վասն արեան». || * Որ տուաւ (Յ յգ.) նմա = Յ. անպատեհս այլափոխեն ԼՄ՝ որ տուեալ են ի ձեռս նորա. || * Ասելով բնակչաց (ըստ Յ ճշդիւ՝ ցորս բնակեալ են) ի վերայ երկրի՝ առնել պատկեր գազանին՝ որ ունի

զհարուածս (Ց *եզ·* = զվէրս, *համմտ· վեր· համր·* 3 *եւ* 12) սրոյն եւ կենդանացաւ (*ըստ* Ց *ճշգիւ՝* եկեաց = ἔζησεν, *համմտ· Ղկ·* 15·32, *Հռ·* 14·9· *այլ սակայն ըստ իմաստին դիպողագոյն*)· *Թարգմանութիւն բան առ բան* = Ց· *Թուի թէ զօրութեան մտացն ո՛չ հասուք՝ կամակորեն զՑուն· բնգ·* ԼՄ *զայս օրինակ՝ ասեն ցնա ընակէր երէրէ· որ՛ ուղոփկեր էողանէն, որ է վերոց որոյն եկեոց* (*ըստ ծան· Ջօհր·* «*ի լուս· որ է վերոյ որոյն եկոց· համաձայն ումանց ի բնար·*», — *ըստ Բերդ· էջ* 218, «*այսինքն ընկալեալ զսուրն՝ ո՛չ մեռաւ· այլ եկաց եւ ապրեցաւ։ կամ ըստ այլ թարգմանութեան՝ որպէս եւ ի լուսանցն դնի*, որ ունի վհարուած սրոյն», *ապա ուրեմն* = Թ։

15· * Նմա· ԼՄ + *եշխանութեան*, *որ չիք եւ ի* Ց· || * Տալ = Ց, *զոր* ԼՄ *փոխեն ի՛ տէ տացէ*։ || * Շունչ: *ըստ իմաստին յարմարագոյն թուի քան* ԼՄ՝ *հոգի*։ || * Պատկերին (*առջ·*)· Ց + զի եւ խօսեսցի պատկերն գազանին· — *իսկ* ԼՄ + *եւ տէ խօսեսցէ պտկերն·* + *եւ երէքէ պտեցեն նմա ամենայն բնակէր երէրէ· այս յաւելուածք պակասեն որպէս ի* Թ, *նոյնպէս եւ յոմանս յընտրելագոյն* Ց*ուն· ձձ·* (*տե՛ս զՀամեմ·* Ց*ուն· օրր·*)։ || * Եւ արասցէ (*ան· բ՝* պատկերն գազանին) սպանումն (*համմտ· Եր·* 22·17 «*առնել սպանումն*», *Երկ·* 22·8 «*սպանումն գործել*») *մինչեւ* ցգազանին· *չմիաբանի ընդ* Ց՝ *որ ունի օրինակ զայս՝* եւ արասցէ զի որք ոչ երկիր պագանիցեն պատկերի գազանին՝ սպանցին· *այլազգագոյնս իմն յեղափոխեն* ԼՄ՝ *եւ որ ոչ(-ն* Լ*-մ) պտեցեն երէքէ* (Մ *երէքէրպտեցէ*) *պտկերէ էողանէն, սպանցէ ցնա* (*Ոսկան՝ սպանցեն ցնա*)։ — *Համմտ· Դն·* 3·5—7, 15։

16. * Առնէ = Յ, յաւ. դնեն ԼՄ. || * Զամենայն. ԼՄ ըստ նմին օրինակի. Յ՝ զամենեսեան. || * Մեծամեծս եւ զփոքունս. հակադարձեն ԼՄ՝ [illegible] = Յ զփոքունս եւ զմեծամեծս. || * Զնզաւրս. լաւ եւս է ԼՄ՝ [illegible] = Յ. ա. վեր. գծան. ի 6. 15, նաեւ 2. 9, 3. 17, 5. 2. || * Եւ զաղքատս, եւ զազ. եւ զծ. = Յ. փոփոխմամբ կարգի բառից ԼՄ՝ [illegible]. Հմմտ. ստ. 19. 18. || * Տացէ. այսպէս եւ ԼՄ, համաձայն Յուն. օր. միում. իսկ Յ հանդոյն այլոց բազմաց ի Յուն. ձձ. ունի՝ տացեն, ըստ այսմ անս. բ.՝ մեծամեծքն եւն.. || * Ի վերայ աջ. ձ. = Յ. վրիպեն ԼՄ՝ [illegible]. || * Նոցա (երկոքին) = Յ (ըստ Յ ճշդիւ իմանալի է՝ իւրեանց). ԼՄ ունին միայն զերկր. [illegible]. || * Կամ = Յ, ուր ԼՄ՝ [illegible]. || * Ճակատից. անսովոր հոլովումն, այլուր, 7. 3, 9. 4, 14. 1, 9, 17. 5, 20. 4, 22. 4 առ հասարակ –տու, –տուց. — ԼՄ՝ [illegible] (–[illegible] Լ[illegible]) = Յ. — Թ ընթացակից է յոլովից ի Յուն. օրր. — Հմմտ. վեր. 7. 3, եւ ստ. 14. 9, 11, 19. 20.

17. * Զի մի՝ որ = Յ. ոչ ճշգրիտ ԼՄ՝ [illegible]. || * Կամ (առջ.) = Յ, ուր ԼՄ՝ [illegible]. || * Բայց եթէ = Յ, փխկ. որոյ ԼՄ՝ [illegible]. || * Որ ունի = Յ (ընդդ. ներկ.). ԼՄ [illegible]. || * Զդրոշմն = Յ, առանց դմրշ. յօդի ԼՄ՝ [illegible], որք եւ յաւ.՝ [illegible], որ պակ. նաեւ ի Յ. || * Կամ զանուն. ԼՄ [illegible]. երկոքին եւս թարգմանութիւնք այլակերպ են ի բնագրէն զոր ունի Յ՝ համեմատ բազմաց ի Յուն. ձձ., այս է լոկ՝ զանուն, առեալ իբրեւ բացայայտիչ նախընթաց բառին

16*

զգրոշմն. *ուստի՝* զգրոշմն (*այսինքն*)՝ զանուն: — *Թ յայսմ մասին միաբան գտանի Յուն. Սինէական օր. եւ այլոց ոմանց, որք ընթեռնուն զայս ձեւ օրինակի՝* զգրոշմն զազանին կամ զանուն նորա: || * Կամ (*երր.*) = Յ, *ուր* ԼՄ *դարձեալ՝ Եւ*: — *Հմմտ. ստ.* 15. 2:

18. * Համարեսցէ. *լաւագոյն ըստ կանոնի* ԼՄ՝ *համարեսցի*: || * Զանուն. *այսպէս ունին նաեւ ոմանք ի Յուն. օրր., իսկ* ԼՄ *միաբան ընդ* Յ *գնեն՝ զԹիւ*: || * Քանզի թիւ մարդոյ է = Յ. *անդէպ եւ ձախող իմն դարձուածով* ԼՄ՝ *Թիւ եղեան մարդոյ*: || * Եւ թիւ. ԼՄ + *անուան, զոր սակայն բցթ.* ԼաՄ: || * Նորա. ԼՄ + *է այս*: || * Եւ (*երկր.*), *աւելորդ է. Թէրեւս վրիպակաւ ի ներքս սպրդեալ*: || * Վեցհարիւր եւ վեցտասան. *այսպէս գրէ* Ն, *իսկ* Բ *ըստ մասին Թուագրովք զայս օրինակ՝* վեց Ճ. եւ վեց Ժ. ան: — Թ *յայսմ միաբանի սակաւագունից եւեթ ի Յուն. օրր., այսինքն՝ միումն ի գլխագիր ձձ. որ է* C *տառիւ նշանակեալն, հին մեծարգի ձ. մատեան, կոչեցեալն* Cod. Ephraemi Syri rescriptus, Ձեռ. Եփրեմի Ասորւոյ կրկնագիր, *գրեալ ի* Ե. *դարու՝ հաւանական կարծեօք՝ յԵգիպտոս. եւ երկուց նորագոյն՝ բայց ընտիր գրչագրաց, թիւ* 5 *եւ* 11 (*տ. զՀամեմատ. Յուն. օրր.*): *Բաց յայսցանէ պահեալ կայ այլակերպ ընթերցուածդ* 616 *նաեւ ի Լատիններէն Մեկնութեան Յայտ. Յովհ. ի* Տիկոնիոսէ *Ափրիկեցւոյ* (*իբր* 390 *յ. Քր.*): *Իսկ մնացեալ համօրէն Յուն. պատճէանք գրոցս Յտ., չորեքին գլխագիր ձձ., այս են՝ Սինէականն* (*Դ. դար*), *Աղեքսանդրեանն* (*Ե. դար*), *եւ այլ երկու նորագոյնք, որպէս եւ*

իբր 200 փոքրագիր գրչագիրք, ամենեքին միապէս ունին զԹիւ 666. սոցին այսոցիկ համաձայն են եւ ԼՄ՝ [illegible] (ԼՄ Թուագրով՝ ոկզ). — Ապաքէն անմարԹ Թուի ինձ հաստատ եւ ստոյգ վճիռ տալ՝ Թէ ո՞ր ընԹերցուած է բուն եւ սկզբնականն. Անդստին յառաջին ժամանակաց ծանօԹ էր նաեւ Թիւս 616. եւ Տիկոնիոս միայն զա՛յս գիտէ. այլ Երանոս (յամի իբր 185) իբրեւ անհարազատ մերժէ զսոյն, եւ համարի՝ Թէ իցէ լոկ վրիպակ գրուԹիւն. եւ իբրեւ վաւերական եւ ստոյգ ընդունի միայն զմեւս Թիւ 666, ասելով՝ Թէ «յամենայն իսկ յընտիր եւ ի վաղեմի օրինակս այս Թիւ եդեալ է, եւ վկայեն ամենեքին որ ականատես գտան Յովհաննու, եւ բանն ինքնին ուսուցանէ, զի Թիւ անուան գազանին ըստ համարոյ Յունաց ի նշանագրաց անտի ի նմա իմանի» (տ. «Եւսեբիոսի Կեսարացւոյ ՊատմուԹիւն Եկեղեցւոյ, յեղեալ յԱսորւոյն ի Հայ ի հինգերորդ դարու. պարզաբանեալ նոր ԹարգմանուԹեամբ ի Յոյն բնագրէն ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան. — ի Վենետիկ — 1877», Ե. 8, էջ 359). Ապա ուրեմն՝ ըստ վկայուԹեան Երանոսի՝ հին ստոյգ եւ ճշմարիտ օրինակք գրոց ՅայտնուԹեան ունին զԹիւ 666, զոր սակայն, որպէս վերագոյն յիշեցի, անգիտանայ Տիկոնիոս. — Այլ սակայն, ըստ կարծեաց բազմաց յայժմու մեկնչաց, Թիւս 616 ոչ եԹէ վրիպակաւ կամ դիպուածով իմն յառաջ եկեալ է, այլ մանաւանդ դիտաւորուԹեամբ եւ խորհրդով յօտար ձեռանէ, ըստ ամենայն հաւանականուԹեան յԱրեւմուտս, փոխեալ է ի 616. վասն զի Թիւս այս ըստ համարոյ Յուն. նշանագրաց կազմէ զանունս Γάϊος Καῖσαρ,

Գայիոս Կայսր, [*այս է՝* Կալիգուղա, 37—41 *յ. Քր.*] (Γ = 3, α = 1, ι = 10, ο = 70, σ = 200, K = 20, α = 1, ι = 10, σ = 200, α = 1, ρ = 100, *բովանդակութիւն Թուոցս* = 616)։ — *Իսկ յոլովք յարգի գիտնոց այլազգ մեկնեն զԹիւ անուան գազանին, եւ այն՝ ոչ ըստ համարոյ Յուն. նշանագրաց, այլ ըստ Թուոյ Եբրայական տառից. ըստ այսմ 666 բաղկացուցանէ զանուն* Ներոնի Կայսեր *Հռովմայեցւոց* (54—68 *յ. Քր.*), *Եբրայեցերէն՝* Կսր Նրոն (Կ = 100, ս = 60, ր = 200, Ն = 50, ր = 200, ո = 6, Ն = 50, *բովանդակ գումարն* = 666), *իսկ 616 ի դէպ գայ Լատինական ձեւոյն այդր անուան, ըստ Եբր. գրոյ՝* Կսր Նրո (100 + 60 + 200, *եւ* 50 + 200 + 6, *զամենայն ի միասին հաշուեալ* = 616)։ *Բայց սակայն այս մեկնութիւն եւս չէ՛ ամենայնիւ անվէճ, եւ անկեղակարծելի խոստովանեալ յամենեցուն։ — Այսչափս բաւական իցէ յաղագս Թուոց 666 եւ 616։ Աւելորդ է յիշատակել աստանօր մի ըստ միոջէ զայլ եւս ազգի ազգի բազմապատիկ (առաւել քան զհարիւր)՝ ըստ մեծի մասին անճահ եւ անհեդեդ մեկնութիւնս, կամ զզրաջան ընդունայն հնարս լուծանելոյ զառեղծուած Յայտնութենական Թուոյս 666 (կամ 616), եւ մեկնելոյ զծածուկ խորհուրդ սորին։ — Հուսկ ուրեմն հարեւանցի իմն յիշելի է եւ զայս, Թէ ըստ ծան. Զօհրապեանի՝ «ի բազում գրչագիրս մեր բառքս՝ Վեց հարիւր վաթսուն եւ վեց, Թուագրով գրին այսպէս՝ ոկզ. յոր յարեալ յաւելու օրինակս մեր նաեւ նշանագիրս ինչ մասնաւոր այսպիսի ձեւով . . . [՞] զոր ընդօրինակողն բացայայտ եւս ձեւացուցանէ զնոյն շղագրովքս՝ ՈԿԶ»։*

Թէ զի՞նչ նշանակեն այս ծածուկ նշանագիրք, կամ զո՞ ոք ակնարկեն, անյայտ է։

ԺԴ. 1. * Անաւասիկ. ԼՄ *ահա*։ || * Գառն. *այսպէս եւ* ԼՄ, *համեմատ ոմանց ի Յուն. օրր.* — *իսկ* Յ *ըստ այլոց ձձ.՝* զառնն. *տ. վեր.* 5 . 6։ || * Սիովնի. *լաւ եւս քան* զԼՄ՝ *Սինէ*։ || * Հարիւր. Լ *հարիւր*։ || * Եւ (*չորր.*). *զնց.* Լ։ || * Զորք. *ուղղագոյն քան* զԼՄ *որ*, *որ ըստ* ՆԲՀԼ. *ի բ.՝* «*գուն ուրեք գտանի իբր ուղղ. հանգոյն ամկ. որ*»։ || * Որք ունէին. ԼՄ *որ ունէին*. Յ *ընդ. ներկ.* (*համմտ.* Բ որ ունին)։ || * Ջանուն. *դմրշ. յ. աւելորդ թուի.* Յ զանուն. *ոչ ճշգրիտ* ԼՄ *զնեն յուղ.՝ անուն*։ || * Հաւրն. ԼՄ *առանց դմրշ. յ.*։ || * Իւրեանց = Յ. *ուր* ԼՄ՝ *նոցա*։ *Համմտ. վեր.* 7 . 3 *հ.*, 13 . 16։

2. * Իբրեւ (*առջ.*). ԼՄ *որպէս*, *իսկ* Լ*մ* = Թ։ || * Ջրոց. Լ *ջրոց*։ || * Իբրեւ զձայն սաստիկ որոտման. Յ *ճշգիւ՝* իբրեւ զձայն որոտման մեծի. *իսկ* Լ *առանց նխ.՝ յայն որոտման մծէ*։ *Համմտ.* 1 . 15 *եւ* 19 . 6։ || * Զայնն էր (Յ *չունի* էր) զոր = Յ, *պակ. ի* ԼՄ։ || * Զձայն (*երր.*). ԼՄ *նոյնպէս*. Յ *բցթ.*։ || * Որք հարկանէին. ԼՄ *չէ հարկանէին*. *երկոքին եւս համեմատ* Յ *ընդ. ներկ.*։

3. * Երգէին. *այսպէս եւ* ԼՄ. *ուր* Յ *ներկ.*։ || * Երգ նոր = Յ. *իսկ* ԼՄ՝ *վէրէս նոր*։ *Տ. վեր.* 5 . 9։ || * Առաջի (*երր.*). ԼՄ *նոյնօրինակ*. Յ *բցթ.*։ || * Մերունեացն. ԼՄ *երէցանցն տ. վեր. զծան. ի* 5 . 8։ || * Ոչ [կարէր. *չմիաբանի ընդ* Յ, *որ*

ունի՝ ոչ որ կարէր. նմանապէս ԼՄ՝ ոչ ոք կարէ։ || * Ուսանել = Ց, փոխ. որոյ ԼՄ ոչ ճշգրիտ գնեն՝ քննել. — μανθάνειν առ հասարակ թարգմանի՝ ուսանել (զ. օր. Մթ. 9·13, 11·29, 24·32, Մկ. 13·28, Յհ. 6·45, եւ յայլ բազում տեղիս Ածչ. Մատ.), դուն ուրեք՝ իմանալ (զ. օր. Գծ. 23·27)։ || * Ձերոց = Ց. ուր ԼՄ՝ ձերոց + նոցա (Լամ նոցա)։ || * Բայց. ԼՄ + միայն. երկոքին եւս պատշաճ են. Ց εἰ μὴ թարգմանի մերթ՝ բայց (զ. օր. Մթ. 14·17), եւ մերթ՝ բայց միայն (զ. օր. Ղկ. 4·26), ուրեք ուրեք եւ՝ եթէ ոչ (զ. օր. Մթ. 11·27, 1 Կր. 2·11)։ || * Հարիւր. ԼՄ հարիւրք. տ. հմր. 1։ || * Են (հնգր.). բցթ. ԼՄ. տ. հմր. 1։ || * Չորք. ԼՄ չորս. տ. հմր. 1։ || * Որք գրեալ (անշուշտ վրիպակ գրչի, ընթեռնլի՝ գնեալ) էին = Ց ընդն. անց., զոր ԼՄ ոչ ճշդիւ թարգմանեն՝ որք գնեցեալ (Լամ գնեցեալք) են։ || * Յերկրէս. ԼՄ յերկրէ։ — Հմմտ. 1 Կր. 6·20, 7·23, Գղ. 3·13, 4·5, 2 Պտ. 2·1։

4. * Պռնկեցան. ԼՄ խառնակեցան. ճշդիւ գտակաւ ըստ Ց՝ պղծեցան, որպէս եւ Թ վեր. 3·4 ճշգրիտ թարգմանէ զՑուն. μολύνειν. ըստ այսմ փոխագրի բառդ այդ նաեւ զ. օր. Ող. 4·14, Զք. 14·2, այլուր = աղտեղացուցանել (Երգ. 5·3), կամ՝ թաթաւել (Ծն. 37·31)։ Հմմտ. Ղեւ. 15·18։ || * Քանզի կուսանք են = Ց. այլակերպ ԼՄ՝ ես են կուսանք։ || * Սոքա են որք հետեւին. այլազգ դարձուածով բացատրեն ԼՄ՝ սոքա չինի երթան. յաղագս բառիս հետեւել տ. վեր. զծան. ի 6·8։ Հմմտ. վեր. 7·17, եւ եւս Մթ. 10·38, 16·24, 25, Յհ. 21·19, 1 Պտ. 2·21։ || * Են՝ որք (երկր.). չիք ի ԼՄ

եւ ոչ ի Յ։ || * Գնեցան = Յ. *ոչ ճշդիւ* ԼՄ՝ *ընթերցան. տ. ի Նախընթաց հմր.*։ || * Երախայրիք = Յ. *ուր* ԼՄ *վրիպանօք դնեն՝ առաջի. բայց սակայն մարթի այդմ լինել լոկ վրիպակ գրչի, զոր ուղղելի է՝ առաջին, որպէս կայ թարգմանեալ Յուն.* ἀπαρχή, *գ. օր. Թի.* 15. 19—21. *այլուր նաեւ* = պտուղ (*Հռ.* 16. 5, 1 *Կր.* 16. 15, *Յկ.* 1. 18), *կամ՝* առաջին պտուղ (1 *Կր.* 15. 20), *եւն.* — *Հմմտ. ՆԲՀԼ.* «Երախայրիք ... *Առաջին խայրիք, նախկին բերք՝ Աստուծոյ նուիրականք ... ասի ի մեզ եւ Պտուղ, Առաջին, Առաջաւոր, Առաջաւորութիւն*»։ — *Հմմտ. Եբ.* 12. 23։ || * Աստուծոյ ... զառինն, *յայտ է թէ տրկ.* = Յ. *զոր* ԼՄ *թիւրիմացութեամբ դնեն ի սռկ., սակայն տ. վեր.*։

5. * Ստութիւն. ԼՄ *սուտ. երկոքին եւս պատշաճին ի* Յ ψεῦδος (*գ. օր. Յհ.* 8. 44 *եւ Եփ.* 4. 25, *այլովքն հանդերձ*)։ *Հմմտ. Սղ.* 31. 2, *Սփ.* 8. 13; *Մղ.* 2. 6, *Յհ.* 1. 47, 1 *Պտ.* 2. 22։ || * Քանզի. ԼՄ *չէ*։ || * Ամբիծք. ԼՄ *գրեն՝ անբիծք*։ — *Հմմտ.* 1 *Պտ.* 1. 19, *Եբ.* 9. 14։

6. * Հրշտակ. ԼՄ *հրեշտակ. տ. վեր.* 3. 1, *եւ* 8. 13։ || * Չի ունէր. ԼՄ *Ոչ ունէր. երկոքին համեմատ* Յ *ընդդ. ներկ.*։ || * Աւետարան. *սխալ է փխկ. այսորիկ դնել ըստ* ԼՄ՝ *աւետիս, որ է մանաւանդ* = ἐπαγγελίαν (*գ. օր. Ղկ.* 24. 49, *Գծ.* 1. 4, 2. 33, 39, 7. 17, 13. 23, 26. 6, *եւ աստէպ ի Ն. Կ.*). *իսկ* Յ εὐαγγέλιον *թարգմանի առ հասարակ՝* աւետարան (*գ. օր. Մթ.* 4. 23, 9. 35, 24. 14, 26. 13, *Մկ.* 1. 1, 14, 15, *եւ յայլ բազում տեղիս Ն. Կ.*)։ — ԼՄ *հանգոյն* Յ *յաւ.՝ յաւիտենական*։ *Հմմտ.* 1 *Պտ.* 1. 25։ || * Որ Նստէին (*ըստ* Յ *ճշդիւ՝*

ի վերայ նստելոցն) ի վերայ երկրի (*լաւ եւս՝ յերկրի*), եւ (*իմա՛՝ աւետարանել*) ի վերայ ամենայն ձագգաց (Յ *եզ.*), եւ ցեղից (Յ *եզ.*), եւ լեզուաց (Յ *եզ.*) եւ ժողովրդոց (Յ *եզ.*) = Յ. *ո՛չ փոքր ինչ տարբերին* ԼՄ՝ *ամենայն ազգաց, եւ լեզուաց որ բնակեալ են յերկիր։* — *Համմտ. վեր.* 10·11, 13·7։

7. * Զի ասէր. ԼՄ *եւ ասէր.* Յ *ընդդ. ներկ.* (*«ասելով»*)։ || * Ձայնիւ մեծաւ. ԼՄ *է յետ մեծ. տ. վեր. գծան. ի* 5·2։ || * Նմա փառս = Յ. *շրջեն զկարգն* ԼՄ՝ *փառս նմա։ Համմտ. խոն.* 15·4, *Երկ.* 32·3։ || * Եկն ժամ. *աւելադրութիւն.* Յ *ունի միայն՝ եկն, այսպէս եւ* ԼՄ։ || * Ժամանակ, *դիպողագոյն քան զ*ԼՄ՝ *ժամ.* — Յ ἡ ὥρα *նշանակէ տիրապէս՝ ժամ* (*զ. օր. ՄԹ.* 9·22, 10·19, 15·28, *եւ յաճախագոյնս ի Ս. Գիրս*). *այլ սակայն թարգմանի ուրեք ուրեք եւ՝* ժամանակ (*զ. օր. ՅՀ.* 2·4, 4·21, 23, 5·25, *եւն.*)։ || * Երկնից. ԼՄ *երկինս*։ || * Աղբերց ջրոց. ԼՄ *աղբերաց ջուրց*։ — *Համմտ. վեր.* 10·6, *եւ եւս Սղ.* 145·6, *Գծ.* 4·24, 14·15 (14)։

8. * Այլ երկրորդ հրեշտակն (*տ. վեր.* 3·1). *ըստ շարակարգութեան բառից ճշդիւ համեմատ ոմանց ի Յուն. օրր.* — *այլազգ շարադասեն* ԼՄ՝ *այլ հրեշտակ երկրորդ* = Յ։ || * Զհետ. ԼՄ *նախդ.՝ զայր,* Յ՝ եկն. *Թուի թէ անմտադրութեամբ գրչաց ի բաց թողեալ, տ. ի յաջորդ համր.՝* «երբայր *զհետ*»։ || * Նորա (*առջ.*). ԼՄ *նոյնպէս.* Յ *չունի*։ || * Ասելով = Յ *ընդդ. ներկ., զոր* ԼՄ *ըստ սովորութեան փոխեն ի դիմ. բայ՝ եւ ասէր*։ || * Անկաւ, կործանեցաւ. *ճշդագոյն ըստ* Յ *ունին* ԼՄ՝ *անկա՛ւ անկա՛ւ.* — *Թ յայտնապէս ի նմանութիւն Ես.* 21·9

«Անկաւ կործանեցաւ Բաբելոն» եւն. Հմմտ. նաեւ Եր. 51·8։ ||* Մեծն. ԼՄ զնեն զկնի Բաբելոնի = Յ. — Թ միաբան զտանի Յուն. օր. միում։ ||* Բաբիլովն. ԼՄ Բաբելոն. — երկզունակ է ուղղագրութիւն այսր անուան ի Թ. ամէն որպէս եւ 11·8, 17·5, 18·2 Ն գրէ՝ Բաբիլովն, եւ 16·19, 18·10,21՝ Բաբելովն. իսկ Բ ամենայն ուրեք միակերպ օրինակաւ՝ Բաբելովն (բաց ի 11·8 Բաբիլովն). նոյնպէս եւ Լ կրկնակի, մերթ՝ Բաբելոն, ի սմին վայրի, եւ 16·19, 18·2, եւ մերթ՝ Բաբելովն, 17·5, 18·10,21։ — Հմմտ. 16·19, 17·5, 18·2, նաեւ Եր. 51·8, Դն. 4·27։ ||* Ի գինւոյ մինչեւ ցվախճան համարոյ. իւիք միաբանի ընդ ոմանս ի Յուն. ձձ., եւ իւիք առանձին է (տ. զհամեմատութիւն Յուն. օրր.). այլ կարի իսկ այլակերպ է ի բնագրաց զորս ունին Յ եւ ԼՄ. տողս ինքեանք չեն համաձայն միմեանց. Յ զհետ երթեալ զայլոց իմն օրր. ունի այսպէս՝ որ ի գինւոյ ցասմանն (որպէս թարգմանի θυμός Եր. 11·27, կամ՝ սրտմտութեանն, ըստ Յոբ. 6·4, Հռ. 2·8, Կղ. 3·8, եւն., եւ կամ՝ բարկութեանն, ըստ Ղկ. 4·28, Գծ. 19·28, Եփ. 4·31, եւն. — տ. նաեւ վեր. 12·12, եւ խոն. հմր. 10, 19, եւս եւ 15·1,7, 16·1,19, 18·3, 19·15) պոռնկութեանն իւրոյ արբոյց զամենայն ազգս. իսկ ԼՄ, թուի թէ թիւրիմացութեամբ, աղաւաղեալ զմիտս բանից կամակորեն զայս օրինակ՝ ի գինւոյ արբեցութեանն՝ ի ցասմանէ՝ (Մ + Ն) ի պոռնկութեանն իւրմէ, որ արբեցոյց զամենայն հեթանոսս։ — Հմմտ. ստ. 17·4, 18·2։ — Այս հատուած ըստ օրինակի Եր. 51·7 «Բաժակ ոսկի Բաբելոն ի ձեռին Տեառն, որ արբեցուցանէ զամենայն երկիր ի

դինւոյ իւրմէ . արքին հեթանոսք , վասն այնորիկ չարժեցան (ըստ Եբր. բնգ.՝ մոլեգնեցան , տ. Ածչ. Կպ.) ազգք » , (համմտ, Ովս. 7 . 5 *« զայրանալ ի գինւոյ »), նաև և.* 25 . 15 — 17 , 27 , 28 *« Առ զբաժակ գինւոյս անապակիս (ըստ Եբր. բնգ.՝ ցասմանս) այսորիկ ի ձեռաց իմոց , և արբուցես զգաամենայն ազգաց » և որ զկնի . այլ և. Սղ.* 59 . 5 , *Զք.* 12 . 2 ։

9. * Այլ երրորդ հրշտակ (*տ. վեր.* 3 . 1) . ԼՄ *դասաւորեն հանգոյն* Ց՝ *«'յլ* [illegible] ։ || * Երբայր պճետ . ԼՄ [illegible] . *երկոքին ևս յարմար են* = Ց (*անոր. կար.*) ։ || * Ասելով = Ց *ընդն. ներկ., փխկ. որոյ* Լ՝ [illegible] . . . [illegible] , *ընդ. մէջ եդեալ զբառս է յոյն Դծ . իսկ Թ կարգէ համաձայն* Ց , *ըստ նմին օրինակի և* Լ*մ*Մ՝ [illegible] (*է յ. մ.*) ։ || * Ձայնիւ մեծաւ . ԼՄ *է յոյն Դծ . տ. վեր. զծան. ի* 5 . 2 ։ || * Որ . ԼՄ [illegible] . Ց եթէ որ . *համմտ. վեր.* 11 . 5 ։ || * Երկիր պագանէ = Ց . *ոչ ճշգրիտ* ԼՄ՝ [illegible] . *առ այս տ. վեր. զծան. ի* 13 . 8 ։ || * Եւ (*երր.*) = Ց . *ուր* ԼՄ՝ [illegible] ։ || * Առնու դրոշմ ի վերայ ճակատու իւրոյ , *բան առ բան* = Ց . *այլազգ դարձուածով բացատրեն* ԼՄ՝ [illegible] ։ || * Կամ = Ց . *իսկ* ԼՄ *նխդ.* [illegible] ։ || * Ձեռին . Լ *նխդ.* [illegible] (*ըստ* Լ*մ*Մ՝ [illegible]) , *որ չիք ի* Ց ։ — Լ + [illegible] (Լ*մ*Մ [illegible]) = Ց ։ — *Համմտ. վեր.* 13 . 12 , 14 , 15 , 16 ։

10. * Եւ (*առջ.*) = Ց , *պակ. ի* ԼՄ ։ || * Նա = Ց . *այլազգ* ԼՄ՝ [illegible] ։ || * Ի գինւոյ բարկութենէն = Ց , *տ. վեր. ի համր.* 8 . — *ո՛չ ճշգրիւ դտակաւ* ԼՄ՝ *է* [illegible] ։ || * Որ խառնեցաւ անապակ՝ բաժակին ի բարկութենէ նորա . *Թուի*

թէ աղաւաղեալ յընդօրինակողաց, սմին իրի խառ-
նակ եւ դժուարիմաց. ըստ Ց ընթեռնլի է այսպէս՝
որ խառնեցաւ (Ց ճշդիւ ընդն. անց.) անապակ ի
բաժակին բարկութեան նորա (Համմտ. Ես. 51 · 17,
21 ՀՀ.)· զոր ո՛չ ի դէպ թարգմանեն ԼՄ՝ [illegible]
[illegible] — οἶνον κεραννύναι
թարգմանի յատկապէս՝ գինի խառնել (ընդ ջուր),
զ. օր. Ես. 1 · 22 «խառնեն ջուր ընդ գինի»,
2 Մակ. 15 · 40 «զջուր ընդ գինի որք խառնէ», եւ
ընդհանրապէս՝ գինի խառնել, այս է՝ պատրաստել
զգինի առ ի յըմպել, լնուլ կամ արկանել յըմպա-
նակն (տ. ՆԲՀԼ. ի բ. խառնել), ըստ այսմ է Առ.
9 · 2 «խառնեաց ի խառնելիս զգինի իւր», 9 · 5
«արբէք զգինի իմ զոր խառնեցի ձեզ», Դն. 14 · 10
«եւ զգինիդ՝ խառնեալ դիցես», Համմտ. Ես. 5 · 22
«որ խառնեն զցքին»· տ. Նաեւ Ներք. 18 · 6։ Իսկ
յաղագս οἶνος ἄκρατος, գինի անապակ, Համմտ. Սղ.
74 · 9 «բաժակ ի ձեռին Տեառն գինի լի անապակ
արկեալ», եւս եւ Եր. 25 · 15, 3 Մակ. 5 · 2 (1)։
|| * Հրշտակաց (տ. 3 · 1) սրբոց = Ց, պակ. ԼՄ
որք ի տ. բառիցս այսոցիկ դնեն՝ [illegible]։ || * Ա-
ռաջի (երկր.) = Ց, զնց. ԼՄ։

11. * Տանջանացն ծուխ. Ց ընդ հակառակն՝
ծուխն տանջանացն + նոցա. ԼՄ բցթ. տանջանացն
եւ ունին միայն՝ [illegible]. ըստ նմանութեան Ես.
34 · 9, 10. իմանալի է ըստ 18 · 9, 18, 19 · 3,
20 · 10։ || * Ելցէ. այսպէս եւ ԼՄ, բայց տեղա-
փոխեալ յառաջ քան զ[illegible] եւն., իսկ թ դնէ
հաւասար Ց՝ որ ունի սակայն զներկ.։ || * Եւ ո՛չ
ունին մինչեւ ի պատկերի նորա. բան առ բան
ճշդութեամբ = Ց. չրջեն զկարգ բառից եւ լայ-

նոյնպէս թարգմանեն ԼՄ՝ եւ ոչ առնէին հանգիստ՝ որք երկիր պագին գազանին եւ պատկերի նորա, եւ որք երկիր պագին պատկերին (պահ. Նորա)։ || * Եւ որ (ճշգրիւ ըստ Յ՝ եթէ որ, տե՛ս վեր. համր. 9) առնու դրոշմ զանուան (Յ զդրոշմն անուան) Նորա = Յ․ ոչ ճշգրիտ ԼՄ՝ եւ առնէ գրեալ եւ ըստ անուան նորա։

12. * Աստ է մինչեւ ի վախճան համարիս․ ճշգրտիւ = Յ․ իսկ ԼՄ ըստ իմիք այլափոխեն զզօրութիւն բանից Յուն. բնգ․, թարգմանելով այսպէս՝ եւ համբերութիւն սրբոց աստ է․ այս որք պահեն զպատուիրանս Աստուծոյ, եւ զհաւատս Յիսուսի։ Համեմ. վեր. 2․13, եւ 12․17, 13․10։

13. * Զի ասէր․ ԼՄ որ ասէր․ Յ ընդ. ներկ. — ԼՄ + ցիս։ || * Որ․ ԼՄ որք։ || * Մեռանին = Յ․ փխկ. որոյ ԼՄ, յայտնապէս ի նմանութիւն Պաւղոսեան բանաձեւոյ 1 Կր. 15․18 «որ ննջեցինն ի Քրիստոս», ոչ ճշգրիւ գնեն՝ ննջեցին․ — որ ի Տէր մեռանին, այսինքն՝ որք մեռանին ի հաղորդութեան ընդ Տեառն, եւ ի Նա վստահացեալ։ || * Յայսմ հետէ = Յ ἀπάρτι (այսպէս թարգմանի եւ Մթ. 23․39, 26․64, Յհ. 13․19, եւն.), զոր ԼՄ վրիպանօք թարգմանեն՝ այժմէն վաղվաղակի։ || * Այո՛ = Յ․ ուր ԼՄ ոչ ճշգրութեամբ գնեն՝ այո։ || * Զի հանգիցեն = Յ․ ոչ ճշգրիտ ԼՄ՝ փոխանակ հանգչելոյ։ || * Յաշխատութեանց = Յ, զոր ԼՄ գնեն յեզ.։ || * Քանզի = Յ․ վրիպանօք ԼՄ՝ բայց միայն, Ոսկան՝ չէ միայն։ || * Նոցա, յարմարագոյն քան ԼՄ՝ իւ-րեանց։ || * Ընդ նմա հետեւին․ աղաւաղեալ թուի յընդօրինակողաց․ նմա համարիմ վրիպակ գրչի, փխկ. նոսա․ ուստի ըստ Յ ուղղելի է՝ ընդ նոսա հետեւին = Յ ἀκολουθεῖ μετ᾽ αὐτῶν, կարի իմն հեւ-

լենարանութեամբ · հետեւել ընդ ումեք = ἀκολουθεῖν μετά τινος, օտարոտի է, հմմտ. վեր. համ. 4, եւ 6 · 8 հետեւել արկ. խնդ. : — ԼՄ ոչ ճշգրիտ՝ երթան զհետ նոցա, փխկ. երթան զհետ նոցա, առ ի յանդիման կալ ատենին ընդ նոսա, եւ զի վկայեսցեն վասն նոցա : — Հմմտ. սղ. 19 · 9 եւ Եր. 4 · 10 :

14· * Ահաւասիկ · ԼՄ ահա : || * Զի նստէր · ԼՄ լոկ՝ նստէր · Յ ընդհ. ներկ. — հմմտ. վեր. 1 · 13, եւ Դն. 7 · 13, Եզ. 1 · 26 : || * Ունելով = Յ ընդհ. ներկ., փխկ. որոյ ԼՄ դնեն լոկ՝ ես : || * Ի գլուխն · ԼՄ առանց դմրշ. յ. : Հմմտ. Սղ. 20 · 4 : || * Իւրում · ԼՄ + անէր : || * Սուր · ԼՄ սրեալ. հմմտ. վեր. 1 · 16, 2 · 12, եւ խոն. համ. 17, 18, եւ 19 · 15 : || * Յոյժ · թուի լինել յաւելուած յօտար ձեռանէ, տ. ներք. Բնգ. — պակ. ի Յ որպէս եւ ի ԼՄ :

15· * Ելանէր · ԼՄ նոյնպէս · Յ կար. : || * Ի յերկնից, ԼՄ յերկնից · համեմատ ոմանց ի Յուն. օրր., ուր Յ հանդոյն այլոց ձձ. դնէ՝ ի տաճարէն : Հմմտ. վեր. 11 · 19, եւ խոն. համ. 17 : || * Աղաղակելով = Յ ընդհ. ներկ., զոր ԼՄ փոխեն՝ աղաղակէր : || * Մեծաւ բարբառով · ԼՄ է յայն մէջ. առ այս տ. վեր. զծան. ի 5 · 2 : || * Որ նստէրն = Յ ընդհ. ներկ. (« նստելոյն », այսինքն՝ այնմ որ նստէրն) · այլակերպ ԼՄ՝ որ նստէր : || * Ամպոյն, ԼՄ–ք : || * Եկաս, ԼՄ եկն = Յ ἦλθεν, որ յաճախագոյնս թարգմանի՝ եկն (տ. օր. Մթ. 11 · 18, 19, 12 · 42, Յհ. 1 · 11, եւ այլուր ի Ս. Գիրս), դուն ուրեք՝ եկաս (տ. օր. Գծ. 11 · 5) : || * Հնձելոյ = Յ, փխկ. որոյ ԼՄ ոչ ճշդութեամբ դնեն՝ հնձոց : || * Քանզի չորացաւ հունձք երկրիս, բան առ բան ճշդիւ = Յ · ո՛չ ճշգրիտ փոխադրեն

ԼՄ՝ եւ հասեալ են հունձք երկրի, *թուի թէ բերեալ զնմանութիւն բանիցն Մկ.* 4.29 *«զի հասեալ են հունձք»* = ὅτι παρέστηκεν ὁ θερισμός. *իսկ* ἐξηράνθη *թարգմանի* չորացաւ, *զ. օր. Մթ.* 13.6, 21.19, *Ղկ.* 8.6. *սոյն Յուն. բայ, իբրեւ զկրւ., թարգմանի նաեւ յաճախ՝* ցամաքել (*զ. օր. Ծն.* 8.7, *Ես.* 19.5, *Յովլ.* 1.10, 12, *Մթ.* 21.20, *Մկ.* 4.6, 5.29, 9.17 (18), 11.20.21, *Յհ.* 15.6, 1 *Պտ.* 1.24, *եւն.*), *սակաւ ուրեք՝* զօսանալ (*զ. օր. Մկ.* 3.1), *եւ ներգործաբար՝* ցամաքեցուցանել (*զ. օր. Յկ.* 1.11)։

16. * Եւ եարկ զգերանդին իւր որ նստէրն ի վերայ ամպոյն (Յ որ նստէրն ի վերայ ամպոյն զգերանդին իւր) *մինչեւ* ցերկիր = Յ. *այս բովանդակ համար պակ. ի* ԼՄ. *այլ սակայն ըստ ծան. Զոհրապեանի՝ «Օրինակ մի յաւելու ... Եւ այլ որ նստէր ի վերայ ամպոյն՝ զգերանդին էարկ յերկիր, եւ հնձեր զամենայն բնակիչս երկրի։ Զոր Ոսկան եւս ունի այսպէս. հմր.* (16) *Եւ արկեալ որ նստէր ի վերայ ամպոյն զգերանդին իւր, եւ հնձեցաւ երկիր»։ — արդեւք սոյն յաւելուած ի Լ^մ^ յետո՞յ մուծեալ իցէ՝ ըստ օրինակի* Թ. *ո՛չ թուի ինձ անհաւանելի իրդ։ — Համմտ. Մթ.* 13.39 *հհ.*։

17. * Հրշտակ. *տ.* 3.1։ ||* Ել = Յ, *ուր* ԼՄ՝ *ելանէր*։ — *Համմտ. խոն.* 15.5։ ||* Աստուծոյ. *չիք ի* Յ *եւ ոչ ի* ԼՄ։ ||* Է. *ըստ իմաստին եւեթ եդեալ, պակ. ի* ԼՄ = Յ։ ||* Ունելով = Յ, *ուր* ԼՄ *ըստ կանոնի՝ եւ ունէր*։ ||* Նա = Յ, *դիպողագոյն քան* ԼՄ՝ *սա*։ ||* Սուր. ԼՄ *դրեալ տ. վեր. հմր.* 14։

18. * Հրշտակ. *տ.* 3.1։ ||* Ել = Յ. *գարձեալ դնեն* ԼՄ *յանկ., տ. ի նախընթաց հմր., իսկ*

Լամ = Թ։ ||*Որ ունէր. այսպէս եւ ԼՄ. ճշդիւ ըստ Յ ընդն. ներկ. անոր. պիտոյ էր՝ ունե-լով, տ. վեր., որպէս սովոր է Թ թարգմանել. սա-կայն թուի թէ նախադաղափար Յուն. պատճէնն ունէր որոշ. յօդիւ՝ ὁ ἔχων, զայսմանէ տ. զՀամե-մատութիւն Յուն. օրր.։ ||*Ձայնեաց մեծաւ բար-բառով (տ. վեր. գծան. ի 5.2) այն որ ունէր (Յ ընդն. ներկ.՝ «ունողին») զգերանդին սուր՝ առելով. թարգմանութիւն բան առ բան = Յ. այլաբար ԼՄ՝ աղաղակեաց է ձայն մեծ առ + հրեշտակն՝" որ ունէր զգե-րանդին սուր՝ եւ ասէր. — ձայնել — որ ըստ կաղ-մութեան ճշդիւ ի դէպ գայ Յուն. բային φωνεῖν (ἐφώνησεν = ձայնեաց), ածանցեալ ի գոյականէն φωνή, ձայն. ուստի թերեւս վասն սորին իսկ պատ-ճառի նախամեծար ընտրեալ ի Թարգմանչէն — ի Հայ. Ածչ. Մատ. երկիցս միայն գտանի, 2 Թգ. 20.4. «Եւ ասէ Դաւիթ ցԱմեսայի. ձայնեա՛ առ իս (= βόησόν μοι) զամենայն այր Յուդայ», ուր, ըստ ծան. Զօհրապեանի, ոմանք յօրր. «ի լուս. նշանա-կեն. ի Սիմաքոսէ՝ Կոչեա դու առ իս» եւն., եւ Ն. «եւ գնաց Ամեսայի ձայնել (τοῦ βοῆσαι) զՅուդա». ըստ այսմ ձայնել եդեալ է = βοᾶν, որ այլուր թարգմանի նաեւ աղաղակել (զ. օր. Մկ. 15.34, Ղկ. 18.7, Գծ. 8.7, Գղ. 4.27) եւն.։ Դարձեալ պատահէ ուրեք ուրեք եւ յայլ մատենագրու-թիւնս Նախնեաց, տ. զՆԲՀԼ. ի բ. «Ձայնել . . . Ձայն տալ. ձայն արձակել. կոչել. գոչել. հրաւի-րել. կարդալ. անուանել . . . . Ձայնէ զխորհրդակիցսն [= ի խորհուրդ կոչէ]։ [Եւ ի ձեռն թարգման-չաց] ձայնէ ի բանակն Արտաշէսի. Խոր. ա. 25։ բ. 47 [Ա. իզ. էջ 112, եւ Բ. ծ. էջ 273, տպ. Վենետիկ

1881]։ Մարգարէն ձայնէ. Անյ. Բուզք. [Մատենագրութիւնք, տպ. Վեն. 1833, էջ 103, նաեւ «Եւ ես զնոյն ձայնեմ]։ Ձայնէն միաբան՝ ասելով, եւ ընդ հոգւոյդ քում։ Զթշնամանացն միշտ ձայնել անուն. Խոսք։ Ձայնես չլսողիս ...... Նոքք։ Ձայնէր զամենեսեան յերկնաւոր ընթրիսն. Ծ. [Ծառընտիր] Բ։ Հակառակ անուամբ ձայնելի. Պէտ։ Խնդրեաց ձայնող (երգիչ, կամ քնարահար). Եփր. Բէ։» — Յայս կոչմունս յաւելլի է, ի մէջ այլոց, եւ զհետագայս. «Քանզի ոչ դանդաղին գիրք սովին անուամբ ձայնել զՏէր մեր», Կան. Ս. Սահակայ, Սոփ. Հայկ. Բ, էջ 101. — «Իսկ իսկական աստուածութիւնն ի ծածկութեանն ի վերոյ քան զտարրական նմանութիւնս եւ զձայնել զազդեցութիւնս» եւն., հմմտ. անդ խոն. «բարբառեալ եւ զազդեցութիւնս», Ագաթանգ., տպ. Վեն. 1862, էջ 208։ — Ի սմին վայրի ἐφώνησεν, ձայնեաց, որկ. խնդրով է (այլուր՝ ներգործաբար՝ առնու զհյց. խնդ.), ըստ այսմ այն որ մարթի լինել կամ՝ այնմ որ, համեմատ Յ, եւ կամ՝ զայն որ։ — ՅԱծշ. Մատ. պէսպէս օրինակաւ թարգմանի բառդ φωνεῖν. 1) աղաղակել (զ. օր. 1 Եզր. 4. 41, 9. 10, Ես. 24. 13, Դն. 5. 7, Ղկ. 16. 24), 2) կոչել, այլեւայլ առմամբք (զ. օր. Մթ. 20. 32, Մկ. 9. 34(35), 10. 49, Ղկ. 14. 12, 16. 2, 19. 15, Յհ. 1. 48, 12. 17, 18. 13, Գծ. 10. 18, 16. 28), 3) կարդալ (զ. օր. 1 Եզր. 8. 92(93), Մթ. 27. 47, Ղկ. 23. 46), 4) գոչել (Սփ. 2. 14), 5) բարբառել (Դն. 4. 11, Ղկ. 8. 54(55)), 5) ասել (1 Եզր. 9. 47, Տոբ. 5. 8, Ղկ. 8. 8), 6) խօսել (Սղ. 113(115). 5, 134. 16, Թուղթ Եր. 41), նաեւ խօսել ձայնիւ (Մթ. 26. 34,

74, 75, Մկ. 14·30, 68, 72, եւն.), նմանապէս 7) ձայն առնել («ձայն արար կաքաւ», Եր. 17·11), եւ այլ եւս։ ||* Առաքեա՛ զգերանդին քո սուր եւ = Յ. զայս հատուած, որ պակ. ի ԼՄ, ունի եւ Ոսկան ճշդիւ համաձայն Թ. ||* Զողկոյզ, Թերեւս վրիպակ գրութիւն փխկ.՝ ըղկոյզ, որպէս ունին ԼՄ = Յ. — Յ + որթոյ (հմմտ. Երգ. 7·8 «իբրեւ ողկոյզս որթոյ»), փխկ. որոյ ԼՄ ոչ ճշգրիտ դնեն՝ յայգւոյ, որպէս յորթոյ այգւոյ («Այգի. Որթ այգւոյ . . . ըստ համաձայնութեան յն. ἄμπελος», ՆԲՀԼ. ի բ.). սակայն ἄμπελος առ հասարակ Թարգմանի որթ (գ. օր. ՄԹ. 26·29, Մկ. 14·25, Ղկ. 22·18, Յհ. 15·1, 4, 5, Գծ. 7·41, Յկ. 3·12), իսկ այգի սովորաբար = ἀμπελών (գ. օր. ՄԹ. 20·1, 2, 7, 8, 21·28, 33, 39, 40, 41, Մկ. 12·1, 2, 8, 9, Ղկ. 13·6, 20·9, 10, 13, 15, 16, 1 Կր. 9·7). — ի յաջորդ համ. Թ եւս դնէ զայգի փխկ.՝ զորթ։ — Այս յաւելուած՝ որթոյ պակ. Նաեւ ի Յուն. օր. միում։ ||* Երկրի = Յ, ուր ԼՄ՝ երկրէ։ ||* Խաղող (հմմտ. յայլոց միջի Ծն. 40·10, 11, 49·11, Թւ. 6·3, Եր. 8·13, ՄԹ. 7·16, Ղկ. 6·44) նորա = Յ, զոր ԼՄ անդէպ փոխեն ի՝ խաղողք է դմա։ — Հմմտ. Եր. 2·21։

19. * Կթեաց = Յ, զոր ԼՄ դնեն յանկ.։ ||* Զայգի = Յ, այսինքն՝ զորթ, տ. ի Նախընթաց համ. — ԼՄ անճիշդ՝ զխաղող։ ||* Երկրիս = Յ, փխկ. որոյ ԼՄ ոչ ճշգրիտ դնեն՝ Նորա, ըստ Լա՛՝ է նմա։ ||* Արկ = Յ, դարձեալ ԼՄ անկ.։ ||* Ի հնձանն մինչեւ ցԱստուծոյ, ըստ իմաստին = Յ, որ ունի ճշդիւ բան առ բան զայս օրինակ՝ ի հնձանն բարկութեանն (կամ՝ ցասմանն, զորմէ տ.

վեր. գծան. ի հմր. 8) Աստուծոյ ի մեծն. — իսկ ԼՄ բցթ. գրաւդ. բարկութեանն, եւ ունին՝ է հնձանն Աստուծոյ է մեծ (Մ չունի է մեծ ի բնաբանին, այլ սակայն ի մեկնութեան անդ, յէջն 207, ասէ՝ « Հնձան Աստուծոյ ասէ զդժոխսն . . . , եւ մեծ՝ վասն բազմաց որ ի նմա տանջին »). — Համեմ. սա. 19 . 15, եւ Ես. 63 . 2, 3.

20. * Եւ = Յ, անճիշդ ԼՄ՝ Եղանէր. || * Արիւնն (ճշգրտագոյն ըստ Յ՝ արիւն, որպէս գրէ եւ Բ) ի հնձանէն = Յ. իսկ ԼՄ հակադարձեն՝ է հնձանէն արտաքոյ. || * Ձիոցն = Յ, ուր ԼՄ՝ Ձիոյն. իսկ Ոսկան գնէ համեմատ ԹՅ. || * Իբրեւ (չունի Յ) ասպարիզաւք հազար եւ վեցհարիւր = Յ (համեմ. Յհ. 11 . 18 ὡς ἀπὸ σταδίων δεκαπέντε = « իբրեւ ասպարիսօք հնգետասան), զոր ո՛չ այնչափ իմն ճահաւոր շրջաբանութեամբ բացատրեն ԼՄ այսպէս՝ Եւ երկայնութիւն նորա հազար եւ վեց հարիւր ասպարէս. — Մ էջ 208 պարզաբանէ այսպէս՝ « Արդ՝ արիւն կոխելոցն հասանէր ի հազար եւ ի վեց հարիւր ասպարէզ, մինչեւ ի սանձս ձիոյն » եւն. — իսկ Բերդ. էջ 236 ի բնաբանին գնէ՝ « եւ երկայնութիւն նորա հազար հարիւր եւ վեց ասպարէզ ». եւ իջեալ փոքր մի ի խոնարհ, յէջն 237, ասէ. « Աստ ծանիր, զի որ ի վեր գրի հազար հարիւր վեց, յայլս [?] գրի հազար վեց հարիւր ասպարէզ », որով թուի ակնարկել զընթերցուածն Ոսկանայ՝ հազար հարիւր եւ վեց ասպարէզ, որ առանց երկմտութեան վրիպակ գրութիւն է.

ԺԵ. 1. *Ցերկինս = Ց, զնց. Լ, *իսկ կայ ի* ԼոմՄ. — *Նման* 12.1,3. || *Հրշտակս (*տ.* 3.1) եւթն. ԼՄ *նոյնպէս. յայտ է թէ հյց. խնդ. Նախընթաց բային* տեսի. *Տ. ստ.* 17.1. || *Ունելով = Ց *ընդն. Ներկ., զոր* ԼՄ *փոխեն՝* [illegible]. || *Արարած զհարուածս, որ Նշանակէին եւթն չարագոյնս քան զամենայն չար. *բովանդակապէս ապաւաղեալ, օտարոտի անիմաստ յաւելուածովդ՝* արարած, *եւ լուսանցագիր մեկնողական ծանօթութեամբդ՝* որ Նշանակէին *եւն., որ — թուի թէ սոսկապէս արդիւնք թիւրիմացութեան բնագրին — յետոյ ապա անգիտութեամբ ի Ներքս մուծեալ է ի բնաբանն. ըստ* Ց *ուղղելի է այսպէս՝* հարուածս (*լաւ եւս՝* զհարուածս) եւթն զվերջինս (*կամ՝ զյետինս*), *այն* «վերջին հարուածք» *հակակային ի վեր անդր* 9.20 *ասացելոց՝* «վիրաւքս այսոքիւք», *կամ՝* «*է հարուածոցս յայսցանէ*». *հմմտ.* զ«հարուածս եւթնպատիկ» *Ղեւ.* 26.18, 21, 24, 28. — *Վրիպանօք թարգմանեն* ԼՄ՝ [illegible]. || *Այնոքիւք. ԼՄ՝ [illegible]. || *Կատարեցաւ = Ց, *զոր* ԼՄ *դնեն յանկ.* *Տ. վեր. ի* 10.7. || *Ցասումն. ԼՄ [illegible] (Ն Լոմ). *տ. վեր. զծան. ի* 14.8.

2. *Իբրեւ. ԼՄ [illegible]. *տ. վեր. ի* 4.6. || *Զյաղթող. *թուի թէ վրիպակ գրութիւն փխկ.՝* զյաղթողս = Ց, *ուր* ԼՄ *փոխելով զյօրինուած բանից դնեն՝* [illegible]. || *Պատկերի Նորա եւ թուոց (*վրիպակ, ուղղելի՝* թուոյ) անուան Նորա, *բառ առ բառ* = Ց. *իսկ* Լ *փոփոխմամբ կարգի բառից շարադասէ այսպէս՝* [illegible] Նորա՝ [illegible] Նորա. *սակայն* ԼոմՄ *ունին համաձայն* ԹՑ.

— ԼՄ + Խ– դրոշմ նոցա ։ Համմտ. վեր. 12 · 11, 13 · 15, 17, 18, եւ ներք. 16 · 2 ։ ‖ ✱ Զի կային = Ց ընդն. անց., ուր ԼՄ՝ նոքա կային ։ ‖ ✱ Ապակեղէն ծովուն · Ց եւ ԼՄ միապէս ունին՝ ծովուն ապակեղինի ։ ‖ ✱ Ունել, անշուշտ վրիպակ գրչի, ուղղելի՝ ունելով = Ց ընդն. ներկ. — ԼՄ՝ Խունէին ։ — Համմտ. վեր. 5 · 8 ։

3. ✱ Երգէին · այսպէս եւ ԼՄ, ուր Ց ներկ. ։ ‖ ✱ Զերգս (առջ. եւ երկր.) · ԼՄ նոյնպէս · Ց եզ. ։ Համմտ. վեր. 5 · 9 — 13 ։ — «Երգ Մովսիսի» տ. Ել. 15 · 1 — 21 · «Յայնժամ երգեաց Մովսէս եւ որդիքն Իսրայելի զօրհնութիւնս զայս Աստուծոյ, եւ ասեն», եւ որ զկնի ։ ‖ ✱ Ծառային = Ց, փխկ. որոյ ԼՄ վրիպանօք դնեն՝ առաջի · իսկ Ոսկան ունի՝ ծառայէ · — Համմտ. Ել. 14 · 31, Թի. 12 · 7, Յես. 14 · 7, 22 · 5 ։ ‖ ✱ Ասելով · ըստ արտաքոյ կարգի սովորութեան ԼՄ եւ Թ միակերպ օրինակաւ թարգմանեն զՑ ընդն. ներկ. — ԼՄ + Իե ։ ‖ ✱ Մեծ · ԼՄ Ծծածծ · երկոքին եւս թարգմանութիւնք ի ճահ գան = Ց ։ — Համմտ. Սղ. 111 · 2 «Մեծ են գործք Տեառն» եւն., 138 · 14 «Սքանչելի են գործք քո» եւն. ։ ‖ ✱ Են (առջ.) · այսպէս եւ ԼՄ · չիք ի Ց · թուի թէ եւ Թ ի բնէ չունէր զէական բայդ, տ. զծան. ներք. Բնգ. ։ ‖ ✱ Ամենակալդ · ԼՄ առանց դմրչ. յ. ։ ‖ ✱ Արդար · ԼՄ + Խ– = Ց ։ ‖ ✱ Են (երկր.) · ԼՄ նոյնօրինակ · չունի Ց, տ. վեր. ։ ‖ ✱ Գործք (երկր.) · Թերեւս վրիպակ ընդօրինակողաց, փխկ.՝ ճանապարհք, որպէս ունին ԼՄ = Ց ։ — Համմտ. խոն. 16 · 7, եւ Սղ. 144 · 17 «Արդար է Տէր յամենայն ճանապարհս իւր, եւ սուրբ է յամենայն ի գործս

իւր», Երկ. 32.4 «Աստուած որոյ ճշմարիտ են գործք նորա, եւ ամենայն ճանապարհք նորա իրաւամբք» եւն.: ||*Ազգաց = Ց, փխկ. որոյ ԼՄ ամենայն հեթանոսաց: — Համմտ. Զք. 14.9 «Եւ եղիցի Տէր Թագաւոր ի վերայ ամենայն երկրի», եւ Եր. 10.7 «Թագաւոր ազգաց»:

4. *ՈՎ. ԼՄ Նխդ. Ես, եւ յաւ.՝ ով. τίς, իբրեւ հրցկն. ան., Թարգմանի մերթ՝ ո՞վ (Մթ. 12.11, եւն.), եւ մերթ՝ ո՞վ որ (Ղկ. 15.4), կամ՝ ո՞ (Մթ. 3.7, եւն.), եւ ո՞ որ (1Կր. 2.11): ||*Երկիցէ. Ց + Տէր, զոր ունի եւ Լ, բայց եդեալ յանպատեհ տեղւոջ՝ ոչ ճշգրիտ ի հյց.՝ զկնի յաջորդ բառին, տ. խոն.: — Միաբան ընդ Թ չունին զյաւելուածդ նաեւ ոմանք ի Յուն. ձձ. եւ ի Թարգմանութեանց (տ. զՀամեմատ. Յուն. օրր.): ||*Զանուն = Ց, ուր Լ՝ զՏէր անուան (տ. վեր.), ըստ ԼմՄ՝ զօրութիւն անուան: — Համմտ. Եր. 10.7 «Ո՞ ոչ երկիցէ ի քէն, Թագաւոր ազգաց»: ||*Միայն. ԼՄ Նխդ. դու, զոր Ց եւս չունի: ||*Ես, համեմատ ոմանց ի Յուն. օրր. — Ց եւ ընդ նմին Լ բցթ., հանդոյն բազմաց ի Յուն. ձձ. իսկ ԼմՄ դնեն Ես յառաջ քան զօրութե: — ԼՄ + Ես արժանէ Երկիրպագեսցեն. այս յաւելուած պակ. նաեւ ի Ց: ||*Ազգք. պատշաճագոյն ըստ Ց քան զԼՄ՝ հեթանոսք: ||*Քո (երկր.). ԼՄ + Տէր, որ պակ. եւ ի Ց: — Այս՝ ըստ օրինակի Սղ. 85.9 «Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն եւ երկիր պագցեն առաջի քո, եւ փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան»: ||*Զի արդարութիւնք քո յայտնեցան. ճշդիւ բան առ բան = Ց. ոչ ամենեւին ճըշգրիտ Թարգմանեն ԼՄ՝ յորժամ արդարութիւնն քո յայտ-

Նեղցէ · — Ց τὰ δικαιώματα, արդարութիւնք (Հմմտ. ստ. 19·8), այսինքն՝ արդարագործութիւնք, արդար դատավճիռ՝ դատաստան (ի վերայ չարաց) (Հմմտ. Սղ. 49·16, 88·32, 118·5, 24, 26, 27, եւ ստէպ ի Ս. Գիրս), այլուր թարգմանի եւ՝ իրաւունք (Ծն. 26·5, Ել. 15·25, 26, 21·1, Ղեւ. 25·18, եւ բազում ուրեք յԱծչ. Մատ.), այլովքն հանդերձ։

5· * Անաւասիկ · պակ. ի ԼՄ եւ ի Ց։ Ընդ թ· միարան գտանին ոմանք ի թարգմանութեանց (զորոց տ. ի Համեմատ. Ցուն. օրր.)։ || * Տաճարն · ԼՄ նխդ.՝ ջոցոս = Ց։ — Տ. վեր. 11·19։ || * Տաղաւարին · ճահաւոր եւս թուի արդեւք ԼՄ՝ խորանին · տռ այս տ. վեր. գծան. ի 13·6։ || * Ցերկինս = Ց · աւելորդաբար ԼՄ նխդ.՝ որ էր (ըստ ԼոմՄ՝ որ է) է։

6· * Ելին = Ց, զոր ԼՄ գնեն յանկ.։ || * Իտաճարէն = Ց, միայն թէ սա դնէ զայդ զկնի հետագայ բառին հարուածս · — ԼՄ վրիպակաւ ունին՝ է փոխարէն (ըստ Լոմ՝ է փոխարէն), չփոթմամբ տեղափոխեալ, տ. խոն.։ || * Հրշտակք (տ. վեր. 8·1) · ԼՄ հրեշտակ · ըստ Ց ճշգիւ՝ հրեշտակքն։ || * Որք ունէին · ԼՄ որ ունէին · Ց ընդն. ներկ. («ունելով»)։ || * Զեւքն = Ց · ոչ ճշգրիտ ԼՄ՝ եւքն։ || * Զգեցեալ = Ց · չէր հարկ ի դիմ. բայ փոխել ըստ ԼՄ՝ + եւ" զգեցեալ + էին, յոր յարեալ յաւ.՝ է փոխարէն(–րէն Լոմ), տ. վեր.։ || * Կտաւս · այսպէս եւ ԼՄ · իսկ Ց եզ. — ԹԼՄ = Սինէական օր.։ || * Սուրբս · ԼՄ մաքուրս · Ց եզ. καθαρόν (յոլովագոյնս = սուրբ, զ. օր. Մթ. 23·26, 27·59, Եհ. 13·10, Հռ. 14·20, եւն.)։ || * Եւ (երկր.) · ունին նոյնպէս ԼՄ, համեմատ

ոմանց ի Յուն. օրր. — Ց զնց., հանգոյն այլոց ձձ.։ || * Սպիտակս. ԼՄ պայծառս. երկոքին ևս ճահաւոր են. Յուն. λαμπρός ի Ս. Գիրս թարգմանի թէ՛ սպիտակ (գ. օր. Ղկ. 23 . 11, Գծ. 10 . 30), և թէ՛ պայծառ (գ. օր. Սիր. 33 . 13 (30 . 25), Յկ. 2 . 2), ուրեք և լուսաւոր (Իմ. 6 . 12(13))։ — Հմմտ. 1 . 13, 4 . 4, 7 . 9, 13, 17 . 4, 18 . 16, 19 . 8, 14, ևս և Եզ. 9 . 2։ || * Պնդեալ ոսկի գաւտւով զլանջս իւրեանց. ըստ բառին և ըստ իմաստին ընտիր և դիպողագոյն թարգմանութիւն = Ց որ ունի ճշդիւ բան առ բան զայս օրինակ՝ պնդեալ զմէջս առ լանջաւքն գաւտեաւք ոսկւովք (περιεζωσμένοι περὶ τὰ στήθη ζώνας χρυσᾶς), հմմտ. վեր. 1 . 13 « առ կրծաւքն ածեալ կամար ոսկի (περιεζωσμένον πρὸς τοῖς μαστοῖς ζώνην χρυσᾶν). — ԼՄ, գրեթէ զնոյն բան երկրորդեալ որպէս վեր. 1 . 13, ոչ ճշգրիտ և մրիպանօք իմն թարգմանեն այսպէս՝ գօտեւորեալք էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս. այլ սակայն τὰ στήθη չէ՛ = ստինք (որ է մանաւանդ μαστός, տ. զծան. ի 1 . 13), այլ թարգմանի՝ լանջք (գ. օր. Ծն. 3 . 14, Ել. 28 . 29, 30, Յոբ. 39 . 20, Ան. 6 . 10, 24 . 33, Դն. 2 . 32, Յհ. 13 . 25, 21 . 20), և մերթ՝ կուրծք (գ. օր. Ղկ. 18 . 13, 23 . 48)։

7. * Մի ոմն = Ց, բցթ. ԼՄ. Տ. վեր. 4 . 6—8։ || * Ետ = Ց. ի կրկ. դարձուցանեն ԼՄ՝ փոխանակ։ || * Հրշտակացն. ԼՄ հրեշտակացն. տ. վեր. զծան. ի 3 . 1։ || * Բաժակս. լաւ ևս ԼՄ՝ սկաւառակս. — զՅուն. φιάλη ամենայն ուրեք, ստտ որպէս վեր. 5 . 8 և ստ. 16 . 1, 2, 3, 4, 8, 10, 12, 17, 17 . 1, 21 . 9, Թ բացատրէ բառիւս բաժակ, իսկ ԼՄ ունին 5 . 8

միում եւ ոմանց ի թարգմանութեանց. իսկ ԼՄ եւ Յ միաբան ընդ այլ Յուն. ձձ. ունին՝ է պահոբեն։ ‖ * Եւբն հրշտակացն (տ. վեր. 3·1)· ճշդիւ = Յ. — ԼՄ չեարին հրեշտակն։ ‖ * Եւ (երկր.) = Յ, պակ. ի ԼՄ։ ‖ * Ձեաւբն. ԼՄ՝ ձեռին։ ‖ * Բաժակ. ԼՄ սկահակաւ. տես այս տ. վեր. ծան. ի 15·7։ ‖ * Ցասմանդ = Յ. նմանապէս ԼոմՄ՝ ցասմանն, ուր Լ անճիշդ՝ ցասմամբն։ տ. վեր. 14·8 եւ 15·7։ — ԼՄ + յերկիր = Յ։ — Համմտ. Եր. 10·25, Սփ. 3·8, եւ Ել. 7–10։

2. * Առաջինն = Յ, ուր ԼՄ՝ առաջին + հրեշտակն։ ‖ * Զբաժակն. ԼՄ զսկահակ. տես այս տ. վեր. ծան. ի 15·7։ ‖ * Եղեն. ԼՄ եղեւ = Յ։ ‖ * Վէրք = Յ ἕλκος, այսպէս թարգմանի նաեւ 4 Թգ. 20·7, Ղկ. 16·21, այլուր՝ կեղ, Ել. 9·9, 10, 11, Ղեւ. 13·18, 19, 20, 22, 23, 27, Երկ. 28·27, 35, Յոբ. 2·7. — ԼՄ վրիպանօք դնեն՝ հարուածք։ Համմտ. Ել. 9·9—10, Երկ. 28·35։ ‖ * Մեծամեծք եւ չարաչարք = Յ κακὸν καὶ πονηρόν, ըստ ինքեան աւելադրութիւն, վասն որոյ փխկ. երկոցունց նոյնանշան բառից ի դէպ դնեն ԼՄ լոկ՝ չարաչար։ Համմտ. վեր. 13·15—17, 14·9։

3. * Երկրորդն = Յ, փխկ. որոյ ԼՄ՝ երկրորդ + հրեշտակն. տ. համր. 2։ ‖ * Զբաժակն. ԼՄ զսկահակ. տ. ծան. ի 15·7։ ‖ * Եղեւ արիւն իբրեւ սպանելոց (թուի թէ վրիպակ գրչաց, ընթեռնլի՝ սպանելոյ, սակայն ըստ Յ ճշդիւ թարգմանելի էր՝ զմեռելոյ) = Յ. թիւրիմացութեամբ կամակորեն ԼՄ՝ դարձան + ջուրքն" յորժամ մեռանել։ ‖ * Կենդանի. ԼՄ նխդ.՝ շունչ = Յ։ Համմտ. Ծն. 1·30։ ‖ * Մեռաւ՝ որ ի ծովուն էին. ճշդիւ =

Ց, միայն թէ սա չունի էին. իսկ ՂՄ այլազգ կարգեն՝ որ եր է ծովու՝ առաջնեցաւ։ Համմտ. վեր. 8.8—9, եւ Ել. 7.17—21։

4. * Երրորդն = Ց, ուր ՂՄ դարձեալ՝ եր- բորբ + հրեշտակն, տե. հմր. 2 եւ 3։ || * Եճեղ. ՂՄ + շնչաւորաց էր. կարծեմ թէ վրիպանօք անփու- թութեան ընդօրինակողաց պակ. ի Թ զբաժակն իւր, տե. հմր. 2, 3, 8, 10, 12, 17։ || * Ջուրց. ՂՄ Ջրոյ։ Համմտ. վեր. 8.10, 11.6, եւ Ել. 7.19 հ.։

5. * Ի հրշտակէն. տե. ի 3.1։ || * Ջրոց = Ց, զնց. ՂՄ։ Ցաղագս «հրեշտակին ջրոցն» համմտ. Ցհ. 5.4։ || * Ես = Ց. վրիպանօք ՂՄ՝ ե։ || * Էն՝ էդ. ՂՄ որ էնն եւ ե. սխալ թարգմանու- թիւնք. ըստ Ց ընթեռնլի է՝ որ էն եւ որ էրն, տե. վեր. գծան. ի 1.4, 8, 4.8, 11.17։ || * Սուրբդ = Ց. ոչ ճշգրիտ եւ յաւելուածովք ՂՄ՝ + եւ" սուրբ + է քործս էր։ Համմտ. վեր. 15.4։ || * Զի զայս (ըստ Ց ճշդիւ՝ այսպէս) դատեցար = Ց. այլակերպ ՂՄ՝ չէ այսպէս դատեցաւ։ Համմտ. վեր. 6.10։

6. * Զի. ՂՄ նխդ.՝ հասն։ || * Զարիւն. ՂՄ նոյնպէս. միաբանին ոմանց ի Ցուն օրր. — իսկ Ց ըստ այլոց ձձ. դնէ ի յդ.։ || * Մարգարէից, ՂՄ–ն. սոքա նխդ.՝ շուրէսն, զոր չունի եւ Ց։ Համմտ. սա. 18.24, եւ Սղ. 78.2—3։ || * Հեղին. ՂՄ + ամդարէշտ, որ պակ. նաեւ ի Ց։ || * Եւ եսուր մինչեւ արժանի էն, ճշդիւ = Ց. այլով օրինակաւ եւ ոչ ճշգրիտ փոխեն ՂՄ՝ հասն այնորէն արէսն եփ ըմպել նոցա ըստ արժանեացն։

7. * Ի սեղանոյն = Ց. — ՂՄ (Ղամ + յայն) է սեղանոյ(ն Ղամ) + անդէ (պակ. ի ՂամՄ)։ Տ. վեր. 14.18։ || * Ամենակալդ. ՂՄ առանց դմրշ. յ.։

|| * Ճշմարիտ եւ արդար = Յ․ շրջելով զկարգ բառից LM՝ ուղղոյ ես ճշմարտէք ։ || * ԵՆ․ այսպէս եւ LM․ չիք ի Յ ։ — Հմմտ. 6․10, 15․3, 19․2, եւ Սղ. 18․10 « դատաստան Տեառն ճշմարիտ է, եւ արդար ի նոյն » ։

8. * Չորրորդն = Յ․ — LM չորրորդ + հրեշտակն, տ. հմր. 2, 3, 4 ։ || * Հեղոյր․ LM եհեղ = Յ ։ || * Զբաժակն իւր = Յ․ ոչ ճշգրիտ LM՝ է սկաւառակէ կուժն․ տ. զծան. ի 15․7 ։ || * Արեգակն․ LM առանց դմրշ. յ․ ։ || * Տապացուցանել. LM խորշակաւոր առնել․ ճահաւոր են երկոքին եւս թարգմանութիւնք․ — Յուն. καυματίζειν, որ ի Յուն. Հ. Կ. (ի Թարգմանութեան Եւթանասնից) բնաւ ոչ ուրեք ի կիր արկանի, ի Նորումս ներգործաբար միայն մի անգամ եւեթ, ի սմին վայրի, գտանի․ իսկ իբրեւ զկրաւ․ երիցս, ի յաջորդ հմր. եւ Մթ. 13․6, ուր թարգմանի՝ տապանալ, եւ դարձեալ Մկ. 4․6, փոխեալ ի Հայ՝ ջեռնուլ․ ուստի դիպողագոյնս պաշտի Թ բառիւս տապացուցանել (= տալ տապանալ [= « տապով իւիք տանջիլ․ տապիլ․ տապակիլ․ խորովիլ․ տոչորիլ․ ջեռնուլ․ ջերանիլ․ անձիլ․ պապքիլ․ պապակիլ », ՆԲՀԼ. ի բ.]․ ջեռուցանել․ կիզուլ », ՆԲՀԼ. ի բ.) ։

9. * Տապացան․ LM նոյնպէս․ տե. այս տ. զծան. ի նախընթաց հմր. ։ || * Ջտապումն (ոչ նշանակեալ ի ՆԲՀԼ., իսկ Առձեռն Բռ. Հայկ. Լ. ունի զբառդ)․ վայելչագոյն թուի ինձ (ըստ Յ καῦμα, որ ի Ս. Գիրս թարգմանի՝ տապ, Դն. 3․66, խորշակ, Առ. 10․5, Սիր. 14․27, յոլովագոյնս՝ տօթ, Ծն. 8․22, 31, 40, Երկ. 32․10, 2 Թգ. 4․5, այլովքն հանդերձ) քան զLM՝ է տապ ։ — Յ եւ

ԼՄ միապէս + Դծ։ ‖ * Զանուն Աստուծոյ = Յ. ուր ԼՄ լոկ՝ զԱստուած։ ‖ * Որ ունէր. ըստ յօրինուածոյ բանի յարմարագոյն քան զԼՄ՝ որ ունի. Թէպէտ եւ Յ ընդհ. ներկ.։ — Տ. վեր. 13. 6։ ‖ * Իշխանութիւն. այսպէս եւ ԼՄ. ըստ Յ լաւ եւս էր՝ զիշխանութիւն։ ‖ * Զղջացան. ԼՄ ապաշխարեցին. առ. այս տ. վեր. գծան. ի 2. 5։ ‖ * Տալ նմա փառս, ճշդիւ = Յ. ոչ ի դէպ ԼՄ դնեն լոկ՝ է փառս, յոր յարեալ յաւ.՝ Աստուծոյ։ — Համմտ. վեր. 9. 20, 21, 11. 13։

10. * Հինգերորդն = Յ. — ԼՄ հինգերորդ + հրեշտակն. տ. վեր. համ. 2, 3, 4, 8։ ‖ * Զբաժակն իւր = Յ, զոր ԼՄ դարձեալ այլափոխեն՝ է [illegible], տ. վեր. համ. 8, եւ գծան. ի 15. 7։ ‖ * Սաստիկ. չիք ի ԼՄ եւ ոչ ի Յ։ ‖ * Ի ... ցաւոյն = Յ. այլազգ եւ նախակարգ յաւելուածով ԼՄ՝ + յոխորտ" ցաւոցն։ — Համմտ. Յ. 12, 9. 2, եւ Եղ. 10. 22, Ես. 8. 22։

նոցա հուր ելանէր եւ ծուխ եւ ծծումբ ։ [18] Եւ 18
ի հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ մասն
մարդկան, ի հրոյն եւ ի ծխոյն եւ ի ծծմբոյն՝
որ ելանէր ի բերանոյ նոցա ։ [19] Զի իշխանութիւն 19
ձիոց էր ի բերանս նոցա եւ յագի նոցա․ եւ
ագիք նոցա նման աւձի, եւ ունէին գլուխս՝ որով
սատակէին զամենեսեան ։ [20] Եւ այլ ո՛չ եւս մեռան 20
ի մարդկանէ ի վիրացս յայսցանէ, եւ ո՛չ ապաշ-
խարեցին, եւ ո՛չ դարձան ի գործոց ձեռաց իւ-
րեանց, եւ յերկրպագութենէ դիւաց եւ կռոց իւ-
րեանց՝ յոսկեղինաց եւ յարծաթեղինաց եւ ի պղն-

---

13 լուա | չոյ | 14 Ի Լեբու | 16 լուա |; 19 իշխանութիւն ձիոյ |

ծեաց եւ ի քարեղինաց եւ ի փայտեղինաց, որ
ո՛չ տեսանել կարեն եւ ո՛չ լսել, եւ ո՛չ գնալ.
21 [21] եւ ո՛չ ապաշխարեցին ի մարդասպանութենէ եւ
ի դեղատուութենէ եւ ի պոռնկութենէ եւ ի գի-
ջութենէ իւրեանց։

Ժ Ժ. — [1] Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր
յերկնից, եւ ծածկեալ էր զինքն ամպով, եւ էր
ծիածան ի վերայ գլխոյ նորա, եւ երեսք նորա
իբրեւ զարեգակն, եւ ոտք նորա իբրեւ զսիւն
2 հրոյ։ [2] Եւ ունէր ի ձեռին իւրում գիր բացեալ. եւ
եդ զոտն իւր զաջ ի վերայ ծովու, եւ զձախ ոտն
3 ի վերայ ցամաքի. [3] եւ աղաղակեաց ի ձայն մեծ,
եւ գոչեաց իբրեւ զառիւծ։ Եւ յորժամ աղաղա-
կեաց՝ խաւսեցան եւթն որոտմունք յիւրեանց
4 ձայնս։ [4] Եւ յորժամ խաւսեցան եւթն որոտմունքն
զառ ի յապա գալոցն, եւ լուայ ձայն յԱստուծոյ
ի յերկնից՝ զի ասէր. կնքեա՛ զոր խաւսեցան
5 եւթն որոտմունքն, եւ մի՛ զդոսա գրեր։ [5] Եւ
հրեշտակն, զոր տեսի՝ որ եդ զոտն իւր ի վերայ
ծովու, եւ զմիւսն ի վերայ ցամաքի, համբարձ
6 զձեռն իւր զաջ յերկինս, [6] եւ երդուաւ ի կեն-
դանին յաւիտենից, որ հաստատեաց զերկինս եւ
որ ի նմա, զերկիր եւ որ ի նոսա, զծով եւ զա-
մենայն որ ինչ ի նմա, զի ո՛չ եւս կայ այլ ժա-
7 մանակ, [7] այլ յաւուրս ձայնի եւթներորդ հրեշ-
տակին, յորժամ հարցէ զփողն, կատարեսցի խոր-

Ժ. — 1 ի Վէրս | նորոյ (սաղ.). ձ. ի լուսանցս. ի բուն խոկ գրչէն. եզեալ ունի՝ իւրոյ | 2 ի Վէրս (երկոքին) | 4 չէր | ճոժէսոյ | 5 ի Վէրս (երկոքին) | 6 զէնէր | իս |

հուրդն Աստուծոյ, որ աւետարանեցաւ ի ծառայ-
իցն իւրոց ի մարգարէիցն։ [8] Եւ ձայն զոր լուայ 8
յերկնից դարձեալ խաւսեցաւ ընդ իս եւ ասէ.
Ե՛րթ, ա՛ռ զգիրն զոր ունի հրեշտակն բացեալ ի
ձեռին իւրում, եւ կայ ի վերայ ծովու եւ ցա-
մաքի։ [9] Եւ ես երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի 9
զգիրն ի նմանէ։ Եւ ասէ ցիս. ա՛ռ եւ կո՛ւլ
զայդ, եւ դառնասցի ի փորի քում, այլ ի բերան
քում քաղցր է իբրեւ զմեղր։ [10] Եւ առի զգիրն 10
բացեալ ի հրեշտակէն եւ կլի զնա, եւ լցաւ որով-
այն իմ դառնութեամբ։ [11] Եւ ասէ ցիս. հասանէ 11
քեզ դարձեալ մարգարէանալ ի ժողովուրդս եւ
ի հեթանոսս եւ ի լեզուս եւ ի թագաւորս։

ԺԱ. — [1] Եւ տուաւ ինձ եղէգն՝ նման գաւա- ԺԱ
զանի, եւ կայր հրեշտակն եւ ասէր ցիս. արի՛ եւ
չափեա՛ զտաճար Աստուծոյ եւ զսեղանն, եւ զեր-
կրպագուսն որ ի նմա. [2] եւ զգաւիթն որ արտա- 2
քոյ տաճարին՝ թո՛ղ զնա ի բաց, եւ մի՛ չափեր,
զի տուեալ է զնա հեթանոսաց. եւ զքաղաքն
սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն եւ երկուս։
[3] Եւ տաց երկուց վկայիցն իմոց, եւ մարգարէաս- 3
ցին աւուրս հազար երկերիւր վաթսուն եւ հինգ,
զգեցեալ քուրձ։ [4] Այս են երկու ձիթենիքն եւ 4
երկու աշտանակքն՝ առաջի Տեառն Աստուծոյ ամե-
նայն երկրի կացեալք. [5] եւ որք կամիցին զնասել 5
նոցա, հուր ելցէ ի բերանոյ նոցա եւ կերիցէ

7 ալ | 8 լուա | խօ ի վերա | ԺԱ. — 1 եղէգն | ալ |
2 արտաքոյ | որ | 3 հինգ | 4 փն ալ |

զԹշնամիս նոցա․ եւ որք կամիցին մնասել նոցա,
6 այսպէս սատակեսցին։ [6] Սոքա ունին իշխանութիւն
փակել զերկինս, զի մի՛ տեղասցին զաւուրս մար-
գարէութեան նոցա․ եւ ունին իշխանութիւն ի վե-
րայ ջուրց՝ դարձուցանել յարիւն, եւ հարկանել
զերկիր յամենայն հարուածս՝ քանիցս անգամ եւ
7 կամիցին։ [7] Եւ յորժամ կատարեսցեն զամենայն
աւուրս վկայութեանն իւրեանց, յայնժամ գազանն
որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ,
8 եւ յաղԹեսցէ նոցա, եւ սպանցէ զնոսա։ [8] Եւ դի
նոցա անկեալ կայցէ ի մէջ քաղաքի հրապարակաց
նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն՝
Սոդոմ եւ Եգիպտոս եւ Բաբելոն, ուր եւ Տէրն
9 նոցա խաչեցաւ։ [9] Եւ տեսցեն զնոսա ամենայն
ցեղք եւ ժողովուրդք, եւ ամենայն լեզուք եւ հե-
Թանոսք զդի նոցա՝ զի անկեալ կայցէ զերիս աւ-
ուրս․ եւ ո՛չ տայցեն Թաղել ի գերեզմանս զմարմինս
10 նոցա։ [10] Եւ որ բնակեալն են յերկրի ուրախ լինին
եւ խնդան ի վերայ նոցա, մինչեւ ընծայս եւ պա-
տարագս տան տանել միմեանց, վասն զի սոքա
երկոքեան մարգարէքս չարչարեցին զբնակիչս եր-
11 կրի։ [11] Եւ յետ երից աւուրց եւ կիսոց՝ հոգի
կենդանութեան Աստուծոյ մտցէ ի նոսա, եւ յարի-
ցեն կանգնեսցին կայցեն ի վերայ ոտից իւրեանց․
ահ եւ երկիւղ անկցի ի վերայ ամենայն բնակչաց
12 երկրի։ [12] Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր

5 այսպէս | 6 իշխանութիւն | մարգարէութեան | իշխանութիւն ի վերայ |
7 վկայութիւն | 8 նոցա | ի մէջ | Տէրն | 10 յերկրի | ի վերայ |
երկնաւորաց | 11 կենդանութեան Այ․ ի լուսանցս նշանակի՝ ի յոյն | յարու-
ցին ելեալ է ի ներքոյ բառս [illegible] | ի վերայ (երկրիս) |

ցնոսա. վերացարո՛ւք եւ ելէ՛ք այսր. եւ վերացան
յերկինս ամպովք, եւ տեսին զվերանալ նոցա ամե-
նայն թշնամիք նոցա։ [13] Եւ ի ժամուն յայնմիկ 13
շարժումն մեծ եղեւ, եւ տասներորդ մասն քաղա-
քին ընկղմեցաւ, եւ մեռան ի շարժմանէն արք որ-
պէս թէ եւթն հազար. եւ յետ այնորիկ ահ մեծ
եղեւ յամենեսեան, եւ տային փառս Աստուծոյ եր-
կնաւորի։ [14] Ահաւասիկ վայն երկրորդ ՝էանց. եւ 14
վայն երրորդ գալոց է վաղվաղակի։

[15] Եւ յորժամ եւթներորդ հրեշտակն հարկա- 15
նէր զփողն, եղեւ ձայն մեծ յերկինս որ ասէր եթէ՝
եղեւ թագաւորութիւն ամենայն երկրի տեղերաց
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ թագաւորեսցէ
ի վերայ ամենայնի յաւիտեանս յաւիտենից։ [16] Եւ 16
քսան եւ չորք երիցունքն որ նստէին յաթոռս իւ-
րեանց առաջի Աստուծոյ, անկանէին ի վերայ երե-
սաց իւրեանց եւ երկիր պագանէին Տեառն Աստու-
ծոյ, [17] եւ ասէին. գոհանամք զքէն, Տէր Աստուած 17
ամենակալ, որ եսդ յաւիտեան, եւ որ էն, որ
առեր զզաւրութիւն քո մեծ, եւ թագաւորեցեր.
[18] եւ ժողովուրդք բարկացան, եւ եկն բարկութիւն 18
քո, եւ թշնամւոյն ժամանակ դատաստանի՝ զի դա-
տապարտեսցի. եւ տաս զվարձս ծառայից քոց մար-
գարէից, եւ սրբոց երկիւղածաց անուան քո, փո-
քունց եւ մեծամեծաց, եւ ապականել զապականիչս
երկրի։ [19] Եւ բացաւ տաճարն Աստուծոյ յերկինս, 19

12 [illegible] | [illegible] [illegible] [illegible] | 13 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | 15 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | 16 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | 17 [illegible] | [illegible] | 18 [illegible] | [illegible] | 19 [illegible] |

եւ երեւեցաւ տապանակ ուխտին՝ որ ի տաճարի
նորա. եւ եղեն փայլատակմունք, ձայնք եւ որոտ-
մունք, եւ շարժումն, եւ կարկուտ մեծամեծ։

ԺԲ ԺԲ. — [1] Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին
մի արկեալ զիւրեաւ զարեգակն, եւ լուսին ի ներ-
քոյ ոտից նորա, եւ ի վերայ գլխոյ նորա պսակ աս-
2 տեղեայ՝ յերկոտասանից. [2] եւ էր յղի, եւ ճչէր
յերկնելն, եւ բազում վշտաւք մերձ էր ի ծնանել։
3 [3] Եւ երեւեցաւ այլ նշան յերկինս, եւ ահաւասիկ
վիշապ մի հրեղէն մեծ յոյժ, որոյ էին գլուխք
եւթն եւ եղջերք տասն, եւ ի վերայ գլխոյ նորա՝
4 եւթն խոյր. [4] եւ տուտն նորա քարշէր մինչեւ
յերրորդ մասն աստեղաց երկնից, եւ ընկէց զնոսա
յերկիր. եւ վիշապն կայր առաջի կնոջն որ կամէր
ծնանել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ
5 զնա վիշապն։ [5] Եւ ծնաւ կինն որդի արու, որ հով-
ուեսցէ զժողովուրդ իւր գաւազանաւ երկաթեաւ.
եւ յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած եւ առ
6 աթոռ նորա։ [6] Եւ կինն փախեաւ յանապատ, ուր
էր տեղի պատրաստեալ նմա յԱստուծոյ, զի կերա-
կրեսցի անդ աւուրս հազար երկերիւր վաթսուն
7 եւ հինգ։ [7] Եւ եղեւ պատերազմ յերկինս, Միքայ-
էլ եւ հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին։ Եւ
8 վիշապն եւ հրեշտակք իւր կռուէին, [8] եւ ո՛չ կարա-
ցին կալ ընդդէմ, եւ տեղի ո՛չ գտաւ նոցա յեր-
9 կինս։ [9] Եւ անկաւ վիշապն մեծ, աւձն առաջին, որ
անուանեալ կոչի բեղզեբուղ եւ սատանայ, որ մո-

ԺԲ. — 1 ի վերայ | յերկոտասանից | 3 ի վերայ | 4 ընկէց |
5 առ | Նորայ | 6 պատրաստել | յԱյ | 7 Միքայէլ | 8 ընդդէմ |

լուսեցոյց զամենայն տիեզերս. անկեալ անկաւ
յերկիր, եւ հրեշտակք նորա ընդ նմա։ [10] Եւ 10
լուայ ձայն մեծ յերկնից որ ասէր. արդ եղեւ
փրկութիւն եւ զաւրութիւն եւ արքայութիւն
երկնից Աստուծոյ մերում, եւ իշխանութիւն
Աւծելոյ նորա, զի անկաւ չարախաւսն եղբարց
մերոց, որ չարախաւսէր զնոցանէ առաջի Աս-
տուծոյ եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝
զտիւ եւ զգիշեր։ [11] Եւ նոքա յաղթեցին նմա՝ 11
արեամբ Գառինն Աստուծոյ եւ բանիւ վկայութեան
նորա, եւ ո՛չ հաշտեցան ընդ վիշապին մինչեւ
ցմահ։ [12] Վասն այսորիկ ուրախ եղիցին երկինք եւ 12
ամենայն որ բնակեալ են ի նոսա. վա՛յ երկրի
եւ ծովու, զի անկաւ վիշապն առ ձեզ, որ ունի
զցասումն բազում, եւ կացցէ առ սակաւ մի ժա-
մանակ։

[13] Եւ յորժամ ետես վիշապն՝ եթէ անկաւ 13
յերկիր, զհետ եղեւ կնոջն՝ որ ծնաւ զմանուկն
արու։ [14] Եւ տուան կնոջն երկու թեւք արծուոյ 14
մեծի, զի թռիցէ յանապատ, ուր կերակրի անդ
ժամանակ եւ ժամանակս եւ կէս ժամանակի՝ յե-
րեսաց աւձին։ [15] Եւ եհեղ աւձն ի բերանոյ իւր- 15
մէ զհետ կնոջն ջուր իբրեւ զգետ՝ զի ընկղմեսցէ
զնա։ [16] Եւ աւգնեաց երկիր կնոջն, եւ եբաց եր- 16
կիր զբերան իւր եւ եկուլ զջուրն՝ զոր եհեղ վի-
շապն ի բերանոյ իւրմէ։ [17] Եւ ցասեաւ վիշապն 17
ընդ կնոջն, եւ գնաց պատերազմել ընդ կնոջն եւ

10 փրկութիւն | զաւրութիւն | արքայութիւն | ա) (երկինք.) | իշխանութիւն | զի մերս ոչ է | 11 Նմա | ա) | վկայութիւն | 13 եթէ | 14 Հ. ունի՝ ժամանակն, ուղղեցի՝ ժամանակք. սակայն թերեւս ընթեռնլի է՝ ժամանակս |

զաւակի նորա, եւ որք պահեն զպատուիրանս
Աստուծոյ, յորս է վկայութիւնն Յիսուսի Քրիս-
տոսի։
18 [18] Եւ եկաց վիշապն ի վերայ աւազոյ ծովու։

ԺԳ ԺԳ. — [1] Եւ տեսի զի ելանէր ի ծովէն գա-
զան մի, եւ ունէր գլուխս եւթն, եւ եղջերս
տասն, եւ ի վերայ եղջերաց նորա՝ տասն խոյր.
եւ ի վերայ գլխոյ նորա՝ անուն հայհոյութեան։
2 [2] Եւ գազանն զոր տեսի՝ նման ընձու, եւ ոտք
նորա՝ իբրեւ զարջոյ, եւ բերան նորա՝ իբրեւ
զառիւծու. ետ նմա վիշապն զզաւրութիւն իւր եւ
3 զաթոռ իւր եւ զիշխանութիւն իւր մեծ։ [3] Եւ մի
ի գլխոց նորա վիրաւորեալ էր ի մահ, եւ վէր
մահու նորա ողջանայր։ Եւ զարմացաւ ամենայն
4 երկիր ընդ գազանն. [4] զի ետ նմա վիշապն զթա-
գաւորութիւն իւր. եւ երկիր պագանէին գազա-
նին եւ ասէին. ո՞վ իցէ նման գազանիս, եւ ո՞վ
5 կարիցէ պատերազմել ընդ սմա։ [5] Եւ տուաւ նմա
բերան՝ խաւսել զմեծամեծս եւ զհայհոյութիւնս.
եւ տուաւ նմա իշխանութիւն՝ դնել պատերազմ
ընդ սուրբս եւ յաղթել նոցա. եւ տուաւ նմա
իշխանութիւն՝ առնել յաղթութիւն զամիսս քա-
6 ռասուն եւ երկուս։ [6] Եւ եբաց զբերան իւր հայ-
հոյութեամբ առ Աստուած, եւ հայհոյեաց զա-
նուն նորա սուրբ, եւ զխորան նորա որ յերկինս։

17 այ | վկայութիւն չէ տի | 18 ի վերա | ԺԳ. — 1 ի վերա (երկուքն) | հայհոյութէ | 2 զաւրութէ | զիշխանութէ | 3 վէր | 4 զթագաւորութէ | 5 զհայհոյութէս | իշխանութէ (երկուքն) | յաղթութէ | 6 հայհոյութեէ | աղ | նէ |

[7] Եւ տուաւ նմա իշխանութիւն ի վերայ ամենայն 7
չնչոց եւ լեզուաց եւ ժողովրդոց ։ [8] զի երկրպա- 8
գեսցեն նմա ամենայն երկիր, որոց ո՛չ իցեն գրեալ
անուանք նոցա ի դպրութիւն կենաց՝ ի սկզբանէ
աշխարհի ։ [9] Ոյք ունին ականջս լսելոյ՝ լուիցեն ։ 9
[10] Զի են ոմանք որ ի գերութեան վարեսցին, եւ 10
են ոմանք որ սրով մեռցին, եւ են ոմանք որ ան-
ձամբ զանձինս սպանանիցեն ։ Իսկ համբերութիւն
եւ հաւատք շնորհեսցին սրբոց Աստուծոյ ։

[11] Եւ տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ, 11
եւ ունէր եղջերս երկուս՝ նման գառինն, եւ խօս-
էր իբրեւ զվիշապն ։ [12] Եւ զամենայն զիշխանու- 12
թիւն զառաջնոյ գազանին գործէր առաջի նորա ։
Եւ առնէր զերկիր եւ զամենայն բնակիչս նորա՝
զի երկիր պագանիցեն գազանին առաջնոյ, մինչեւ
ողջացի վէր մահու նորա ։ [13] Եւ առնէր նշանս 13
բազումս, եւ տայր հրաման հրոյ՝ իջանել ի յեր-
կնից առաջի մարդկան ։ [14] Եւ մոլորեցուցանէր 14
զբնակիչս երկրի նշանաւք երկրի, որ տուաւ ի
ձեռս նորա՝ առնել առաջի գազանին. եւ ասեն
ցնա բնակիչք երկրի. արա՛ զպատկեր գազանին, որ
ունի զվէրս հրոյն եւ կեցցէ ։ [15] Եւ տուաւ նմա 15
իշխանութիւն՝ զի տացէ հոգի պատկերի գազա-
նին, եւ զի խօսեսցի պատկերն, եւ զի երկիր
պագցեն նմա ամենայն բնակիչք երկրի. եւ որք
ո՛չ պագցեն երկիր պատկերի գազանին, ապակա-

---

7 իշխանութի ի վերա | 8 նշմա | ի դպրութի | 10 ի գերութէ | համբերութի | այ | 12 զիշխանութի | վէր | 13 հրո | 14 զբնակիչս | նորա | երկի (երկ.) | զվէրս | 15 իշխանութի | զի երկրպագ յաւելեալ է ի լուսանցս |

16 նեացէ զնոսա։ [16] Եւ արասցէ զամենայն՝ փոքունս
եւ զմեծամեծս, եւ զմեծատունս եւ զաղքատս եւ
զազատս եւ զծառայս, զի տացէ նոցա նշան յա-
17 ջոյ ձեռինն եւ ի վերայ ճակատու նոցա. [17] եւ ո՛չ
ոք կարասցէ գնել եւ վաճառել, եթէ ո՛չ ունիցի
զնշան գրոյն եւ զանուն գազանին, որ է թիւ ա-
18 նուան նորա։ [18] Որ ոք ունիցի միտս իմաստու-
թեան՝ համարեսցի եթէ՛ զանուն եւ եթէ՛ զթիւ
անուան գազանին. քանզի թիւ է անուն մարդոյն։
Եւ թիւ անուան նորա է այս. ո̅։ կ։ զ։։

ԺԴ ԺԴ. — [1] Եւ տեսի՝ եւ ահա գառն կայր ի վե-
րայ լերինն Սիովնի. եւ ընդ նմա հարիւր քառա-
սուն եւ չորք հազարք, եւ զանուն հարիւրուն
2 գրեալ ի վերայ ճակատու նոցա։ [2] Եւ լուայ ձայն
յերկնից՝ իբրեւ զձայն ջուրց բազմաց, եւ իբրեւ
զձայն որոտման մեծի. եւ լուայ իբրեւ զձայն քնա-
3 րահարաց՝ զի հարկանէին զքնարս իւրեանց. [3] եւ
երգէին զերգս նորս առաջի աթոռոյն Աստուծոյ,
եւ առաջի չորից կենդանեացն, եւ առաջի երի-
ցանցն. եւ ո՛չ ոք կարէր ուսանել զերգս նոցա,
բայց միայն հարիւր քառասուն եւ չորք հազարքն՝
որք կային շուրջ զգառամբն՝ ի լերինն Սիովնի,
4 որք էին կուսանք եւ աղատեալք յերկրէ։ [4] Սոքա
են՝ որք ընդ կանայս ո՛չ խառնակեցան, եւ կու-

16 ի ձեռս | 17 եթէ | նորա | 18 իմաստութեան | եթէ (երկիցս) |
փոխ. առ. շ. անուան վերագրական ունի Հ.՝ անուանեան |
ԺԴ. — 1 ի վերա (երկիցս) | :Ճ: քառասուն | հարիւրուն
թուի թէ ընթեռնլի՝ հարիւր իւրոյ | ի վերա | 2 լուա (երկիցս) |
3 նոյ |

սանք. յամենայն ժամ զհետ երթան գառինն ուր
երթիցէ. սոքա գնացին ի մարդկանէ, եւ գրեցին
ի վերայ ճակատու իւրեանց զնշանն Աստուծոյ հաւր
գառինն. [5] Եւ ի բերանս նոցա ո՛չ գտաւ ստու- 5
թիւն, քանզի ամբիծք էին։

[6] Եւ տեսի ա՛յլ հրեշտակ թռուցեալ ի ներքոյ 6
երկնից, եւ ունէր աւետիս յաւիտենական. եւ
եկեալ աւետարանէր ամենայն ազգաց եւ լեզուաց
[7] ի ձայն մեծ, եւ ասէր. երկերո՛ւք յԱստուծոյ՝ 7
եւ տո՛ւք նմա փառս, զի եկն ժամանակ դատաս-
տանի նորա. եւ երկրպագեցէ՛ք առաջի նորա՝ որ
արար զերկինս եւ զերկիր, եւ զծով եւ զամենայն
որ ի նոսա, եւ զաղբերս ջուրց։ [8] Եւ ա՛յլ երկրորդ 8
հրեշտակ գայր զհետ նորա, եւ ասէր. անկա՛ւ,
անկա՛ւ, անկա՛ւ մեծն Բաբելոն ի գինւոյ արբե-
ցութենէ, ի ցասմանէ, ի պոռնկութենէ իւրմէ,
որ արբեցոյց զամենայն հեթանոսս։ [9] Եւ ա՛յլ 9
հրեշտակ երրորդ գայր զհետ նորա, եւ ասէր ի
ձայն մեծ. ո՛վ ոք երկրպագեաց գազանին եւ
պատկերի նորա, եւ կամ զգիր նշանի նորա ա՛ռ
ի ճակատ իւր եւ կամ ի վերայ աջոյ ձեռին իւ-
րում, [10] այնպիսին արբցէ ի բաժակէ ցասման 10
Աստուծոյ՝ արկելոյ յանապակէ բարկութեան բա-
ժակին, եւ տանջեսցի հրով եւ ծծմբով առաջի
Աստուծոյ եւ գառինն, եւ առաջի սուրբ հրեշտա-
կաց նորա։ [11] Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս 11
յաւիտենից. եւ ո՛չ է իշխանութիւն նոցա հանգչել

4 ի վերա | զնշանն այ | 7 յայ | 8 ի գինոյ | 9 զգիր | ի վերա աջո | 10 այ (երկիցս) | բարկութէ | ծծմբով | սբ | 11 իշխանու- թի | հանգչել |

ո՛չ զտիւ եւ ո՛չ զգիշեր՝ որք երկրպագեցին գա-
զանին եւ պատկերի նորա, եւ կամ որք առին
12 զգիր թուոյ անուան նորա։ [12] Իսկ որք համբե-
րեն եւ ո՛չ առնուն յանձն զնշանս նորա՝ նոքա
են սուրբք, որ պահեցին զպատուիրանս Աստուծոյ եւ
13 զհաւատսն Յիսուսի Քրիստոսի։ [13] Եւ լուայ ձայն
յերկնից՝ զի ասէր ցիս․ գրեա՛, երանի՛ մեռելոցն
որք Տերամբն մեռան վաղվաղակի, եւ ո՛չ հասին ի
ժամանակն յայն․ զայս ասէ Հոգին սուրբ, քանզի
հանգեան ի բազում աշխատութենէ փորձութեանց․
բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա։
14 [14] Եւ տեսի, եւ ահա ամպ մի սպիտակ, եւ ի
վերայ ամպոյն նստէր Որդւոյ մարդոյ նմանու-
թեամբ, եւ ի գլուխ իւրում ունէր պսակ ոսկե-
ղէն, եւ ի ձեռին իւրում ունէր գերանդի սրեալ։
15 [15] Եւա՛յլ հրեշտակ ելանէր ի տաճարէն, աղաղա-
կէր ձայնիւ մեծաւ առաջի նորա եւ ասէր․ առա-
քեա՛ զգերանդիդ քո եւ հնձեա՛, զի եկն ժամա-
16 նակ հնձոց, եւ հասեալ են հունձք երկրի։ [16] Իսկ
որ նստէր ի վերայ ամպոյն արկ զգերանդի իւր
17 յերկիր, եւ հնձէր զամենայն բնակիչս երկրի։ [17] Եւ
ա՛յլ հրեշտակ ելանէր ի տաճարէն որ յերկինս, եւ
18 ունէր եւ նա գերանդի սրեալ։ [18] Եւ ա՛յլ հրեշ-
տակ ի սեղանոյն, եւ ունէր իշխանութիւն ի վե-
րայ հրոյ սեղանոյն, եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ
առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին սրեալ, եւ

---

12 որք | այ | ՚ի ՚ի | 13 լուայ | յերկնից ի լուսանցս յաւելեալ | գրեա | որք | հանգիցեն | 14 տեսանի | ՚ի վերայ | որդւոյ | նմանութիւն | գերանդի | 15 զգերանդիդ | հնձեայ | 16 ՚ի վերայ | 17 գերանդի | 18 իշխանութիւն ՚ի վերայ |

տուէր. կթեա՛ զողկոյզ այգւոյն երկրի, զի հա-
սեալ է խաղող նորա։ [19] Եւ արկ հրեշտակն զգե- 19
րանդի իւր յերկիր, եւ կթէր զխաղող նորա, եւ
արկանէր ի հնձանն Աստուծոյ, [20] եւ կոխէր ի 20
հնձանին արտաքոյ քաղաքին, եւ ելանէր ի հնձա-
նէն արիւն բազում յոյժ, եւ հասանէր մինչեւ ի
սանձս ձիոյն, եւ երկայնութիւն նորա հազար եւ
վեցհարիւր ասպարէզ։

ԺԵ. — [1] Եւ տեսի այլ նշան յերկինս՝ մեծ եւ ԺԵ
սքանչելի. հրեշտակս եւթն որք ունէին վէրս եւթն,
նշանակելով զկատարած. զի նոքաւք կատարէր
բարկութիւն Աստուծոյ։ [2] Եւ տեսի ծով ապակե- 2
ղէն՝ խառնեալ հրով. եւ որք յաղթեցին գազա-
նին եւ պատկերի նորա եւ թուոյ անուան նորա,
նոքա կային ի վերայ ծովուն ապակեղինի, եւ
ունէին քնարս Աստուծոյ։ [3] Եւ երգէին զերգս 3
Մովսիսի ծառայի Աստուծոյ եւ ծառայի գառին
նորա, եւ ասէին թէ՝ մեծամեծ եւ սքանչելի են
գործք քո, Տէր Աստուած ամենակալ. արդար եւ
ճշմարիտ են դատաստանք քո, թագաւոր ամե-
նայն հաւատացելոց։ [4] Եւ ո՞վ ոք ո՛չ երկիցէ եւ 4
փառաւորեսցէ զանուն սուրբ քո. զի դո՛ւ միայն
սուրբ ես եւ արժանի երկրպագելոյ, զի ամենայն
հեթանոսք եկեսցեն եւ երկիր պագցեն առաջի քո,
վասն զի արդարութիւն քո յայտնեցաւ ամենայն
տիեզերաց երկրի։

---

19 այ | թողում ի լուսանցս գրեալ | երկայնութի | ասպարէզ |
ԺԵ. — 1 բարկութի այ | 2 ի վերա | այ | 3 այ | թէ | տր ած |
4 որ (երկիցէ) | արդարութի |

5 [5] Եւ յետ այսորիկ տեսի՝ զի բացաւ տաճար
6 խորանին վկայութեան յերկինս, [6] եւ ելանէին
եւթն հրեշտակքն՝ որք ունէին հրաման եւթն հա-
րուածոցն, եւ զգեցեալ էին կտաւս սուրբս եւ լու-
սափայլս (-ռս), եւ գաւտեւորեալ էին առ լան-
7 ջաւքն իւրեանց ի գաւտիս ոսկեղէնս։ [7] Եւ ի մի-
ջոյ չորից կենդանեացն տուաւ եւթն հրեշտակացն
եւթն սկաւառակ ոսկեղէն՝ լի ցասմամբ Աստուծոյ
8 կենդանւոյ յաւիտեանս յաւիտենից։ [8] Եւ լցաւ տա-
ճարն ծխով ի փառացն Աստուծոյ եւ ի զաւրու-
թեանց նորա, եւ ո՛չ ոք իշխէր մտանել ի տա-
ճարն՝ մինչեւ կատարեցան եւթն հարուածքն յեւթն
հրեշտակացն։

ԺԶ ԺԶ. — [1] Եւ լուայ ձայն ի տաճարէն՝ զի ասէր
ցեւթն հրեշտակսն. երթա՛յք, հեղէ՛ք զեւթն սկաւ-
2 առակդ ցասմանն Աստուծոյ յերկիր։ [2] Եւ գնաց
առաջին հրեշտակն եւ եհեղ զսկաւառակն առաջին
յերկիր. եւ եղեն հարուածք մեծամեծք ի վերայ
երկրի եւ մարդկան, որք ունէին զգիր գազանին,
եւ երկիր պագին պատկերի նորա։
3 [3] Եւ երկրորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ
իւրմէ ի վերայ ծովու. եւ դարձան ջուրքն յա-
րիւն, եւ ամենայն շունչ կենդանի որ էր ի ծով-
ու՝ սատակեցաւ։
4 [4] Եւ երրորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ

---

5 վկայութէ յերկինս | 6 եւս | ի ներքոյ բառին լուսափայլս նախքն գրչաւ եգեալ է՝ ու․ բառ այսմ ընթեռնլի է նաեւ՝ լուսափառ | ոսկեղէնս | 7 ոսկեղէն | այ | 8 այ | ի զաւրութեէց |
ԺԶ. — 1 լուա | այ | 2 ի վեր․ | 3 ի վեր․ |

իւրմէ ի գետս եւ յաղբերս ջուրց․ եւ եղեն արիւն։
⁵ Եւ լուայ ի հրեշտակէն ջուրց՝ զի ասէր․ արդար է 5
որ էն, եւ է սուրբ, զի այսպէս դատեցար․ ⁶ վասն 6
զի զարիւն սրբոց եւ զարիւն մարգարէից հեղին
ամբարիշտք, եւ վասն այնորիկ արիւն ետուր դու
ըմպել նոցա՝ ըստ արժանւոյն։ ⁷ Եւ լուայ ի սե- 7
ղանոյ անտի՝ զի ասէր․ այո՛, Տէր Աստուած ամե-
նակալ, արդար եւ ճշմարիտ են քո դատաստանքդ։
⁸ Եւ չորրորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ 8
իւրմէ ի վերայ արեգական․ եւ տուաւ նմա խոր-
շակահար առնել զմարդիկ հրով․ ⁹ եւ տապացան 9
մարդիկ ի տապ մեծ, եւ հայհոյեցին մարդիկ զա-
նուն Աստուծոյ՝ որ ունէրն իշխանութիւն ի վերայ
հարուածոցս այսոցիկ, եւ ո՛չ ապաշխարեցին եւ
ետուն փառս Աստուծոյ։
¹⁰ Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ ի սկաւա- 10
ռակէ իւրմէ ի վերայ աթոռոյ գազանին․ եւ եղեւ
թագաւորութիւն նորա խաւարեալ, եւ ծամէին
զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն, ¹¹ եւ հայհոյէին 11
զԱստուած երկնից ի ցաւոյն իւրեանց եւ յախտէ
դառնութեանն, եւ ո՛չ ապաշխարեցին։
¹² Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ ի սկաւա- 12
ռակէ իւրմէ ի վերայ գետոյն մեծի Եփրատայ․
եւ ցամաքեցան ջուրքն նորա, զի պատրաստեսցէ
զճանապարհս թագաւորին յելիցն արեւու։ ¹³ Եւ 13
տեսի զի ելանէր ի բերանոյ վիշապին եւ ի բերա-

5 լուա | եք | այսպէս | 6 եհեղ | 7 լուա | տր ած | դատաստանք ի
8 ի վերա | 9 այ (երկրորդն) | իշխանութի ի վերա | 10 [illegible]
[illegible] ի վերա | [illegible] | 11 [illegible] | [illegible]
[illegible] | 12 ի վերա |

նոյ՝ գազանին. եւ ի բերանոյ սուտ մարգարէին
14 ոգիք երեք անսուրբք՝ իբրեւ գորտս. [14] քանզի
նոքա էին ոգիք դիւականք, որք առնէին զնշանս
եւ երթային առ թագաւորս ամենայն երկրի՝ ժո-
ղովել զնոսա ի պատերազմ յաւուրն մեծ Աստուծոյ
15 ամենակալի։ [15] Քանզի այսպէս ասաց Տէր. ահա
գամ ես իբրեւ զգող ի գիշերի. երանի՛ որ կցեն
արթունք, եւ պահեսցեն զհանդերձս իւրեանց, զի
մի՛ մերկ շրջեսցին, եւ երեւեսցին ամաւթանք իւ-
16 րեանց։ [16] Եւ ժողովեաց զնոսա ի տեղ մի՝ որ
կոչի եբրայեցերէն Արգամեդոն, Արտեաւքնեդոն։
17 [17] Եւ եւթներորդ հրեշտակն եհեղ ի սկաւա-
ռակէ իւրմէ ի վերայ աւդոց. եւ ել ձայն մեծ ի
տաճարէն եւ յաթոռոյն, ասելով եթէ՝ եղեւ կա-
18 տարած ամենայնի։ [18] Եւ եղեն փայլատակմունք,
ձայնք եւ որոտմունք, եւ եղեւ շարժումն մեծ,
որպիսի չիք եղեալ ի սկզբանէ յորմէ հետէ եղեւ
մարդ ի վերայ երկրի, ո՛յնպիսի շարժումն մեծ։
19 [19] Եւ ընկղմեցան քաղաքք մեծամեծք, իբրեւ երեք
մասունք, եւ քաղաքք ազգաց անկան. եւ մեծն
Բաբելոն քաղաք յիշեցաւ առաջի Աստուծոյ, տալ
նմա զբաժակ գինւոյ ցասման բարկութեան նորա։
20 [20] Եւ ամենայն կղզիք ի փախուստ դարձան, եւ
21 լերինք ի միջոյ բարձան։ [21] Եւ կարկուտ մեծամեծ
իբրեւ կշռոյ տաղանդի միոջ իջանէր յերկնից ի
վերայ մարդկան. եւ հայհոյեցին մարդիկ զԱստուած
յերկինս՝ վասն հարուածոց կարկտին, զի մեծա-
մեծ էին հարուածք նորա։

---

14 Ոյ | 15 Գը | 16 Եբրայեցերէն | 17 ԵԹԷ | 18 Ի Ձեռ | 19 [illegible] | Ոյ | Գինւոյ | Բարկութէ նորայ | 20 Ի Գեռ | 21 Ի Ձեռ | [illegible] | Էին |

ԺԷ. — [1] Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացն՝ ԺԷ
որ ունէին զեւթն բաժակսն, խաւսեցաւ ընդ իս
եւ ասէ. Ե՛կ այսր, եւ ցուցից քեզ զդատաստան
մեծի պոռնկին՝ որ նստի ի վերայ ջուրց բազմաց,
[2] ընդ որում պոռնկեցան թագաւորք երկրի. եւ 2
արբեցան բնակիչք երկրի ի գինւոյ արբեցութեան
պոռնկութեան մոլորութեան նորա։ [3] Եւ ա՛ռ տա- 3
րաւ զիս յանապատ հոգւովն։ Եւ եղեւ ի վերայ իմ
Հոգի սուրբ. եւ տեսի կին մի՝ զի նստէր ի վերայ
կարմիր գազանի, եւ լի էր անուամբք հայհոյու-
թեան. եւ գազանն զոր տեսի ունէր գլուխս եւթն
եւ պասկս եւթն եւ եղջերս տասն։ [4] Եւ կինն 4
էր զգեցեալ ծիրանիս եւ կարմիրս, եւ զարդա-
րեալ ոսկւով եւ մարգարտով եւ ականք պատուա-
կանաւք, ունելով զբաժակ ոսկի ի ձեռին իւրում,
եւ լի էր ամենայն աղտեղութեամբ եւ ամենայն
պղծութեամբ եւ անմաքուր պոռնկութեամբ. [5] եւ 5
ի վերայ ճակատու նորա գրեալ անուն. խորհուրդ,
մեծն Բաբելովն, մայրն պոռնկաց եւ պղծութեանց
երկրի։ [6] Եւ տեսի զկինն արբեցեալ արեամբ սրբոցն, 6
եւ յարենէ ամենայն վկայիցն Քրիստոսի. եւ զար-
մացայ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ։ [7] Եւ ասէ 7
ցիս հրեշտակն. ընդէ՞ր զարմանաս. ես ասացից
քեզ զխորհուրդ կնոջն եւ զգազանին՝ որ նստի ի
վերայ նորա, որ բարձեալ ունի զնա. որ ունի
եւթն գլուխս եւ տասն եղջերս։ [8] Եւթն գլուխք 8

ԺԷ. — 1 Ի վերայ | 2 Ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան մոլորութեան նորայ | 3 ռք | Ի վերայ (երկրի) | հայհոյութեան | պասկս :Է: | 4 աղտեղութեանս | պղծութեան | պոռնկութեան | 5 Ի վերայ | պղծութեանց | 6 [illegible] | զարմացայ | 7 Ի վերայ |

եւ տեսանեն երկիրք գազանին զոր տեսերդ, որ էին
եւ այլ ո՛չ էն, եւ հանդերձեալ է ելանել յան-
դնդոց եւ ի կորուստ երթալ. եւ զարմասցին
ամենեքեան որ բնակեալ են ի վերայ երկրի, որոց
ո՛չ է գրեալ անուանք իւրեանց ի գիր կենաց՝ ի
սկզբանէ աշխարհի. զոր տեսանէիր զգազանն՝ զի
9 էր, եւ չէ՛, եւ որ անցանէր ի կորուստ. [9] Այլ
իմաստուն մտաւք իմասցիս, զի եւթն գլուխն՝
եւթն լերինք են, ուր կինն նստէր ի վերայ նոցա,
10 [10] եւ նոքին թագաւորք են եւթն. եւթն անկան,
եւ մինն ունի դեռ, եւ այլ միւսն եւս չէ՛ (չեւ է)
եկեալ, եւ յորժամ եկեսցէ՝ սակաւ մի ժամանակ
11 ունի. [11] Եւ գազանն զոր տեսեր՝ որ էր, եւ ո՛չ
այլ եւս է, եւ նա ութերորդ է, եւ է յեւթանց
անտի, եւ ի հնգից, եւ ի կորուստ երթալոց է։
12 [12] Եւ տասն եղջեւրքն զոր տեսեր՝ տասն թագաւ-
որք են, որոց զթագաւորութիւնն իւրեանց չե՛ւ
եւս են առեալ, այլ առնուն եւ կան իշխանք ի
միում ժամանակի. եւ առնուն նոքա զիշխանութիւն
13 ընդ գազանին։ [13] Սոքա ի միաբանութիւն գան,
եւ զզաւրութիւնս իւրեանց եւ զիշխանութիւն գա-
14 զանին տան։ [14] Սոքա ընդ գառինն պատերազմես-
ցին, եւ գառն յաղթեսցէ նոցա, զի գառն տէր է
տերանց եւ թագաւոր թագաւորաց, եւ որք ընդ
նմա՝ կոչեցեալք են եւ ընտրեալք եւ հաւատա-
15 ցեալք։ [15] Եւ ասէ. ցիս. եւ ջուրքն զոր տեսերն,
ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են եւ բազմու-
16 թիւն, եւ ազգք եւ լեզուք։ [16] Եւ տասն եղջեւրքն

8 ի վեր | 9 ի վեր | 10 չեւ և ի լուսանցս յաւելեալ | 12 զթա-
գաւորութիւն | 13 ի միաբանութիւն | զօրութիւն | զիշխանութիւն | 14 [illegible]
ի [illegible] | 14 ընտրեալ | 15 բազմութիւն |

զոր տեսեր, եւ գազանն, նոքա ատեսցեն զպոռնիկն
եւ աւերեսցեն զնա, եւ անապատ եւ մերկ արասցեն
զնա, եւ զմարմին նորա կերիցեն, եւ այրեսցեն
զնա հրով. [17] քանզի Աստուած ետ ի սիրտս նոցա՝ 17
առնել զնա մերկ եւ անապատ, առ ի լինել նոցա
մի կամս, եւ տալ զթագաւորութիւն նորա գազա-
նին՝ մինչեւ կատարեսցի խորհուրդ եւ բանն Աս-
տուծոյ։ [18] Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաք մեծ, 18
որ ունի զթագաւորութիւն ի վերայ թագաւորու-
թեանց երկրի։

ԺԸ. — [1] Եւ յետ այսորիկ տեսի հրեշտակ՝ զի ԺԸ
իջանէր ի վերուստ յաթոռոյն Աստուծոյ, որ ունէր
իշխանութիւն մեծ[2], եւ երկիրս լուսաւորէր ի փա-
ռաց նորա։ [2] Եւ աղաղակեաց ի ձայն հզաւր՝ ասե- 2
լով. անկա՛ւ, անկա՛ւ երկրորդ Բաբելոնն մեծ, եւ
եղեւ բնակութիւն դիւաց, եւ արգելան այսոց
պղծոց, եւ բանդ պահպանութեան ամենայն ոգւոյ
անսրբի եւ ատեցելոյ. [3] վասն զի ի բարկութենէ 3
գինւոյ պոռնկութեան նորա արբին ամենայն ազգք,
եւ թագաւորք երկրի՝ որք ընդ նմա պոռնկեցան
եւ վայելեցին ի բարութեանց երկրի, եւ վաճառա-
կանք երկրի ի զաւրութենէ բարութեանց նորա
մեծացան։ [4] Եւ լուայ ձայն յերկնից՝ զի ասէր. 4
ելէ՛ք ի միջոյ դորա, ժողովուրդ իմ, զի մի՛ հա-
ղորդիցիք մեղաց դորա, եւ մի՛ զհարուածս դորա

16 զնա երկր. ի լուսանցս յաւելեալ | 17 ած | զթագաւորութի | ալ |
18 զթագաւորութի ի վերա թագաւորութեց | ԺԸ. — 1 ալ | իշխա-
նութի | 2 բնակութի | պահպանութե | ոգւոյ | 3 գինոյ պոռնկութե |
բարութեց | 4 լուա |

5 ընդունիցիք. [5] զի հասին կցեցան մեղք դորա մին-
չեւ յերկինս, եւ յիշեաց Աստուած զամբարշտու-
6 թիւնս դորա, [6] եւ հատուցէք նմա որպէս հա-
տոյցն ձեզ. եւ առցէ դա երկպատիկ՝ ըստ գոր-
ծոց իւրոց. եւ զբաժակն որով խառնեացն՝ խառ-
7 նեցէ՛ք դմա կրկին։ [7] Եւ ո՛րչափ փառաւորեաց
զինքն եւ վերարկեաց զերկիր եւ խայտաց, ա՛յն-
չափ հատուցէ՛ք դմա տանջանս եւ սուգ. զի ի
սրտի իւրում ասէր թէ՝ յամենայն ժամ թա-
գաւորեցից, եւ ո՛չ նստայց ի դժոխս յաւիտեան,
եւ այրի ո՛չ եւս եղէց, եւ զսուգ ո՛չ տեսից։
8 [8] Վասն այնորիկ ի միում աւուր եկեսցեն ի վերայ
դորա հարուածք ամենայն եւ տանջանք, մահ եւ
սուգ, եւ սով եւ սուր, եւ հուր՝ եւ այրեսցէ
զդա. վասն զի հզաւր է Տէր Աստուած՝ որ դա-
տեցաւն զդա։
9 [9] Եւ լայցեն եւ կոծեսցին թագաւորք երկրի
ի վերայ դորա, որք ընդ դմա պոռնկեցան, եւ
յիրարկ խաղացեն, եւ հեծեսցեն՝ յորժամ տեսա-
10 ցեն զծուխ կիզման դորա. [10] եւ ի հեռաստանէ
կալով մինչ չեւ հասեալ իցէ՝ յոդւոց հանիցեն
վասն երկեղի տանջանաց դորա, եւ ասասցեն.
վա՜յ, վա՜յ, քաղաք մեծ, Բաբելոն քաղաք հզաւր,
զի ի միում ժամու եկին հասին դատաստանք քո։
11 [11] Եւ վաճառականք քո երկրի, եւ որք վայելեցին
ի քէն, լայցեն ի վերայ քո, զի զբեռն նոցա ո՛չ
12 ոք գնէ. [12] եւ շահք որ ի քէն ո՛չ եւս իցէ, այլ
ամաւթով ընդ վայր կացցեն մթերք ոսկւոյ եւ

5 [illegible] | 6 [illegible] | 7 [illegible] | [illegible] | 8 [illegible] | [illegible] | 9 [illegible] |
10 [illegible] | 11 [illegible] | [illegible] | 12 [illegible] |

*արծաթոյ եւ ականց պատուականաց եւ մարգար-
տից եւ բեհեզոյն եւ ծիրանւոյ եւ կապուտի եւ
որդան, եւ ամենայն փայտ խնկոց, եւ ամենայն
անօթ փղոսկրեայ, եւ ամենայն պատուական ա-
նօթ՝ ի փայտէ պատուականէ եւ ի պղնձոյ եւ
յերկաթոյ եւ կճոյ, [13] եւ կինամոն եւ ամենայն* 13
*խունկ եւ եւղ եւ կնդրուկ լիբանէս եւ գինի եւ
ձէթ եւ նաշիհ եւ ցորեան, եւ ստացուածք ամե-
նայն, արջառ եւ ոչխար, եւ ձիոյ եւ կառաց, եւ
ամենայն ինչ որ վայել է մարմնոյ եւ ոգւոյ մար-
դկան. [14] եւ ամենայն ցանկութիւն անձին քո գնաց* 14
*ի քէն, եւ ամենայն լուսափայլ վայելչութիւն քո,
պարարտ եւ գէր եւ սպիտակ կորեաւ ի քէն, եւ
ո՛չ եւս գտցես զայդ։ [15] Եւ ամենայն շահավա-* 15
*ճառք այսոքիկ մեծացեալք՝ ի քէն ի բաց կայցեն,
ի հեռաստանէ կալով վասն երկեղի եւ տանջանաց՝
լալով եւ սուգ առնլով՝ [16] ասասցեն. վա՜յ, վա՜յ,* 16
*քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բեհեզս եւ ծիրա-
նիս եւ որդան, եւ զոսկէզաւծս, եւ քարինս պա-
տուականս եւ մարգարիտս, զի ի միում աւուր
ապականեցաւ այսչափ մեծութիւն քո։ [17] Եւ ամե-* 17
*նայն նաւավար, եւ ամենայն որք ի տեղիս տեղիս
նաւեն, եւ նաւազք, եւ որք միանգամ գործովք
գործեն, ի հեռաստանէ կայցեն լալով, [18] եւ աղա-* 18
*ղակեսցեն՝ տեսանելով զծուխ կիզման նորա, ասե-
լով. ո՞ նման է քաղաքիս այսմիկ մեծի։ [19] Եւ* 19
*արկցեն հող ի վերայ գլխոց իւրեանց, եւ գուժե-
լով ձայնիւ մեծաւ՝ լալով եւ ողբալով ասասցեն.*

ծիրանոյ | փղոսկրեայ | 13 ձէթ | ոգւոյ | 14 ցանկութիւն | վայելչութիւն |
16 [illegible] |

վա՛յ, վա՛յ, քաղաք մեծ, որով ամենեքեան մեծա-
նայեալք՝ որք ունէին նաւս ի ծովու, վասն պա-
տուականութեան նորա, զի ի միում ժամու ա-
20 պականեալ կործանեցաւ։ [20] Ուրախ լերո՛ւք ի վե-
րայ, երկինք եւ սուրբ առաքեալք եւ սուրբ մար-
գարէք, զի դատեցաւ Աստուած զդատաստան ձեր
ի դմանէ։

21 [21] Եւ ա՛ռ հրեշտակն մի քար մեծ հզաւր իբրեւ
զերկան, եւ ընկէց ի ծով՝ ասելով. այսպէս յար-
ձակմամբ անկցի Բաբելոնն քաղաք մեծ, եւ այլ
22 ո՛չ եւս գտցի։ [22] Եւ ձայն քնարերգուաց եւ երա-
ժշտականաց եւ փողահարաց եւ թմբկի այլ ո՛չ եւս
23 լուիցին ի քեզ, [23] եւ լոյս ճրագի եւ ձայն երկանի
այլ ո՛չ եւս երեւեսցի ի քեզ, եւ ձայն փեսայի եւ
հարսին այլ ո՛չ եւս լուիցի ի քեզ. եւ վաճառա-
կանք քո՝ եւ փառաւորք եւ մեծամեծք երկրի, որ
զուարճացեալ էին ի քեզ. վասն զի կախարդու-
թեամբ դեղատութեան քո մոլորեցան ամենայն
24 ազինք, [24] եւ ի քեզ ամենայն արիւն մարգարէից
եւ սրբոց գտաւ, եւ ամենայն գրելոցն յերկիր
կենդանեաց։

ԺԹ ԺԹ. — [1] Եւ յետ այսորիկ լուայ ձայն մեծ
բազմութեան յերկինս՝ ասելով. ալէլուիա, փրկու-
թիւն եւ փառք եւ պատիւ եւ զաւրութիւն Աս-
2 տուծոյ մերում. [2] զի ճշմարիտ եւ արդար են դա-
տաստանք նորա, զի այսպէս դատեցաւ զդատաս-

19 զապատակութեան | 20 ի վերա | որ (Երկինք) | որ | 21 ընկէց | այսպէս | 23 խախտացուցին դեղատութեան | ԺԹ. — լուա | իբրեւ ... | ալէլուիա . ... | ... | 2 այսպէս |

տան իւր մեծ՝ զպոռնիկն զայն որ ապականեաց
զերկիր ի պոռնկութեան իւրում, եւ խնդրեաց
զվրէժ արեան ծառայից իւրոց ի ձեռաց նորա։
[3] Եւ կրկին անգամ աւրհնեցին եւ ասացին. ալէ- 3
լուիա, եւ ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւի-
տենից յերկինս։ [4] Եւ անկան ի վերայ երեսաց 4
իւրեանց քսան եւ չորս ծերքն եւ չորք կենդա-
նիքն, եւ երկրպագեցին Աստուծոյ՝ որ նստէրն ի
վերայ աթոռոյն փառաց, ասելով. ամէ՛ն, ալէլուիա։
[5] Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով. աւրհնեցէ՛ք, 5
աւրհնեցէ՛ք զԱստուած ամենայն ծառայք նորա,
եւ որք երկնչիք ի նմանէ, փոքունք եւ մեծամեծք։
[6] Եւ լուայ ձայն իբրեւ բազմութեան մեծի, իբրեւ 6
զձայն ջուրց բազմաց, իբրեւ զձայն հզաւր որոտ-
մանց, գոչելով եւ ասելով. ալէլուիա, վասն զի
թագաւորեաց ի մեզ Տէր Աստուած մեր ամենա-
կալ։ [7] Խնդամք եւ ցնծամք եւ տամք զփառս 7
անուան նորա, վասն զի կրկին եկն որ էրն, եւ
եմուտ ի հարսանիս իւր գառն, եւ կին՝ հարսն
նորա պատրաստեաց զինքն. [8] եւ տուաւ նմա՝ 8
զի արկցէ զնովաւ բեհեզս պայծառս եւ սուրբս
եւ լուսափառս. քանզի բեհեզն արդարութիւնք
սրբոց են։ [9] Եւ մի յերիցանցն ասէ ցիս. գրեա՛ 9
զայս. երանելիք են ամենեքեան որ կոչեցեալք են
յընթրիս հարսանեաց գառինն։ Եւ դարձեալ ասէ
ցիս. այս բանք արդարութեան եւ ճշմարիտք են

3 ալէլուիայ | 4 ի վերա (աթոռ) | [illegible] | ալէլուիայ | 5 զմեծ |
6 լուա | թագաւորէ | ալէլուիայ | Տէր մեծ | 7 նորա երկր. ի լուսանցս
յաւելեալ | 8 նմայ | [illegible] | արդարութիւն | 9 գրեա | ամենեքեան |
հարսանեաց ընթրեաց է ի վերայ գառինն | արդարութէ |

10 Աստուծոյ։ [10] Եւ ես անկեալ առաջի ոտից Նորա՝
երկիր պագի Նմա։ Եւ ասէ ցիս. անսա՛, մի՛ ան-
կանիր առաջի իմ, քանզի ես ծառայակից քո եմ
եւ եղբարց քոց՝ որք ունին զվկայութիւնն Յիսուսի
Քրիստոսի. Տեառն Աստուծոյ միայն երկրպագեա՛.
քանզի հաստատութեամբ Տեառն Յիսուսի է տե-
սիլդ եւ մարգարէութիւնդ. զի վկայութիւն Յի-
սուսի է Հոգին սուրբ որ ի մարգարէսն է։
11 [11] Եւ տեսի զերկինս բացեալ, եւ ահաւասիկ
ձի մի սպիտակ, եւ որ հեծեալն էր ի Նմա՝ կոչէր
Հաւատարիմ եւ Ճշմարիտ, եւ արդարութեամբ
12 դատի եւ պատերազմի։ [12] Եւ էին աչք Նորա իբրեւ
զջահս հրեղէնս, եւ ի վերայ գլխոյ Նորա պսակ
բազում, անուանս ունելով գրեալս, զորս ո՛չ ոք
13 կարէ գիտել՝ բայց միայն ինքն. [13] եւ արկեալ էր
զիւրեաւ հանդերձ զանկեալ արեամբ, եւ կոչէր
14 անուն Նորա՝ Բան Աստուծոյ։ [14] Եւ զաւրավարք
երկնից եւ զաւրք երկնից զհետ Նորա երթային
ձիաւք սպիտակաւք, զգեցեալք բեհեզս սուրբս եւ
15 սպիտակս։ [15] Եւ ի բերանոյ Նորա ելանէր սուր
սրեալ, զի նովաւ հարցէ զազգինս. եւ Նա հովուեսցէ
զնոսա գաւազանաւ երկաթեաւ, եւ Նա կոխեսցէ
զնոսա իբրեւ զհնձանս գինւոյ ցասման բարկու-
16 թեան Աստուծոյ ամենակալի։ [16] Եւ ի վերայ զգես-
տու Նորա, եւ ի վերայ իրանաց Նորա, եւ ի
վերայ աջոյ ձեռին Նորա, եւ ի վերայ աջոյ բազկի

ոյ | 10 անսայ | զվկայութիւն չէ ՟Բ՟ Փն ոյ | երկրպագեայ | հաստատութեա Փն չէ | տեսիլս | մարգարէութիւնք | վկայութի չէ | որ | 11 արդա-րութե | 12 էին | ի վեր | գրեալս | 13 ոյ | 14 որ | 15 գի-նոյ | ոյ | 16 ի վերա (շարունակ) |

*նորա գիր գրեալ՝ Թագաւոր թագաւորաց եւ տէր
տերանց։*

[17] *Եւ տեսի ա՛յլ հրեշտակ՝ որ կայր ի վերայ* 17
*արեգականն, եւ աղաղակեաց ի ձայն մեծ՝ ասե-
լով ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից.
եկա՛յք ժողովեցարո՛ւք յընթրիս ի մեծ աւուրս Աս-
տուծոյ,* [18] *եւ կերիջիք զմարմինս թագաւորաց, եւ* 18
*զմարմինս հզաւրաց, եւ զմարմինս երիվարաց եւ
հեծելոց ի նոսա, եւ զմարմինս ամենայն ազատաց
եւ ծառայից, զփոքունց եւ զմեծամեծաց։* [19] *Եւ* 19
*տեսի զգազանն եւ զամենայն թագաւորս երկրի
եւ զզաւրս նոցա ժողովեալ՝ առնել պատերազմ ընդ
այն որ հեծեալն էր ի ձին սպիտակ՝ եւ ընդ զաւրս
նորա։* [20] *Եւ տեսի զի ըմբռնեցաւ գազանն, եւ որ* 20
*ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանս ա-
ռաջի նորա, զորս մոլորեցոյց եւ ետ առնուլ զգիրս
գազանին՝ եւ զերկրպագուս պատկերի նորա. կեն-
դանւոյն արկ զնոսա ի լիճ հրոյն այրեցելոյ ծըծմ-
բով։* [21] *Եւ այլքն մեռան ի սրոյ հեծելոյն, որ* 21
*ելանէր ի բերանոյ նորա. յորմէ ամենայն թռչունք
կերակրեցան (յագեցան) ի մարմնոյ նոցա։*

Ի. — [1] *Եւ տեսի ա՛յլ հրեշտակ զի իջանէր յեր-* Ի
*կնից, եւ ունէր զփականս դժոխոց եւ շղթայս
մեծ ի ձեռին իւրում։* [2] *Եւ ունէր զվիշապն մեծ,* 2
*զաւձն առաջին, որ է այս ինքն բէեղզեբուղ եւ
սատանայ, եւ կապեաց զնա հազար ամ.* [3] *եւ արկ* 3

Տէր | 17 ընդ մէջ | յՆմբէ | Ոյ | 19 զսորա (փխկ. զզօրս) |
20 Նշանաւոյն | ծծմբով | 21 յոր (փխկ. որ) | զՆերակերեան բառն իսկ
գրեցն ուղղէ՝ յագեցան. փխկ. Ներան գրելով ի լուսանցս՝ յագ |
Ի. — 2 սատանա |

զնա յանդունդս դժոխոց, եւ փակեաց եւ կնքեաց
զնա, զի այլ մի՛ եւս մոլորեցուսցէ զհեթանոսս,
մինչեւ ի կատարել հազար ամին. եւ յետ այնորիկ
լուծցէ զնա սակաւ մի ժամանակս։
4 [4] Եւ տեսի աթոռս, եւ նստան ի վերայ նոցա.
եւ դատաւորութիւն տուաւ նոցա՝ ընտրել զհո-
գիս լուացն ի վկայութիւն Յիսուսի, վասն բանին
Աստուծոյ. սոքա են որք ո՛չ երկրպագեցին գազա-
նին եւ ո՛չ պատկերի նորա, եւ ո՛չ առին զգիր
նշանի ի վերայ ճակատու իւրեանց, եւ ո՛չ ի վե-
րայ աջոյ ձեռին իւրեանց. սոքա են որ կացին
5 մինչեւ ի հազար ամ։ [5] Եւ յետ այսորիկ ի մեռե-
լոց ո՛չ ոք եկաց, մինչ ի կատարել հազար ամին։
6 Այս է յարութիւն առաջին։ [6] Երանի՛ սրբոցն՝ որք
ունիցին բաժին ի յարութեանն առաջնում. ի վե-
րայ սոցա երկրորդ մահ ո՛չ ունի իշխանութիւն,
այլ են քահանայք Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի
Քրիստոսի, եւ թագաւորեսցեն ընդ նմա հազար
ամ։
7 [7] Եւ յետ հազար ամին լուծցէ զսատանայ, եւ
8 հանցէ ի բանդէ անդի. [8] ելցէ եւ մոլորեցուսցէ
զազգս ամենայն՝ ընդ չորս կողմանս երկրի. եւ
զԳոգ եւ զՄագոգ առցէ ի ձեռն՝ ժողովել նոքաւք
զամենայն զաւրս ի պատերազմ, որոյ թիւ նոցա
9 իբրեւ զաւազ ծովու անհամար։ [9] Եւ ելցեն ի լայ-
նութիւնս երկրի, եւ պատեսցեն շուրջ զբանակս

4 ի վերա (երկաքին) | դատաւորութի | ոչ | առ | 5 յարութի |
6 սրբոցն | ի յարութեն | ի վերա | իշխանութի | առ | ըն ոչ մի |
7 զսատանա | 8 ամենայն զգետս է ի նեղքս առաջին | 9 ի լայ-
նութիս |

սրբոց եւ զքաղաքին սիրելւոյ. եւ իջէ հուր յեր-
կնից եւ կերիցէ զնոսա, [10] եւ զզաւրավարն նոցա 10
զսատանայ՝ որ մոլորեցոյց զնոսա, եւ արկցէ զնոսա
ի ծովն հրոյ եւ ծծմբոյ, ուր էր գազանն եւ սուտ
մարգարէն, եւ չարչարեսցեն զտիւ եւ զգիշեր
յաւիտեանս յաւիտենից։

[11] Եւ տեսի աթոռ մի մեծ եւ սպիտակ, եւ 11
ի վերայ նորա նստեալ, յորմէ երեսաց եւ յահէ
նորա երկնչէին եւ փախչէին երկինք եւ երկիր,
եւ տեղի ո՛չ գտաւ նոցա։ [12] Եւ տեսի զմեռեալս 12
եւ զմեծամեծս եւ զմեռեալս, որք կային առ ա-
թոռոյն. եւ դիրք բանային իւրաքանչիւր գործոց,
եւ ա՛յլ գիրք բանային, որոց անուանք նոցա
գրեալ են ի դպրութիւն կենաց. եւ դատաստան
եղեւ մեռելոցն ի գիրս՝ ըստ գործոց իւրաքան-
չիւրոց։ [13] Եւ ետ ծովն ի բաց զմեռեալս իւր՝ որ 13
ի նմա էին։ [14] Եւ մահ եւ դժոխք մատնեցան ի 14
լիճ հրոյն։ Այս է մահ երկրորդ։ [15] Եւ որ ոք ո՛չ 15
գտցի ի գիր կենաց գրեալ՝ անկցի ի լիճ հրոյն։

ԻԱ. — [1] Եւ քաղաքն սուրբ Երուսաղէմ երեւ- ԻԱ
էր։ Եւ տեսի երկինս նոր եւ երկիր նոր. զանզի
առաջին երկինք եւ երկիր էանց, եւ ծով այլ ո՛չ
եւս երեւէր։ [2] Եւ քաղաքն նոր՝ սուրբն Երուսա- 2
ղէմ երեւէր. եւ տեսի զի իջանէր յերկնից առ ի
յԱստուծոյ հարսն զարդարեալ եւ պաճուճեալ,
տուեալ առն իւրում։ [3] Եւ լուայ ձայն յերկնից՝ զի 3

սրբոց | սիրելւոյ | 10 զսատանա | ծծմբոյ | 11 ի վերա | յորմէ |
12 կային | բանային (առաջ.) | ի դպրութէ | ԻԱ. — 1 որ |
2 որն Երուսաղէմ | առ ի յԱյ | 3 լուա | յերկնից |

ասէր. Ահաւասիկ խորանն Աստուծոյ ի մէջ մար-
դկան, եւ բնակեսցէ խառն ընդ նոսա, եւ նոքա
ժողովուրդ նորա ընդ նմա, եւ նա Աստուած նոցա.
4 [4] Եւ ջնջեսցէ զամենայն արտասուս յաչաց նոցա, եւ
մահ այլ ո՛չ եւս տիրեսցէ ի վերայ նոցա, ո՛չ
սուգ եւ ո՛չ աղաղակ, ո՛չ ցաւք եւ ո՛չ հոգք այլ
ո՛չ եւս պատահեսցէ նոցա. զի փախեաւ եւ մեր-
5 ժեցաւ յերեսաց նոցա։ [5] Եւ ասէ ցիս որ նստէրն
ի վերայ աթոռոյն. Ահաւասիկ առնեմ զամենայն
նոր։ Եւ ասէ ցիս. գրեա՛, զի այս բանք հաւատա-
6 րիմք եւ ճշմարիտք են։ [6] Եւ ասէ. եղէ ես այբ
եւ քէ, ի սկզբանէ. եւ առ յապայսն եւ յաւի-
տեանս ես եմ. եւ որք են ծարաւիք՝ տայց նոցա
յաղբերականց ջուրց կենդանութեան ըմպել ձրի։
7 [7] Եւ որ ոք գտցի յաղթող՝ ժառանգեսցէ զամենայն
զայս. եւ ես եղէց նոցա յԱստուած, եւ նոքա
8 եղիցին իմ ժողովուրդ։ [8] Եւ դարձեալ վասն թե-
րահաւատիցն եւ պղծոցն սպանողաց եւ պոռնկաց
եւ կախարդաց եւ դեղատուաց եւ կռապաշտից,
եւ ամենայն ստոց ամբարշտաց, որոց բաժինն իւ-
րեանց է լիճն, այրեցումն հրով եւ ծծմբով, որ
է մահն երկրորդ։
9 [9] Եւ եկն առ իս մի յեւթն հրեշտակացն՝ որք
ունէին զեւթն սկաւառակսն լցեալս եւթն վախճա-
նաւ կատարածովք. խաւսեցաւ ընդ իս եւ ասէ.
10 Ե՛կ՝ ցուցանեմ քեզ զհարսն եւ զկին գառինն։ [10] Եւ
ա՛ռ տարաւ զիս ի լեառն մի բարձր եւ մեծ,
Հոգւով սրբով, եւ եցոյց ինձ զքաղաքն սուրբ՝ զԵր-

այ | ած | 4 ի վերա | 5 ի վերա | 6 կենդանութէ | 7 ժառանգ. [illegible] | յած | 8 ծըծմով | 9 [illegible] | 10 [illegible] |

րինն Երուսաղէմ, զլեառն խաղաղութեան, զի իջա-
նէր յերկնից առ ի յԱստուծոյ ամենակալէ, [11] եւ 11
ունէր զփառս Աստուծոյ. եւ էր ի նմա լուսաւո-
րութիւն՝ նմանեալ ականց պատուականաց, ականց
յասպիս՝ որ սառնափայլեալ լուսաւորէր. [12] եւ էին 12
պարիսպք նորա մեծ, եւ աշտանակք՝ բարձունք,
եւ ունէր յինքեան դրունս երկոտասան, եւ ա-
նուանք իւրաքանչիւր ի վերայ դրանցն գրեալ
էին, ըստ երկոտասան անուանց ցեղիցն Իսրայելի.
[13] Յարեւելից կողմանէն դրունք երեք, եւ յարեւ- 13
մտից կողմանէ դրունք երեք, եւ ի հարաւոյ կող-
մանէ դրունք երեք, եւ ի հիւսիսոյ կողմանէ
դրունք երեք. [14] Եւ պարիսպք քաղաքին էին հի- 14
մունք երկոտասան, ըստ անուանց առաքելոց գա-
ռինն. [15] Եւ որ խաւսէրն ընդ իս՝ ունէր չափ 15
ոսկի ի ձեռինն իւրում, զի չափեսցէ զքաղաքն եւ
զդրունս նորա եւ զպարիսպ նորա. [16] Եւ էր նիստ 16
քաղաքին չորեքկուսի. եւ որչափ երկայնութիւն
նորա՝ նոյնչափ լայնութիւն նորա. Եւ չափեաց
զքաղաքն չափովն. եւ էր չափ երկայնութեան
նորա երկոտասան հազար ասպարէզ. եւ լայնութիւն
նորա եւ բարձրութիւն միաչափ. [17] Եւ չափեաց 17
զպարիսպ նորա՝ հարիւր քառասուն եւ չորս կան-
գուն, ըստ չափոյ մարդկան՝ որ է հրեշտակի.
[18] Եւ շինած պարսպաց նորա՝ յականց յասպիս, եւ 18
քաղաքն յոսկւոյ սրբոյ՝ նման ապակւոյ սրբոյ

Էմ | խաղաղութէ | առ ի յմյ | 11 ույ | 12 չինգէանս | Ներ |
13 դըրունս (առըջ.) | չորեքքին «երեք» Թուագրով գրին այսպէս՝
:Գ: | յարեւմտից | 16 չորեքկուսի | երկայնութի | լայնութի (երկրորդին) |
երկայնութէ | երկոտասան | տասպարէզ | բարձրութի | 18 ոէ |

19 ապակւոյ։ [19] Եւ հիմունք քաղաքին՝ յամենայն ականց
պատուականաց. հիմն առաջին պարսպին՝ յասպիս,
երկրորդն՝ շափիղա, երրորդն՝ գոճազմ, չորրորդն՝
20 զմրուխտ, [20] հինգերորդն՝ եղեգնաքար, վեցերորդն՝
սարդիոն, եւթներորդն՝ ոսկէքար, ութերորդն՝
բիւրեղ, իններորդն՝ տպազիոն, տասներորդն՝
դահանակ, մետասաներորդն՝ յակինթ, երկոտասա-
21 ներորդն՝ կարկեհան։ [21] Եւ էին երկոտասան դրունք
յերկոտասան մարգարտոց՝ միաձեւ. եւ իւրաքան-
չիւր դրունքն էին մի մի դուռն ի միոյ միոյ մար-
գարտէ. եւ միջոց քաղաքին յոսկւոյ սրբոյ. եւ
մաւտ առ դրամբքն ճառագայթագոյն ապիտակ ի-
22 բրեւ զբիւրեղ։ [22] Եւ տաճար ո՛չ տեսի ի նմա,
քանզի Տէր Աստուած ամենակալ տաճար էր նորա,
եւ Գառն միածին Որդին Աստուծոյ՝ սեղան սրբու-
23 թեան։ [23] Եւ քաղաքին չէ՛ ինչ պէտք արեգական
եւ լուսնի՝ եթէ լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն
Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ, եւ
24 ճրագ նորա՝ էր Գառն Աստուծոյ։ [24] Եւ գնային
հեթանոսք ի լոյս նորա, եւ թագաւորք երկրի
25 լուսազգեստք լինէին ի փառաց նորա. [25] եւ դրունք
նորա ո՛չ փակէին, այլ բաց կային հանապազորդ.
26 եւ գիշեր ո՛չ եւս լինէր ի նմա, [26] բայց միայն
լուսաւորութիւն եւ փառաւորութիւն եւ պատուա-
կանութիւն՝ քան զամենայն ականց պատուականաց։
27 [27] Եւ մի՛ մտցէ անդ ամենայն չարակամ, զի մի՛
պղծեսցէ զնա ստութեամբ իւրով, բայց միայն

ապակւոյ | 20 յակինթ | խալկեդոն | 21 երկոտասան | 22 Տէր ած |
ոյ | ամենակալ | 23 պէտս | էին | ոյ (երկրորդն) | նորայ | 26 լու-
սաւորութիւն | փառաւորութիւն | պատուականութիւն | 27 ուղղութեան |

մացեն ի նա՝ որոց անուանք նոցա գրեալ են ի
դպրութիւն կենաց Գառինն Որդւոյն Աստուծոյ։

ԻԲ. — [1] Եւ եցոյց գետ ջուրց կենդանութեան՝ ԻԲ
լուսաւոր սառնադոյն, որ ելանէր յաթոռոյն Աս-
տուծոյ. [2] եւ գնայր ի մէջ հրապարակաց նորա. 2
եւ զեզերս գետոյն ունէր ծառ կենաց, որ բերէր
պտուղ երկոտասան անգամ, ըստ միոյ միոյ ամսոյ
տայր զպտուղն իւր. եւ տերեւ ծառոյն էր բժշ-
կութիւն հեթանոսաց։ [3] Եւ յամենայն ծառոց՝ յոր- 3
մէ ուտէին՝ էին աւրհնեալք. եւ անէծք անդ ո՛չ
եւս էին. զի աթոռն Աստուծոյ եւ Գառին նորա
էր ի նմա. եւ ծառայք Աստուծոյ պաշտէին զնա.
[4] եւ էր անուն նորա գրեալ ի վերայ ճակատու 4
նոցա։ [5] Եւ գիշեր այլ ո՛չ եւս լինէր ի նմա, 5
եւ չէին ինչ անդ պէտք ճրագի լուսոյ եւ ո՛չ
արեգական, վասն զի Տէր Աստուած լուսաւորէր
զամենեսեան. եւ թագաւորէին յաւիտեանս յաւ-
իտենից։ [6] Եւ ասէ ցիս. այս բանք են Աստուծոյ 6
հաւատարիմք եւ ճշմարիտք. եւ Տէր Աստուած
որ սուրբ Հոգւովն իւրով եցոյց մարգարէիցն իւ-
րոց եւ առաքելոցն ի ձեռն հրեշտակացն՝ ցուցա-
նել ծառայիցն իւրոց որ ինչ լինելոց էր առ յա-
պայն։ [7] Ահաւասիկ եկն եհաս վաղվաղակի։ Երա- 7
նելիք են որք լուիցեն զբանս գրոյս մարգարէու-
թեանս այսոցիկ։
[8] Քանզի ես Յոհաննէս լուայ եւ տեսի զայս 8:

ի նոյ | ի դպրութէ | ոյ | ԻԲ. — 1 կենդանութէ | ոյ |
2 Վընայր ի մէջ | բժշկութէ | 3 էին (աւրհ.) | ոյ (երկիցս) |
նորայ | 4 ի վերա | 5 գիշեր | Տէր Ած | զամենեսեան | 6 ոյ | Տէր
Ած | որք | 8 լուա (երկիցս) |

ամենայն. եւ յորժամ լուայ եւ տեսի, անկանէի
եւ երկիր պագանէի հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ
9 զայս ամենայն։ [9] Եւ ասէ ցիս. այր դու, մի՛ ան-
դանիր դու առաջի իմ եւ երկիր պագաներ,
քանզի ես ծառայակից քո եմ եւ եղբարց քոց՝
որք մարգարէացան եւ պատմեցին զբանս գրոյս
10 այսորիկ. Աստուծոյ երկիր պագ։ [10] Եւ ասէ ցիս
դարձեալ. մի՛ կապեր եւ կնքեր զբանս մարգարէ-
ութեան գրոյս այսորիկ. քանզի ժամանակ սորա
11 մերձ է։ [11] Որ ամպարշտելոցն իցէ՝ ամբարշտեսցի,
եւ որ աղտեղանալոցն իցէ՝ աղտեղասցի, եւ որ
արդարանալոցն իցէ՝ արդարասցի, եւ որ սրբելոցն
իցէ՝ սրբեսցի։
12 [12] Ահա դայ վաղվաղակի վարձահատոյցն, եւ
վարձք իւրաքանչիւր առաջի նորա, եւ հատուցէ
13 իւրաքանչիւր ըստ գործս իւր։ [13] Ես եմ այբ, եւ
ես եմ քէ, ասէ Տէր յաւիտեանս. ես եմ առաջին,
եւ ես եմ վախճան, ես եմ սկիզբն, եւ ես եմ
14 կատարած։ [14] Երանելիք են որք կատարեն զպա-
րէնս նորա. նոքա ունին իշխանութիւն՝ ուտել ի
ծառոյն կենաց եւ մտանել ընդ դրունս քաղաքին
15 լուսոյ։ [15] Այլ ելցեն արտաքս շունք եւ դեղատուք
եւ կռապարիշտք, սպանողք եւ պոռնիկք շնացողք,
եւ ամենեքեան ոյք դնան եւ խաւսին ստութեամբ։
16 [16] Ես Յիսուս Քրիստոս առաքեցի զհրեշտակ իմ՝
վկայել զայս ամենայն յեկեղեցիս։ Ես եմ արմատն
17 եւ զաւակն Դաւթայ, եւ աստղն առաւաւտին. [17] Եւ
Հոգին սուրբ եւ Փեսայն որ դալոցն եմ. եւ որ ոք

---

9 պահպանէր | ես | 10 մարգարէութեան | 11 ամպարշտելոյն | [illegible] |
12 գա | 13 եր | 14 իշխանութիւն | 16 յե ես | [illegible] | 17 [illegible] |

ծարաւի իցէ եւ կամիցի գալ առ իս՝ եկեսցէ եւ
արբցէ զջուրն կենաց ձրի։
[18] Վկայեմ ես ամենայնի՝ որ լսէ զբանս մար- 18
գարէութեան գրոյս այսորիկ. զի մի՛ ոք յաւելու-
ցու ի սա, եւ մի՛ ոք պակասեցուսցէ ի սմանէ.
եթէ ոք յաւելուցու ի սա, յաւելցէ եւ բազմացուս-
ցէ Աստուած ի վերայ նորա զհարուածս ամենայն՝
որ գրեալ է ի գիրս յայսմիկ. [19] եւ եթէ ոք պա- 19
կասեցուսցէ եւ հանցէ ի բանից մարգարէութեան
գրոյս այսորիկ, պակասեցուսցէ եւ հանցէ Աս-
տուած զբաժին նորա ի ծառոյն կենաց եւ ի քա-
ղաքէն սրբոյ, որ գրեալ է ի գիրս յայսմիկ։
[20] Ասաց որ վկայեաց զայս ամենայն. այո՛, 20
գամ ես վաղվաղակի։

Յովհաննու եւ աւետարանչի
եւ աշակերտի Տեառն Յայտնութիւն
ի Պատմոս կղզւոջ, զոր ետես։

ջուր | 18 սե | մարգարէութէ | եթէ | յաւելուցու. ի լուսանցս գրեալ՝ եւս. բայց այսմ ընթեռնլի եւ՝ յաւելցէ | ած ի վերա | 19 եթէ | մարգարէութէ | ած | ի տաղաւէն |
Յովհաննու | թն յայտնութե | նշոյ



